

SHAKE-SPEARES  
SONNETS.



ՇԵՅՔ-ՍՊԻԸՐԻ  
ՀՆՉՅԱԿՆԵՐ.







# SHAKE-SPEARES

## S O N N E T S .

In Armenian translation  
Neuer before Imprinted.

AT YEREVAN

2022.



ՇԵՅՔ-ՍՊԻԸՐԻ

ՀՆՉՅԱԿՆԵՐ.

Հայերեն թարգմանությամբ  
Նախկինում չտպված.

Ի ԵՐԵՒԱՆ

2022.

Interlinear and verse translation and comments by Ruben Tarumian  
Ռուբէն Թարումեանի տողացի եւ չափածո թարգմանությամբ  
եւ ծանոթագրությամբ

post@tarumian.am  
tarumian.am, թարումեան.հայ,  
սոնետներ.շեքսպիր.հայ



24y mit William Engelbert

*[Faint handwritten text at the bottom of the page, likely bleed-through from the reverse side.]*

SHAKE-SPEARES,  
SONNETS.

1



From fairest creatures we desire increase,  
That thereby beauty's rose might never die,  
But as the ripper should by time decease,  
His tender heir might bear his memory:  
But thou, contracted to thine own bright eyes,  
Feed'st thy light's flame with self-substantial fuel,  
Making a famine where abundance lies,  
Thyself thy foe, to thy sweet self too cruel.  
Thou that art now the world's fresh ornament  
And only herald to the gaudy spring,  
Within thine own bud buriest thy content,  
And, tender churl, mak'st waste in niggarding:  
Pity the world, or else this glutton be,  
To eat the world's due, by the grave and thee.



# Շ Ե Յ Զ - Ս Պ Ի Ը Բ Ի,

## Հ Ն Չ Յ Ա Կ Ն Ե Բ.



1

ենչում ենք բերք չքնաղ եակներից,

Որ չմեռնի կյանքի գեղեցկությունը,  
Իսկ երբ թռչնի հասունը նրանցից  
Ժառանգն իր նուրբ պահի հիշողությունը.

Բայց դու լույս աչքերիդ հետ նշանված,

Բոցով քո էության սնում ես հուրդ,

Այնտեղ, ուր լիություն է՝ սով սփռած.

Քո քաղցր անձի բիրտ թշնամին հենց դու ես:

Դու, որ այսօր պերճանքն ես աշխարհի

Եւ գույնզգույն գարնան ավետաբերը,

Թաղում ես քեզ քո բողբոջում բերրի

Եւ, գիրգ ժլատ, մսխում ես շնորհքներդ:

Խղճա աշխարհը. կամ անկուշտ եղիր,

Եւ կեր շիրմիդ հետ բերքը աշխարհի:

Չքնաղագույն արարածներից մենք ցանկանում ենք շատացում,  
Որ դրա շնորհիվ գեղեցկության վարդը երբեք չկարողանա մեռնել,

Բայց քանի որ հասունը պիտի ժամանակի հետ մեռնի,

Նրա քնքուշ ժառանգը կարող է կրել իր հիշողությունը.

Բայց դու, նշանված քո սեփական լուսավոր աչքերի հետ,

Կերակրում ես քո լույսի բոցը քո ինքնա-էության վառելիքով,

Պատրաստելով սով՝ ուր առատություն է,

Ինքդ քեզ թշնամի, քո քաղցր ինքնության նկատմամբ շատ դաժան:

Դու, որ հիմա աշխարհի թարմ զարդն ես

Եւ միակ մունետիկը ծաղկուն գարնան,

Միջում քո սեփական կոկոնի թաղում ես քո բովանդակությունը,

Եւ, քնքուշ կծծի, ծախավում ժլատության մեջ.

Խղճա աշխարհը, կամ էլ որկրամով եղիր,

Ուտելու հասնար աշխարհի հասանելիքը գերեզմանի եւ քո կողմից:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

2



When forty winters shall besiege thy brow,  
And dig deep trenches in thy beauty's field,  
Thy youth's proud livery so gazed on now  
Will be a tottered weed of small worth held:  
Then being asked where all thy beauty lies,  
Where all the treasure of thy lusty days,  
To say within thine own deep-sunken eyes  
Were an all-eating shame, and thriftless praise.  
How much more praise deserved thy beauty's use,  
If thou couldst answer, 'This fair child of mine  
Shall sum my count, and make my old excuse',  
Proving his beauty by succession thine.  
    This were to be new made when thou art old,  
    And see thy blood warm when thou feel'st it cold.



Երբ կգերեն քառսուն ձմեռ ճակատդ  
Եւ հանդը գեղոյոյան քո կակոսեն,  
Կյանքիդ գարնան հպարտ քո հանդերձանքդ  
Սի անարժեք քուրձի կվերածեն.  
Այդժամ, թե հարց տան, ո՞ր է գեղոյոյունդ,  
Գանձերն ամեն՝ ծաղկուն քո օրերի,  
Ասելը՝ փոս ընկած աչաց խորքում է,  
Խայթող ամոթ, սին գովք լոկ կլինի:  
Ի՞նչ լավ կարտահայտվեր խոհեմոյոյունդ,  
Թե ասելիք. «Չավակա այս չքնագեղ  
Իմ ծերոյոյան օրվա արդարացումն է»,  
Որ քո պերճանքը նա է ժառանգել:  
Եւ թարմ ես դու ժամին քո ծերոյոյան  
Եւ զգում ես տաք արյուն, երբ սառն է այն:

Երբ քառսուն ձմեռներ պաշարեն քո ճակատդ,  
Եւ փորեն խորը խրամատներ քո գեղեցկոյոյան դաշտում,  
Քն երիտասարդոյոյան հպարտ զգեստը՝ այսքան հայացք գրավող հիմա  
Լինելու է քրքրված շոր՝ փոքր արժեք ունեցող:  
Այնժամ, թե հարց տան, ո՞ր է քո գեղեցկոյոյունդ,  
Ուր են բոլոր գանձերը քո ծաղկուն օրերի,  
Ասելը, թե ներսում են քո սեփական խոր ընկած աչքերի  
Ամենակեր ամոթ կլիներ եւ վատնող գովասանք:  
Որքան ավելի գովելի, արժանի է քո գեղեցկոյոյան օգտագործումը,  
Եթե դու կարող ես պատասխանել. «Իմ այս չքնաղ երեխան  
Ի մի կրեթի իմ հաշիվը եւ կարդարացնի իմ ծերոյոյունդ»,  
Հաստատելով իր գեղեցկոյոյունդ քո ժառանգը լինելով:  
Դա կլինե՞ր՝ նորաստեղծ՝ լինել, երբ դու ծեր ես,  
Եւ տեսնել քո արյունը տաք, երբ դու զգում ես, այն սառն է:

\* «երիտասարդ»

SHAKE-SPEARES,  
SONNETS.

3



Look in thy glass and tell the face thou viewest,  
Now is the time that face should form another,  
Whose fresh repair if now thou not renewest,  
Thou dost beguile the world, unbless some mother.  
For where is she so fair whose unearned womb  
Disdains the tillage of thy husbandry?  
Or who is he so fond will be the tomb  
Of his self-love to stop posterity?  
Thou art thy mother's glass, and she in thee  
Calls back the lovely April of her prime;  
So thou through windows of thine age shalt see,  
Despite of wrinkles, this thy golden time.  
    But if thou live rememb'rd not to be,  
    Die single, and thine image dies with thee.



Ասա դեմքին, որ հայելում տեսնում ես,  
Եկել է ժամ կերտել այն նոր մարմնում,  
Իսկ այլապես՝ աշխարհն արհամարհում ես,  
Ինչ-որ մի մոր ես դու դժբախտացնում:  
Եւ ո՞ր է նե, ում անաղարտ պուզքը  
Քո հերկագործությունը չվերցնի:  
Կամ ո՞վ է նա, ում եսասեր մոլուցքը  
Անմիտ դարձնի՝ սերունդը կասեցնի:  
Դու հայելին ես մորդ ու քեզնով  
Նա իր կյանքի Ապրիլն է հետ դարձնում.  
Եւ դու կնճռոտ տարիներդ միջով,  
Քեզ կտեսնես ոսկի այս օրերում:  
Բայց թե կապրես, որ չհիշվես հավետ,  
Մեռիր մենակ, պատկերն էլ քո քեզ հետ:

Նայիր քո հայելուն եւ ասա դեմքին, որ տեսնում ես.  
Հիմա ժամանակն է, ադ դեմքը ձեռավորի մեկ այլը,  
Ում թարմության վերականգնումը եթե այժմ դու չես նորացնում,  
Դու խաբում ես աշխարհին, ոչ երանելի ես դարձնում ինչ-որ մոր:  
Որովհետեւ ո՞ր է նե այդքան չքնաղ, ում չհերկած արգանդը  
Արհամարհի վարումը քո հողագործության:  
Կամ ո՞վ է նա այդքան հիմար, որ դառնա գերեզմանը  
Իր ինքնասիրահարվածության, ընդհատելով սերունդը:  
Դու քո մոր հայելին ես, և նա քո մեջ  
Ետ է կանչում սիրելի ապրիլը իր ծաղկունքի.  
Այդպես էլ դու պատուհանով քո տարիքի կտեսնես,  
Չնայած կնճիռներին՝ սա քո ոսկի ժամանակն է:  
Բայց եթե դու սպրում ես, չհիշվելու, որ կաս,  
Մեռիր միայնակ, եւ քո պատկերը կմեռնի քեզ հետ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

4



Unthrifty loveliness, why dost thou spend  
Upon thyself thy beauty's legacy?  
Nature's bequest gives nothing, but doth lend,  
And being frank she lends to those are free:  
Then, beauteous niggard, why dost thou abuse  
The bounteous largess given thee to give?  
Profitless usurer, why dost thou use  
So great a sum of sums, yet canst not live?  
For having traffic with thyself alone,  
Thou of thyself thy sweet self dost deceive:  
Then how, when Nature calls thee to be gone,  
What acceptable audit canst thou leave?  
Thy unused beauty must be tombed with thee,  
Which used lives th'executor to be.



Սիրուն շոայն, ինչո՞ւ ես դու ծախսում  
Վրադ՝ քեզ ժառանգված գեղեցկությունը.  
Ոչ գերդ նվեր. պարտքով է այն հանձնում,  
Ազատներին առատն Բ՛նությունը.  
Ինչո՞ւ ես չարարկում, չքնաղ ժլատ,  
Մի գանձ, որ պետք է դեռ վերադարձնել:  
Ինչո՞ւ ես, անօգուտ ծախսում անդարդ  
Հսկա գումար, բայց չես կարող ապրել:  
Գործարքներով, կնքվող միայն քեզ հետ,  
Անուշ եսկ, խաբում ես ինքդ քեզ.  
Երբ Բ՛նության կանչով մեկնես հավետ,  
Այդ ինչ հաշվեկշիռ պիտի թողնես:  
Քեզ հետ գեղեցկությունդ կթաղվի,  
Մինչ ներդրված՝ շահույթ դեռ կբերի:

Շոայն սիրուն, ինչո՞ւ ես դու ծախսում  
Քեզ վրա քո գեղեցկության ժառանգությունը:  
Բնությունը կտակելով չի տալիս ոչինչ, բայց միայն վարձակալությամբ,  
Եւ լինելով առատաձեռն նե տալիս է վարձով նրանց, ովքեր ազատ\* են.  
Ուրեմն, չքնաղ ժլատ, ինչո՞ւ ես դու չարաշահում  
Առատ նվերը, տրված քեզ, վերադարձնելու համար:  
Անշահույթ վաշխառու, ինչո՞ւ ես դու օգտագործում  
Այսքան մեծ գումարների գումար, բայց չունես ապրուստ:  
Չէ՞ որ գործարք կնքելով քո հետ միայն,  
Դու քեզ քո քաղցր քեզ ես խաբում.  
Ապա ինչպե՞ս, երբ Բ՛նությունը կոչի քեզ գնալ,  
Ինչ ընդունելի հաշիվ կկարողանաս դու թողնել՝  
Քո չօգտագործված գեղեցկությունը պետք է թաղված լինի քեզ հետ,  
Մինչդեռ օգտագործված՝ կապրի որպես քո կատարածու:

\* Բնագրի այս տողում են «frank» եւ «free», ունեն մոտիկ իմաստ, սակայն երկրորդը կարող է ունենալ նաեւ բարոյականությամբ ազատ լինելու ակնարկ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

5



Those hours that with gentle work did frame  
The lovely gaze where every eye doth dwell  
Will play the tyrants to the very same,  
And that unfair which fairly doth excel;  
For never-resting time leads summer on  
To hideous winter and confounds him there,  
Sap checked with frost and lusty leaves quite gone,  
Beauty o'ersnowed and bareness every where:  
Then were not summer's distillation left  
A liquid prisoner pent in walls of glass,  
Beauty's effect with beauty were bereft,  
Nor it nor no remembrance what it was.  
But flowers distilled, though they with winter meet,  
Leese but their show; their substance still lives sweet.





ամերն, որ կերտեցին նուրբ հմտությամբ

Չքնաղ կերպար, որին հանգում է աչքը,

Բիրտ կլինեն դրա հենց նկատմամբ

Կայանդակեն այդ կատարյալ կերտվածքը,

Քանզի ամռան ամեն մի ակնթարթը

Տանում է դեպ ձմեռ ու կործանում.

Ստոչում է հյույժն, անկում փարթամ սաղարթը,

Պերճանքն անցնում է, ձյունածածկ լինում.

Թե սրվակում դու չես պահել, նմուշը՝

Հերուկ գերին՝ նուրբ թուրմը ամառվա,

Անցել են գեղությունն ու իր կենսուժը,

Նրա մասին գեթ հուշ էլ չի մնա:

Սակայն ծաղկին, թեկուզե ցուրտ տանի,

Իր թուրմն անուշ ողջ բույրը կպահի:

Այն ժամերը, որոնք իրենց նուրբ աշխատանքով կերտել են

Չքնաղ կերպար, որի վրա կանգ են առնում բոլոր հայագրքները,

Կվարվեն որպես բռնակալներ հենց դրա նկատմամբ

Եւ կզրկեն գեղեցկությունից այն, ինչը գերազանցում է գեղեցկությամբ,

Քանզի անխոնջ ժամանակը տանում է ամառը

Դեպի այլանորակ ձմեռ եւ այնտեղ կործանում իրեն.

Հյույժերը կկալանվեն ցրտով, իսկ փարթամ սաղարթը կանհայտանա,

Գեղեցկությունը ձյունածածկ՝ եւ մերկություն ամենուրեք կլինի:

Այնժամ, եթե ամառվա հյուպը չի մնացել,

Որպես հեղուկ գերի՝ փակված ապակյա պատերից ներս,

Գեղեցկության ուժը գեղեցկության հետ կորչել է,

Ոչ այն, ոչ հիշողություն, թե ինչպիսին էր այն:

Բայց եթե ծաղիկները թորված են, ապա թեեւ դրանց հասնում է ձմեռը,

Կորցնում\* են միայն իրենց տեսքը. իրենց էությունը դեռ սպրում է քաղցր:

\* Որոշ մեկնաբանների կարծիքով բնագրի «leese»-ը, պետք է հասկանալ «close, release» իմաստով:

SHAKE-SPEARES,

SONNETS.

6



When let not winter's ragged hand deface  
In thee thy summer ere thou be distilled:  
Make sweet some vial; treasure thou some place  
With beauty's treasure ere it be self-killed:  
That use is not forbidden usury  
Which happies those that pay the willing loan;  
That's for thyself to breed another thee,  
Or ten times happier be it ten for one;  
Ten times thyself were happier than thou art,  
If ten of thine ten times refigured thee:  
Then what could death do if thou shouldst depart,  
Leaving thee living in posterity?  
Be not self-willed, for thou art much too fair  
To be death's conquest and make worms thine heir.



Այն թող ձմռան բիրտ ձեռքը այլայլի  
Քո մեջ ամառդ, մինչ քեզ չես թորել.  
Մեղրիք՝ հյուսվող անոթ մի տենչալի,  
Քանի դեռ ինքն այն չի ոչնչացվել:  
Վաշխատություն դա պետք չէ համարել.  
Երջանկացնում է դա իր ներդրողին,  
Կարող ես քեզ կրկին վերաստեղծել,  
Շահութաբերությամբ. տասով՝ մեկին:  
Տանապատիկ բախտով քեզ կրկնել,  
Դեռ իրենցով էլ տասնապատկվեիր՝  
Էլ ինչ կարող էր մահին այդժամ անել,  
Թե քո ժառանգներում դու մնայիր:

Մի համառիք. դու շատ ես սքանչատես,  
Որ որդերին՝ մահվամբ քեզ կտակես:

Ուրեմն մի թող ձմռան կոպիտ ձեռքը այլայլի  
Քո մեջ քո ամառը, մինչ դու լինես թորված.  
Քաղցրացրու որեւէ անոթ. հարստացրու դու որեւէ տեղ  
Գեղեցկության գանձով, մինչ այն կինքնառչնչացվի.  
Այսպիսի օգտագործումը արգելված վաշխատություն չէ,  
Որը երջանկացնում է նրանց, ովքեր վճարում են կամավոր վարկ.  
Դա է՝ քո համար ստեղծել մեկ այլը քեզնից,  
Կամ տասն անգամ երջանիկ լինել, այն է՝ տասը՝ մեկին.  
Տասն անգամ քեզնից լինել երջանիկ, քան դու կաս,  
Եթե տասը քո տասն անգամ վերածեսավորեն քեզ.  
Ապա ինչ կարող է մահին անել, եթե դու հեռանաս,  
Թողնելով քեզ ապրել ժառանգներում:

Մի եղիր ինքնակամ, քանի որ դու շատ ջընաղ ես  
Լինելու համար մահվան ավար ես դարձնելու որդերին քեզ ժառանգ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

7



Who in the orient when the gracious light  
Lifts up his burning head, each under eye  
Doth homage to his new-appearing sight,  
Serving with looks his sacred majesty;  
And having climbed the steep-up heavenly hill,  
Resembling strong youth in his middle age,  
Yet mortal looks adore his beauty still,  
Attending on his golden pilgrimage:  
But when from highmost pitch, with weary car,  
Like feeble age he reeleth from the day,  
The eyes (fore duteous) now converted are  
From his low tract and look another way:  
    So thou, thyself outgoing in thy noon,  
    Unlooked on diest unless thou get a son.



Իր լուսատուն բարի՝ արեւելքում  
Հանում է վեր գլուխը իր այրվող  
Տես, թե նրան ինչպես են հետեւում,  
Աչքերը ամենքի՝ երկրպագող.  
Երբ նա երկնի բլուրն է մագցում,  
Որպես ամուր հասուն երիտասարդ,  
Մարդիկ դեռ հիանում են ու հրճվում,  
Ոսկի արշավն իր դիտելով անթարթ.  
Բայց երբ հոգնած կառքով վեհ գագաթից  
Նա ճոճվելով թողնում է օրն արդեն,  
Նրա ուղու այս ցածրագույն մասից.  
Աչքերն (այդքան հրճված) շրջվում են դեմ.  
Այդպես եւ դու, քո կեսօրին հասած,  
Անտես կանցնես, ժառանգ քեզ չթողած:

Տես, արեւելքում, երբ բարեբեր լուսատուն  
Բարձրացնում է իր այրվող գլուխը, յուրաքանչյուր տակի աչքը  
Տալիս են նրան իր նորահայտ տեսարանին,  
Ծառայելով հայացքներով նրա սրբազան մեծությանը.  
Եւ երբ մագցում է գառիվեր երկնային բլրին,  
Հիշեցնելով ամրակուռ երիտասարդ իր միջին տարիքում,  
Դեռես մահկանացուների հայացքները հիանում են իր գեղեցկությամբ,  
Հետեւելով իր ոսկի ուխտագնացությանը,  
Բայց երբ բարձրագույն կեսից, հոգնած կառքով,  
Որպես անգոր ծերություն նա ճոճվելով հեռանում է օրից,  
Աչքերը (նախկինում հարգալից) այժմ շրջում են  
Դեն այդ ցածր հատվածից եւ նայում այլ կողմ.  
Այդպես եւ դու, ինքդ անցնելով քո կեսօրը,  
Չնկատված կմեռնես, եթե դու չունենաս որդի:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

8



Music to hear, why hear'st thou music sadly?  
Sweets with sweets war not, joy delights in joy:  
Why lov'st thou that which thou receiv'st not gladly,  
Or else receiv'st with pleasure thine annoy?  
If the true concord of well-tuned sounds,  
By unions married, do offend thine ear,  
They do but sweetly chide thee, who confounds  
In singleness the parts that thou shouldst bear;  
Mark how one string, sweet husband to another,  
Strikes each in each by mutual ordering;  
Resembling sire, and child, and happy mother,  
Who all in one, one pleasing note do sing;  
Whose speechless song being many, seeming one,  
Sings this to thee, 'Thou single wilt prove none.'



ու՝ ինքդ երգ՝ ինչո՞ւ երգից տխուր ես:

Չէ՞ որ քաղցրի հետ քաղցրը հաշտ է, տեն,  
Ինչո՞ւ ես ա՛յն սիրում, ինչ քեզ անդուր է,  
Կամ ընդունում ես, ինչ տհաճ է քեզ:  
Դաշնույթը այս ճիշտ լարված հնչյուններով իր  
Հաշտ միությանը զագիր է ականջիդ,  
Ձի քեզ դիմում է նուրբ կշտամբանքով միշտ՝  
Քո գորշ մենակության համար անմիտ:  
Նայի՛ր, լարերն այս, որ կազմում են շարը,  
Հարում են մեկմեկու հստակ կարգում,  
Անես կազմում այդ հայրն, որդին ու մայրը,  
Միասնությամբ մեկ երգ են կատարում:

Այդ երգն անխոսք, հուշում է միտք միակ,  
Քեզ երգելով. «Ոչինչ ես միայնակ»:

Երաժշտություն լսելու համար, ինչո՞ւ ես դու երաժշտություն լսելիս տխուր:  
Քաղցրը քաղցրի հետ չի պատերազմում, ուրախը հիանում է ուրախով.  
Ինչո՞ւ ես սիրում այն դու, ինչը ընդունում ես ոչ ուրախորեն,  
Կամ էլ ընդունում ես հաճույքով քեզ տհաճը:  
Եթե ճիշտ դաշնույթը լավ լարված հնչյունների,  
Ըստ միությունների ամուսնացած, վիրավորում է քո ականջը,  
Դրանք քանի որ քաղցրորեն կշտամբում են քեզ, ով կործանում է  
Սենակության մեջ նվագաբաժինները, որոնք դու պետք է կատարես:  
Տեն, ինչպես մի լարը՝ քաղցր ամուսինը մյուսի,  
Հարում են, յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ փոխադարձ կարգում,  
Հիշեցնելով տիրոջը, ես գավակին, ես երջանիկ մորը,  
Ովքեր, բոլորը մեկում, մեկ հաճելի ձայնանիշն են երգում.  
Իրենց անխոսք երգը, լինելով շատ թվալով մեկ,  
Երգում են սա քեզ. «Դու միայնակ կապացուցես ոչինչ»:

SHAKE-SPEARES,

SONNETS.

9



As it for fear to wet a widow's eye  
That thou consum'st thyself in single life?  
Ah! if thou issueless shalt hap to die,  
The world will wail thee like a makeless wife;  
The world will be thy widow and still weep,  
That thou no form of thee hast left behind,  
When every private widow well may keep,  
By children's eyes, her husband's shape in mind:  
Look what an unthrift in the world doth spend  
Shifts but his place, for still the world enjoys it,  
But beauty's waste hath in the world an end,  
And kept unused the user so destroys it:  
No love toward others in that bosom sits  
That on himself such murd'rous shame commits.





Արդյո՞ք այրու աչք թրջելու վախից ես  
Սպառում դու քեզ կյանքովդ ամուրի:  
Ա՛հ, թե անգարմ գնաս դու աշխարհից այս,  
Աշխարհը կողքա ինչպես այրի.  
Աշխարհը կողքա որ քեզ կորցնում է,  
Որ չմնաց կերպարդ քո որդում,  
Մինչ հասարակ ամեն այրի պահում է,  
Կերպարը ամուսնու՝ զավակներում:  
Տեն, մսխողի ծախսածը աշխարհում,  
Փոխում է տեղը սոսկ, սակայն մնում է.  
Իսկ վատնված պերճանքը չի փրկվում.  
Չօգտագործված՝ իսպառ ոչնչանում է:  
Այլոց հանդեպ չունի սեր իր սրտում,  
Ով ինքն իր դեմ ոճիր է կատարում:

Արդյո՞ք վախն է թրջելու այրու աչքը  
Որ դու սպառում ես ինքդ քեզ միայնակ կյանքում:  
Ա՛հ, եթե դու անգարմ պատահի մեռնես,  
Աշխարհը կողքա քեզ ինչպես անգուց կինը.  
Աշխարհը կլինի քո այրին եւ միշտ կլացի,  
Որ դու ոչ մի կերպարանք քո չթողնես քո ետեւից,  
Երբ յուրաքանչյուր տվիրական այրի կարող է պահել,  
Երեխաների աչքերով իր ամուսնու կերպարանքը մտքում.  
Տեն, ինչը որ մսխողը աշխարհում ծախսում է  
Սոսկ փոխում է իր տեղը, քանի որ աշխարհը դեռ վայելում է այն,  
Բայց գեղեցկության կորստով այն ունենում է աշխարհում իր վերջը,  
Եւ պահելով չօգտագործված օգտվողն այդպիսով ոչնչացնում է այն.  
Չկա սեր հանդեպ ուրիշների այն սրտում  
Որ իր իսկ նկատմամբ այդպիսի սպանիչ ոճիր է կատարում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

10



Or shame deny that thou bear'st love to any,  
Who for thyself art so improvident.  
Grant, if thou wilt, thou art beloved of many,  
But that thou none lov'st is most evident;  
For thou art so possess'd with murd'rous hate,  
That 'gainst thyself thou stick'st not to conspire,  
Seeking that beauteous roof to ruinate  
Which to repair should be thy chief desire:  
O change thy thought, that I may change my mind!  
Shall hate be fairer lodged than gentle love?  
Be as thy presence is, gracious and kind,  
Or to thyself at least kind-hearted prove:  
    Make thee another self, for love of me,  
    That beauty still may live in thine or thee.



Ամոթ. չասես, թե դու մեկին սիրում ես.

Այնքան անմիտ ես քո հանդեպ վարվում:

Լավ, ընդունենք, շատերը քեզ սիրում են,

Բայց, ակներև է. ինքդ չես սիրում.

Քանզի քեզ համակամ ատելությունը,

Դրդում է, որ դու ինքդ քեզ դավես,

Խարխալելով ջընաղ այն շինությունը,

Որն անհասպաղ պիտի դու նորոգես.

Փոխիր մտքերդ, որ փոխեմ կարծիքս:

Թող տանդ ոչ թե դավ, այլ սեր սալրի:

Եղիք քնքուշ, ինչպես որ գեղեցիկ ես,

Կամ գոնե քո հանդեպ եղիք բարի.

Կերտիր քեզ պես մեկին, դու իմ սիրույն,

Որ միշտ սալրի պերճանքը քո ուրույն:

Ամոթից ժխտիր, թե դու տածում ես սեր որեւէ մեկի հանդեպ,

Ո՛վ է ինքն իր համար այդքան անմիտ:

Համաձայնվենք, թե ուզես, դու սիրված ես շատերից,

Բայց այն, որ դու ոչ որքո չես սիրում, դա առավել ակնհայտ է.

Որովհետև դու այդքան համակված ես դաժան ատելությամբ,

Որ ընդդեմ ինքդ քեզ դու կանգ չես առնում դավես,

Ձգտելով այդ գեղեցիկ տանիքը՝ փլելու համար

Որի վերանորոգումը պետք է լինի քո գլխավոր ցանկությունը.

Փոխիր քո միտքը, որ կարողանամ փոխել իմ կարծիքը:

Արդո՞ք ատելությունն ավելի լավ պիտի բնակեցված լինի, քան ազնիվ սերը:

Եղիք ինչպես քո ներկայությունն է, գթասիրտ ես բարի,

Կամ ինքդ քո նկատմամբ գոնե բարեսիրտ եղիր.

Կերտիր քեզ մեկ ուրիշին՝ սիրո համար ինձ,

Որ գեղեցկությունը դեռ կարողանա ապրել քոնոնց կամ քո մեջ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

11



As fast as thou shalt wane, so fast thou grow'st  
In one of thine, from that which thou departest,  
And that fresh blood which youngly thou bestow'st  
Thou mayst call thine, when thou from youth convertest:  
Herein lives wisdom, beauty, and increase,  
Without this, folly, age, and cold decay:  
If all were minded so, the times should cease,  
And threescore year would make the world away.  
Let those whom Nature hath not made for store,  
Harsh, featureless, and rude, barrenly perish:  
Look whom she best endowed she gave the more;  
Which bounteous gift thou shouldst in bounty cherish:  
She carved thee for her seal, and meant thereby,  
Thou shouldst print more, not let that copy die.



Որքան մաշվում, նույնքան արագ աճում ես  
Այն էակում, ում հայրը կդառնաս,  
Եւ թարմ արյունը, որը ընծայում ես  
Դու քոնը կկոչես, երբ ծերանաս.  
Ահա հանճարը, պերճությունն ու անը,  
Առանց դրա՝ անմիտ, ծեր, ցուրտ թոշնում.  
Առանց դրա աշխարհն ու ժամանակը,  
Կվերանան երեք քսանամյակում:  
Էսկն այն ով հաճո չէ Բնությանը՝  
Տգեղ, կոպիտ՝ անզարմ կիեռանա.  
Իսկ քեզ առատությանը տրվածն այնքան է,  
Որ այդ շռայլ ընծան պիտ բազմանա.  
Նա փորագրել է քեզ կնիք որպես,  
Որ ինքդ քեզ տպես, այլ ոչ մեռնես:

Այնքան արագ, որքան դու կբայքայվես, այնքան արագ դու կաճես  
Քոնոնքից մեկում ումից դու կզատվես,  
Եւ այն թարմ արյունը, որը պատանկիրեն դու տեղադրում ես,  
Դու կարող ես կոչել քոնը, երբ դու երիտասարդությունից փոխարկվես,  
Այստեղ ապրում է իմաստությունը, գեղեցկությունը եւ անը,  
Առանց դրա՝ հիմարություն, տարիք եւ սառը քայքայում.  
Եթե բոլորը մտածելին այդպես, ժամանակները կդադարելին,  
Եւ երեք քսան տարին կանելին աշխարհը վերացած:  
Թող նրանք, ում Բնությունը չի կերտել որ պահի,  
Անտաշ, ձեատ եւ կոպիտ՝ անզարմ մեռնեն.  
Տես, ում է նե ամենալավ օժտել, նե տվել է ավելին\*.  
Որպիսի առատ շռայլ ընծան դու պետք է շռայլորեն փայլապես:  
Նե փորագրեց քեզ որպես իր կնիքը, եւ նկատի ուներ այդպիսով,  
Դու պետք է տպես ավելին, չթողնելով, որ պատճենը մեռնի:

\* Դժվար տեղ է: Բերված տարբերակով, պետք է հասկանալ, որ «ուս Բնությունը շատ է օժտել, նա էլ ավելի շատ ժառանգ կթողնի»: Բայց կա կարծիք, որ առկա է վրիպակ, եւ «the»-ի փոխարեն պետք է լիներ «these»: Այդ դեպքում պետք է հասկանալ, որ «ուս էլ որ Բնությունը շատ է օժտել, բայց քեզ՝ տվել է ավելին»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

12



When I do count the clock that tells the time,  
And see the brave day sunk in hideous night,  
When I behold the violet past prime,  
And sable curls all silvered o'er with white,  
When lofty trees I see barren of leaves,  
Which erst from heat did canopy the herd,  
And summer's green all girded up in sheaves  
Borne on the bier with white and bristly beard:  
Then of thy beauty do I question make  
That thou among the wastes of time must go,  
Since sweets and beauties do themselves forsake,  
And die as fast as they see others grow,  
And nothing 'gainst Time's scythe can make defence  
Save breed to brave him when he takes thee hence.



Երբ որ անցնող ժամերն են ես հաշվում,  
Տեսնում. քաջ օրն ընկնում է գարշ գիշեր,  
Երբ որ թռչնած մանուշ են նկատում,  
Եւ սամույրե՝ ձյունին տված վարսեր,  
Երբ որ տեսնում են անտերեւ ծառեր,  
Որոնց ստվերում շոգից փրկվում էր հոտը,  
Եւ սայլերին՝ ճերմամորուս խուրձեր՝  
Որ դեռ երեկ ամռան կանաչ թարմ խոտն էր.  
Քո գեղության մասին անվերջ խորհում եմ.  
Որ ժամանակն այն նույնպես կջնջի,  
Քանզի ամեն պերճանք մի օր մեռնում է,  
Եւ նորերին ճամփան իր կգիջի:  
Ժամանակի հունձից դու չես փախչի.  
Իր հետ սերունդդ լոկ կմարտնչի:

Երբ ես հաշվում եմ ժամացույցը, որ ասում է ժամանակը,  
Եւ տեսնում եմ, քաջ օրը սուգվում է տհաճ գիշերվա մեջ,  
Երբ ես տեսնում եմ մանուշակը թռչնած,  
Եւ սամույր գանգույներ՝ ամբողջն արծաթված վրան սպիտակով,  
Երբ վեսն ծառեր են տեսնում զրկված տերեւներից,  
Որոնք երբեմնի շոգից էին պատսպարում հոտը,  
Եւ ամառվա կանաչը բոլորը կապված խուրձեր՝  
Տարվող սայլերին սպիտակ եւ կոշտ մորուքով.  
Հետո քո գեղեցկության մասին եմ ես հարց տալիս,  
Որ դու վատնված ժամանակի հետ, պետք է գնաս,  
Քանի որ անուշեղենն ու պերճանքները իրենց անտեսում են,  
Եւ մահանում են, հենց որ տեսնում են, ուրիշներն են աճում,  
Եւ ոչինչ ընդդեմ ժամանակի գերանդու չի կարող պաշտպանել.  
Բազի սերնդից, որը կընդդիմանա նրան, երբ նա քեզ վերցնի այստեղից:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

13



that you were your self! but, love, you are  
No longer yours than you yourself here live;  
Against this coming end you should prepare,  
And your sweet semblance to some other give:  
So should that beauty which you hold in lease  
Find no determination; then you were  
Your self again after yourself's decease,  
When your sweet issue your sweet form should bear.  
Who lets so fair a house fall to decay,  
Which husbandry in honour might uphold  
Against the stormy gusts of winter's day  
And barren rage of death's eternal cold?  
O, none but unthrifths: dear my love, you know  
You had a Father, let your Son say so.





Ոհ, թե դուք ձերը լինեիք: Բայց սեր, դուք  
Մտում եք ձերը լոկ, քանի դեռ կաք.  
Գալիք վերջին պիտի պատրաստ լինեք ու  
Ձեր տեսքն անուշ մեկ ուրիշին դուք տաք.  
Պիտի պերճանքը, որ ձեզ ընծայված է  
Ընդմիջտ մնա. եւ ձերը կլինեք  
Հեռո, կրկին, երբ մահանաք, միայն թե  
Անուշ որդուն կերպարը ձեր հանձնեք:  
Ո՛վ կթողնի, կորչի չքնաղ այն տունը,  
Որ խնամված՝ կարող է ետ մղել  
Ձմռան օրվա նեճգ հողմերի ճնշումն ու  
Մահվան անանց ցրտին դիմակայել:  
Սսխողը լոկ. գիտեք իմ սեր անգին,  
Ունեիք Հայր, թող նույնն սաի Որդին:

Ոհ թե դուք լինեիք ձերը\*. բայց, սեր, դուք  
Ոչ ավելի եք ձերը, քան դուք ինքներդ այստեղ ապրում եք.  
Ընդդեմ այս գալիք վերջին դուք պետք է պատրաստվեք,  
Եւ ձեր քաղցր կերպարը մեկ ուրիշին տաք.  
Ուրեմն պետք է այդ գեղեցկությունը, որը դուք պահում եք վարձով  
Չգտնի ավարտ. այդժամ դուք կլինեիք  
Ձեր սեփականը կրկին, ձեր մահից հեռո,  
Երբ ձեր քաղցր զավակը ձեր քաղցր ձեռը կկրի:  
Ո՛վ թույլ կտա, որ այդպիսի չքնաղ տունը տապալվի,  
Որին խնամքը պատվով կարող է պահել  
Ընդդեմ հողմերի պողոթումների ձմռան օրվա  
Եւ մահվան հավերժ ցրտի անպտուղ կատաղության:  
Ոհ, ո՛չ մեկը, բացի մսխողից. թանկագին իմ սեր, դուք գիտեք  
Դուք Հայր ունեիք, թող ձեր Որդին էլ սաի այդպես:

\* Թերես, անմահ լինելու կամ ժամանակի մեջ անփոփոխ մնալու մասին է խոսքը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

14



Not from the stars do I my judgement pluck,  
And yet methinks I have astronomy,  
But not to tell of good or evil luck,  
Of plagues, of dearths, or seasons' quality;  
Nor can I fortune to brief minutes tell,  
Pointing to each his thunder, rain and wind,  
Or say with princes if it shall go well  
By oft predict that I in heaven find:  
But from thine eyes my knowledge I derive,  
And, constant stars, in them I read such art  
As truth and beauty shall together thrive  
If from thy self to store thou wouldst convert:  
Or else of thee this I prognosticate,  
Thy end is truth's and beauty's doom and date.



Ոչ, աստղերից չեմ ես քաղում մտքերս,  
Ու, թեեւ, աստղերից էլ եմ գիտակ,  
Բայց ոչ այնքան, որ գուշակեմ դեպքերը.  
Ժանտախտ կամ սով, կամ ցավ, կամ եղանակ.  
Ու չեմ կանխատեսում մոտ լինելիքը,  
Չեմ զգուշացնում, թե երբ է ձյուն, քամի,  
Կամ չեմ ասում իշխաններին զալիքը  
Ըստ երկնքում գտած նշանների.  
Բայց աչքերում քո իմ տեսած աստղերը,  
Ասում են ինձ խորհուրդն իրենց այսպես,  
Որ կծաղկեն մեկտեղ քո ճիշտն ու գեղը,  
Թե դու դրանց պահպանելուն անցնես.  
Իսկ այլապես, տես ինչ կգուշակեմ.  
Քեզ հետ քո ճիշտն ու գեղն էլ կալարտվեն:

Աստղերից չեմ ես իմ դատողությունները քաղում,  
Ու, թեեւ, կարծում եմ, ես տիրապետում եմ աստղագիտությանը,  
Բայց ոչ այնքան, որ գուշակեմ բարի կամ չար բախտը,  
Ժանտախտը, սովը կամ եղանակների որպիսությունը.  
Չեմ կարող նաեւ ես բախտը կարճ թույլների ասել,  
Յույց տալով յուրաքանչյուրին իր անկրոպը, անձրեւը եւ քամին,  
Կամ ասել իշխաններին արդյոք այն կընթանա լավ  
Ըստ կանխանշանների, որ ես երկնքում եմ գտնում.  
Բայց քո աչքերից եմ իմ գիտելիքներն ես արտածում,  
Եւ, հաստատուն աստղեր, դրանց մեջ ես կարդում եմ այն գիտելիքը,  
Որ ճշմարտությունն ու գեղեցկությունը միասին կծաղկեն,  
Եթե քո անձից՝ պահելուն դու անցնես.  
Կամ էլ քեզ սա եմ ես կանխատեսում,  
Քո վերջը ճշմարտության եւ գեղեցկության ճակատագիրն է ու ժամկետը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

15



When I consider every thing that grows  
Holds in perfection but a little moment,  
That this huge stage presenteth nought but shows  
Whereon the stars in secret influence comment;  
When I perceive that men as plants increase,  
Cheered and checked even by the selfsame sky,  
Vaunt in their youthful sap, at height decrease,  
And wear their brave state out of memory:  
Then the conceit of this inconstant stay  
Sets you most rich in youth before my sight,  
Where wasteful Time debateth with Decay  
To change your day of youth to sullied night,  
And all in war with Time for love of you,  
As he takes from you, I ingraft you new.



Երբ մտածում եմ. այն ինչ որ աճում է  
Մնում է կատարյալ սոսկ կարճ մի պահ,  
Որ այս բեմին մեծ՝ սոսկ ներկայացում է,  
Որին աստղերն ազդում են գաղտնապահ.  
Որ թե մարդկանց եւ թե բուսոց աճումը,  
Երկինքն է նույն շարժում եւ կատեցնում.  
Սկզբում հանդուգն են, բայց հետո անկում են,  
Ապա նաեւ ծաղկունքն է մոռացվում.  
Եւ անցողիկության մասին խորհում եմ.  
Երիտասարդ եք, բայց հաստատ գիտեմ.  
Վիճում են Ժամանակը ու Անկումը  
Որ օրը ձեր մոայլ գիշեր դարձնեն,  
Եւ այդ մարտում Ժամանակին ընդդեմ,  
Ինչ որ կորցնես՝ ձեզ ետ կպատվաստեն:

Երբ ես մտածում ամեն բան, որ աճում է  
Մնում է կատարելության մեջ սոսկ փոքր մի պահ,  
Որ այս հակայական բեմը ներկայացնում է ոչ բան հանդեմներ  
Որտեղ աստղերը գաղտնի ազդեցությամբ մեկնում են.  
Երբ ես հասկանում եմ, որ մարդկանց ինչպես եւ բույսերի աճումը,  
Աջակցում եւ կատեցնում է հենց նույն իբրև երկինքը,  
Հանդուգն են իրենց պատանի հյուսիսի մեջ, բարձրությունից իջնում են,  
Եւ հանդերձն իրենց խրոխտ վիճակի հիշողությունից դուրս է.  
Հետո միտքն այդ անհաստատուն կացության մասին  
Դարձնում է քեզ առավել հարուստ երիտասարդությամբ իմ աչքում,  
Որտեղ կործանիչ Ժամանակը բանավիճում է Քայքայման հետ  
Դարձելու ձեր օրը երիտասարդության մոայլ գիշեր,  
Եւ ամենը պատերազմում Ժամանակի հետ քո սիրո համար,  
Հենց նա վերցնի ձեզնից, եւ կպատվաստեն ձեզ նորը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

16

**B**

ut wherefore do not you a mightier way  
Make war upon this bloody tyrant Time,  
And fortify yourself in your decay  
With means more blessed than my barren rhyme?  
Now stand you on the top of happy hours,  
And many maiden gardens, yet unset,  
With virtuous wish would bear your living flowers,  
Much liker than your painted counterfeit:  
So should the lines of life that life repair  
Which this time's pencil or my pupil pen  
Neither in inward worth nor outward fair  
Can make you live yourself in eyes of men:  
    To give away yourself keeps yourself still,  
    And you must live drawn by your own sweet skill.



Բայց դուք ինչո՞ւ ավել գորեղ ձեռով չեք  
Այդ բիրտ ժամանակին հակադրվում,  
Ավել օրհնյալ կերպով, քան սին տողերս,  
Քայքայումից ձեզ չես պատասպարում:  
Հիմա դուք երջանիկ պահի գագաթն եք,  
Եւ կուսական քանի՞ այգի անտունկ,  
Կընդունեին ձեր կենդանի ջինջ վարդը,  
Ավել նման ձեզ, քան նկարն անշունչ:  
Այդպես պիտ թարմացվեն կյանքի գծերը,  
Երբ ո՛չ վրձինն արդի, ո՛չ գրիչն անհաս,  
Զեն պատկերի ձեր դեմքն ու ձեր հոյզերը,  
Անի, որ դուք ապրեք այչքում մարդկանց:  
    Հենց ձեզ տարով, դու ձեզ կպահպանեք,  
    Յուր հմտությամբ կերտված պիտի ապրեք:

Բայց ինչո՞ւ դուք մի ավելի գորեղ ուղով չեք  
Պատերազմում ընդդեմ այս արնախում բռնակալի՝ ժամանակի,  
Եւ ամրացնում ինքներդ ձեզ քայքայումից  
Սիջոզներով ավելի օրհնյալ, քան իմ սին տողերը:  
Հիմա կանգնած եք գագաթին երջանիկ ժամերի,  
Եւ շատ կուսական այգիներ, դեռ անտունկ,  
Առաքինի ցանկությամբ կընդունի ձեր կենդանի ծաղիկները,  
Ծատ ավելի նման, քան ձեր նկարած կեղծիքը.  
Այսպես պետք է որ գծերը կյանքի, կյանքը վերականգնեն\*  
Որը այս ժամանակի մատիտը կամ իմ աշակերտական գրիչը  
Ոչ ներքին արժանիքը, ոչ էլ արտաքին գեղեցկությունը  
Կարող է անել որ դուք ինքներդ ապրեք մարդկանց այչերում.  
    Տարով ինքներդ ձեզ շարունակում եք պահպանել ձեզ,  
    Եւ դուք պետք է ապրեք պատկերված ձեր սեփական քաղցր հմտությամբ:

\* Խրթին դարձված է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

17



Who will believe my verse in time to come  
If it were filled with your most high deserts?  
Though yet, heaven knows, it is but as a tomb  
Which hides your life, and shows not half your arts.  
If I could write the beauty of your eyes,  
And in fresh numbers number all your graces,  
The age to come would say, 'This poet lies;  
Such heavenly touches ne'er touched earthly faces.'  
So should my papers (yellowed with their age)  
Be scorned, like old men of less truth than tongue,  
And your true rights be termed a poet's rage  
And stretched metre of an antique song:  
But were some child of yours alive that time,  
You should live twice, in it and in my rhyme.





Գիավատա՞ն տաղիս ապագայում,  
Եթե նկարագրեմ ձեր վեհ ձիրքերը,  
Թեեւ, երկինք վկա, երգիս ստվերում,  
Կորչում են այլ անթիվ արժանիքները,  
Թե պատկերել փորձեմ աչաց ձեր լույսը,  
Երգել ամբողջ հմայքն իմ տողերում,  
Կասեն այնժամ. «Ստում է բանասիրտը.  
Կերպ երկնային չունի մահկանացուն»:  
Ուստի իմ ձեռագրերն (այնժամ դեղնած)  
Կարհամարիվեն, որպես բանդագուշանք,  
Կերպարդ կկարծեն սուկ հորինված,  
Եւ կամ հնաշխարհիկ երգի ճոխ հանգ.  
Բայց թե լինի որդիդ այդ օրերում,  
Կասրես կրկնակ. իր մեջ եւ այս երգում:

Ո՞վ կհավատա իմ տաղերին ժամանակում գալիք  
Եթե այն լցված լինի ձեր ամենաբարձր ձիրքերով:  
Թեեւ դեռ, երկինքը գիտի, բայց դա սակայն որպես գերեզման է,  
Որը թաքցնում է ձեր կյանքը եւ ցույց չի տալիս կեար ձեր արժանիքների:  
Եթե ես կարողանայի նկարագրել գեղեցկությունը ձեր աչքերի,  
Եւ թարմ համարներում համրել ձեր բոլոր շնորհները,  
Գալիք դարը կասեր. «Այս բանաստեղծը ստում է.  
Նման երկնային գծեր երբեք չեն ունեցել երկրային դեմքերը»:  
Հետեապես, իմ թղթերը (դեղնած իրենց տարիքից)  
Կարհամարիվեին, ինչպես ծեր մարդիկ պակաս ճշտախոս, բան լեզվանի  
Եւ ձեր իսկական իրավունքները կկոչվեին բանաստեղծի կիրք  
Եւ ձգձգված չափ հնաշխարհիկ երգի.  
Բայց լինել մի գավակ ձեր՝ ապրող այդ ժամանակ,  
Դուք կասրեիք կրկնակի՝ իր մեջ եւ իմ տողում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

18



Shall I compare thee to a summer's day?  
Thou art more lovely and more temperate:  
Rough winds do shake the darling buds of May,  
And summer's lease hath all too short a date;  
Sometime too hot the eye of heaven shines,  
And often is his gold complexion dimmed;  
And every fair from fair sometime declines,  
By chance or nature's changing course untrimmed:  
But thy eternal summer shall not fade,  
Nor lose possession of that fair thou ow'st,  
Nor shall Death brag thou wand'rest in his shade,  
When in eternal lines to time thou grow'st.  
So long as men can breathe or eyes can see,  
So long lives this, and this gives life to thee.



Եզ հետ ես բաղդատեմ ամռան ջերմ ծրը,  
Դու մեղմ ես ավելի ու գեղեցիկ.  
Կոկոնը մայիսյան ցնցում է հողմը,  
Եւ պահն ամռան այնքան է վաղանցիկ.  
Մեկ-մեկ փայլում, այրում է արեգակը,  
Հաճախ էլ մշուշոտ է իր ոսկին.  
Ամեն հրաշք կորցնում է իր հմայքը,  
Երբ բնության անտում է քմայքին.  
Բայց չի խամրի երբեք հավերժ ամառը,  
Եւ չի կորչի պերճանքը քո ուրույն,  
Եւ չի պարծի, թե իր ստվերում ես՝ Մահը,  
Երբ դու աճես անանց այս տողերում:  
Քանի մարդիկ շնչում են ու տեսնում,  
Այդքան քեզ երզն այս ուժ կտա կյանքում:

Ես համեմատեմ քեզ ամառվա օրվա՞ն:  
Դու ավելի սիրուն ու մեղմ ես.  
Կոպիտ քամիները ցնցում են թանկագին կոկոնները Մայիսի,  
Եւ ամառվա վարձակալությունը շատ կարճ ժամկետով է,  
Երբեմն շատ տաք է երկնքի աչքը շողում,  
Եւ հաճախ նրա ոսկե դիմագույնը մշուշոտ է.  
Եւ ամեն գեղեցկություն նախորդ գեղեցկությունից մի ժամանակ նվազում է,  
Պատահականության կամ բնության փոփոխությամբ ասպահարդարվում է.  
Բայց քո հավերժական ամառը չի մարելու,  
Ոչ էլ կկորի քո իրավունքը այդ գեղեցկությունն ունենալու,  
Ոչ Մահը չի կիպարտանա, որ դու դեզերում ես նրա ստվերում,  
Երբ հավերժական տողերում ժամանակով դու կաճես:  
Այնքան երկար, որքան մարդիկ կարող են շնչել, կամ աչքերը կարող են տեսնել,  
Այդքան երկար կապրի սա, եւ սա կտա կյանք քեզ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

19



Devouring time, blunt thou the Lion's paws,  
And make the earth devour her own sweet brood;  
Pluck the keen teeth from the fierce Tiger's jaws,  
And burn the long-lived Phoenix in her blood;  
Make glad and sorry seasons as thou fleet'st,  
And do whate'er thou wilt, swift-footed time,  
To the wide world and all her fading sweets;  
But I forbid thee one most heinous crime:  
O, carve not with thy hours my love's fair brow,  
Nor draw no lines there with thine antique pen;  
Him in thy course untainted do allow  
For beauty's pattern to succeeding men.  
Yet, do thy worst, old time: despite thy wrong,  
My love shall in my verse ever live young.



Ո՞ր ժամանակ, հատի՛ր ճանկն Առյուծի,  
Պոկի՛ր վայրագ Վագրի սուր ժանիքները  
Եւ Փյունիկին իր արյան մեջ այրի՛ր,  
Թող հողն ուտի անգին իր պտուղները.  
Վագրով կերտի՛ր ուրախ եւ գարշ օրեր.  
Արա՛ ուզածդ ժամանակ անհագ  
Բեր պերճանքին այս աշխարհի ավեր  
Ես արգելում եմ քեզ սուկ մեկ հանցանք.  
Ժամերդ չակոսեն սիրուս նուրբ դեմքը  
Հետքով քո հին գրչի գծագրության.  
Թող անվնաս թողնի՛ իրեն քո զենքը,  
Որպէս չքնաղ նմուշ գեղեցկության:  
    Կամ թե արա՛ սեւ գործդ ժամանակ  
    Տաղում իմ նա կայտառ է շարունակ:

Խժող ժամանակ, բթի՛ր դու Առյուծի ճանկերը,  
Եւ արա այնպէս, որ երկիրը խժո՛յ յուր քաղցր ձագերին:  
Պոկի՛ր սուր ատամները կատաղի Վագրի երախից,  
Եւ այրի՛ երկարակյաց Փյունիկին մեջ իր արյան.  
Կերտի՛ր ուրախ եւ տխուր եղանակներ, երբ դու թռչում ես,  
Եւ արա, ինչ դու ուզում ես, արագաւտ ժամանակ,  
Այս ամբողջ աշխարհի եւ բոլոր ներա խամրող հաճույքների հետ.  
Բայց ես արգելում եմ քեզ մեկ ամենաարսափելի հանցանքը.  
Մի, չակոսես քո ժամերով իմ սիրու չքնաղ ճակատը,  
Ոչ էլ քաշես գծեր այնտեղ քո հին գրչով.  
Իրեն քո ընթացքում անվնաս թող  
Որպէս գեղեցկության նմուշ գալիք մարդկանց համար:  
    Կամ էլ, արա՛ քո վատագույնը, ծեր ժամանակ. չնայած քո վնասի  
    Իմ սերը իմ տաղերում միշտ կապրի երիտասարդ:

SHAKE-SPEARES,

SONNETS.



20

Woman's face with nature's own hand painted  
Hast thou, the Master-Mistress of my passion;  
A woman's gentle heart, but not acquainted  
With shifting change, as is false women's fashion;  
An eye more bright than theirs, less false in rolling,  
Gilding the object whereupon it gazeth;  
A man in hue, all hues in his controlling,  
Which steals men's eyes and women's souls amazeth.  
And for a woman wert thou first created,  
Till nature as she wrought thee fell a-doting,  
And by addition me of thee defeated,  
By adding one thing to my purpose nothing.

But since she pricked thee out for women's pleasure,  
Mine be thy love and thy love's use their treasure.



Մնոջ երես, ճոխ բնությամբ գծված  
Ունես՝ կրքիս դու Տեր ու Տիրուհի.  
Կնոջ նուրբ սիրտ, բայց ոչ ստով թույլված,  
Առանց որոշ կանանց կեղծ ձեւերի.  
Աչեր պայծառ ու զերծ կեղծ խաղերից,  
Որոնք ոսկում են այն, ինչին նայում են.  
Առնի կեցվածք, գերող շատ շատերից,  
Որ այք՝ արաց, հոգի՝ կանանց խոցում է:  
Դու նախապես ստեղծվել ես, որպես կին,  
Բայց բնությունը քեզ այրված սիրով  
Ինձնից խլել, փոխել է վերստին,  
Մի բան ինձ անօգուտ հավելելով.  
Բայց քան կերտել է քեզ կանանց համար,  
Թող սերդ ինձ, իրենց՝ սերդ ի կատար:

Կնոջ դեմք՝ բնության սեփական ձեռքով նկարված  
Ունես դու՝ Տեր-Տիրուհի իմ կրքի.  
Կնոջ նուրբ սիրտ, բայց ոչ ծանոթ  
Ծարժական փոփոխությանը, ինչպիսին է կեղծ կանանց ձեւը.  
Այք՝ ավելի պայծառ, քան իրենցը, ավելի քիչ կեղծիքով դերասանական,  
Ոսկեգօծող՝ առարկան, որին այն նայում է.  
Առնական կեցվածքով, բոլոր կեցվածքները իրենով վերահսկող,  
Որ հափշտակում է տղամարդկանց այքեր եւ կանանց հոգիներ խոցում:  
Եւ կին լինելու համար ես դու նախ ստեղծվել,  
Բայց բնությունը, երբ նե պատրաստում էր քեզ, սիրահարվեց  
Եւ ավելացնելով, ինձ քեզնից խլեց,  
Հավելելով մի բան, ինձ ոչ պիտանի:  
Բայց քանի որ նե սածիլ արեց\* քեզ կանանց հաճույքի համար,  
Իմը լինի քո սերը, եւ քո սիրո գործածումը՝ նրանց գանձը:

\* «prick out» բառակապակցությունը նշանակում է «սածիլ անել», տվյալ դեպքում, թերեւս՝ «պատվաստել, կերտել» իմաստով (թեեւ հաճախ մեկնում են որպես «ընտրել»), սակայն «prick» բառը որպես գոեհկաբանություն, ունի նաեւ «առնանդամ» իմաստը, ու, կարծիք կա, որ գործածված է բառախաղի համար՝ ակնարկելով «հավելված մի բանը»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

21



So is it not with me as with that Muse,  
Stirred by a painted beauty to his verse,  
Who heaven itself for ornament doth use,  
And every fair with his fair doth rehearse,  
Making a couplement of proud compare  
With sun and moon, with earth and sea's rich gems,  
With April's first-born flowers, and all things rare  
That heaven's air in this huge rondure hems.  
O let me, true in love, but truly write,  
And then believe me, my love is as fair  
As any mother's child, though not so bright  
As those gold candles fixed in heaven's air:  
Let them say more that like of hearsay well,  
I will not praise that purpose not to sell.





Ոչ, նրանցից չեմ ես ում Մուսային,  
Պճնանքն է շռայլված ոգետրում,  
Որ գործածում են զարդ որպես՝ երկինն  
Ու հրաշքներ ձոնում իրենց սիրուն,  
Իր հետ գոռոզաբար համեմատում են  
Երկրի, ծովի ակներ, արեւ, լուսին,  
Գարնան ծաղիկ, ամենը, ինչ աճում է,  
Երկնի հսկա այս գմբեթի տակին:  
Թող սերը իմ ու խափս ճիշտ լինի,  
Վստահ եղեք, որ չի զիջի իմ սերը  
Մորից ծնվածներին. թող չփայլի  
Ինչպես երկնում վառվող ոսկի ջահերը.  
Թող նա՛ խոսի, ով գովք է լոկ սիրում,  
Ես չեմ գովի այն, ինչը չեմ ծախում:

Այնպես որ, ինձ հետ կապ չունի, որ Մուսան,  
Ոգեչնչվի ներկված գեղեցկությամբ՝ առ իր տաղը,  
Ով երկինքն ինքը զարդարելու համար է գործածում,  
Եւ ամեն ջքնաղ բան իր ջքնաղի հետ է համեմատում,  
Անելով զուգորդումներ գոռոզ համեմատությունների  
Արեւի եւ լուսնի հետ, երկրի եւ ծովի հարուստ ակների հետ,  
Ապրիլի առաջնածին ծաղիկների հետ, եւ ամեն բանի՝ հազվագյուտ,  
Որը երկնքի օդն է այս հսկայական կյոթ գմբեթում:  
Մի թող ինձ, որ ճիշտ եմ սիրո մեջ, բայց ճշտորեն գրեմ,  
Եւ ապա հավատացեք ինձ, իմ սերը նույնքան ջքնաղ է,  
Ինչպես որեւէ մոր զավակ, թեեւ ոչ այնքան լուսավոր,  
Որքան այն ոսկյա մոմերը՝ սեւեռված երկնքի օդում.

Թող նրանք ասեն ավելին, ովքեր սիրում են ասեկոսները ավելի լավ,  
Ես չեմ գովի, ինչը մտադիր չեմ ծախել:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

22



My glass shall not persuade me I am old,  
So long as youth and thou are of one date,  
But when in thee time's furrows I behold,  
Then look I death my days should expiate:  
For all that beauty that doth cover thee  
Is but the seemly raiment of my heart,  
Which in thy breast doth live, as thine in me.  
How can I then be elder than thou art?  
O therefore, love, be of thyself so wary  
As I not for myself but for thee will,  
Bearing thy heart, which I will keep so chary  
As tender nurse her babe from faring ill:  
Presume not on thy heart when mine is slain;  
Thou gav'st me thine, not to give back again.



Ի համոզի ինձ հայելիս, որ ծեր եմ,  
Քանի դեռ դու կայտատ ես, պարմանի,  
Բայց երբ տեսնեմ քո տարիքիդ գծերը  
Այնժամ ես զգում եմ, մահն ինձ կտանի.  
Քանզի քո ողջ անզին գեղեցկությունը,  
Այլ բան չէ, քան չքնաղ հանդերձ սրտիս,  
Որ քո կրծքում, ես քոն էլ՝ իմ կրծքում է:  
Ուրեմն չեմ կարող ես մեծ լինել քեզնից:  
Ո՛հ, սեր իմ, ինչայիդ դու քեզ խնդրում եմ,  
Ինչպես ես ես՝ հանուն ոչ ինձ այլ՝ քեզ.  
Քո սիրտն իմ մեջ է, ես այն պաշտպանում եմ,  
Մանկանը փայփայող քնքուշ մոր պես.  
Դու սիրտդ չես ստանա, եթե մեռնեմ.  
Այն չես տվել որ ետ վերադարձնեմ:

Իմ հայելին չի համոզի ինձ, որ ես ծեր եմ,  
Քանի դեռ երիտասարդությունն ու դու միեւնույն տարիքի եք,  
Բայց երբ քո մեջ ժամանակի ակունքերը ես տեսնեմ,  
Այդժամ, երեւի, ես կմեռնեմ, իմ օրերը կսպառվեն.  
Քանզի ամբողջ այն գեղեցկությունը, որ քեզ պատում է  
Այլ բան չէ, քան պատշաճ հանդերձ իմ սրտի,  
Որ քո կրծքում է ապրում, ինչպես քոնը՝ իմ մեջ:  
Ինչպես կարող եմ ես այդ դեպքում լինել ավելի տարեց, քան դու:  
Ո՛հ, ուրեմն, սեր, եղիբ քո նկատմամբ այնքան զգուշավոր,  
Որքան ես՝ ոչ ինձ համար, այլ քեզ համար,  
Կրեւով քո սիրտը, որը ես կպահեմ այնքան զգուշ  
Ինչպես քնքուշ դայակը իր մանկանը՝ հեռու հնարավոր ցավից.  
Հույս մի ունեցիր քո սրտի հաշվով, երբ իմը մեռնի.  
Դու տվել ես ինձ քոնը, ոչ հետ ստանալու կրկին:

SHAKE-SPEARES,  
SONNETS.



23

Is an imperfect actor on the stage,  
Who with his fear is put besides his part,  
Or some fierce thing replete with too much rage,  
Whose strength's abundance weakens his own heart;  
So I, for fear of trust, forget to say  
The perfect ceremony of love's rite,  
And in mine own love's strength seem to decay,  
O'ercharged with burden of mine own love's might:  
O let my books be then the eloquence  
And dumb presagers of my speaking breast,  
Who plead for love, and look for recompense,  
More than that tongue that more hath more expressed.  
O learn to read what silent love hath writ:  
To hear with eyes belongs to love's fine wit.



Այսպես բեմի վրա վատ դերասանը,  
Որ, շփոթված, բառերն է մոռանում,  
Կամ զայրույթով լցված մոլի գազանը,  
Ում սիրտն է հավելյալ ուժից մարում.  
Այդպես վախից, ահա ես մոռանում եմ  
Սիրո ծեսի խոսքերը կատարյալ,  
Եւ ինձ թվում է, սերս նվազում է,  
Հենց իր հզորության բեռով ճնշյալ:  
Ոհ թող աչքերս պերճախոս լինեն  
Եւ իմ սրտի համր ավետաբերները,  
Որ սեր հայցեն ու հատուցում խնդրեն  
Ավել քան շատախոս լեզվի բառերը:  
Փորձիր կարդալ լռին սիրո գրածը.  
Աչքով լսելն է սիրելու նուրբ գանձը:

Որպես անկատար դերասան բեմի վրա,  
Ով իր վախով դրվում է դուրս իր դերից,  
Կամ ինչ-որ կատաղի եակ, լցված շատ մեծ կատաղությամբ,  
Ում ուժի ավելցուկը թուլացնում է իր սեփական սիրտը.  
Այդպես ես, պատասխանատվության վախից, մոռանում եմ ասել  
Կատարյալ արարողությունը սիրո ծեսի,  
Եւ իմ սեփական սիրո ուժը կարծես քայքայվում է,  
Ճնշված բեռով իմ սեփական սիրո կարողության:  
Ոհ, թող իմ հայացքները\* լինեն այսուհետ պերճախոս  
Եւ համար ավետաբերները իմ խոսող կրծքի,  
Ով հայցում է սեր եւ փնտրում հատուցում,  
Ավելին, քան այն լեզուն, որն ավելի շատ է արտահայտել:  
Ոհ սովորիր կարդալ, յե ինչ է լուռ սերը գրել.  
Լսելը աչքերով պատկանում է սիրելու նուրբ խելքին:

\* Կա կարծիք, որ «books» բառը վրիպակի արդյունք է, եւ պետք է կարդալ «looks»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

24



Mine eye hath played the painter and hath stelled  
Thy beauty's form in table of my heart;  
My body is the frame wherein 'tis held,  
And perspective it is best painter's art.  
For through the painter must you see his skill  
To find where your true image pictured lies,  
Which in my bosom's shop is hanging still,  
That hath his windows glazed with, thine eyes.  
Now see what good turns eyes for eyes have done:  
Mine eyes have drawn thy shape, and thine for me  
Are windows to my breast, wherethrough the sun  
Delights to peep, to gaze therein on thee.  
Yet eyes this cunning want to grace their art,  
They draw but what they see, know not the heart.



Աչքերս նկարչի պես պատկերել են  
 Կերպարդ պերճ՝ թղթին այս իմ սրտի  
 Մարմինն իմ շրջանակ՝ այն պարուրել է.  
 Հեռանկարն է ձիրքը վարպետի:  
 Մեծ ձիրքը պիտ տեսնեք հենց նկարչում,  
 Գտնեք, խորքում դրված ձեր ճիշտ պատկերը,  
 Դեռ փակցված կրծքիս իմ սրահում,  
 Որի պատուհաններն են քո աչքերը:  
 Դու տես բարիքն արված աչքով՝ աչքի.  
 Պատկերդ նկարել են իմ աչքերը,  
 Իսկ քոնն էլ՝ պատուհանն են իմ կրծքի,  
 Որով սիրում է քեզ նայել արեւը:  
 Աչքերն էլ դեռ հմուտ լինեն պիտի.  
 Իրենց տեսածն են նկարում, այլ ոչ՝ սրտի:

Իմ աչքը խաղաղել է նկարչի դեր եւ թողել  
 Քո գեղեցկության ձեւը՝ իմ սրտի սեղանին [կտավին].  
 Իմ մարմինը շրջանակն է, որում պահվում է,  
 Եւ հեռանկարը դա լավագույն նկարչի հմտությունն է\*:  
 Որովհետեւ նկարչի միջով պետք է տեսնեք նրա վարպետությունը\*\*  
 Գտնելու համար, թե որտեղ է գտնվում ձեր իրական պատկերը,  
 Որ իմ կրծքի սրահում կախված է դեռ,  
 Որի պատուհանները ապակեպատված են քո աչքերով:  
 Հիմա տես, թե ինչ բարիք են արել աչքերը աչքերին.  
 Իմ աչքերը նկարել են քո ուրվագիծը եւ քոնը՝ ինձ համար  
 Պատուհաններն իմ կրծքի, որոնց միջով արեւը  
 Սիրում է աչք գցել, դիտելու համար ներսում քեզ վրա:  
 Բայց դեռ աչքերը այս ճարպկությամբ կուգեին զարդարել իրենց արվեստը,  
 Նրանք նկարում են, բայց այն, ինչ տեսնում են, չգիտեն սրտին:

\* Սովորաբար մեկնում են այն իմաստով, որ նկարը մարմնի խորքում է, այսինքն  
 այն ներկայանում է հեռանկարի մեջ: Շեքսպիրի օրոք հեռանկարի տեսությունը  
 ձեւավորման փուլում էր եւ դրա կիրառելու հմտությունը կարող էր նկարչի  
 վարպետության վկայությունը համարվել:  
 \*\* Պարզ չէ, թե այդ մտ՝ «նրա» վարպետության մասին է խոսքը: Կա կարծիք, որ  
 խոսքը արվեստի մասին է, որի արտահայտիչն է նկարիչը: Իսկ գուցե վրիպակ է:  
 Թերեւս, վրիպակ է նաեւ միջնամասում անցումը հոգնակի դերանունների:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

25



Let those who are in favour with their stars  
Of public honour and proud titles boast,  
Whilst I, whom fortune of such triumph bars,  
Unlooked for joy in that I honour most.  
Great princes' favourites their fair leaves spread  
But as the marigold at the sun's eye,  
And in themselves their pride lies buried,  
For at a frown they in their glory die.  
The painful warrior famed for fight,  
After a thousand victories once foiled,  
Is from the book of honour rased quite,  
And all the rest forgot for which he toiled:  
Then happy I that love and am beloved,  
Where I may not remove, nor be removed.





Ուն նկատմամբ աստղերը բարեհաճ են  
Թող պարծենան կոչմամբ եւ պաշտոնով,  
Իսկ իմ բախտով ճամփաս փառքից զատված է,  
Անտես եմ, բայց եւ գոհ եմ դրանով:  
Մեծ տերերի սիրեցյալներն աճում են,  
Ինչպես վաղենիկներն արեւ տեսած,  
Սակայն գոռոզությունն իրենց կորչում է.  
Տիրոջ խիստ հայացքով փառքից զրկված:  
Եւ հոգնաբեկ, բայց փառավոր զինվորը,  
Հազար հաղթանակից հետո պարտված,  
Պատվո գրքից անվերադարձ ջնջվում է,  
Ամբողջ մեծ վաստակով իր մոռացված:  
Ու երջանիկ եմ ես՝ սիրված, սիրող,  
Եւ չի լինի ինձ սրանից զրկող:

Թող նրանք, ովքեր բարեհաճության մեջ են իրենց աստղերի  
Հանրային պատվով եւ հպարտ անուններով պարծենան,  
Մինչդեռ ես, ում բախտը այդպիսի փառքից արգելափակված է,  
Անտեսված, ուրախանում եմ այն բանով ինչը եւ մեծարում եմ առավել:  
Մեծ իշխանների ընտրյալները իրենց չքնաղ տերեւներն են տարածվում,  
Բայց ինչպես վաղենիկը արեգակի աչքի տակ,  
Եւ իրենց մեջ իրենց հպարտությունը թաղված է,  
Որովհետեւ խոժոռ հայացքից նրանք իրենց փառքի մեջ մտնում են:  
Հոգնաբեկ մարտիկը, որը փառավորված էր մարտերով,  
Հազար հաղթանակներից հետո մեկ անգամ ձախողված,  
Պատվո գրքից ջնջում է իսպառ,  
Եւ բոլոր մնացածը մոռացվում է, ինչի համար նա չարչարվել էր.  
Ապա երջանիկ եմ ես, որ սիրում եմ եւ սիրված եմ,  
Որտեղից եւ չեմ կարող ոչ հեռանալ, ոչ էլ հեռացվել:

SHAKE-SPEARES,

SONNETS.

26



Lord of my love, to whom in vassalage  
Thy merit hath my duty strongly knit,  
To thee I send this written embassage  
To witness duty, not to show my wit;  
Duty so great, which wit so poor as mine  
May make seem bare, in wanting words to show it,  
But that I hope some good conceit of thine  
In thy soul's thought (all naked) will bestow it,  
Till whatsoever star that guides my moving  
Points on me graciously with fair aspect,  
And puts apparel on my tottered loving,  
To show me worthy of thy sweet respect:  
Then may I dare to boast how I do love thee,  
Till then, not show my head where thou mayst prove me.



Սիրո իմ տեր, ում՝ ավատառությունս  
Ամրապնդել են քո արժանիքները,  
Հղում եմ գրավոր դեպատությունն այս,  
Որ պարտքս հավաստեմ իմ՝ ոչ մտքերս.  
Պարտք՝ մեծ այնքան, որ մերկ, տկար իմ միտքը  
Բառ չի գտնի, որ այն ներկայացնի,  
Բայց ես հուսով եմ, որ բարի կարծիքդ  
Հոգուդ խորքում ինչ մերկ է՝ թաքցնի,  
Մինչ աստղս ուղեցույց ինձ նկատի ու  
Նայի ինձ բարեհաճ, գլխդ աչքով,  
Եւ սերս իւեղճ, մաշված զգեստավորի ինչ,  
Քո հարգանքին արժան ինձ դարձնելով:  
Այդժամ, գուցե, ժոռեմ բացել իմ սերը,  
Մինչ այդ կուգեմ ինձ չտեսնեն աչքերդ:

Տեր իմ սիրո, ում ավատառության կարգով  
Քո արժանիքը ինձ պարտքով անուր կապել է,  
Քեզ եմ ես ուղարկում այս գրավոր դեպատությունը  
Որ հավաստեմ պարտքս, ոչ որ ցուցադրեմ իմ միտքը.  
Պարտք այնքան մեծ, որ միտքն այսքան աղքատ, որքան իմը  
Կարող է թվալ մերկ, բառեր որոնելիս, որ ցուցադրի այն,  
Բայց ես հուսով եմ, որ ետ բարի կարծիք քո  
Քո հոգու մտքում\* ամբողջ մերկությունը կտեղադրի\*\*,  
Մինչև որ որեւէ աստղ, որ ուղղորդում է իմ շարժումը,  
Կնչի ինձ ողորմածությամբ՝ բարենպաստ դիրքից,  
Եւ կրնի հագուստ իմ քայքայված սիրո վրա,  
Ներկայացնելու ինձ արժանի քո քաղցր հարգանքին:  
Այդժամ կարող է ես հանդգնեմ պարծենալ, որքան եմ սիրում քեզ,  
Մինչ այդ, չեմ ցուցադրի իմ գուրբը ուր դու կարող ես փորձել ինձ:

\* թերեւս՝ «հոգու խորքում»

\*\* թերեւս՝ «մերկությունը կթաքցնի»

SHAKE-SPEARES,  
SONNETS.

27



Wearry with toil, I baste me to my bed,  
The dear repose for limbs with travel tired,  
But then begins a journey in my head,  
To work my mind, when body's work's expired;  
For then my thoughts (from far where I abide)  
Intend a zealous pilgrimage to thee,  
And keep my drooping eyelids open wide,  
Looking on darkness which the blind do see;  
Save that my soul's imaginary sight  
Presents thy shadow to my sightless view,  
Which, like a jewel (hung in ghastly night),  
Makes black night beauteous, and her old face new.  
Lo thus by day my limbs, by night my mind,  
For thee, and for myself, no quiet find.



Երանիից հոգնած գամվում եմ անկողնուն՝  
Տենչած հանգիստ, երբ վերջույթներն հոգնած են,  
Բայց անցուդարձ գլխունս է սկսվում,  
Շարժվում հոգիս, երբ գործն ոտքիս սպառված է.  
Մտքերս էլ այս հեռվից, ուր բնակվում եմ,  
Սկսում են եռանդուն մի ուխտ դեպ քեզ  
Եւ իմ կաչող կոպերը լայն բացում են,  
Որ ես մթին նայեմ մի կույր ասես.  
Սակայն հոգուս անհրական հայացքը  
Կույր աչքերիս տեսիլքն քո բերում,  
Որն ահարկու մթում որպես մի ակն  
Փայլում է ու գիշերն է լուսացնում:  
Այսպես՝ քո, իմ համար չունեն հանգիստ,  
Յերեկ՝ ոտքերս, գիշերով՝ հոգիս:

Հոգնած հոգուերից ես գամում եմ ինձ իմ անկողնուն՝  
Ցանկալի հանգիստ վերջույթներին՝ ուղեորությունից հոգնած,  
Բայց այնժամ սկսվում է ճանապարհորդություն իմ գլխում,  
Աշխատացնում իմ միտքը, երբ մարմնի գործն ավարտվել է.  
Քանի որ այդժամ իմ մտքերը՝ հեռվից, ուր ես օթեանում եմ,  
Նախաձեռնում են եռանդուն ուխտագնացություն դեպի քեզ  
Եւ պահում են իմ փակվող կոպերս բաց լայնորեն,  
Նայելով մթությանը, որը կույրն է տեսնում.  
Բայց իմ հոգու երեսակայական հայացքը  
Ներկայացնում է քո սովերը իմ չտեսնող հայացքին,  
Որն ինչպես ակն, ահարկու գիշերվա մեջ,  
Դարձնում է սեւ գիշերը չքնադ, իսկ նրա ծեր դեմքը՝ նոր:  
Ահա այսպես զերեկն՝ իմ վերջույթները, գիշերը՝ իմ միտքը,  
Հանուն քո եւ հանուն ինձ, չեն գտնում հանգիստ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

28



How can I then return in happy plight  
That am debarred the benefit of rest?  
When day's oppression is not eased by night,  
But day by night and night by day oppressed;  
And each (though enemies to either's reign)  
Do in consent shake hands to torture me,  
The one by toil, the other to complain  
How far I toil, still farther off from thee.  
I tell the day to please him thou art bright,  
And dost him grace when clouds do blot the heaven;  
So flatter I the swart-complexioned night,  
When sparkling stars twire not thou gild'st the even:  
    But day doth daily draw my sorrows longer,  
    And night doth nightly make griefs' strength seem stronger.



Ինչպէն բացեմ եւ վայելքի դռները  
Թե արգելված է ինձ խաղաղ անդորրը:  
Երբ բեռն օրվա չի նվազում գիշերը.  
Ճնշված են մեկմեկուց գիշերն ու օրը.  
Եւ այս երկունս էլ (փոխաստյաց զոյգով)  
Տանջում են ինձ ձեռքով ձեռքի տված,  
Հոգսով այս մեկը, մյուսը՝ տրտունջով,  
Որ քեզանից մնում եմ հեռացած:  
Օրվան շոյում եմ, թե այնքան պայծառ ես,  
Որ ամպամած երկինք կլուսացնես.  
Ասում եմ ի հաճոյս սեւ գիշերվան ես,  
Թե աստղ որպէս խավար կոսկեգօծես.  
Բայց օրն օրով ձգում է տառապանքս,  
Գիշերն էլ գիշերով՝ զորում տանջանքս:

Ինչպէն կարող եմ ես ուրեմն վերադառնալ ուրախ վիճակի  
Եթե ինձ արգելված է օգուտը հանգստի:  
Երբ օրվա ճնշումը չի թուլանում գիշերը,  
Բայց օրը՝ գիշերով եւ գիշերը՝ օրով ճնշված են.  
Եւ յուրաքանչյուրը (չնայած որ թշնամիներ են միմյանց իշխանության)  
Համաձայնության մեջ ձեռք են սեղմում տանջելու ինձ,  
Սեկը՝ ծանր գործով, մյուսը՝ տրտունջով  
Թե որքան ես տանջվում եմ, այնքան հեռանում եմ քեզնից:  
Ես ասում եմ օրվան, իրեն հաճոյանալու համար, որ դու շատ լուսավոր ես,  
Եւ հաճոյք ես իրեն պատճառում, երբ ամպերը ծածկում են երկինքը.  
Նոյնպէս հաճոյախոսում եմ ես սեւադեմ գիշերվան.  
Երբ փայլող աստղերը չեն առկայծում, դու ոսկեգօծում ես երեկոն.  
Բայց օրն ամեն օր երկարաձգում է իմ վշտերը,  
Եւ գիշերն ամեն գիշեր անում է, որ իմ տխրության ուժը թվա ավելի ուժեղ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

29



When in disgrace with Fortune and men's eyes,  
I all alone beweepe my outcast state,  
And trouble deaf heaven with my bootless cries,  
And look upon myself and curse my fate,  
Wishing me like to one more rich in hope,  
Featured like him, like him with friends possessed,  
Desiring this man's art and that man's scope,  
With what I most enjoy contented least;  
Yet in these thoughts myself almost despising,  
Haply I think on thee, and then my state  
(Like to the lark at break of day arising  
From sullen earth) sings hymns at heaven's gate;  
For thy sweet love rememb'ed such wealth brings  
That then I scorn to change my state with kings.





Երբ ես լքված Բախտից եւ մարդկանցից,  
Ողբում եմ միայնակ մերժված իմ կյանքս,  
Եւ զուր դիմում երկնին անկարելից,  
Եւ ինձ նայում եւ անիծում վիճակս,  
Տենչում մեկին ոգով իր նմանվել,  
Մեկին՝ դեմքով, մյուսին՝ շրջապատով,  
Եւ կամ մեկի արհեստը յուրացնել,  
Եւ հաճույքի էլ չեմ ձգտում հոգով.  
Բայց կողմ թողած մտքիս տեղապտույտը,  
Հանկարծ հիշում եմ քեզ, եւ իմ հոգին  
(Ինչպես ծագին գետնից ելնող արտույտը)  
Սկսում է երգ երկնի դարպասներին.  
Քանզի քո սերն է մեծագույն իմ գանձս  
Եւ արքայի հետ չեմ փոխի վիճակս:

Երբ արհամարհված Ճակատագրից եւ մարդկանց աչքերում,  
Ես լիովին մենակ ողբում եմ իմ մերժված վիճակը,  
Եւ անհանգստացնում խոլ երկինքը իմ զուր լացով,  
Եւ նայում եմ ինձ վրա եւ անիծում իմ ճակատագիրը,  
Ցանկանալով ինձ նմանվելու մեկին՝ ավելի հարուստին՝ հույսով,  
Արտաքնապես նմանվել սրան, նմանվել նրան ընկերներ ունենալով,  
Ցանկանալ այս մարդու հմտությունը եւ այն մարդու տեսադաշտով,  
Ինչից ես առավել հաճույք եմ ստանում, բավարարվում եմ քիչ.  
Բայց այդ մտքերի մեջ ինձ համարյա արհամարհելով,  
Հանկարծ ես մտածում եմ քո մասին, եւ ապա իմ վիճակը  
(Ինչպես արտույտը արեւածագին բարձրացող  
Մռայլ հողից) երգում է օրհներգեր երկնային դարպասի մոտ.  
Քանի որ քո քաղցր սերը հիշելը այնպիսի հարստություն է բերում  
Որ դրանից հետո ես կիրաժարվեմ փոխել իմ վիճակը արքաների հետ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

30



When to the sessions of sweet silent thought  
I summon up remembrance of things past,  
I sigh the lack of many a thing I sought,  
And with old woes new wail my dear time's waste:  
Then can I drown an eye (unused to flow)  
For precious friends hid in death's dateless night,  
And weep afresh love's long since cancelled woe,  
And moan thèxpense of many a vanished sight;  
Then can I grieve at grievances foregone,  
And heavily from woe to woe tell o'er  
The sad account of fore-bemoaned moan,  
Which I new pay as if not paid before:  
    But if the while I think on thee (dear friend)  
    All losses are restored, and sorrows end.



Երբ ես դատին՝ անուշ անձայն մտքի  
Կոչում եմ անցյալի մասին հուշերս  
Կամ ողբն անում իմ զուր փնտրտուքի,  
Եւ վերստին սգում անցած օրերս.  
Կարող եմ հեղեղել չորցած աչքերս  
Ընկերներիս համար՝ ընդմիշտ մեկնած,  
Եւ վերստին լացել սիրո ցավերս,  
Եւ տրտնջալ տեսիլներից չքված.  
Կարող եմ ես վշտել վշտից անցած,  
Եւ ծանրագին ողբից ողբով կրկնել  
Տխուր իմ պարտքը՝ հին ցավից ցաված,  
Որ պիտ ես տամ, կարծես թէ չեմ տվել.  
Բայց երբ որ քեզ եմ, իմ ընկեր, հիշում  
Դառնում է ես կորցրածս, ցավն՝ անցնում:

Երբ դատին՝ քաղցր լուս մտքի  
Ես կոչում եմ հիշողությունը բաների մասին անցած,  
Ես հառաչում եմ, շատ բաների չլինելու համար, որոնք ես փնտրում էի,  
Եւ հին վշտերով նորից ողբում իմ լավ ժամանակի կորուստը.  
Այդժամ կարող եմ հեղեղել աչք (արտասովորում անսովոր)  
Թանկագին ընկերների համար՝ թաքնված մահվան անժամկետ գիշերում,  
Եւ լացել նորից սիրո՝ վաղուց ավարտված ողբը,  
Եւ տրտնջալ շատ բաների անհետացած տեսքից.  
Այդժամ կարող եմ վշտալ վշտերից անցած,  
Եւ ծանր, ողբից ողբ, կրկնել  
Տխուր հաշիվը նախա-տրտնջած տրտնջի,  
Որը ես նորից եմ վճարում, կարծես վճարված չէր նախկինում.  
Բայց եթե այդ ընթացքում ես մտածում եմ քո մասին (սիրելի ընկեր)  
Բոլոր կորուստները վերականգնվում են, եւ ցավերն ավարտվում:

SHAKE-SPEARES,

SONNETS.

31



Why bosom is endeared with all hearts,  
Which I by lacking have supposed dead,  
And there reigns love and all love's loving parts,  
And all those friends which I thought buried.  
How many a holy and obsequious tear  
Hath dear religious love stol'n from mine eye,  
As interest of the dead; which now appear  
But things removed that hidden in thee lie!  
Thou art the grave where buried love doth live,  
Hung with the trophies of my lovers gone,  
Who all their parts of me to thee did give;  
That due of many now is thine alone.

    Their images I loved I view in thee,  
    And thou (all they) hast all the all of me.



Քո կուրծքն է թանկ բոլոր այն սրտերով,  
Որոնք ես համարում էի մեռած,  
Եւ անդ տիրում են սերն իր հույզերով  
Եւ ընկերներն, ում գիտեի թաղված:  
Որքան շատ սուրբ եւ բարեհաճ արցունք է  
Անհուն այդ սերն իմ աչքերից կորզել  
Իրենց օգտին. ովքեր ասես երկունք են  
Քո մեջ թաքուն գտել եւ բնակվել:  
Ծիրիմ ես դու, ուր սերն հողված ապրում է,  
Կախված են ավարներն իմ սերերի,  
Ովքեր տվել են քեզ հոգուս ավյունը.  
Եւ քոնն է արդ, ինչ ձոն էր շատերին:  
Քո մեջ իրենց տեսնում եմ բոլորին,  
Եւ դու՝ նրանք՝ ունեք ինձ լիովին:

Քո կուրծքը հմայիչ է բոլոր սրտերով,  
Որոնք ես, դրանցից զոկված լինելով, համարել եմ մեռած,  
Եւ այնտեղ տիրում են սերը եւ սիրո բոլոր սիրող բաղադրիչները,  
Եւ բոլոր այն ընկերները, ում ես կարծում էի թաղված:  
Որքան շատ սուրբ եւ բարեհաճ արտասուք  
Թանկագին, կրոնական սերը հափշտակել է իմ աչքերից,  
Որպես շահույթ՝ մեռածների. որոնք այժմ թվում են  
Սոսկ բաներ հեռացված, որ թաքնված են քո մեջ:  
Դու գերեզման ես, որում թաղված սերն ապրում է,  
Կախված մարտավարով իմ սիրեցյալների՝ հեռացած,  
Ովքեր բոլոր իրենց մասնաբաժիններն իմ նկատմամբ քեզ են տվել.  
Ինչ շատերինն էր, այժմ քոնն է միայն:  
Իրենց կերպարները, որոնք ես սիրում եմ, ես տեսնում եմ քո մեջ,  
Եւ դու (բոլոր նրանք) ունեն բոլորը ինձ ամբողջությամբ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

32



If thou survive my well-contented day,  
When that churl Death my bones with dust shall cover,  
And shalt by fortune once more re-survey  
These poor rude lines of thy deceased lover,  
Compare them with the bett'ring of the time,  
And though they be outstripped by every pen,  
Reserve them for my love, not for their rhyme,  
Exceeded by the height of happier men.  
O then vouchsafe me but this loving thought:  
'Had my friend's Muse grown with this growing age,  
A dearer birth than this his love had brought  
To march in ranks of better equipage:  
But since he died, and poets better prove,  
Theirs for their style I'll read, his for his love'.



Թե դու ապրես իմ օրը հատուցման,  
Երբ Մահն իմ ոսկրերին մոխիր կածի,  
Եւ կնայես հանկարծ կրկին անգամ  
Տողերն անկոփ՝ ննջած քո սիրակցի,  
Օրվա լավ երկերին դու բաղդատիր,  
Ու թող զիջեն դրանք այլոց գրչին,  
Պահիր հանուն սիրուս եւ, ոչ հանգի՝  
Գերազանցված ոճով ավել նրբին:  
Այդժամ պատվիր ինձ այսպիսի մտքով.  
«Թե մտերմիս Մուսան դարով աճեր,  
Ավել քան սա կաներ նա իր սիրով,  
Ավել զինված շարքում նա կքայլեր.  
Բայց նա մեռավ, եւ կկարդամ այսու,  
Նրանց՝ ոճի համար, իրեն՝ սիրու»:

Եթե դու վերապրես իմ լավ բավարարության օրը,  
Երբ այդ բոի Մահն իմ ոսկրները փռով կծածկի,  
Եւ ճակատագրի բերումով մեկ անգամ ես կվերանայես  
Այդ աղքատիկ անկոփ տողերը քո հանգուցյալ սիրեցյալի,  
Համեմատիր դրանք ավելի լավերի հետ՝ այդ ժամանակի,  
Ու թեւ դրանք առաջ անցված կլինեն ցանկացած գրչի կողմից,  
Պահպանիր դրանք իմ սիրույն, ոչ դրանց հանգի համար,  
Գերազանցված բարձրությամբ ավելի երջանիկ մարդկանց:  
Ու, այդժամ արժանացրու ինձ այս սիրալիր մտքով.  
«Եթե իմ ընկերոջ Մուսան աճեր այս աճող դարի հետ,  
Սի ավելի արժեքավոր ծնունդ քան սա իր սերը կբերեր,  
Քայլերու համար շարքերում ավելի լավ սպառազինվածների.

Բայց քանի որ նա մեռավ, եւ բանաստեղծներն ավելի լավն են դարձել,  
Դրանց իրենց ոճի համար ես կկարդամ, իրեն՝ իր սիրո համար»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.



33

Full many a glorious morning have I seen  
Flatter the mountain tops with sovereign eye,  
Kissing with golden face the meadows green,  
Gilding pale streams with heavenly alcumy,  
Anon permit the basest clouds to ride  
With ugly rack on his celestial face,  
And from the forlorn world his visage hide,  
Stealing unseen to west with this disgrace:  
Even so my sun one early morn did shine  
With all triumphant splendor on my brow;  
But out alack, he was but one hour mine,  
The region cloud hath masked him from me now.  
Yet him for this my love no whit disdaineth:  
Suns of the world may stain, when heaven's sun staineth.





Բազում անգամ տեսել եմ. առավոտը  
Պատվում է գագաթները վեհ ակով,  
Շոյում ոսկի դեմքով դաշտի թարմ խոտը,  
Ոսկում գունատ ջրերն երկնի դեղով,  
Եւ արտոնում է ստոր ամպոց արշավը  
Իր վեհ դեմքի վրա՝ տձեւ կարգով,  
Եւ ծածկելով լքված երկրից կերպարը,  
Սողում անտես դեպ մայրամուտ՝ փութով.  
Այդպես շողաց արեւն իմ մի անգամ  
Իմ ճակատին՝ ողջ հաղթական փառքով.  
Բայց իմն եղավ, ավաղ, նա սուկ մեկ ժամ,  
Եւ ամպը դիմակեց իրեն քողով:  
Նրան բայց սերն իմ չի արհամարհում.  
Նույնիսկ երկնի արեւն է շղարշվում:

Բազում անգամ փառահեղ առավոտը ես տեսել եմ  
Պատվում է լեռների գագաթները ինքնիշխան աչքով,  
Հավելով ոսկի երեսով մարգագետինների կանաչին,  
Ոսկեգոծելով գունատ առվակները երկնային ալքիմիայով,  
Շոտով արտոնելով ստոր ամպերին շարժվել  
Տգեղ կարգով իր աստվածային դեմքի վրա,  
Եւ լքված աշխարհից իր կերպարանքը թաքցնելով,  
Սողում է անտես դեպի արեւմուտք՝ այսպես ամոթով.  
Այդպես էլ իմ արեւը մի վաղ առավոտ շողաց  
Ողջ հաղթական փառահեղությամբ իմ ճակատին.  
Բայց ավաղ, նա եղավ սուկ մեկ ժամ իմը,  
Ամայի տարածքը դիմակեց իրեն ինձնից այժմ:

Սակայն նրան դրա համար իմ սերը ոչ մի չափով չի արհամարհած.  
Արեւներն երկրի կարող են բծավորվել, երբ երկնի արեւն է բծավորված:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

34



Why didst thou promise such a beauteous day,  
And make me travel forth without my cloak,  
To let base clouds o'ertake me in my way,  
Hiding thy brav'ry in their rotten smoke?  
'Tis not enough that through the cloud thou break,  
To dry the rain on my storm-beaten face,  
For no man well of such a salve can speak,  
That heals the wound, and cures not the disgrace:  
Nor can thy shame give physic to my grief;  
Though thou repent, yet I have still the loss:  
Th'offender's sorrow lends but weak relief  
To him that bears the strong offence's cross.  
Ah, but those tears are pearl which thy love sheds,  
And they are rich and ransom all ill deeds.



Ինչո՞ւ դու խոստացար չքնաղ տաք օր,  
Երբ ինձ առանց թիկնոց էիր ճամփում,  
Որ ինձ որսան ճամփիս ամպերը ստոր,  
Թաքցնելով պերճանքդ՝ գարշ մեզում:  
Ո՛չ, բավ չէ, որ ամպերը ճեղքեցիր,  
Չորացնելու հողմից ծեծված իմ դեմքը,  
Քանզի ոչ ոք այն դեղը չի գովի,  
Որ չի բուժում պատիվ՝ այլ սոսկ բաց վերքը.  
Ամոթը քո ինձ դեղ չի իմ դարդից.  
Թեկուզ զոջում ես դու, բայց ես տուժած եմ.  
Չոջումը թոյլ սփոփանք է այն ցավից  
Ով խիստ անարգանքի կրում է խաչը:  
Սակայն սիրո ակներ են արցունքներդ,  
Եւ հատուցում են չար բոլոր գործերդ:

Ինչո՞ւ դու խոստացար այդքան չքնաղ օր,  
Եւ դրդեցիր ինձ ճանապարհորդել առանց թիկնոցի,  
Թողնելով, որ ստոր ամպերը որսան ինձ իմ ճամփին,  
Թաքցնելով քո խրոխտությունը գարշելի մեզում:  
Բավական չէ, որ միջով ամպերի դու ճեղքեցիր,  
Չորացնելու անձրեւն իմ փոթորկով ծեծված դեմքին,  
Քանի որ ոչի մի մարդ այդպիսի սպեղանի չի գովի,  
Որը բուժում է վերքը, եւ չի սպաքինում անպատկությունը.  
Չի կարող քո ամոթը տա ինձ դեղ իմ դարդից.  
Չնայած դու զոջում ես, բայց ես ունեմ դեռ կորուստ.  
Անարգողի ափսոսանքը տալիս է սակայն թոյլ սփոփանք  
Նրան, ով կրում է ծանր վիրավորանքի խաչը:  
Ա՛հ, բայց այդ արցունքները մարգարիտներ են, որոնք քո սերը թափում է,  
Եւ դրանք թանկ են եւ հատուցում են բոլոր չար արարքներդ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

35



No more be grieved at that which thou hast done:  
Roses have thorns, and silver fountains mud:  
Clouds and eclipses stain both moon and sun,  
And loathsome canker lives in sweetest bud.  
All men make faults, and even I in this,  
Authorizing thy trespass with compare,  
Myself corrupting, salving thy amiss,  
Excusing thy sins more than their sins are;  
For to thy sensual fault I bring in sense,  
Thy adverse party is thy advocate,  
And 'gainst myself a lawful plea commence:  
Such civil war is in my love and hate,  
That I an accessory needs must be,  
To that sweet thief which sourly robs from me.



Թող քեզ այլևս չտանջեն մեղքերդ.  
Աղբբում կա տիղմ եւ վարդն ունի փշեր.  
Ամպում են եւ լուսինը եւ արեւը,  
Եւ քաղցրագույն պտղում կապրեն որդեր:  
Բոլորն են վրիպում, ու նաեւ ես՝  
Բաղդաստությանք քո մեղքը մեղմելով,  
Ինձ պղծելով հարթում եմ վրեպդ այսպես՝  
Քեզ ավելին, քան հարկ է ներելով.  
Քո զգացմունքով եմ մեղքդ բացատրում,  
Եւ քո ներհակն է այժմ փաստաբանդ,  
Եւ ինքս իմ դեմ ես հայց եմ հարուցում.  
Այնպես են մարտնչում իմ սերն ու դատը,  
Որ ակամա դառնում եմ հանցակից,  
Անուշ գողին, որ կողոպտում է ինձ:

Մի այլևս եղիր վշտագած այն բանի համար, որը դու արել ես.  
Վարդերն ունեն փշեր, եւ արծաթյա աղբբոյնները՝ տիղմ.  
Ամպերն ու խավարումները արատավորում են եւ լուսինն եւ արեւը,  
Եւ զգվելի որդ է ապրում քաղցրագույն բողբոջում:  
Բոլոր մարդիկ անում են վրիպումներ, ու նաեւ ես՝ սրանով,  
Հեղինակագործելով քո օրինազանցությունը համեմատությամբ,  
Ինքս ինձ փչացնելով, հարթում եմ քո անճշտությունը,  
Ներելով քո մեղքերը ավելի, քան նրանց մեղքերն են\*.  
Քանի որ քո զգացմունքային վրիպակներին ես հաղորդում եմ իմաստ,  
Քո հակառակ մասը քո փաստաբանն է,  
Եւ ինքս իմ դեմ օրինական հայց եմ հարուցում.  
Այնպիսի քաղբքացիական պատերազմ է միջեւ իմ սիրո եւ ատելության,  
Որ ես հանցակից լինելու պարտավորություն ունեմ,  
Կդ քաղցր գողի, որը դառնորեն կողոպտում է ինձ:

\* Բնագրում՝ 1609 թվականի, their-ը կրկնված է երկու անգամ. «Excusing their sins more than their sins are»: Սակայն հրատարակիչներից շատերը համարում են որ դա շարվածքի վրիպակ է եւ այդ դերանվան փոխարեն դնում են thy: Սակայն հոգեբանորեն անհավանական է թվում, որ մեկ տողում նույն բառը երկու անգամ սխալ շարվելը: ՄՎ զիտի, գուցե հենց այս հնչյակում «վրիպակ» իմաստով գործածված բազմաթիվ բառերն են դարձել գրաշարի այս վրիպակի հոգեբանական պատճառը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

36



Let me confess that we two must be twain,  
Although our undivided loves are one:  
So shall those blots that do with me remain,  
Without thy help, by me be borne alone.  
In our two loves there is but one respect,  
Though in our lives a separable spite,  
Which though it alter not love's sole effect,  
Yet doth it steal sweet hours from love's delight.  
I may not evermore acknowledge thee,  
Lest my bewailed guilt should do thee shame,  
Nor thou with public kindness honour me,  
Unless thou take that honour from thy name –  
    But do not so; I love thee in such sort,  
    As thou being mine, mine is thy good report.



Թող ինձ ասեն, որ պետք է երկվանանք,

Թեև մեր անբաժան սերերը մեկ են.

Որ այդ բծերն եղած ինձ հետ մնան,

Որ ես մենակ կրեմ գործած այդ մեղքը:

Բայց մեր երկու սերերն ունեն մեկ կասպ,

Թեև չարիքը կյանքերի տարբեր է,

Այն չի փոխում միակ մեր սերն անչափ,

Խղում է բայց սիրո անուշ ժամերը:

Որ մեղքս ստոր հանկարծ քեզ չանարգի,

Գուցե փորձեմ էլ քեզ չնկատել,

Եւ դու այլոց առաջ ինձ մի պատվիր,

Կարող է դա քո անունից վերցվել.

Ոչ, պետք չէ դա. այն կերպ եմ քեզ սիրում,

Որ իմն են քո եւ կյանք եւ հանարում:

Թող ինձ խոստովանեմ, որ մենք երկուսով պետք է լինենք երկուսը,  
Թեև մեր անբաժանելի սերերը մեկ են.

Այնպես, որ այն բծերը, որ ինձ հետ են մնում,

Առանց քո օգնության, ինձնով լինեն սահմանափակված միայն:

Սեր երկու սերերի մեջ կա բայց մեկ առնչություն,

Թեև մեր կյանքերի մեջ տարբեր չարիք է,

Որը, թեև չի փոխում սիրո միակ ազդանքը,

Բայց այն գողանում է քաղցր ժամերը սիրո բերկրանքի:

Ես կարող է այլեւ երբեք չճանաչեմ քեզ,

Հանկարծ իմ ողբալի մեղքը քեզ կխայտառակի,

Ոչ էլ դու հանրային սիրալիրությամբ պատվիր ինձ,

Այլպես դու կվերցնես այդ պատվիր քո անունից.

Բայց մի արա այդպես. ես սիրում եմ քեզ այն տեսակ,

Ասես դու իմն ես, իմն է քո բարի համբավը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

37



As a decrepit father takes delight  
To see his active child do deeds of youth,  
So I, made lame by Fortune's dearest spite,  
Take all my comfort of thy worth and truth;  
For whether beauty, birth, or wealth, or wit,  
Or any of these all, or all, or more,  
Intituled in thy parts, do crowned sit,  
I make my love ingrafted to this store:  
So then I am not lame, poor, nor despised,  
Whilst that this shadow doth such substance give,  
That I in thy abundance am sufficed,  
And by a part of all thy glory live:  
Look what is best, that best I wish in thee;  
This wish I have, then ten times happy me.





Ինչպես ծեր հայրն է բերկրանքով լցված  
Երբ որ տեսնում է իր որդու գործերը,  
Այդպես էլ ինձ՝ Ճակատագրից խոցված,  
Ամբողջ սփոփանքն են քո արժանիքները.  
Քանզի եթե ծագումը, միտքը, գեղը,  
Կամ մեկն այդ բոլորից, կամ ավելին,  
Քո մեջ օծված իրենց գտել են տեղը,  
Ես պատվաստում եմ սերս այդ պաշարին.  
Այդժամ ես կաղ չեմ կամ արհամարհված,  
Քանզի այդ սովերն այն հիմքն է ինձ բերում,  
Որ ես քո լիությանը եմ գոհացած,  
Եւ քո փառքի մասով եմ ես ապրում.  
Ինչ լավագույնն է՝ քեզ եմ, տես, մաղթում.  
Ինձ տասնակի է դա երջանկացնում:

Ինչպես ծեր հայրն է ուրախանում,  
Տեսնելով իր կենտոնակ գավակի երիտասարդության արարքները,  
Այդպես էլ ես, կաղանալով Ճակատագրի ամենաթանկ չարությամբ,  
Գտնում եմ ողջ իմ սփոփանքը քո արժանիքներում եւ հավատարմության մեջ.  
Քանի որ եթե գեղեցկությունը, ծնունդը կամ հարստությունը, կամ խելքը,  
Կամ որեւէ մեկը այդ բոլորից, կամ բոլորը, կամ ավելին,  
Որպես քո մաս, պսակավորված տեղ են գտել,  
Ես իմ սերը պատվաստում եմ այդ պաշարին.  
Այս արժամ ես կաղ չեմ, աղքատ, ոչ էլ արհամարհված,  
Քանի որ այդ սովերը այնպիսի էություն է տալիս,  
Որ ես քո առատության մեջ եմ բավարարված,  
Եւ մասով ողջ քո փառքի ապրում.

Տես ինչն է լավագույնը, այդ լավագույնը ես ցանկանում եմ քեզ.  
Այդ ցանկությունը որ ունեմ, տասն անգամ երջանկացնում է ինձ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

38



How can my Muse want subject to invent  
While thou dost breathe, that pour'st into my verse  
Thine own sweet argument, too excellent  
For every vulgar paper to rehearse?  
O give thyself the thanks if aught in me  
Worthy perusal stand against thy sight,  
For who's so dumb that cannot write to thee,  
When thou thyself dost give invention light?  
Be thou the tenth Muse, ten times more in worth  
Than those old nine which rhymers invoke,  
And he that calls on thee, let him bring forth  
Eternal numbers to outlive long date.

If my slight Muse do please these curious days,  
The pain be mine, but thine shall be the praise.



Ինչպես կարող է նյութ Մուսաս փնտրել,  
Երբ դու ես հենց լցնում տաղերը իմ  
Մտքով քո քաղցր՝ անչափ չքնաղ ու վեհ,  
Որ այն գրվի մի հասարակ թղթին:  
Ոհ, ինքդ քեզ դու շնորհակալ եղիր,  
Թե արժանի գտնես ինձ մոտ մի բան,  
Զի ո՞վ է համր այնքան, որ քեզ չերգի,  
Երբ դու ես լույս տալիս ոգեշնչման:  
Եղիր դու տասներորդ Մուսան. հին ինը  
Ուժով տասնապատիկ քեզ կզիջեն,  
Եւ ով դիմում է քեզ, գիտի քո գինը,  
Գործեր կերկնի, որ դարեդար կապրեն:  
Եւ թե այդօր Մուսաս հաճո լինի,  
Ցավն ինձ մնա, իսկ գովքը քեզ լինի:

Ինչպես կարող է իմ Մուսան ցանկանալ առարկա՝ ստեղծագործելու,  
Երբ դու շնչում ես, ինչը լցնում է իմ տաղերը  
Քո սեփական քաղցր բովանդակությամբ, չափազանց հոյակապ՝  
Յուրաքանչյուր սովորական թղթի համար, որ վերարտադրի:  
Ոհ, տուր ինքդ քեզ շնորհակալություն, թե ինչ-որ բան իմ մեջ  
Արժանի կարդալու կանգնում է քո հայացքին,  
Քանի որ ո՞վ է այնքան համր, որ չկարողանա գրել քեզ,  
Երբ դու ինքդ տալիս ես ստեղծագործության լույս:  
Եղիր դու տասներորդ Մուսան, տասն անգամ ավելի՝ արժեքով  
Քան այն հին ինը, ում հանգավորողներն են կոչում,  
Եւ նա, ով դիմում է քեզ, թող ստեղծի  
Հավերժական համարներ՝ վերապրելու երկար ժամկետներում:  
Եթե իմ համեստ Մուսան հաճելի լինի այդ հետաքրքրական օրերին,  
Ցավը լինի իմը, բայց քոնը՝ լինի գովքը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

39



how thy worth with manners may I sing,  
When thou art all the better part of me?  
What can mine own praise to mine own self bring?  
And what is't but mine own when I praise thee?  
Even for this, let us divided live,  
And our dear love lose name of single one,  
That by this separation I may give  
That due to thee which thou deserv'st alone.  
O absence, what a torment wouldst thou prove,  
Were it not thy sour leisure gave sweet leave  
To entertain the time with thoughts of love,  
Which time and thoughts so sweetly doth deceive,  
And that thou teachest how to make one twain,  
By praising him here who doth hence remain.



Եւ զնոց պատշաճ կարող եմ գովերգել,  
Երբ դու ամբողջ իմ մասն ես լավագույն,  
Ինձ ինչ կարող է գովքն առ իս բերել.  
Արդյո՞ք քեզ գովելով ես չեմ գովվում:  
Ուստի, այսու թող մենք բաժան ապրենք,  
Մեր սերն անգին մեկինը չլինի,  
Եւ ես էլ տալ քեզ ի գորու լինեմ  
Ինչին դու միայնակ ես արժանի:  
Ո՛հ, բաժանումն ինչ ծանր կլիներ,  
Եթե չտար ժամանցն անուշ պարպում,  
Սիրո տենչով պահերը չլցներ,  
Որ ժամն ու միտքն է քաղցրորեն խաբում,  
Եւ չասեիր, ոնց մեկը՝ երկվացնել,  
Գովերգելով նրան, ով աստ չէ էլ:

Ո՛հ ինչպե՞ս քո արժանիքները ձեռնով ես գովերգեմ,  
Երբ դու ամբողջ լավագույն մասն ես իմ,  
Ինչ կարող է իմ սեփական գովքը ինձ ուղղված՝ ինձ բերել:  
Եւ ինչ, եթե ոչ ինքս ինձ՝ երբ ես գովում եմ քեզ:  
Թեև գոնե դրա համար, թող մենք բաժան ապրենք,  
Եւ մեր թանկագին սերը կորցնի անունը միայն մեկի,  
Որ շնորհիվ այդ տարանջատման ես կարողանամ տալ  
Այն հասանելիքը քեզ, որին դու արժանի ես միայնակ:  
Ո՛հ բացակայություն, ինչ տանջանք դու կներկայացնեիր,  
Եթե քո դատը ժամանցը չտար քաղցր արձակուրդ,  
Զբաղեցնելու ժամանակը մտքերով սիրո մասին,  
Որը ժամանակը եւ մտքերը այդքան քաղցրորեն խաբում է,  
Եւ որ դու չսովորեցնեիր, ինչպես դարձնել մեկը՝ երկվացած,  
Գովերգելով նրան այստեղ, ով հեռու է մնում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

40



Take all my loves, my love, yea, take them all;  
What hast thou then more than thou hadst before?  
No love, my love, that thou mayst true love call;  
All mine was thine before thou hadst this more.  
Then if for my love thou my love receivest,  
I cannot blame thee for my love thou usest;  
But yet be blamed, if thou thyself deceivest  
By wilful taste of what thyself refuseth.  
I do forgive thy robb'ry, gentle thief,  
Although thou steal thee all my poverty;  
And yet love knows it is a greater grief  
To bear love's wrong than hate's known injury.  
Lascivious grace, in whom all ill well shows,  
Kill me with spies, yet we must not be foes.



Կերցրու բոլոր սերերս, սեր, բոլորը.

Ինչ դա կտա ավել քան դու ունես:

Բոլորն էլ քոնն էր, երբ ստացար այս նորը.

Չկա մի սեր, իմ սեր, որ ճիշտ կոչես:

Թե դու ստացար իմ սերն, իմ սեր որպես,

Չեմ մեղադրի սիրուս կորզման համար.

Բայց մեղավոր ես, թե խաբում ես քեզ

Ես քայլն այս քո դու չես գտնում արդար:

Ներում եմ քեզ արարքդ, գող քնքուշ,

Թեկուզ տարել ես ողջ իմ ունեցվածքը.

Կնախընտրեմ սիրո այս վիշտը հույժ,

Քան միշտ կրելն ատելության վնասը:

Վավաշ հմայք, թող չարդ քեզ մնա,

Սպանիր, բայց քեզ ոտիս ես չեմ դառնա:

Վերցրու բոլոր իմ սերերը, իմ սեր, հա, վերցրու դրանք բոլորը.

Ինչ կունենաս դու ապա ավելի քան դու ունեցել ես նախկինում:

Չկա սեր, իմ սեր, որը դու կարողանաս ճիշտ սեր կոչես.

Բոլոր իմը եղել էր քոնը, նախքան դու ունեցար այս լրացուցիչը:

Ապա, եթե իմ սիրո համար դու իմ սերը ստացար,

Ես չեմ կարող մեղադրել քեզ իմ սերն օգտագործելու համար.

Բայց միեւնույն է մեղավոր ես, եթե դու քեզ խաբում ես

Քնահանճ ճաշակով այն բանի նկատմամբ, ինչը ինքդ մերժում ես:

Ես ներում եմ քեզ կողոպուտդ, քնքուշ գող,

Թեկուզ դու տարել ես քեզ ամբողջ իմ ունեցվածքը.

Ես միեւնույն է սերը գիտի. ավելի մեծ վիշտ է

Կրել սիրո չարիքը, քան ատելության հայտնի վնասը:

Հեշտասեր հմայք, որում ամբողջ չարիքը լավ է թվում,

Սպանիր ինձ չարությամբ, միեւնույն է, մենք պետք չէ լինենք թշնամիներ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

41



Those pretty wrongs that liberty commits,  
When I am sometime absent from thy heart,  
Thy beauty and thy years full well befits,  
For still temptation follows where thou art.  
Gentle thou art, and therefore to be won,  
Beauteous thou art, therefore to be assailed;  
And when a woman woos, what woman's son  
Will sourly leave her till he have prevailed?  
Ay me, but yet thou mightest my seat forbear,  
And chide thy beauty and thy straying youth,  
Who lead thee in their riot even there  
Where thou art forced to break a twofold truth:  
Hers, by thy beauty tempting her to thee,  
Thine, by thy beauty being false to me.





Ազատության գործած քնքուշ մեղքերը,  
Երբ մերթ բացակայում եմ քո սրտից,  
Քո պերճանքին ու տարիքին վայել են.  
Հեռու չէ գայթակղանքը դեռ քեզնից:  
Բարի ես դու, ուստի ես քեզ հաղթում եմ,  
Չքնաղ ես դու, ես պաշարում եմ քեզ.  
Ո՞ր այրը, երբ մի կին հետամտում է,  
Մինչ նե հաղթի, թթված կանցնի անտես:  
Բայց դու կարող էիր տարածքս չմոնել,  
Սաստել պերճանքդ ու քո զելս տարիքը,  
Որ քեզ անսանձ տանում էին այնտեղ,  
Ուր դու խախտում ես այս երկու դաշինքը.  
Իր՝ պերճանքով իրեն գայթակղելով,  
Քո՝ պերճանքով ինձ դավանանելով:

Այդ քնքուշ սխալները, որոնք կատարում է ազատությունը,  
Երբ ես երբեմն բացակայում եմ քո սրտից,  
Քո գեղեցկությանը ես քո տարիներին լիովին վայել են,  
Քանզի դեռ գայթակղությունը հետետում է ուր դու ես:  
Բարի ես դու, ես այդ պատճառով քեզ հաղթում եմ,  
Չքնաղ ես դու, ես այդ պատճառով քեզ պաշարում եմ.  
Ես երբ մի կին է հետամտում, հր կնոջ որդին  
Թթված կլքի նրան, մինչդեռ նե\* հաղթի:  
Վայ ինձ, բայց սակայն դու կարող էիր իմ տարածքից հրաժարվել,  
Ես սաստել քո գեղեցկությունն ու շվայտ երիտասարդությունը,  
Որոնք տանում են քեզ իրենց կատաղության մեջ նույնիսկ այնտեղ,  
Որտեղ դու ստիպված ես կտորել կրկնակի հավատարմություն.  
Իր՝ քո գեղեցկությամբ գայթակղելով իրեն քո նկատմամբ,  
Քո՝ քո գեղեցկությամբ կեղծելով իմ նկատմամբ:

\* Հրատարակիչներից շատերի կարծիքով բնագրում վրիպակ է, ես պետք է լինի «she» «he»-ի փոխարեն:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

42



What thou hast her, it is not all my grief,  
And yet it may be said I loved her dearly;  
That she hath thee, is of my wailing chief,  
A loss in love that touches me more nearly.  
Loving offenders, thus I will excuse ye:  
Thou dost love her because thou know'st I love her,  
And for my sake even so doth she abuse me,  
Suffering my friend for my sake to approve her.  
If I lose thee, my loss is my love's gain,  
And losing her, my friend hath found that loss;  
Both find each other, and I lose both twain,  
And both for my sake lay on me this cross.  
But here's the joy, my friend and I are one.  
Sweet flattery! then she loves but me alone.



Որ քունն է նե, իմ վիշտը չէ ամբողջ,

Թեեւ անչափ եմ ես ներան սիրել.

Որ դու ներանն ես ցավն է ինձ տանջող՝

Սիրո կորուստ, որ դառն է առավել:

Սիրող գողեր, ձեզ տամ արդարացում.

Ներան սիրում ես, զի գիտես որ ես էլ

Ես նե դավում է ինձ հենց ինձ հանուն,

Տրվում է քեզ, կատարելով այդ ծեսը:

Կորցնում եմ քեզ, գտնում է սերը իմ,

Կորցնում ներան՝ ընկերս է այն գտնում.

Գտնում եք ձեզ՝ կորցնում եմ երկուսին,

Ես երկուսից էլ՝ խաչն եմ այս կրում:

Բայց կա սփոփանք. մենք անձ ենք մեկ կազմում:

Անուշ պատրանք. լոկ ինձ է նե սիրում:

Որ դու ունես ներան, իմ ոչ ամբողջ վիշտն է,

Թեեւ, կարելի է ասել, ես սիրել եմ ներան ջերմորեն.

Որ նե ունի քեզ, իմ ցավն է զվիսավոր,

Կորուստ է սիրո մեջ, որը դիպչում է ինձ ավելի մոտիկից:

Սիրող մեղավորներ, այսպես ես կարդարացնեմ ձեզ.

Դու սիրում ես ներան, որովհետեւ դու գիտես, որ ես սիրում եմ ներան,

Ես հանուն ինձ, հենց այդպես նե դավում է ինձ,

Թույլ տալով իմ ընկերոջը հանուն ինձ փորձել ներան:

Եթե ես կորցնում եմ քեզ, իմ կորուստը՝ իմ սիրո ձեռքբերումն է,

Ես կորցնելով ներան, իմ ընկերը գտնում է այդ կորուստը.

Երկուսն էլ գտնում են միմյանց, ես ես կորցնում եմ երկուսին,

Ես երկուսն էլ՝ հանուն ինձ, դնում են ինձ վրա այս խաչը:

Բայց ահա մխիթարանք, իմ ընկերը ես ես մեկ ենք:

Քանիցք ինքնախաբեություն. այսպիսով նե սիրում է, սակայն, միայն ինձ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

43



When most I wink, then do mine eyes best see,  
For all the day they view things unrespected;  
But when I sleep, in dreams they look on thee,  
And darkly bright, are bright in dark directed.  
Then thou, whose shadow shadows doth make bright,  
How would thy shadow's form form happy show  
To the clear day with thy much clearer light,  
When to unseeing eyes thy shade shines so!  
How would (I say) mine eyes be blessed made,  
By looking on thee in the living day,  
When in dead night thy fair imperfect shade  
Through heavy sleep on sightless eyes doth stay!  
All days are nights to see till I see thee,  
And nights bright days when dreams do show thee me.



Եսնում եմ լավ՝ աչքերս երբ գոցված են,  
Ձի օրն ամբողջ իրեր են պլիդժ դիտում.  
Սակայն նայում են քեզ երբ ես քնած եմ,  
Եւ մութ լույսով դեպի խավարն ուղղվում:  
Իսկ դու, ում ստվերը ստվեր է լուսացնում,  
Ինչ պերճ հանդես քո ստվերը կկազմեր  
Օրվա եւ քո պայծառագույն լույսում,  
Երբ ստվերը քո տեսնում են կույր աչքեր:  
Ինչ օրհնություն է աչքերիս համար,  
Նայել քեզ պարզ օր-ցերեկով կենդան,  
Երբ կույր աչքին քո ստվերը անկաստար  
Փայլում է նույնիսկ գիշերով դաժան:  
Գիշեր է օրը, երբ քեզ չեմ տեսնում,  
Եւ օր՝ գիշերը, թե դիտեմ քնում:

Երբ մեծապես, աչքերս կպնում են, այդժամ աչքերս լավագույնս են տեսնում,  
Քանի որ ամբողջ օրը դրանք դիտում են իրեր անհարգարժան.  
Բայց երբ ես քնած եմ, երազում նրանք նայում են քեզ,  
Եւ խավարորեն պայծառ, պայծառ են խավարի մեջ ուղղված\*:  
Ապա դու, ում ստվերը ստվերները դարձնում է պայծառ,  
Ինչպես քո ստվերի ձեռք կձեռավորեր շքեղ տեսարան,  
Պարզ օրվա, քո էլ ավելի պարզ լույսով,  
Երբ չտեսնող աչքերի համար քո ստվերը փայլում է այդպես:  
Որքան (ես ասում եմ) իմ աչքերը օրհնված կլինեն,  
Նայելով քեզ կենդանի օրը,  
Երբ մտած գիշերում քո ջընադության անկաստար ստվերը  
Ծանր քնի միջով մնում է անհայացք աչքերում:  
Բոլոր օրերը գիշերներ են երեսում, մինչեւ ես տեսնում եմ քեզ,  
Եւ գիշերները պայծառ օրեր են, երբ երազները ցույց են տալիս քեզ ինձ:

\* Դժվար տեղ է: Սովորաբար նշում են, որ հնում համարում էին, թե տեսողության հիմքում աչքերից եկող ճառագայթումն էր (հնմո. հայ. «աչքի լույս»), եւ, իբր, այստեղ դա է ակնարկվում: Սակայն այս տողը բավական «մութ» է, նման իմաստ տեսնելու համար: Մասնավորապես, «darkly bright» արտահայտության մեջ «darkly»-ն, գուցե գործածված է «խորհրդավոր» իմաստով: Այս իմաստը թեեւ բնորոշ է ավելի վաղ դարերին, բայց եւ չի կարելի բացառել, որ Շեքսպիրը կարող էր այն գործածել:

SHAKE-SPEARES,

SONNETS.

44



If the dull substance of my flesh were thought,  
Injurious distance should not stop my way,  
For then despite of space I would be brought,  
From limits far remote, where thou dost stay.  
No matter then although my foot did stand  
Upon the farthest earth removed from thee,  
For nimble thought can jump both sea and land  
As soon as think the place where he would be.  
But ah, thought kills me that I am not thought,  
To leap large lengths of miles when thou art gone,  
But that, so much of earth and water wrought,  
I must attend time's leisure with my moan,  
Receiving nought by elements so slow  
But heavy tears, badges of either's woe.



Ինչույն նյութը իմ մարմնի, թե միտք լիներ,  
Ինձ չէր արգելակի տարածությունը,  
Չի կանցնեի իսկույն ես եզերքներ,  
Կգանեի այնքան հեռու քո տունը:  
Հոգ չէր լինի, թե ես գտնվեի  
Քեզնից անչափ հեռու անհաս երկրում,  
Չի միտքը ծովն էլ, հողն էլ կկտրի,  
Երբ իմանա, թե ուր է սլանում:  
Բայց միտքն է ինձ սպանում, որ միտք չեմ ես,  
Որ մղոններ կտրած ես քեզ հասնեմ,  
Ես որ հողից, ջրից կերտված այսպես,  
Ես պետք է ողբալից ժամեր վատնեմ,  
Դանդաղ այդ տարրերից ոչինչ ստացած,  
Լացից բացի՝ դառն նշանից դրանց:

Եթե հույլ նյութն իմ մարմնի լիներ միտք,  
Վշտացնող հեռավորությունը չէր կանգնեցնի իմ ուղին,  
Քանզի, չնայած տարածությանը, ես տեղափոխված կլինեի  
Սահմաններից հեռավոր, ուր դու ես:  
Նշանակություն չէր ունենա այդժամ, թե իմ ոտքը կանգնած լիներ  
Ամենահեռավոր երկրի վրա, հեռացված քեզնից,  
Քանզի ճարպիկ միտքը կարող է ցատկել ես ծովը ես ցամաքը,  
Հենց պատկերացնի այն տեղը, ուր նա կուզի լինել:  
Բայց ալաղ, միտքն է սպանում ինձ, որ ես միտք չեմ,  
Անցնելու մեծ հեռավորություններ մղոնների, ուր դու գնացել ես,  
Բայց որ այդքան շատ հողից ու ջրից բաղկացած,  
Ես պետք է զբաղվեմ ժամանակ անցկացնելով իմ գանգատների հետ,  
Ստանալով ոչինչ տարրերից այդքան դանդաղ,  
Բացի ծանր արցունքներից, նշաններից դրանց ողբի:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

45



The other two, slight air and purging fire,  
Are both with thee, wherever I abide;  
The first my thought, the other my desire,  
These present-absent with swift motion slide;  
For when these quicker elements are gone  
In tender embassy of love to thee,  
My life, being made of four, with two alone  
Sinks down to death, oppressed with melancholy,  
Until life's composition be recured  
By those swift messengers returned from thee, -  
Who even but now come back again assured  
Of thy fair health, recounting it to me.  
This told, I joy, but then no longer glad,  
I send them back again and straight grow sad.





Երկուսն էլ մյուս՝ նուրբ օդն ու սուրբ կրակը,  
Քեզ հետ են միշտ, որտեղ որ ես լինեմ.  
Նախ միտքը իմ եւ մյուսը՝ իմ փափագը՝  
Անորսալի, ճարպիկ միշտ կսահեն:  
Իսկ երբ արագ տարրերը այդ մեկնում են  
Միրո թնքուշ դեսպանությամբ քեզ մոտ,  
Իմ կյանքս, կորցնելով չորսից երկուսը,  
Սուզվում է վար՝ դեպ մահ մեղամաղձոտ,  
Մինչ նորոգվի կյանքի բաղադրությունը,  
Ճարպիկ այդ բանբերները ետ դառնան,  
Պատմեն ինձ քո կյանքի եղելությունը՝  
Որ քո կյանքում հաջող է ամեն բան:  
Ուրախ եմ, բայց երկար չեմ ես խնդում.  
Իրենց հղում եմ հետ, կրկին տրտմում:

Մյուս երկուսը՝ թեթեւ օդը եւ մաքրող հուրը,  
Երկուսն էլ քեզ հետ են, որտեղ որ ես մնամ.  
Առաջինը իմ միտքը, մյուսը՝ իմ ցանկությունը.  
Մրանք ներկա-բացակա՝ արագ շարժումով սահում են.  
Իսկ երբ որ այդ էլարագ տարրերը մեկնում են  
Քնքուշ դեսպանությամբ սիրո քեզ մոտ,  
Իմ կյանքը, կազմված չորսից, երկուսի հետ մնալով  
Սուզվում է ներքեւ դեպի մահ, ճնշված մեղամաղձոտությամբ,  
Մինչեւ կյանքի կազմությունը վերականգնվի  
Այդ արագ սուրհանդակների վերադարձով քո մոտից,  
Ովքեր հենց հիմա գալիս են հետ, կրկին համոզվելով  
Քո հիանալի առողջության հաշվով, պատմելով դա ինձ:  
Դա պատմված է, եւ ուրախ եմ, բայց հետո ոչ երկար եմ ուրախ,  
Ես ուղարկում եմ նրանց հետ նորից եւ անմիջապես դառնում տխուր:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

46



Mine eye and heart are at a mortal war,  
How to divide the conquest of thy sight:  
Mine eye my heart thy picture's sight would bar,  
My heart mine eye the freedom of that right.  
My heart doth plead that thou in him dost lie  
(A closet never pierced with crystal eyes),  
But the defendant doth that plea deny,  
And says in him thy fair appearance lies.  
To 'cide this title is impanneled  
A quest of thoughts, all tenants to the heart,  
And by their verdict is determined  
The clear eye's moiety and the dear heart's part:  
As thus: mine eye's due is thy outward part,  
And my heart's right thy inward love of heart.



Իմ աչքն ու սիրտն են մի մարտում դժնի.

Ինչպես կերպարը քո տնօրինել.

Աչքն արգելում է սիրտը քեզ տեսնի,

Եւ սիրտն՝ աչքին՝ այդ կամքն իրագործել:

Պնդում է սիրտն իմ, որ դու իր խորքում ես

(Մի խցիկում, որն աչքը չի խոցել),

Պատասխանորդն էլ հայցը այդ մերժում է.

Թե կերպդ նա իր մեջ է զետեղել:

Այս վեճը լուծելու համար ստեղծված է

Մտքի առյան՝ սրտի վարձկալների,

Եւ դատավճիռով նրանց կարգված է

Մասնաբաժին՝ սրտի եւ աչքերի.

Եւ այսպիսով. աչքինն է արտաքինդ.

Եւ ներքին սերը քո սրտի՝ սրտինը:

Իմ աչքն ու սիրտը մահացու պատերազմի մեջ են,

Ինչպես բաժանել նվաճումը քո տեսքի.

Իմ աչքը իմ սրտին, քո նկարի տեսքը կուզեր արգելել,

Իմ սիրտը իմ աչքին՝ ազատությունը այդ իրավունքի:

Իմ սիրտը պնդում է, որ դու նրա մեջ ես

(Մի պահարան, որը երբեք չեն խոցել քյուրեղյա աչքերով),

Բայց պատասխանորդը այդ հայցը մերժում է,

Եւ ասում է, նրա մեջ է քո սքանչելի արտաքինը:

Լուծելու համար այս սեփականության իրավունքը ստեղծված է

Հանձնաժողով՝ մտքերից, բոլորը վարձակալներ սրտի,

Եւ նրանց դատավճռով որոշված է

Մարտը աչքի մասնաբաժինը եւ թանկագին սրտի մասը.

Այսպիսով իմ աչքի հասանելիքը քո արտաքին մասն է.

Եւ իմ սրտի իրավունքը քո ներքին սերն է սրտի:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

47



Between mine eye and heart a league is took,  
And each doth good turns now unto the other:  
When that mine eye is famished for a look,  
Or heart in love with sighs himself doth smother,  
With my love's picture then my eye doth feast,  
And to the painted banquet bids my heart;  
Another time mine eye is my heart's guest,  
And in his thoughts of love doth share a part.  
So either by thy picture or my love,  
Thyself, away, art present still with me,  
For thou not farther than my thoughts canst move,  
And I am still with them, and they with thee;  
Or if they sleep, thy picture in my sight  
Awakes my heart to heart's and eye's delight.



Իմ աչքն ու սիրտն ունեն կնքված դաշինք,  
Նրանք իրար բարիք են փոխանցում.  
Երբ որ կարոտ է աչքն իմ քո տեսքին,  
Կամ սիրտն է սիրատանջ իրեն խեղդում,  
Սիրուս նկարն այդժամ աչքիս հրճվանքն է,  
Եւ ինջույքի է նա սրտին կանչում.  
Մեկ այլ անգամ՝ սրտիս իմ հյուրն է աչքս,  
Եւ խոհերում սիրո մի մասս կիսում:  
Այսպես՝ քո պատկերով կամ իմ սիրով,  
Նույնիսկ հեռու՝ մնում ես դու ինձ հետ,  
Քանզի քեզ հետ եմ ես իմ մտքերով.  
Ես նրանց հետ եմ, եւ նրանք՝ քեզ հետ.  
Կամ թե քնած են՝ կերպդ իմ աչքում  
Սրտիս, աչքիս բերկրանքն է արթնացնում:

Միջեւ իմ աչքի եւ սրտի մի դաշինք է կնքված,  
Եւ յուրաքանչյուրը լավությունը վերադարձնում է այժմ մյուսին.  
Երբ որ իմ աչքը քաղցած է քո տեսքից,  
Կամ սիրտը սիրահարված՝ հոգոցներով իրեն խեղդում է,  
Իմ սիրու նկարով այդժամ իմ աչքը ինջույքի մեջ է,  
Եւ նկարված ճաշկերույթին հրավիրում է իմ սրտին.  
Սյուս անգամ էլ իմ աչքն է իմ սրտի հյուրը,  
Եւ նրա մտքերում սիրո մի մասն է կիսում:  
Այսպես կամ քո նկարով կամ իմ սիրով,  
Ինքդ դու, հեռու լինելով, շարունակում ես մնալ ինձ հետ,  
Քանզի դու ոչ ավելի ես հեռու, քան իմ մտքերը կարող են շարժվել,  
Եւ ես դեռ նրանց հետ եմ, եւ նրանք՝ քեզ հետ.  
Կամ եթե նրանք քնում են, քո պատկերն իմ աչքում  
Արթնացնում է իմ սիրտը՝ սրտի եւ աչքի բերկրանքի համար:

SHAKE-SPEARES,

SONNETS.

48



How careful was I, when I took my way,  
Each trifle under truest bars to thrust,  
That to my use it might un-used stay  
From hands of falsehood, in sure wards of trust!  
But thou, to whom my jewels trifles are,  
Most worthy comfort, now my greatest grief,  
Thou best of dearest, and mine only care,  
Art left the prey of every vulgar thief.  
Thee have I not locked up in any chest,  
Save where thou art not, though I feel thou art,  
Within the gentle closure of my breast,  
From whence at pleasure thou mayst come and part;  
And even thence thou wilt be stol'n, I fear,  
For truth proves thievish for a prize so dear.



Խնչ ինձանքով ես, երբ ճամփա ընկա,  
Ամեն մանրուք պինդ պահեցի կողպած՝  
Որ ձեռքերով եւ կեղծ, եւ արիկա,  
Ես չգտնեմ դրանք օգտագործված:  
Բայց դու, ում դեմ մանրուք են շողակներս,  
Սփոփանքն ես իմ ու վիշտս մեծագույն,  
Ում հետ են, սիրելիս, բոլոր հոգսերս՝  
Ավար ես թողնված գողին դժգույն:  
Քեզ չեմ կողպել ես որեւէ արկղում,  
Պահում եմ ուր չկաս, բայց զգում եմ քեզ՝  
Կրծքիս խորքի քնքուշ խցի միջում,  
Ուր երբ ուզես կգաս ու կմեկնես.  
Եւ վախենամ քեզ կտանեն. քանզի  
Արդարն էլ կզանցի՝ հանուն զանձի:

Որքան ուշադիր էի ես, երբ ես ճամփա ընկա,  
Յուրաքանչյուր մանրուք դնելով ամուր ճաղերի տակ՝  
Որպեսզի իմ օգուտի համար այն չօգտագործված մնար,  
Ձեռքերի կողմից կեղծ՝ հուսալիորեն վերահսկվող:  
Բայց դու, ում համեմատ իմ ակները մանրուքներ են,  
Առավել արժանի մխիթարությունն ես, այժմ իմ մեծագույն վիշտը,  
Դու լավագույնն ես թանկագիններից, եւ իմ միակ հոգատարությունը:  
Թողնված ես որպես ավար ամեն մի գռեհիկ գողի:  
Քեզ ես չեմ կողպել որեւէ պահարանում,  
Պահում եմ ուր դու չկաս, թեեւ ես զգում եմ դու կաս,  
Սիջում քնքուշ խցիկի իմ կրծքի,  
Որից կամուլի դու կարող ես գալ եւ մեկնել.

Եւ նույնիակ դրանից դու կարող ես գողացվել, եւ վախենում եմ,  
Զի արդարը պատրաստ է գողության՝ մրցանակի համար այդքան թանկ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.



49

Against that time (if ever that time come)  
When I shall see thee frown on my defects,  
When as thy love hath cast his utmost sum,  
Called to that audit by advised respects;  
Against that time when thou shalt strangely pass,  
And scarcely greet me with that sun, thine eye,  
When love, converted from the thing it was  
Shall reasons find of settled gravity:  
Against that time do I insconce me here  
Within the knowledge of mine own desert,  
And this my hand against myself uprear,  
To guard the lawful reasons on thy part.  
To leave poor me thou hast the strength of laws,  
Since why to love I can allege no cause.





Պահի համար այդ (թե որ այն հասնի)

Երբ կտեսնեմ՝ իմ ախտն է քեզ տհաճ,  
Երբ սերդ վերջնարդյունքը կհաշվի,  
Իտր հարգանքով հաշվառումի կանչված.  
Պահի համար, երբ դու օտարացած  
Մի կերպ կողջունես այքով, անձայն,  
Երբ սերը, նախկինից վերափոխված  
Պատճառը կգտնի հույժ սառնություն.  
Պահի համար այդ պիտ գտեսանդվեմ՝  
Գիտակցելով վաստակս իսկական,  
Եւ ձեռքս ինձ ընդդեմ կբարձրացնեմ,  
Հօգուտ քո հիմքերի օրինական:

Խեղճիս կարող ես օրենքով լքել,  
Քանզի սիրո հիմքեր ես չեմ գտել:

Այն ժամանակվա համար (եթե երբեւ այդ ժամանակը գա)  
Երբ ես կտեսնեմ՝ քեզ տհաճ են իմ թերությունները,  
Երբ քո սերը կհաշվարկի իր վերջնական գումարը,  
Կանչված այդ հաշվառմանը խորհրդատրված հարգանքով.  
Այն ժամանակվա համար, երբ դու օտարի պես կանցնես,  
Եւ հազիվ կողջունես ինձ այդ արեւով, քո այքով,  
Երբ սերը, վերափոխված այն բանից, ինչ այն կար  
Պատճառներ կգտնի հիմնավոր լքություն.  
Այն ժամանակվա համար ես ամբացնում եմ ինձ այստեղ  
Միջում գիտակցության իմ սեփական արժանիքների,  
Եւ այս իմ ձեռքն ընդդեմ ինքս ինձ կբարձրացնեմ,  
Ի պաշտպանություն օրինական հիմքերի քո կողմի:  
Ինձ, աղքատիս, թողնելու դու ունես ուժը օրենքների,  
Քանզի սիրո համար ես չեմ կարող բերել ոչ մի հիմք:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

50



How heavy do I journey on the way,  
When what I seek (my weary travel's end)  
Doth teach that ease and that repose to say,  
'Thus far the miles are measured from thy friend.'  
The beast that bears me, tired with my woe,  
Plods dully on, to bear that weight in me,  
As if by some instinct the wretch did know  
His rider loved not speed, being made from thee:  
The bloody spur cannot provoke him on  
That sometimes anger thrusts into his hide,  
Which heavily he answers with a groan  
More sharp to me than spurring to his side;  
For that same groan doth put this in my mind:  
My grief lies onward and my joy behind.



Որքան դժվար եմ ես շարժվում ճանփով,  
Երբ որ գիտեմ. ճանփորդության վերջում  
Հանգիստն ու քունը ինձ կասեն ցավով,  
«Քո ընկերից մղոնք են քեզ զատում»:  
Եւ իմ ողբից արդեն հոգնած իմ ձին,  
Կրում է, քարշ գալով, հոգուս այդ բեռը,  
Կարծես հուշել է մի բնագոյ խեղճին.  
Որ չեմ շտասպում քեզնից այս հեռուները.  
Եւ չի մղում նրան արևոտ խթանը,  
Որ մերթ զայրույթն է կողը իր խրում,  
Եւ խոր հառաչն է, սուկ, իր պատասխանը,  
Որ խթանից ցավոտ է ինձ խոցում.  
Չի այդ հառաչն է ինձ անվերջ հուշում.  
Իմ վիշտն առջեն է, խիհղը՝ ետեւում:

Որքան դժվար եմ ես ճանապարհորդում ճանապարհով,  
Երբ ինչը ես փնտրում եմ (իմ տանջալից ճանփորդության ավարտը)  
Կուսուցանի, որ թեթեւությունը եւ որ հանգիստը կասեն,  
«Այսպիսով որքան մղոններ են չափվում մինչեւ քո ընկերը»:  
Անասունը, որը կրում է ինձ, հոգնած իմ ողբից,  
Քարշ է գալիս ձանձրացած, կրելով այդ ծանրությունը իմ մեջ,  
Կարծես ինչ-որ բնագոյ խեղճը գիտեր  
Իր հեծյալը չէր սիրում արագություն՝ հեռացնող՝ քեզնից.  
Արևոտ խթանը չի կարող հրահրել նրան  
Որը երբեմն զայրույթը խրում է նրա կաշվի մեջ,  
Որին ծանր ես պատասխանում է հառաչով  
Ավելի խոցող ինձ, քան խթանումը նրա կողին.  
Քանզի այդ նույն հառաչն դնում է դա իմ գիտակցության մեջ.  
Իմ վիշտը գտնվում է առջեւում եւ իմ ուրախությունը՝ ետեւում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

51



Thus can my love excuse the slow offence  
Of my dull bearer, when from thee I speed:  
From where thou art, why should I haste me thence?  
Till I return, of posting is no need.  
O what excuse will my poor beast then find,  
When swift extremity can seem but slow?  
Then should I spur though mounted on the wind,  
In winged speed no motion shall I know:  
Then can no horse with my desire keep pace;  
Therefore desire (of perfect'st love being made)  
Shall neigh (no dull flesh) in his fiery race,  
But love, for love, thus shall excuse my jade:  
    Since from thee going he went wilful slow,  
    Towards thee I'll run and give him leave to go.



Իմ սերը կների դանդաղությունը  
Ծույլ նծույգիս՝ քեզնից հեռանալիս.  
Ինչո՞ւ է պետք իզուր շտապողությունը,  
Մինչ իմ վերադառնալն այս կողմերից:  
Ո՛հ, ո՞նց այդժամ արդարանա խեղճ ձին,  
Երբ իսկ սլացքը կթվա դանդաղ:  
Այդժամ կխթանեմ հեծած քամին,  
Թռիչքն էլ կընկալեմ անչափ հապաղ.  
Եւ չեմ գտնի ինձ պետք արագ ձիուն.  
Ուստի տենչանքը (կատարյալ կրքի)  
Կխրխնջա իր հրեղեն վագրում,  
Բայց սերն, այդպես ձիուս կչքմեղի.

Եթե քեզնից նա չէր շարժվում փոյթով,  
Դեպ քեզ ես կվազեմ. թող գա քայլով:

Այսպես կարող է իմ սերը արդարացնել դանդաղության զանցանքը  
Իմ ծույլ կրողի, երբ քեզնից ես հեռանում եմ.  
Այն տեղից, ուր դու ես, ինչո՞ւ պիտի ես շտապեմ այդտեղից:  
Մինչ ես վերադառնալու լինեմ, շտապել պետք չէ:  
Ո՛հ, ի՞նչ արդարացում իմ խեղճ անասունը այդժամ կգտնի,  
Երբ արագությունը ծայրագույն կարող է թվալ սակայն դանդաղ:  
Այդժամ պետք է ես խթանեմ, նույնիսկ քամին հեծած,  
Թեւածած արագությամբ էլ շարժում ես չեմ ճանաչի.  
Այդժամ ոչ մի ձի չի կարողանա իմ ցանկության հետ պահել արագությունը.  
Ուստի տենչանքը (կատարյալ սիրուց կազմված)  
Կխրխնջա (ոչ թե ծույլ մարմինը) իր հրեղեն վագրում,  
Բայց սերը, հանուն սիրո, այդպես կարդարացնի իմ քոտտին.  
Եթե քեզնից շարժելուց նա գնում էր դիտավորյալ դանդաղ,  
Դեպի քեզ ես կվազեմ եւ կթողնեմ իրեն մնալ զնալով:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

52



So am I as the rich whose blessed key  
Can bring him to his sweet up-locked treasure,  
The which he will not ev'ry hour survey,  
For blunting the fine point of seldom pleasure.  
Therefore are feasts so solemn and so rare,  
Since, seldom coming, in the long year set,  
Like stones of worth they thinly placed are,  
Or captain jewels in the carcanet.  
So is the time that keeps you as my chest,  
Or as the wardrobe which the robe doth hide,  
To make some special instant special blest,  
By new unfolding his imprisoned pride.  
Blessed are you whose worthiness gives scope,  
Being had, to triumph, being lacked, to hope.



Երարուստն եմ ես, ում բանալին օրհնյալ  
Բագում է դուռ՝ կողպած գանձանակի,  
Որն ամեն ժամ նա չի ցանկա բանալ,  
Որ չխամրի նուրբ համը հաճույքի:  
Ուստի տոներն այդքան են ճոխ ու թեր,  
Զի հազվադեպ գալով, երկար տարում,  
Բաշխված են նուր՝ ինչպես անգին քարեր,  
Կամ մեծադիր ակներ՝ զուսպ մանյակում:  
Այդպես էլ ժամանակն է ձեզ պահում,  
Ինչպես մի տուփ, կամ պահարան փակված,  
Եւ սուկ մի պահ է երջանիկ դարձնում,  
Կրկին պարծանքն իր բացելով բանտված:  
Ընտրանք տալու ձիրքով եք դուք օրհնյալ.  
Երբ կաք՝ ցնծալ, երբ բացակա՝ հուսալ:

Այնպես որ, ես ասես հարուստ եմ, ում օրհնյալ բանալին  
Կարող է բերել իրեն իր քաղցր կողպած գանձարանին,  
Որը նա ամեն ժամ չի նայի,  
Որպեսզի չքթանա նրբությունը հազվագուտ հաճույքի:  
Ուստի տոները այդքան հանդիսավոր են եւ այդքան եզակի,  
Քանի որ, հազվադեպ գալով, երկար տարվա մեջ,  
Ինչպես քարեր թանկարժեք դրանք բաշխված են նուր,  
Կամ խոշոր ակներ՝ մանյակում:  
Այդպես էլ ժամանակը, որը պահում է ձեզ, ինչպես իմ տուփը,  
Կամ ինչպես պահարանը, որը հագուստ է թաքցնում,  
Դարձնելու համար ինչ-որ հատուկ պահ՝ հատկապես երջանիկ,  
Նորից բացելով իր բանտարկված պարծանքը:  
Օրհնյալ եք դուք ում արժանիքները տալիս են հնարավորություն.  
Երբ մատչելի են՝ ցնծոյթան համար, երբ բացակա են՝ հուսալու համար:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

53



What is your substance, whereof are you made,  
That millions of strange shadows on you tend,  
Since every one hath, every one, one shade,  
And you, but one, can every shadow lend?  
Describe Adonis, and the counterfeit  
Is poorly imitated after you;  
On Helen's cheek all art of beauty set,  
And you in Grecian tires are painted new;  
Speak of the spring and foison of the year  
The one doth shadow of your beauty show,  
The other as your bounty doth appear,  
And you in every blessed shape we know.  
In all external grace you have some part,  
But you like none, none you, for constant heart.





Այդ ինչ նյութից եք դուք կերտված, ասեք,  
Որ բյուր օտար ստվերներ են ձեզ հսկում,  
Մինչդեռ ամենքն ունեն մեկ սավեր, լոկ մեկ,  
Իսկ ձեզ, մեկին բազումքն են հետևում:  
Ադոնիսի կերպարը պատկերեն՝  
Ձեր վատ նմանակումն այն կլինի.  
Հեղինեի դեմքին արվեստ դնեն՝  
Հույնի զգեստով ձեզ աչքը կտեսնի.  
Խոսեք գարնան, բերքաքաղի մասին  
Եւ մեկն է ստվերը ձեր առատության,  
Իսկ մյուսը՝ գեղությունն է ձեր նրբին,  
Օրհնյալ ձեռով ձեզ բնորոշ այնքան:  
Ամեն պերճանք ձեզնից բաժին ունի,  
Բայց սիրտը ձեր հաստատ՝ ոչ ոք, չունի:

Ո՞րն է ձեր նյութը, որից դուք պատրաստված եք,  
Որ միլիոնավոր օտար ստվերներ են ձեզ հետևում,  
Մինչդեռ ամեն մեկն ունի, ամեն մեկը, մեկ սավեր,  
Իսկ դուք, հենց մեկը, կարող եք ցանկացած սավեր տալ:  
Նկարագրեք Ադոնիսին, եւ այդ կեղծիքը  
Վատ նմանակումն է ձեր.  
Հեղինեի դեմքին ամբողջ արվեստը գեղեցկության դիր,  
Եւ դուք հունական զգեստով եք պատկերված նորից.  
Խոսեք գարնան մասին եւ տարվա բերքահավաքի մասին  
Սեկը կլինի սավերը ձեր գեղեցկության հանդեսի,  
Մյուսը որպես ձեր առատությունը կներկայանա,  
Եւ ձեզ ցանկացած օրհնյալ ձեռով մենք կճանաչենք:  
Բոլոր արտաքին պերճանքի մեջ դուք ունեք որոշ բաժին,  
Բայց դուք ինչպես ոչ ոք, ոչ ոք (ինչպես) դուք՝ հաստատունություն սրտի:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

54



how much more doth beauty beauteous seem  
By that sweet ornament which truth doth give!  
The rose looks fair, but fairer we it deem  
For that sweet odour which doth in it live.  
The canker blooms have full as deep a dye  
As the perfumed tincture of the roses,  
Hang on such thorns, and play as wantonly,  
When summer's breath their masked buds discloses;  
But, for their virtue only is their show,  
They live unwooded, and unrespected fade,  
Die to themselves. Sweet roses do not so,  
Of their sweet deaths are sweetest odours made:  
And so of you, beauteous and lovely youth,  
When that shall vade, by verse distils your truth.



Որքան ավել է գեղեցիկը գեղ  
Ծնորհիվ անուշ զարդի՝ ճշմարտության:  
Չքնաղ է վարդը, բայց ավել շքեղ  
Անուշ բույրով, հյութով իր էություն:  
Մասրի ծաղիկն ունի ճոխ թանձր գույն  
Ինչպես բուրեղ վարդի խոր երանգները,  
Փշերն են նույն դրա, եւ խաղն է նույն,  
Երբ շունչն ամուսն բացում է կոկոնները.  
Սակայն իրենց լոկ տեսքն է գորավոր,  
Անհույս ծաղկում են, չհարգված՝ թռչնում,  
Մեռնում անհայտ: Իսկ քաղցր վարդն է որ,  
Անուշ մեռնում է՝ բույր անուշ դառնում.  
Եւ ձեզ էլ երբ քի կյանքի գարունը,  
Տաղերը կթորեն ձեր իսկությունը:

Ոհ, որքան շատ ավելի է գեղեցկությունը գեղեցիկ թվում  
Ծնորհիվ այն քաղցր զարդի, որը իսկությունն է տալիս:  
Վարդը երեսում է չքնաղ, բայց էլքնաղ ենք մենք այն համարում  
Այն քաղցր բույրի համար, որը մեզն իր ապրում է:  
Մասրի\* ծաղիկները ունեն լիովին խորը գույն  
Ինչպես բուրավետ թույրը վարդերի,  
Կախված նույնաման փշերի վրա, եւ խաղալով նույնքան անհոգ,  
Երբ ամուսն շունչը դրանց թաքնված կոկոնները բացում է.  
Բայց դրանց գորությունը միայն իրենց տեսքն է,  
Դրանք ապրում են չպահանջված եւ չհարգված թռչնում են,  
Մեռնում են իրենց համար: Քաղցր վարդերը անում են ոչ նույնը,  
Իրենց քաղցր մահերից քաղցրագույն բուրմունքներ են պատրաստվում.  
Եւ այդպես էլ ձեզանից, գեղանի եւ սիրելի երիտասարդ,  
Երբ այն անցնի, տաղերի միջոցով կթորվի ձեր իսկությունը:

\* Մասրի անունը ունի նաեւ «որդ, արատ» իմաստը, ինչը բառախաղ է ստեղծում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

55



Not marble nor the gilded monuments  
Of Princes shall outlive this pow'rful rhyme,  
But you shall shine more bright in these contents  
Than unswept stone, besmeared with sluttish time.  
When wasteful war shall Statues overturn,  
And broils root out the work of masonry,  
Nor Mars his sword nor war's quick fire shall burn  
The living record of your memory.  
'Gainst death and all oblivious enmity  
Shall you pace forth; your praise shall still find room  
Even in the eyes of all posterity  
That wear this world out to the ending doom.  
So, till the judgement that yourself arise,  
You live in this, and dwell in lovers' eyes.



Ո՛չ մարմարե, ո՛չ ոսկեգօծ արձանը  
Չեն վերապրի հզոր տողերը այս,  
Ուր կշողաք դուք ավելի պայծառ քան,  
Քարերն անօգ, ժամանակից մաշված:  
Երբ Արձաններ շրջեն քանդիչ մարտերը,  
Եւ խռովքներ փշրեն գործք որմնադրի,  
Ո՛չ թուր Մարսի, եւ ո՛չ կովի բոցերը,  
Ձեր կենդանի կերպարն այս չեն այրի:  
Ընդդեմ մահվան եւ մոռացնող դավի  
Կանցնեք առաջ. ձեր գովքը միշտ անշեջ է  
Բյուր աչքերում բոլոր սերունդների,  
Որ կմաշեն աշխարհն այս մինչ իր վերջը:  
Արդ, դատաստանը մինչ, երբ կհառնեք,  
Տաղում, աչքում սիրողների ապրեք:

Ո՛չ մարմարը, ո՛չ ոսկեգօծ հուշարձանները  
Իշխանների չեն վերապրի այս հզոր տողերը,  
Բայց դուք կշողաք ավելի պայծառ դրանց բովանդակության մեջ,  
Քան անխնամ քարը, ապականված փնթի ժամանակից:  
Երբ կործանիչ պատերազմը արձաններ կշրջի,  
Եւ խռովությունները արմատախիլ կանեն աշխատանքը որմնադիրների,  
Ո՛չ Մարսն իր թրով, ո՛չ պատերազմի արագ հուրը չի այրի  
Կենդանի գրառումը ձեր հիշողության:  
Հակառակ մահի եւ բոլոր հիշակորուստ թշնամանքի  
Դուք կգնաք առաջ. ձեր գովքը միշտ կգտնի տեղ  
Նույնիսկ աչքերում բոլոր սերունդների,  
Որը կմաշեն այս աշխարհը մինչեւ ավարտը ճակատագրական:  
Ուրեմն, մինչեւ դատաստանը, որ ինքներդ հառնեք,  
Դուք ապրեք սրանում եւ բնակվեք սիրողների աչքերում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

56



Sweet love, renew thy force, be it not said  
Thy edge should blunter be than appetite,  
Which but today by feeding is allayed,  
Tomorrow sharp'ned in his former might.  
So, love, be thou: although today thou fill  
Thy hungry eyes even till they wink with fullness,  
Tomorrow see again, and do not kill  
The spirit of love with a perpetual dullness:  
Let this sad int'rim like the ocean be  
Which parts the shore, where two contracted new  
Come daily to the banks, that when they see  
Return of love, more blest may be the view;  
As call it winter, which being full of care,  
Makes summers welcome, thrice more wished, more rare.



Մեր քաղցր, գորացիր, եւ թող չասեն  
Քո սայրը բութ է, քան թե ախորժակը,  
Որ տակ այսօր կարող է հագեցվել,  
Իսկ վաղն արդեն ունի նախկին վիճակը:  
Մեր, այդպիսին եղիր. թեկուզ լցնես  
Այսօր քաղցած աչքերդ մինչ փակվելը,  
Կրկին նայիր դու վաղն, ու չսպանես  
Միրո ռզին. մերժիր միշտ ծուլ լինելը.  
Թող պահն այդ մի տխուր օվկիան լինի,  
Որ բաժանում է սիրահար սրտերը,  
Բայց երբ սիրո դարձի ընկնես հասնի  
Ավել օրհնյալ լինի դրա պատկերը.

Կամ դա կոչիր ձմեռ տագնապալի,  
Որ կդարձնի ամառը ցանկալի:

Քաղցր սեր, նորացրու քո ուժը, թող չասեն  
Քո սայրը երբու՞թ կլինի, քան ախորժակը,  
Որը տակ այսօր է սնվելով հագեցած,  
Վաղը սրվում է իր նախկին աստիճանի:  
Այդպիսին, սեր, եղիր դու. թեև այսօր դու լցնում ես  
Քո քաղցած աչքերը այնքան, մինչև դրանք փակվում են հագեցվածությունից,  
Վաղը նայիր կրկին եւ մի սպանիր  
Ոգին սիրո վշտական ծուլությամբ.  
Թող այդ տխուր ժամանակամիջոցը ինչպես օվկիան լինի,  
Որը մասնատում է ափերը, ուր երկու նշանված նոր  
Գալիս են ամեն օր ափ, որ երբ իրենք տեսնեն  
Վերադարձը սիրո, ավելի օրհնյալ կարող է լինել տեսարանը.  
Կամ անվանիր դա ձմեռ, որը լինելով լի տագնապով,  
Անում է ամառը հյուրընկալ, եռակի ավելի ցանկալի, ավելի հազվագյուտ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

57



Being your slave, what should I do but tend  
Upon the hours and times of your desire?  
I have no precious time at all to spend,  
Nor services to do till you require.  
Nor dare I chide the world-without-end hour  
Whilst I (my sovereign) watch the clock for you,  
Nor think the bitterness of absence sour  
When you have bid your servant once adieu.  
Nor dare I question with my jealous thought  
Where you may be, or your affairs suppose,  
But like a sad slave stay and think of nought  
Save where you are how happy you make those.  
So true a fool is love that in your will  
(Though you do any thing) he thinks no ill.





Երբ ես ձեր ստրուկն եմ, ո՞նց չճառայեմ  
Պահին եւ ժամերին ձեր ցանկության:  
Ես ծախսելու անգին թուպե չունեմ,  
Չունեմ գործեր, առանց ձեր հաճության:  
Չեմ ավստսում երկար ու ձիգ ժամերը  
Երբ (իմ իշխան) գալուն եմ ձեր սպասում,  
Չեմ անիծում այն դառնագին պահերը,  
Երբ դուք ինձ հեռանալ եք կարգադրում:  
Չեմ հանդգնում հարցնել խանդոտ մտքում  
Թե ուր եք դուք, ինչով եք դուք զբաղված,  
Բայց ստրուկ որպես սպասում եմ, մտածում.  
Երևեկ նրան, ով կողքն է ձեր կանգնած:  
Ուրեմն ճիշտ է, որ հիմար է սերը,  
Կարդարացնի նա ձեր բոլոր քայլերը:

Լինելով ձեր ստրուկը, ինչ պետք է ես անեմ, եթե ոչ՝ ճառայեմ  
Ժամերին եւ պահերին ձեր ցանկության:  
Ես չունեմ թանկագին ժամանակ առհասարակ ծախսելու,  
Չունեմ ճառայություններ կատարելու, քանի դեռ դուք չեք պահանջել:  
Ոչ հանդգնում եմ ես կշտամբել անվերջանալի ժամերի համար,  
Երբ ես (իմ իշխան) նայում եմ ժամացույցին ձեզ համար,  
Ոչ մտածում եմ դառնության մասին բացակայության թթու,  
Երբ դուք առաջարկել եք ձեր ճառային հեռանալ:  
Ոչ հանդգնում եմ ես հարցնել իմ խանդոտ մտքերում  
Ուր դուք կարող եք լինել, կամ ձեր զբաղմունքի մասին գուշակել,  
Բայց ինչպես տխուր ստրուկ սպասել եւ չմտածել ոչինչ,  
Բացի նրանից, որ որտեղ դուք եք, որքան երջանիկ եք դուք դարձնում նրանց:  
Ուրեմն ճիշտ է, որ հիմար է սերը, ինչը ձեր կամքով է  
(Եթե դուք անում եք որեւէ բան) նա չի համարում վատ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

58



What god forbid, that made me first your slave,  
I should in thought control your time of pleasure,  
Or at your hand th'account of hours to crave,  
Being your vassal bound to stay your leasure.  
O let me suffer (being at your beck)  
Th'imprison'd absence of your liberty,  
And patience, tame to sufferance, bide each check,  
Without accusing you of injury.  
Be where you list, your charter is so strong  
That you yourself may priviledge your time  
To what you will; to you it doth belong  
Yourself to pardon of self-doing crime.  
I am to wait, though waiting so be hell,  
Not blame your pleasure, be it ill or well.



անի աստված, ինձ՝ ստրուկը ձեր դարձրած,  
Որ զվարճությանը ես ձեր հետեւեմ,  
Կամ լինելով ավատատուն երդված,  
Ձեր ժամերի հաշիվը պահանջեմ:  
Ոհ, թող որ, դիմանամ (ձեզ սպասելով)  
Բանսոված, մինչեւ որ ինձ կնկատեք,  
Եւ ընդունեմ ամեն մերժում պատվով,  
Եւ ձեզ հանկարծ չմեղադրեմ երբեք:  
Եղեք ուր կամենաք՝ ձեր իրավունքն է,  
Դուք ձեզ ձեր ժամանակն եք արտոնում.  
Ինքներդ եք ընտրում ուզած զբաղմունքը.  
Եւ ձեր իսկ զանցանքի համար ներում:  
Սպասում եմ ես, դժոխային ցավով,  
Ձեր վատ, թե՛ լավ զվարճանքն ընդունելով:

Չանի աստված, որը դարձրել է ինձ նախ ձեր ստրուկը,  
Որ ես ստիպված լինեմ մտքում հետեւել ձեր պահերին զվարճանքի,  
Կամ ձեր ձեռքից՝ հաշիվը ձեր ժամերի պահանջեմ,  
Լինելով ձեր ավատատուն՝ պարտավոր սպասել ձեր ազատ ժամանակին:  
Ոհ, թողեք ես դիմանամ (սպասելով ձեր ակնարկին)  
Բանտարկված՝ բացակայությանը ձեր կամքի\*,  
Եւ համբերությունը՝ սովոր հանդուրժելուն, դիմանա ամեն մերժման,  
Առանց մեղադրելու ձեզ վիրավորանքի համար:  
Եղեք ուր դուք կուզեք. ձեր արտոնություններն այնքան մեծ են,  
Որ դուք ինքներդ կարող եք արտոնել ձեր ժամանակը  
Ինչին դու կամենաք. ձեզ է դա պատկանում  
Ինքներդ ձեզ ներելու սեփական զանցանքի համար:  
Ես սպասելով եմ, թե՛ ես սպասեմ այսպե՛ս՝ դժոխք է,  
Չդատասպարտելով ձեր զվարճանքները, լինեն դրանք վատ թե լավ:

\*Դժվար է մեկնել: Թերեւս նշանակում է. «...դիմանամ բանտարկված՝ բաժանումին, որը ձեր կամքով է պայմանավորված»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

59



If there be nothing new, but that which is  
Hath been before, how are our brains beguiled,  
Which, labouring for invention, bear amiss  
The second burthen of a former child!  
O that record could with a backward look,  
Even of five hundred courses of the sun,  
Show me your image in some antique book,  
Since mind at first in character was done,  
That I might see what the old world could say  
To this composed wonder of your frame:  
Whether we are mended, or whe'er better they,  
Or whether revolution be the same.  
O sure I am the wits of former days  
To subjects worse have given admiring praise.



Եթե նոր բան չկա, երկրի վրա,  
Ուղեղը մեր ինչ խեղճ է ու չնչին,  
Որ, փորձելով ստեղծել, խաբվում է նա,  
Երկրորդ ծնունդ տալով նույն զավակին:  
Ոհ, թե՛ գրվածքը ետ հայացք գցեր  
Գոնե՛ հինգ հարյուրակ արեւադարձ,  
Ինձ ցույց տար հին գրքում պատկերը ձեր,  
Երբ առաջուց էր միտքը գրանցված,  
Իմանայի, կարծիքը հների  
Այդ հրաշքի մասին՝ ձեր կազմույթյան.  
Շտկվել ենք մենք, իրենք են ընտրելի,  
Թե՛ չի փոխվում պտույտը բնության:  
Ոհ, ես վստահ եմ, ուղեղները հին  
Գուլքեր էին տալիս վատագույնին:

Եթե չկա ոչինչ նոր, իսկ այն ինչ կա  
Եղել է նախկինում, որքան է մեր ուղեղը խաբված,  
Որ, աշխատելով ստեղծագործության համար, կրում է անհաջողություն՝  
Երկրորդ ծնունդ նախկին զավակին:  
Ոհ, որ գրառումը կարողանար հետադարձ նայելով  
Գոնե՛ հինգ հարյուր պտույտ արեւի,  
Ցույց տար ինձ ձեր պատկերը որեւէ հին գրքում,  
Այն ժամանակից, երբ միտքն առաջին անգամ գրանշաններում եղավ իրագործված,  
Որ ես կարողանայի տեսնել, ինչ հին աշխարհը կարող էր ասել  
Այս կազմված հրաշքի մասին՝ ձեր մարմնի.  
Արդյո՞ք մենք ենք շտկվել, կամ արդյո՞ք էլլավ էին նրանք,  
Կամ արդյո՞ք շրջապտույտը լինում է նույնը:  
Ոհ, ես համոզված եմ, ուղեղները հին օրերի  
Առարկաներին վատագույն տալիս էին հիացական գովասանքներ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

60



Like as the waves make towards the pebbled shore,  
So do our minutes hasten to their end,  
Each changing place with that which goes before,  
In sequent toil all forwards do contend.  
Nativity, once in the main of light,  
Crawls to maturity, wherewith being crowned,  
Crooked eclipses 'gainst his glory fight,  
And Time that gave doth now his gift confound.  
Time does transfix the flourish set on youth.  
And delves the parallels in beauty's brow,  
Feeds on the rarities of nature's truth,  
And nothing stands but for his scythe to mow.  
And yet to times in hope my verse shall stand,  
Praising thy worth, despite his cruel hand.



Ինչպես շարժվում են ալիքներն առ ափ,  
Այդպես դեպ վերջ շտապում են բուպեները,  
Հաջորդներին զիջում են տեղը շտապ,  
Հերթով ձգտում առաջ՝ ժողված ջանքերը:  
Ծնունդը, հենց որ լույսն է մեծ տեսնում,  
Սողում է դեպ արբունք, իսկ երբ հասնում է,  
Խավարումներն են իր փառքին զարկում,  
Եւ ժամանակն ընծան իր կործանում է:  
Խոցում է նա ծաղկունքը պարմանի,  
Փոքում է ակուններ՝ պերճ ճակատին,  
Ուտում ծնած իր գանձը գեղանի,  
Եւ չի թողնում ոչինչ իր գերանդին:  
Բայց դեպ գալիքը տաղն իմ կտանի,  
Քո գուլքը. ինչ էլ ժամանակն անի:

Ինչպես ալիքներն են շարժվում դեպի քարքարոտ ափը,  
Այդպես էլ մեր բուպեները շտապում են իրենց վերջին,  
Յուրաքանչյուրը փոխելով տեղը մյուսի հետ, որը գալիս է նրանից առաջ,  
Հաջորդական ջանքերով բոլորը առաջ են ձգտում:  
Ծնունդը, հենց մեջն է ծովում լույսի,  
Սողում է դեպի հատունություն, որից հենց որ պսակավորվում է,  
Կեռ խավարումները ընդդեմ նրա փառքին են մարտնչում,  
Եւ ժամանակը, որը տալիս էր, այժմ իր նվերն է կործանում:  
Ժամանակը խոցում է ծաղկունքը երիտասարդության,  
Եւ փորում է ակուններ՝ գեղեցկության ճակատին,  
Մնվում է հազվագյուտություններով բնության իսկության,  
Եւ ոչինչ չի մնում, եթե ոչ իր գերանդիով հնձվելու համար:  
Եւ այնուամենայնիվ մինչեւ ժամանակները հուտ իմ տաղերը կհասնեն,  
Գովերգելով քո արժանիքները, չնայած նրա դաժան ձեռքին:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

61



As it thy will thy image should keep open  
My heavy eyelids to the weary night?  
Dost thou desire my slumbers should be broken,  
While shadows like to thee do mock my sight?  
Is it thy spirit that thou send'st from thee  
So far from home into my deeds to pry,  
To find out shames and idle hours in me,  
The scope and tenure of thy jealousy?  
O no, thy love, though much, is not so great;  
It is my love that keeps mine eye awake,  
Mine own true love that doth my rest defeat,  
To play the watchman ever for thy sake.  
For thee watch I, whilst thou dost wake elsewhere,  
From me far off, with others all too near.





ն կամքն է, որ պատկերդ չի թողնում

Կաչեն կոպերս տանջալի գիշերը:

Քո ցանկությամբ է նինջս ընդհատվում,

Երբ որ խաբում են աչքս քո սավերները:

Արդյո՞ք հոգիդ է, մոտս ուղարկված՝

Այսքան հեռու՝ գործերս դիտելու,

Որ քի՞ծ գտնի, անգործ ժամեր անցած,

Որքան, մինչ էրբ ես դու ինձ խանդելու:

Ոհ, ոչ, այդքան չէ սերը քո սրտում.

Ի՛ն սերն է, որ պահում է աչքս բաց,

Ի՛ն սերն է, որ հանգիստն է իմ խախտում,

Անդով աննինջ պահակը քո դարձած:

Հսկում եմ քեզ, մինչ դու այլուր արթուն ես.

Այլոց շատ մոտ՝ ինձնից այնքան հեռու ես:

Արդյո՞ք քո կամքով է, որ քո պատկերը պետք է պահի բաց

Ի՛ն ծանր կոպերը տանջալի գիշերում:

Դու ես ցանկանում, որ իմ նինջը ընդհատվի,

Երբ սավերներ, նման քեզ, խաբում են իմ տեսողությունը:

Արդյո՞ք քո հոգին է, որ դու ուղարկել ես քեզնից՝

Այսքան հեռու՝ տնից՝ մեջ իմ գործերի նայելու,

Գտնելու անոթալիություններ եւ անգործ ժամեր ինձ մոտ,

Չամի՞ր եւ ժամկետները\* քո խանդի:

Ոհ, ոչ, քո սերը, թեեւ զգալի է, այնքան էլ մեծ չէ.

Այդ ի՛ն սերն է, որ պահում է իմ աչքը արթուն,

Ի՛ն սեփական իսկական սերն է, որ իմ հանգստին է հաղթում,

Խաղալու համար պահակ միշտ քո համար:

Քեզ եմ ես հսկում, մինչ դու արթուն ես լինում այլուր,

Ինձնից չափազանց հեռու, բոլոր այլոց հետ շատ մոտ:

\* Բնագրում *tenure*՝ «ժամկետ տիրապետության», որի փոխարեն, ըստ որոշ կարծիքների, պետք է լիներ *tenor*՝ «իմաստ, բովանդակություն», որ ստացվել է «նպատակը եւ իմաստը»: Գուցե. բայց «ժամկետ» իմաստը նույնպես տեղին է այստեղ: Նույնիսկ ավելի, քանի որ *scope*-ը ունի ոչ միայն «նպատակ» իմաստը այլև (նույնիսկ՝ նախ եւ առաջ) «սահմաններ»: Այդ դեպքում կունենանք «տիրապետության երկրաչափական եւ ժամանակային սահմաններ» (խանդի որքան է այն տարածվում):

SHAKE-SPEARES,  
SONNETS.

62



Sin of self-love possesseth all mine eye,  
And all my soul, and all my every part;  
And for this sin there is no remedy,  
It is so grounded inward in my heart.  
Methinks no face so gracious is as mine,  
No shape so true, no truth of such account,  
And for myself mine own worth do define,  
As I all other in all worths surmount.  
But when my glass shows me myself indeed,  
Beated and chopped with tanned antiquity,  
Mine own self-love quite contrary I read;  
Self so self-loving were iniquity.  
    'Tis thee (my self) that for myself I praise,  
    Painting my age with beauty of thy days.



Մեղքն ինքնա-սիրության տիրել է ինձ,  
Ամբողջ հոգուն իմ, եւ ամեն մասին.  
Եւ ես չունեմ բուժումը այդ մեղքից,  
Այնքան այն խորն է իմ սրտի միջին:  
Կարծեմ, չկա այնքան նուրբ դեմք, քան իմը,  
Ոչ ձեւ այնքան ճիշտ, ոչ էլ նվիրում,  
Անցել եմ բոլորի արժանիքները  
Ես ինքս եմ իմ արժեքը սահմանում,  
Բայց երբ տեսնում եմ դեմքն իմ հայելում  
Հնությունից ծեծված ու աղաղված,  
Ինքնա-սիրման մյուս կողմն եմ ես կարդում.  
Անմտության աստիճանի հասած:

Այդ քեզ (ինքս ինձ) եմ ես անվերջ գովում,  
Տարիքն իմ օրերով քո զարդարում:

Մեղքն ինքնա-սիրության տիրել է բոլոր իմ աչքին,  
Եւ բոլոր իմ հոգուն, եւ բոլոր իմ ամեն մի մասին.  
Եւ այդ մեղքից չկա բուժում,  
Այն այնքան հողված է մեջ իմ սրտի:  
Ինձ թվում է, չկա դեմք այնքան նրբագեղ, քան իմը,  
Ոչ ձեւ այսքան ճիշտ, ոչ ազնվություն այս չափի,  
Եւ ինձ համար իմ սեփական արժանիքն եմ սահմանում,  
Քանի որ ես բոլոր այլոց բոլոր արժանիքներում եմ գերազանցում:  
Բայց երբ իմ հայելին ցոյց է տալիս ինձ ինքս՝ ինձ իրականում,  
Ծեծված եւ կոտորված\* աղաղված հնությունից,  
Իմ սեփական ինքնա-սիրությունը բավական հակառակ եմ ես կարդում.  
Սեփական անձը այսպես ինքնա-սիրելը կլինե՞ր անօրինություն:  
Այդ քեզ (ինքս ինձ) է, որ ինձ համար ես գովում եմ,  
Նկարագարդելով իմ հասակը գեղեցկությամբ քո օրերի:

\* Ես մի անիմաստ դիտողություն երբեմն արվում է այս բառի հետ կապված. իբր, chopped-ի փոխարեն («կոտորված, կտրատված») պետք է լինե՞ր chapped՝ «ճաքած, ճեղքված», մինչդեռ ակնհայտ է, որ այս երկու բառերը ոչ միայն գրեթե նույնական իմաստ ունեն, այլեւ, ամենայն հավանականությամբ, սուկ արտասանական տարբերակներ են:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

63



Against my love shall be as I am now,  
With Time's injurious hand crushed and o'erworn;  
When hours have drained his blood and filled his brow  
With lines and wrinkles; when his youthful morn  
Hath travelled on to age's steepy night,  
And all those beauties whereof now he's king  
Are vanishing, or vanished out of sight,  
Stealing away the treasure of his spring:  
For such a time do I now fortify  
Against confounding age's cruel knife  
That he shall never cut from memory  
My sweet love's beauty, though my lover's life.  
His beauty shall in these black lines be seen,  
And they shall live, and he in them still green.



Ընդդեմ օրվան, երբ սերս ինձ նման,  
Ժամանակի ձեռքով կջախջախվի.  
Երբ կկորչի այրող եռանդն արյան,  
Եւ կառչի. երբ այգը պատանի  
Կուղեւորվի դեպ ծերության խոր ցայգ,  
Պերճանքն, որին նա տերն է ու արքան  
Կանցնի, կանհայտանա աներեւակ,  
Գողանալով գանձերը իր գարնան.  
Կանգնում եմ ես ընդդեմ այդ օրերի,  
Երբ կշողա նենգ ծերության դանակը.  
Որ հիշողությունից այն չկտրի  
Սիրուս պերճանքը, կամ խլի իր կյանքը:  
Տողերն այս սեւ պերճանքն իր անդադար  
Կպահպանեն եւ նա կապրի դալար:

Ընդդեմ իմ սիրու լինելուն՝ ինչպիսին եմ ես հիմա,  
Ժամանակի կործանիչ ձեռքով ջախջախված ու մաշված.  
Երբ ժամերը կչորացնեն իր արյունը եւ կլցնեն իր ճակատը  
Գծերով եւ կնճիռներով. երբ իր պատանի առավոտը  
Կուղեւորվի ծերության գառիկող գիշերով,  
Եւ բոլոր այն պերճանքները, որոնց այժմ նա արքան է,  
Կանհայտանան, կամ անհայտացած կլինեն դեմ՝ հայացքից,  
Գողանալով գանձերն իր գարնան.  
Այդպիսի ժամանակների համար անում եմ ես հիմա ամբողջուններ  
Ընդդեմ կործանիչ ծերության դաժան դանակի,  
Որ նա չկտրի հիշողությունից  
Իմ քաղցր սիրու պերճանքը, թեկուզե՛ս սիրուս կյանքը:  
Իր պերճանքը կլինի այդ սեւ տողերում տեսանելի,  
Եւ դրանք կապրեն եւ նա դրանցում կմնա դալար:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

64



When I have seen by Time's fell hand defaced  
The rich proud cost of outworn buried age;  
When sometime lofty towers I see down rased,  
And brass eternal slave to mortal rage;  
When I have seen the hungry ocean gain  
Advantage on the kingdom of the shore,  
And the firm soil win of the wat'ry main,  
Increasing store with loss, and loss with store;  
When I have seen such interchange of state,  
Or state itself confounded to decay,  
Ruin hath taught me thus to ruminat:  
That Time will come and take my love away.

This thought is as a death, which cannot choose  
But weep to have that which it fears to lose.



Երբ կտեսնես ժամանակից խեղված  
Հարուստ պտուղն արդեն թաղված դարի.  
Եւ վեհ աշտարակները տապալված,  
Հավերժ արույրը ստրուկ դարձած հրի.  
Երբ կտեսնես սոված օվկիանն աճում է  
Ափի արքայության հողի իւրմամբ,  
Ամուր գետինն էլ ջրերին հաղթում է,  
Լրացնելով կորուստը նվաճմամբ.  
Երբ կտեսնես վիճակը միշտ փոխվում է,  
Կամ կյանքն իրեն մղում է վախճանի,  
Ավերն ու մահն ինձ անընդհատ հուշում են.  
Այս ժամանակն իմ սերն էլ կտանի:  
Այդ միտքը մահ է. եւ մնում է սոսկ  
Ողբալ ինչ քունն է, որ կորցնելն է սոսկ:

Երբ ես տեսնում եմ ժամանակի դաժան ձեռքով այլալված եմ  
Հարուստ հպարտ արժեքները մաշված թաղված դարի.  
Երբ երբեմնի վեսն աշտարակները ես տեսնում եմ տապալված,  
Եւ արույրը հավերժական ստրուկն է մահացու մոլեգնության.  
Երբ ես տեսնում եմ սոված օվկիանը ավելացնում է  
Առավելությունը ափի թագավորության նկատմամբ,  
Եւ ամուր գետինը հաղթում է ջրային տարածքներին,  
Ավելացնելով պաշարները՝ կորուստներով, եւ կորուստները՝ պաշարներով.  
Երբ ես տեսնում եմ այդպիսի փոփոխություններ վիճակի\*,  
Կամ տերությունն ինքը բերում է կործանման,  
Ավերակները սովորեցրել են ինձ այսպես մտածել.  
Այդպիսի ժամանակ կգա եւ կվերցնի իմ սերը կտանի:  
Այդ միտքը նման է մահվան, որը հեռավոր չէ ընտրել,  
Այլ լոկ ողբալ այն ինչ ունես, որը վախճնում ես կորցնել:

\* Թերես այստեղ առկա է state բառի «վիճակ» եւ «պետություն» իմաստների խաղը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

65



Since brass, nor stone, nor earth, nor boundless sea,  
But sad mortality o'ersways their power,  
How with this rage shall beauty hold a plea,  
Whose action is no stronger than a flower?  
O how shall summer's honey breath hold out  
Against the wrackful siege of batt'ring days,  
When rocks impregnable are not so stout,  
Nor gates of steel so strong, but Time decays?  
O fearful meditation! Where, alack,  
Shall Time's best jewel from Time's chest lie hid?  
Or what strong hand can hold this swift foot back,  
Or who his spoil of beauty can forbid?  
O none, unless this miracle have might,  
That in black ink my love may still shine bright.





Եթե արույր ու քար, երկիր ու ծով,  
Մահն իր ուժով դաժան գերազանցում է,  
Պերճանքն ինչպե՞ս ընդդեմ ելնի հայցով,  
Երբ ուժն իր ծաղիկին անգամ զիջում է:  
Եւ շունչն անոռն ինչպե՞ս դիմակայի  
Ընդդեմ քանդիչ օրվա բիրտ պաշարման,  
Երբ ժայռը ու պողպատն էլ չեն հաղթի,  
Չորեղ ժամանակի ուժին քանդման:  
Ո՞հ միտք սարսափեցնող: Ժամանակի  
Ակն ճուր հենց իր արկղից կթաքնվի:  
Ո՞ր ձեռքն ուժեղ նրան կարգելակի,  
Կամ պերճանքի խլումը կարգելի:  
Ոչ ոք, եթե հրաշքն այն չլինի,  
Որ սերս թանաքում սեւ միշտ փայլի:

Եթե ոչ արույր, ոչ քար, ոչ երկիր, ոչ անեզր ծովը,  
Այլ տխուր մահկանացությունն է գերազանցում դրանց ուժը,  
Ինչպե՞ս ընդդեմ այդ մոլեգնության պիտի գեղեցկությունը ներկայացնի հայց,  
Ո՞ւմ ազդեցությունը էութեղ չէ, քան ծաղիկնը:  
Ո՞հ ինչպե՞ս պիտի անառվա մեղրային շունչը դիմակայի  
Ընդդեմ ջախջախիչ պաշարման վնասարար օրերի,  
Երբ ժայռերը անառիկ ոչ այնքան ամուր են,  
Ոչ էլ դարպասներն են պողպատե այնքան ուժեղ, այլ ժամանակի քայքայումը:  
Ո՞հ սարսափեցնող մտորում: Ո՞ւր, սվաղ,  
Ժամանակի լավագույն ակը ժամանակի արկղից\* թաքնվի:  
Կամ ճի ուժեղ ձեռքը կարող է հետ պահել դրա արագ ոտքերը,  
Կամ ճվ իր փչացումը գեղեցկության կարող է արգելել:  
Ո՞հ ոչ ոք, եթե միայն այս հրաշքը չլինի,  
Որ սեւ թանաքում իմ սերը կարողանա միշտ շողալ պայծառ:

\* Ժամանակի ակն ու ժամանակի արկղը. միքիչ խորհրդավոր ձեւակերպումներ են, թեեւ ընդհանուր իմաստով հասկանալի:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

66



Tired with all these, for restful death I cry:

As to behold desert a beggar born,  
And needy nothing trimmed in jollity,  
And purest faith unhappily forsworn,  
And gilded honour shamefully misplaced,  
And maiden virtue rudely strumpeted,  
And right perfection wrongfully disgraced,  
And strength by limping sway disabled,  
And art made tongue-tied by authority,  
And folly (doctor-like) controlling skill,  
And simple truth miscalled simplicity,  
And captive good attending captain ill:

Tired with all these, from these would I he gone,  
Save that, to die, I leave my love alone.



Իսպատ հոգնած՝ կանչում եմ մահը ես.  
Երբ որ տեսնում եմ. արժանին աղքատ է,  
Եւ անպետքին՝ զուգված շքեղապես,  
Եւ ստորաբար լքված անեղծ հավատը,  
Եւ ոսկե փառք՝ անարժանին տրված,  
Եւ անատակեցված ջինջ կուսությունը,  
Եւ կատարելությունը անարգված,  
Եւ ուժն, ում տերը կաղ իշխանությունն է,  
Եւ գեղ արվեստ՝ լեզվին կապանք դրված,  
Եւ հմտություն հսկող տխմարությունը,  
Եւ պարզ անկեղծը՝ պարզամիտ դիտված,  
Եւ չարության ծառա՝ բարիությունը.  
Իսպատ հոգնած, ամենն այս կլքեմ,  
Բայց մեռնելով, սիրուս մեն կթողնեմ:

Հոգնած բոլոր սրանցից, հանգստացնող մահ եմ ես աղերսում.  
Երբ տեսնում եմ արժանավորին՝ աղքատ ծնված,  
Եւ փուչ ոչընչին՝ զուգված, ուրախության մեջ,  
Եւ մաքուր հավատը՝ դժբախտաբար ուրացված,  
Եւ ոսկեգօծ պատիվը՝ անոթաբար տրված անտեղի,  
Եւ կուսական պատիվը՝ կոպտորեն անատակեցված,  
Եւ իսկական կատարելությունը՝ անարդարորեն խայտառակված,  
Եւ ուժը՝ կաղ իշխանության կողմից անկարողացված,  
Եւ արվեստը՝ լեզվին կապ դրված՝ իշխանության կողմից,  
Եւ հիմարությունը՝ (գիտունի պես) վարպետություն վերահսկող,  
Եւ պարզ ճշմարտությունը՝ սխալմամբ համարված պարզանտություն,  
Եւ ստրկացված բարին՝ գլխավոր չարիքը սպասարկող.  
Հոգնած բոլոր սրանցից, սրանցից ես կհեռանայի,  
Եթե չլինեք, որ մեռնելով ես կթողնեմ իմ սիրուն միայնակ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

67



Why wherefore with infection should he live,  
And with his presence grace impiety,  
That sin by him advantage should achieve,  
And lace itself with his society?  
Why should false painting imitate his cheek,  
And steal dead seeming of his living hue?  
Why should poor beauty indirectly seek  
Roses of shadow, since his rose is true?  
Why should he live, now Nature bankrupt is,  
Beggared of blood to blush through lively veins,  
For she hath no exchequer now but his,  
And proud of many, lives upon his gains?  
O him she stores, to show what wealth she had,  
In days long since, before these last so bad.



Այի, նա ինչո՞ւ պիտ աղտի հետ ապրի\*,  
Եւ իր պատվով ծածկի անպատվությունը,  
Որ մեղքը իր հաշվին բարգավաճի  
Կապի իրեն եւ հասարակությունը:  
Ինչո՞ւ պիտ պատճենի շպարն իր այտերը.  
Եւ գողանա երանգն իր կենդանի:  
Ինչո՞ւ թողած իր իսկական վարդերը  
Աղքատ պերճանքը կեղծը որոնի:  
Ինչո՞ւ ապրի, երբ Բնությունը սնանկ է,  
Որ երակներ լցնի ալ արյունով,  
Քանզի արդեն չունի այլ գանձն ու հանքը,  
Եւ արդ ապրում է նա իր վաստակով:  
Պահում է՝ ցույց տալու, ինչ գանձ ուներ  
Հնում, մինչ որ եկան այս գարշ օրերն:

Այի ինչո՞ւ աղտի հետ պետք է նա ապրեր\*,  
Եւ իր ներկայությամբ թողարկի անպատվությունը,  
Որ մեղքը շնորհիվ իրեն առավելության հասնի  
Եւ կապի իրեն իր հասարակությանը:  
Ինչո՞ւ պետք է կեղծ ներկը նմանակի նրա այտը.  
Եւ գողանա մեռյալ նմանակը նրա կենդանի երանգի:  
Ինչո՞ւ պետք է աղքատ գեղեցկությունը զարտույտորեն փնտրի  
Վարդեր սովերի, քանի որ նրա վարդը իսկական է:  
Ինչո՞ւ նա պետք է ապրեր հիմա, երբ Բնությունը սնանկ է,  
Աղքատացած արյունով, կարմրով լցնելու համար կենդանի երակները,  
Քանզի նա չունի գանձարան այժմ բացի իրենից,  
Եւ հպարտ շատերով, ապրում է նրա վաստակով:  
Ո՞հ նրան նե պահում է՝ ցույց տալու, ինչ հարստություն է նե ունեցել  
Օրերում վաղուց անցած, մինչև այդ վերջինները՝ այսքան վառ:

\* Դժվար ընկալվող հնչյակ է. խորթին ձեռակերպումներով: Այնքան կտրուկ հակադրվում է նախորդ հանճարեղորեն պարզ եւ կատարյալ հնչյակից, որ դժվար է պատկերացնել, թե այդ երկուսը առհասարակ միեւնույն մարդու գործ են, մինչդեռ երբեմն համարվում է, որ սա նախորդի շարունակությունն է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

68



Thus is his cheek the map of days outworn,  
When beauty lived and died as flowers do now,  
Before these bastard signs of fair were borne,  
Or durst inhabit on a living brow;  
Before the golden tresses of the dead,  
The right of sepulchres, were shorn away,  
To live a second life on second head;  
Ere beauty's dead fleece made another gay:  
In him those holy antique hours are seen,  
Without all ornament, itself and true,  
Making no summer of another's green,  
Robbing no old to dress his beauty new;  
And him as for a map doth Nature store,  
To show false Art what beauty was of yore.



Մնուշ է դեմքն իր՝ անցյալից հասած,  
Երբ գեղը կմեռներ ծաղկի նման,  
Մինչ կեղծ պերճանքը անօրեն ծնված,  
Բնակություն գտավ հոնքին կենդան.  
Մինչ օրն այն, երբ վարսերը մեռածի՝  
Շիրմին պատկան՝ սկսեցին խուզել,  
Տալ կյանք երկրորդ ապրած ու անցածին.  
Մեռած վարսով մեկ այլ մարդու զուգել.  
Իր մեջ հին սուրբ ժամերն են երևում,  
Առանց զարդի. հենց ինքն է՝ իսկական,  
Այլոց ծաղկից ամառ նա չի կերտում,  
Անցած հնից, նա չի շորթում պերճանք.  
Նմուշ եղավ նա Բնության համար,  
Որ կեղծ Արվեստը գեղը իմանար:

Այսպիսով, նրա դեմքը նմուշ է օրերի անցած,  
Երբ գեղեցկությունն ապրում էր եւ մեռնում, ինչպես ծաղիկները՝ հիմա,  
Նախքան այն բանի, որ այդ անօրեն նշանները չքնադության տարածվեցին,  
Կամ համարձակվեցին բնակվել կենդանի հոնքի վրա.  
Նախքան այն բանի, որ ոսկե գանգուրները մեռյալների,  
Պատկանելիքը գերեզմանների, սկսեցին խուզել,  
Ապրելու երկրորդ կյանք երկրորդ գլխին.  
Մինչեւ որ գեղեցկության մեռած գեղմը դարձրեց մյուսին երջանիկ.  
Նրանում այդ սուրբ հին ժամերն են երևում,  
Առանց բոլոր զարդերի, ինքը եւ իսկական,  
Չպատրաստելով ամառ ուրիշի կանաչից,  
Չթալանելով հինը, զգեստավորելու համար յուր պերճանքը նորից.  
Եւ նրան, որպես նմուշ Բնությունը պահել է  
Ցույց տալու կեղծ Արվեստին ինչպիսին էր գեղեցկությունը նախկինում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

69



Whose parts of thee that the world's eye doth view  
Want nothing that the thought of hearts can mend;  
All tongues (the voice of souls) give thee that due,  
Uttering bare truth, even so as foes commend,  
Thy outward thus with outward praise is crowned,  
But those same tongues that give thee so thine own,  
In other accents do this praise confound  
By seeing farther than the eye hath shown.  
They look into the beauty of thy mind,  
And that in guess they measure by thy deeds;  
Then, churls, their thoughts (although their eyes were kind)  
To thy fair flower add the rank smell of weeds:  
But why thy odour matcheth not thy show,  
The soil is this, that thou dost common grow.





ասերոյ, որ բացված են աշխարհին

Լավացվելու կարիք բնավ չունեն.

Բոլորը քեզ տալիս են արժանին,

Եւ ոտխներն էլ գովքը քո կասեն,

Քո արտաքինը, արտաքուստ գովված է,

Բայց նույն, քեզ արժանին տվող լեզուն,

Կարծում է, որ թերեւս մոլորված է,

Երբ որ հայացքը խորն է թափանցում:

Նայում են քո հոգու գեղեցկությանը,

Եւ համադրում այն քո արարքներին.

Ապա, նույնիսկ լինեն քո բարեկամը,

Խառնում են խոտի հոտ քո նուրբ ծաղկին.

Բայց բոյրը քո վայել չէ քո տեսքին,

Չի մատչելի է աճող ամենքին:

Այն մասերը քո, որոնք աշխարհի այքերը տեսնում են  
Չեն գանկանում ոչինչ, ինչ միտքը սրտերի կարող է կատարելագործել.

Բոլոր լեզուները (ձայնը հոգիների) տալիս են քեզ, արժանին,  
Անելով մերկ ճշմարտությունը, նույնիսկ թշնամիներն են գովում,

Քո արտաքինը, այսպիսով, արտաքին գովքով է պատկված,  
Բայց այդ նույն լեզուները, որ տալիս են քեզ որքան քունն է,

Այլ շեշտադրումով այդ գովքը բեկում են  
Նայելով էլառաջ, քան աչքն է տեսնում:

Նրանք նայում են մեզ գեղեցկության քո բանականության,  
Եւ ինչ կոահումներում իրենք չափում են ըստ քո արարքների.

Ապա, ժպտները, իրենց մտքերը (թեկուզ եւ նրանց այքերը լինեն բարի)  
Քո չքնաղ ծաղկին հավելում են երանգ հոտի մոլայխոտերի.

Բայց ինչու քո բոյրը համապատասխան չէ քո տեսքին,  
Հողը\* դրա այն է, որ դու հանրայնորեն ես աճում:

\* Թորվի բնագրում այդ տեղում անհայտ իմաստով soyle բառն է, որ հաջորդ  
հրատարակիչները դիտել են, որպես փոխատեղված soyle (արդի soil «հող»  
«պատճառ, աղբյուր» իմաստով):

SHAKE-SPEARES,  
SONNETS.

70



What thou are blamed shall not be thy defect,  
For slander's mark was ever yet the fair;  
The ornament of beauty is suspect,  
A crow that flies in heaven's sweetest air.  
So thou be good, slander doth but approve  
Thy worth the greater, being wooed of time,  
For canker vice the sweetest buds doth love,  
And thou present'st a pure unstained prime.  
Thou hast passed by the ambush of young days,  
Either not assailed, or victor being charged,  
Yet this thy praise cannot be so thy praise  
To tie up envy, evermore enlarged:  
If some suspect of ill masked not thy show,  
Then thou alone kingdoms of hearts shouldst owe.



Արատ չէ այն, որ դու մեղադրված ես՝  
Չքնադն է զրպարտչի թիրախ դառնում.  
Եւ միշտ էլ զարդը պերճության՝ կասկածն է՝  
Ազոավ թռչող՝ երկնի մաքուր օդում:  
Եղիր դու լավը եւ կհաստատվի  
Ժամանակով. արժանիքներդ մեծ են,  
Իսկ դու անբիծ ծաղկունք ես հիրավի.  
Անուշ կոկոնն է միշտ ընտրում է զարշ ցեցը:  
Պարտվել են բազմաթիվ ախոյաններդ,  
Մղել ես ետ գրոհը շատերի,  
Բայց չեն բավարարի հաղթանակներդ,  
Որ վերջ տաս նախանձին նոր օրերի.  
Թե ստվերը արատի քեզ չդիպչեր,  
Դու միայնակ կտիրեիր սրտեր:

Որ դու մեղադրված ես, չպետք է լինի քո արատը,  
Քանի որ զրպարտության թիրախը եղել է միշտ չքնադն.  
Զարդը գեղեցկության՝ կասկածն է՝  
Ազոավ, որ թռչում է երկնքի մաքրագույն օդում:  
Այնպես որ դու եղիր լավը, զրպարտությունը սակայն կհաստատի.  
Քո արժանիքն ավելին է, խնամված կլինի ժամանակի կողմից\*,  
Քանի որ խոցն արատի քաղցրագույն կոկոններն է սիրում,  
Եւ դու ներկայացնում ես գոված անբիծ ծաղկունք:  
Դու խուսափել ես որոգայթներից երիտասարդ օրերի,  
Կամ չես գրոհվել, կամ հաղթել՝ գրոհված լինելով,  
Թեեւ դա քո համար գովելի է, չի կարող լինել այդքան գովելի,  
Որպեսզի կապի նախանձը, անընդհատ ընդարձակվող.  
Եթե որոշ կասկած արատի չդիմակեր քո կերպարը,  
Այդժամ դու միայնակ արքայություններ սրտերի կունենայիր:

\* Խրթին տեղ է:

SHAKE-SPEARES,

SONNETS.

71



No longer mourn for me when I am dead  
Than you shall hear the surly sullen bell  
Give warning to the world that I am fled  
From this vile world with vildest worms to dwell;  
Nay, if you read this line, remember not  
The hand that writ it, for I love you so  
That I in your sweet thoughts would be forgot,  
If thinking on me then should make you woe.  
Or if (I say) you look upon this verse,  
When I (perhaps) compounded am with clay,  
Do not as much as my poor name rehearse,  
But let your love even with my life decay,  
Lest the wise world should look into your moan,  
And mock you with me after I am gone.



Երբ որ մեռնեմ ես սգացեք դուք ինձ,  
Քանի դեռ կլավի դողանջ դժգույն,  
Ազդարարող, որ աշխարհից այս պիղծ  
Փախել եմ որդերի մոտ պղծագույն.  
Եւ թե կարդաք այս տողը, մի հիշեք  
Գրողի ձեռքն. այնպես եմ ձեզ սիրում,  
Որ լավ է մտքերից ձեր ինձ հանեք,  
Քան ինձ հիշելը ձեզ դարձնի տրտում:  
Կամ թե այդժամ նայեք դուք այս տաղին,  
Երբ ես կավին ձուլված լինեմ անհետ,  
Չասեք անգամ դուք խեղճ անունը իմ,  
Բայց թող կորչի, անցնի ձեր սերն ինձ հետ,  
Որ չտեսնեն ինչպես եք ինձ ողբում,  
Եւ չծաղրի աշխարհը իմաստուն:

Ոչ ավելի սգացեք ինձ, երբ ես մեռնեմ,  
Քան դուք կլեք տխուր մոայլ գանգը,  
Ազդարարողն աշխարհին որ ես փախել եմ  
Այս պիղծ աշխարհից՝ պղծագույն որդերի հետ բնակվելու համար.  
Ավելին, եթե դուք կարդաք այս տողը, մի հիշեք  
Ձեռքը, որը գրել է այն, քանզի ես սիրում եմ ձեզ այնպես,  
Որ ես ձեր քաղցր մտքերում կուզեի լինել մոռացված,  
Եթե մտածելը իմ մասին հետո կարող է ձեզ տառապանք բերել:  
Կամ եթե (ես ատում եմ) դուք նայեք այս տաղին,  
Երբ ես (գուցե) խառնված կլինեմ եմ կավին,  
Մի, նայնիսկ, իմ խեղճ անունը կրկնեք,  
Բայց թող ձեր սերը անգամ իմ կյանքի հետ վերանա,  
Որպեսզի իմաստուն աշխարհը չնայի ձեր ողբի մեջ,  
Եւ չծաղրի ձեզ ինձ համար երբ ես գնամ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

72



lest the world should task you to recite  
What merit lived in me that you should love,  
After my death (dear love) forget me quite;  
For you in me can nothing worthy prove,  
Unless you would devise some virtuous lie  
To do more for me than mine own desert,  
And hang more praise upon deceased I  
Than niggard truth would willingly impart:  
O lest your true love may seem false in this,  
That you for love speak well of me untrue,  
My name be buried where my body is,  
And live no more to shame nor me nor you:  
    For I am shamed by that which I bring forth,  
    And so should you, to love things nothing worth.



Մի, որ աշխարհը չստիպի ասել  
Ինչով եմ արժանի, որ ինձ սիրեք,  
Երբ ես մեռնեմ, ինձ մի փորձեք հիշել.  
Չի արժանիք իմ մեջ հազիվ գտնեք,  
Եթե չհորինեք մի սուտ կարգին,  
Անարժանիս տալով գովասանքներ,  
Եւ վերագրեք ինձ դուք շատ ավելին,  
Քան իսկությունն ազահ կհաղորդեր.  
Ո՛հ, որ ձեր սերը չթվա ստորին,  
Որ դուք հանուն սիրո անցնեք ստի,  
Անունս թող թաղվի մարմնիս կողքին,  
Եւ ետ ոչ ինձ, ոչ ձեզ այն չանարգի.

Չի ամաչում եմ ստեղծածիս համար,  
Եւ դուք՝ որ չարժանիս եք սիրահար:

Ո՛հ որպեսզի աշխարհը չհանձնարարի ձեզ ասելու  
Ինչ արժանիք է ապրել իմ մեջ, որ դուք պետք է սիրեիք,  
Իմ մահից հետո (թանկագին սեր) ինձ մոռացեք բոլորովին.  
Քանզի դուք իմ մեջ ոչ մի արժանիք չեք կարող հաստատել,  
Եթե իհարկե դուք չեք հորինի որեւէ բարեպաշտ սուտ,  
Անելու համար ավելին ինձ համար, քան իմ սեփական արժանիքն է,  
Եւ կախելու ավելի շատ գովք վրաս՝ հանգուցյալիս,  
Քան ժխտ ճշմարտությունը կամովին կհաղորդեր.  
Ո՛հ, որ ձեր իսկական սերը չթվա կեղծ այն բանից,  
Որ դուք հանուն սիրո խոսում եք լավ իմ մասին՝ անգիշտ,  
Թող իմ անունը թաղվի, որտեղ իմ մարմինն է,  
Եւ չսպրի այլեւս, անարգելով ոչ ինձ, ոչ ձեզ.

Քանզի ես ամաչում եմ, այն բանի համար, ինչ ես ստեղծում եմ,  
Եւ ուրեմն, նույնն էլ պետք է դուք՝ սիրելու համար բաներ ոչ արժանի:

SHAKE-SPEARES,

SONNETS.

73



What time of year thou mayst in me behold

When yellow leaves, or none, or few, do hang  
Upon those boughs which shake against the cold,  
Bare ruined choirs, where late the sweet birds sang.

In me thou seest the twilight of such day  
As after sunset fadeth in the west,  
Which by and by black night doth take away,  
Death's second self, that seals up all in rest.

In me thou seest the glowing of such fire  
That on the ashes of his youth doth lie,  
As the death-bed whereon it must expire,  
Consumed with that which it was nourished by.

This thou perceiv'st, which makes thy love more strong,  
To love that well which thou must leave ere long.





Իմ մեջ տարվա այն պահին ես դու տեսնում,  
Երբ տերեւները դեղը՝ սամույրաթել  
Մերկ ճյուղերին են ցրտահար դողում՝  
Ավեր դասում, ուր հավքն էր դայլայլել:  
Իմ մեջ տեսնում ես մթնշաղն օրվա,  
Որ մեղմորեն մարում է մայրմուտում,  
Որին տանում է մույթը գիշերվա,  
Մահվան մյուս անձն՝ ամեն ինչ կլանում:  
Իմ մեջ տեսնում ես մի շողանք հրի՝  
Երիտ իր օրերի ածխին ընկած,  
Ինչպես մահճին, որին պիտի մարի,  
Եւ կլանված նյութով իրեն սնած:  
Դու զգում ես այն, թե սերդ ոնց զորես,  
Որ լավ սիրես այն, ինչը պիտի կորցնես:

Այն ժամանակն ես տարվա դու կարող ես իմ մեջ տեսնել,  
Երբ դեղին տերեւները, կամ չկան, կամ քիչ են, կախված  
Այն ճյուղերից, որոնք ցնցվում են ցրտից,  
Մերկ ավերակ դասերում, ուր վերջերս քաղցր թռչուններ էին երգում:  
Իմ մեջ դու տեսնում ես մթնշաղն այնպիսի օրվա,  
Ինչպիսին մայրամուտից հետո մարում է արեւմուտքում,  
Որին արագորեն սեւ գիշերն է տանում՝  
Մահվան երկրորդն ինքնությունը, որ կնքում է ամեն ինչ հանգստի մեջ:  
Իմ մեջ դու տեսնում ես շողանքը այնպիսի հրի,  
Որն ածուխների վրա է իր երիտասարդության պատկած,  
Ինչպես մահվան մահճին, որին այն պետք է հանգչի,  
Կլանված այն բանով, որով այն սնուցվել է:

Դա դու ընկալում ես, ինչը անում է թո սերն ավելի ուժեղ,  
Սիրելու համար լավ այն, որը դու պիտի թողնես շուտով երկարատես:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

74

**B**

ut be contented when that fell arrest  
Without all bail shall carry me away,  
My life hath in this line some interest,  
Which for memorial still with thee shall stay.  
When thou reviewest this, thou dost review  
The very part was consecrate to thee:  
The earth can have but earth, which is his due;  
My spirit is thine, the better part of me.  
So then thou hast but lost the dregs of life,  
The prey of worms, my body being dead,  
The coward conquest of a wretch's knife,  
Too base of thee to be remembered:  
    The worth of that is that which it contains,  
    And that is this, and this with thee remains.



այց գոհ եղիր, երբ այդ կալանքն անգույթ

Առանց գրավ ընդմիշտ ինձ կտանի.

Իմ կյանքն այս տողերում ունի օգուտ.

Այն հուշ որպես քեզ հետ միշտ կլինի:

Երբ դու վերադիտես սա, կտեսնես

Հենց մասն այն, որ քեզ նվիրաբերվածն է.

Հողի հասանելիքն է հողն, իսկ քեզ՝

Հոգին է իմ, որ լավագույն իմ մասն է:

Դու կկորցնես թափոնը սոսկ կյանքի.

Որս որդերի՝ մարմինն իմ կմեռնի՝

Ավարն երկշտո՝ գողի բիրտ դանակի,

Շատ ստոր, որ մեկը այն մտապահի.

Դե, իսկ արժեքը՝ պարունակությունն է,

Հենց սա է՝ այն, ինչ քեզ ընդմիշտ մնում է:

Բայց եղիր բավարարված, երբ այդ դաժան ձերբակալությունը  
Առանց որևէ գրավի կտանի ինձ այստեղից.

Իմ կյանքը ունի այս տողում որոշ շահ,

Որը որպես հիշատակ դեռ քեզ հետ կմնա:

Երբ դու վերադիտես սա, դու կվերատեսնես

Հենց այն մասը, ձոնված քեզ.

Հողը կարող է ունենալ լոկ հողը, որն իր հասանելիքն է.

Իմ հոգին քոնն է՝ լավագույն մասը իմ:

Այնպես որ դու կկորցնես ոչ ավելին, քան թափոնը կյանքի,

Որսը որդերի, իմ մարմինը կմեռնի,

Ստոր ավարը անզգամի դանակի\*,

Շատ ստորը, հիշված լինելու համար.

Արժեքը դրա այն է, ինչը այն պարունակում է,

Եւ դա է սա, եւ սա քեզ հետ կմնա:

\* Կա կարծիք, որ «անզգամի դանակը» Մահվան գերանդին է:

SHAKE-SPEARES,

SONNETS.



75

So are you to my thoughts as food to life,  
Or as sweet seasoned showers are to the ground;  
And for the peace of you I hold such strife  
As 'twixt a miser and his wealth is found:  
Now proud as an enjoyer, and anon  
Doubting the filching age will steal his treasure;  
Now counting best to be with you alone,  
Then bettered that the world may see my pleasure:  
Sometime all full with feasting on your sight,  
And by and by clean starved for a look;  
Possessing or pursuing no delight  
Save what is had or must from you be took.  
Thus do I pine and surfeit day by day,  
Or gluttoning on all, or all away.



Բոպ մտքերիս համար կյանքի սնունդ եք,  
Ինչպես զով անձրեւներ՝ հողի համար.  
Եւ ոնց ժլատն ու իր հարստությունը,  
Ես ձեզ ի շահ վարում եմ միշտ պայքար.  
Ահա հպարտ եմ վայելքում. եւ հետ՝  
Երկմիտ, որ գանձն իմ կտանի գող դարը.  
Ահա կուգեմ մենակ լինել ձեզ հետ,  
Ապա՝ բերկրանքն իմ որ տեսնի աշխարհը.  
Երբեմն՝ արբած ձեզ տեսնելու կրքով,  
Քիչ անց՝ իսպառ կարոտ ձեր հայացքին.  
Հանույք չունենալով, չորոնելով,  
Չատ այն, որ ունենում եմ ձեր կողքին:  
Օրեր այսպես, անհագ եմ եւ հյուծված,  
Եւ կամ լափում ամեն ինչ, կամ սոված:

Եւ այսպես, դուք իմ մտքերի համար, ասես սնունդ եք կյանքի,  
Կամ ինչպես քաղցր բուրավետ անձրեւներ՝ հողի համար.  
Եւ հանուն ձեր խաղաղության ես վարում եմ այսպիսի պայքար,  
Ինչպես միջեւ ժլատի եւ իր հարստության է լինում.  
Հիմա հպարտ, ինչպես հաճույք վայելող եւ ապա՝  
Կասկածող, որ գող դարը կյոցնի իր գանձը.  
Հիմա համարում եմ ամենապալն է ձեզ հետ մենակ լինելը,  
Ապա, որ ավելի լավ է, աշխարհը կարողանա տեսնել իմ ուրախությունը.  
Երբեմն ամբողջությամբ լի հրճվանքով՝ ձեզ հայելու,  
Եւ շուտով իսպառ սովաբեկ եմ հայացքին.  
Չունենալով կամ չորոնելով այլ հաճույք,  
Բացի այն, ինչ ունեցա կամ պետք է ձեզնից վերցնեմ:  
Այսպես, եւ հյուծվում եմ եւ անհագ եմ օր օրի,  
Կամ լափում ամեն ինչ, կամ զուրկ եմ ամենից:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

76



Why is my verse so barren of new pride?  
So far from variation or quick change?  
Why with the time do I not glance aside  
To new-found methods and to compounds strange?  
Why write I still all one, ever the same,  
And keep invention in a noted weed,  
That every word doth almost tell my name,  
Showing their birth, and where they did proceed?  
O know, sweet love, I always write of you,  
And you and love are still my argument;  
So all my best is dressing old words new,  
Spending again what is already spent:  
    For as the sun is daily new and old,  
    So is my love still telling what is told.



Ինչո՞ւ է տաղն իմ գուրկ նոր պերճանքից,  
Հեռու արագ փոփոխումից նյութի:  
Ինչո՞ւ եմ հետ մնում ժամանակից՝  
Նոր ձեւերից ու ոճերից արդի:  
Ինչո՞ւ եմ միշտ գրում միանման,  
Եւ լուծումները՝ հին զգեստով պահում,  
Ու ամեն բառս ցոլքն է իմ անվան,  
Եւ իր ծնունդն ու սկիզբն է ցուցադրում:  
Ո՛հ, քաղցր սեր, ես ձեզ եմ միշտ գրում,  
Եւ դուք եւ սերն եք միշտ իմ որոնածը.  
Երբեմն լոկ հին խոսքն եմ հարդարում,  
Ծախսում կրկին այն, ինչ արդեն ծախսված է.  
Չի ոնց արեւն է միշտ եւ նոր, եւ հին,  
Այդպես ասվածն ասում է սերը իմ:

Ինչո՞ւ իմ տաղն այդքան գուրկ է նոր ճոխությունից,  
Այդքան հեռու բազմազանությունից կամ արագ փոխվելուց:  
Ինչո՞ւ ժամանակի հետ ես չեմ նայում կողմը  
Նորագուտ եղանակների եւ համադրությունների տարօրինակ:  
Ինչո՞ւ գրում եմ եւ դեռեւս նույնը, միշտ միանման,  
Եւ պահում երեսակայությունը հայտնի զգեստում,  
Որ յուրաքանչյուր բառ համարյա ասում է իմ անունը,  
Ցուցադրելով իր ծնունդը եւ որտեղ է սկիզբ առնում:  
Ո՛հ, իմացեք, քաղցր սեր, ես միշտ գրում եմ ձեր մասին,  
Եւ դուք եւ սերը մնում եք իմ նյութը.  
Այնպես որ իմ լավագույնն է հանդերձավորելը հին բառերը նորովի,  
Ծախսելով կրկին այն, ինչ արդեն ծախսված է.  
Քանզի ինչպես արեւն ամեն օր նոր է եւ հին,  
Այդպես իմ սերը շարունակում է ասել այն, ինչ ասվել է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

77



Why glass will show thee how thy beauties wear,  
Thy dial how thy precious minutes waste,  
The vacant leaves thy mind's imprint will bear,  
And of this book, this learning mayst thou taste:  
The wrinkles which thy glass will truly show  
Of mouthed graves will give thee memory;  
Thou by the dial's shady stealth mayst know  
Time's thievish progress to eternity;  
Look what thy memory cannot contain  
Commit to these waste blanks, and thou shalt find  
Those children nursed, delivered from thy brain,  
To take a new acquaintance of thy mind.  
    These offices, so oft as thou wilt look,  
    Shall profit thee, and much enrich thy book.





Քո հայելին կասի մաշվող պերճանքդ,  
Ժամցույցդ՝ ըռպենները քո սպառվող,  
Թերթերը կկրեն հոգուդ տպվածքը,  
Իսկ այս գրքում, դասեր կան խրատող.  
Կնճիոնք, որ հայելիդ կցուցադրի  
Շիրմի երախը քեզ կհիշեցնեն,  
Ծածուկ քայլերն էլ ժամցույցի ստվերի  
Ժամանակի գող քայլը կմատնեն.  
Տես, ինչ հիշողությունդ չպահի  
Հանձնիր այս թղթերին, եւ կգտնես  
Քո մտքերով սնված զավակներիդ,  
Հոգուդ հետ նոր դաշինք կհաստատես:  
Իրերն այդ, թե հաճախ դրանց նայես,  
Շահույթ էլ կբերեն. գրքիդ եւ քեզ:

Քո հայելին ցույց կտա քեզ, ինչպես են քո հրապույրները մաշվում,  
Քո ժամացույցը՝ ինչպես են քո թանկարժեք ըռպենները սպառվում,  
Մաքուր թերթերը, քո հոգու կնիքը կկրեն,  
Եւ այս գրքից, այս խրատը դու կարող ես ճաշակել.  
Կնճիոնները, որոնք քո հայելին ճշմարտացի կցուցադրի  
Երախաբաց շիրմի մասին քեզ կհիշեցնեն,  
Դու ըստ ժամացույցի ստվերի աննկատ կարող ես իմանալ  
Ժամանակի գողիգող շարժումը դեպի հավերժություն.  
Տես, ինչը քո հիշողությունը չի կարող պարունակել  
Հանձնիր այս դատարկ թղթերին, եւ դու կգտնես  
Այդ երեխաներին սնուցված, թողարկված քո մտքից,  
Ստանալու նոր ծանոթություն քո հոգու հետ:  
Այդ ծառայությունները, որքան հաճախ որ դու նայես,  
Քեզ շահույթ կբերեն եւ զգալիորեն կհարստացնեն քո գիրքը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

78



So oft have I invoked thee for my Muse,  
And found such fair assistance in my verse,  
As every alien pen hath got my use,  
And under thee their poesy disperse.  
Thine eyes, that taught the dumb on high to sing,  
And heavy ignorance aloft to fly,  
Have added feathers to the learned's wing  
And given grace a double majesty.  
Yet be most proud of that which I compile,  
Whose influence is thine, and born of thee:  
In others' works thou dost but mend the style,  
And arts with thy sweet graces graced be;  
But thou art all my art, and dost advance  
As high as learning my rude ignorance.



Այնքան հաճախ ես իմ Մուսան եղել,

Եւ ինձ օգնել, երբ տաղ էի ստեղծում,  
Որ արդ սկսել են այլք նույնպես վարվել,

Եւ քո անվամբ տաղեր են տարածում:

Այլքերդ, որ համրին կօզնեն երգել,

Եւ կհանեն երկինք տգիտությանը,

Ուսյալներին թեւեր են պարգեւել

Եւ կրկնակի նուրբ փայլ՝ գեղեցկությանը:

Հպարտ եղիր, սակայն, իմ կազմածով,

Այն որ քեզնով է ներշնչված, ծնված.

Դու սոսկ շտկում ես գործն այլոց՝ ոճով,

Քո գեղությամբ արվեստն է սոսկ գեղված.

Իսկ դու իմ ողջ արվեստն ես, եւ տանում

Ինձ, տգետիս, ուսյալ ես դու դարձնում:

Այնքան հաճախ եմ ես կոչել քեզ որպես իմ Մուսայի,

Եւ գտել այնպիսի բարի օգնություն իմ տաղերի համար,

Որ ամեն օտար գրիչ յուրացրել է իմ սովորությունը,

Եւ քո անվան սոսկ իր բանաստեղծումն է տարածում:

Քո աչերը, որ սովորեցրել են համրին բարձրաձայն երգել,

Եւ ծանր տգիտությանը՝ վեր թռչել,

Հավելել են փետուրներ ուսյալի թեւերին

Եւ սովել նրբագեղությանը կրկնակի վեհություն:

Բայց եղիր առավել հպարտ նրանով, որ ինչ ես կազմում եմ,

Որի ներգործությունը քոնն է, եւ ծնված է քեզնով.

Այլոց գործերում դու սոսկ շտկում ես ոճը,

Եւ արվեստները քո քառցր գեղությամբ նրբագեղանում են.

Իսկ դու ամբողջությամբ իմ արվեստն ես, եւ տանում ես առաջ

Այնքան բարձր, որքան ուսյալությունն է, իմ կոպիտ տգիտությունը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

79



Whilst I alone did call upon thy aid,  
My verse alone had all thy gentle grace,  
But now my gracious numbers are decayed,  
And my sick Muse doth give another place.  
I grant (sweet love) thy lovely argument  
Deserves the travail of a worthier pen,  
Yet what of thee thy poet doth invent  
He robs thee of, and pays it thee again:  
He lends thee virtue, and he stole that word  
From thy behaviour; beauty doth he give,  
And found it in thy cheek; he can afford  
No praise to thee but what in thee doth live.

Then thank him not for that which he doth say,  
Since what he owes thee, thou thyself dost pay.



Մինչ ես մենակ՝ սաստար էի հայցում,  
Մենակ տաղերն իմ ունեին քո գեղը,  
Բայց արդ իմ նուրբ տողերն են քայքայվում,  
Եւ իմ տկար Մուսան զիջում է տեղը:  
Գիտեմ ես, սեր. կերպարդ սիրելի  
Արժան է վարժ՝ ոչ իմ տկար գրչիս,  
Բայց, ինչ էլ բանաստեղծդ հորինի,  
Քեզնից է գողանում եւ քեզ տալիս.  
Օժտում է քեզ ձիրքով, որ գողացված է  
Քո պահվածքից. պերճանքդ է երգում,  
Որ քո դեմքին գտավ. նրա ասածը  
Արդեն իսկ բնակվում է քո անձում:  
Եւ գուր ես դու իրեն շնորհակալում.  
Ձի պարտքն իր քեզ հենց դու ես վճարում:

Մինչ ես միայնակ կանչում էի քո օգնությունը,  
Իմ տաղերը միայնակ ունեին ամբողջ քո նուրբ գեղությունը,  
Բայց հիմա իմ նրբագեղ համարները քայքայված են,  
Եւ իմ տկար Մուսան տալիս է ուրիշին տեղը:  
Ես համաձայն եմ (քաղցր սեր). քո սիրելի նյութը  
Արժանի է ջանքերին ավելի արժանավոր գրչի,  
Այնուամենայնիվ, ինչ քեզ քո բանաստեղծը հորինում է,  
Նա գողանում է քեզնից եւ վճարում է այն քեզ կրկին.  
Նա հանձնում է քեզ առաքինություն եւ նա գողացել է այդ բառը  
Քո պահվածքից. գեղեցկություն է նա տալիս,  
Եւ գտավ այն քո դեմքին. նա չի կարող տալ  
Ոչ մի գովեստ քեզ, բացի նրանից, ինչ քո մեջ ապրում է:  
Ուստի շնորհակալ մի եղիր նրան, այն բանի համար ինչ նա ասում է.  
Քանզի այն, ինչ նա քեզ պարտք է, դու ինքդ ես վճարում:

SHAKE-SPEARES,

SONNETS.

80



how I faint when I of you do write,  
Knowing a better spirit doth use your name,  
And in the praise thereof spends all his might,  
To make me tongue-tied speaking of your fame.  
But since your worth (wide as the Ocean is)  
The humble as the proudest sail doth bear,  
My saucy bark (inferior far to his)  
On your broad main doth wilfully appear.  
Your shallowest help will hold me up afloat,  
Whilst he upon your soundless deep doth ride,  
Or (being wracked) I am a worthless boat,  
He of tall building and of goodly pride.  
Then if he thrive and I be cast away,  
The worst was this: my love was my decay.



Ովերգեղիս ձեզ ո՞նց եմ ես ներվում,  
Երբ այլ ոգին տալիս է ձեր անունը,  
Եւ այդ գովքում ողջ ուժն է իր ծախսում,  
Եւ ձեզ փառերգերուց լեզուս կապվում է:  
Բայց զի ձեր ձիրքը՝ զերդ անձայր Օվկիան՝  
Կրում է առագաստ թե՛ վեհ, թե՛ հեզ,  
Հոխորտ նավակն իմ՝ փոքր ու աննշան՝  
Ա՛նկոչ մտնում է ջուրը ձեր անեզր:  
Ինձ կփրկի չնչին ձեր օժանդակը,  
Մինչ նա անցնում է ձեր անձայն խորքով,  
Կամ ես մի քայքայված անպետք նավակ եմ.  
Նա՛ վեհ կառույց՝ հպարտ ու անվորդով:  
Այդժամ թե՛ նա ծաղկի, ես կկորչեմ,  
Եւ դա է վատ. սիրուց կկործանվեմ:

Ո՛հ, որքան եմ ես ներվում, երբ ես ձեր մասին եմ գրում,  
Իմանալով, որ էլլավ ոգին օգտագործում է ձեր անունը,  
Եւ այդ գովքում դրա ծախսում է իր ողջ ուժը,  
Դարձնելով ինձ լեզվից կապված՝ խոսերուց ձեր փառքի մասին:  
Բայց քանի որ ձեր արժանիքները (լայն, ինչպես Օվկիանը)  
Խոնարհ, ինչպես ես՝ ամենահպարտ առագաստն են կրում,  
Իմ հանդուգն նավակը (շատ ցածր իրենից)  
Ձեր լայն ջրային տարածքներում ինքնակամ է հայտնվում:  
Ձեր ամենամակերեսային օգնությունը կպահի ինձ մակերեսի վրա,  
Մինչ նա ձեր ձայնազերծ խորքով է անցնում,  
Կամ (կործանված) ես անպետք նավակ եմ  
Նա բարձր կառույց է եւ հոյակապ, հպարտ:  
Այդժամ եթե՛ նա ծաղկում է, եւ ես շարսվեմ դեմ,  
Ամենավատը դա էր. իմ սերն իմ կործանումը եղավ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

81



O'r shall I live your epitaph to make,  
Or you survive when I in earth am rotten,  
From hence your memory death cannot take,  
Although in me each part will be forgotten.  
Your name from hence immortal life shall have,  
Though I (once gone) to all the world must die;  
The earth can yield me but a common grave,  
When you intomb'd in men's eyes shall lie:  
Your monument shall be my gentle verse,  
Which eyes not yet created shall o'er-read,  
And tongues to be your being shall rehearse,  
When all the breathers of this world are dead;  
    You still shall live (such virtue hath my pen)  
    Where breath most breathes, even in the mouths of men.





Այդ էս եւ շիրնագիր ձեզ կազմելու,  
Թե՛ դուք կապրեք, երբ ես հողում փտեմ,  
Բայց աստ ձեզնից հուշեր եւ մնալու,  
Մինչ իմ մասերն ամեն կմոռացվեն:  
Անունը ձեր անմահ միշտ կմնա,  
Իսկ ես պիտ աշխարհի համար մեռնեմ.  
Մի պարզ շիրիմ ինձ հողը կդառնա,  
Մինչ ձեզ՝ մարդկանց աչքերը կշիրմեն.  
Կոթող ձեզ նուրբ տողերն իմ կլինեն,  
Որ կկարդան աչքեր դեռ չծնված,  
Եւ լեզուները լինելիք ձեզ կպատմեն,  
Երբ շնչողներն այսօր լինեն մեռած.  
Դուք միշտ կապրեք (իմ գիրն այդ ուժն ունի)  
Մարդկանց շուրթին, ուր շունչ է միշտ կշնչի:

Թե ես կապրեմ ձեր տապանագիրը կազմելու,  
Թե՛ դուք կվերապրեք, երբ ես հողում կփտեմ,  
Այստեղից ձեր հիշողությունը մահը չի կարողանա վերցնել,  
Թեեւ իմ մեջ յուրաքանչյուր մասը կմոռացվի:  
Ձեր անունը այսուհետ անմահ կյանք կունենա,  
Իսկ ես (մեկընդմիշտ հեռացած) ամբողջ աշխարհի համար պիտի մեռնեմ.  
Հողը կարող է տալ ինձ միայն հասարակ շիրիմ,  
Մինչդեռ դուք դամբարանված մարդկանց աչքերում կմնաք.  
Ձեր հուշարձանը կլինեն իմ նրբին տաղերը,  
Որոնք աչքերը դեռ չկերտված կվերընթերցեն,  
Եւ լեզուները լինելիք ձեր մասին կրկին կպատմեն,  
Երբ բոլոր շնչողներն այս աշխարհի մեռած կլինեն.  
Դուք միշտ կապրեք (այդպիսի գորություն ունի իմ գրիչը)  
Ուր շունչը առավել շնչում է, այն է՝ շուրթերին մարդկանց:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

82



grant thou wert not married to my Muse,  
And therefore mayst without attain o'erlook  
The dedicated words which writers use  
Of their fair subjects, blessing every book.  
Thou art as fair in knowledge as in hue,  
Finding thy worth a limit past my praise,  
And therefore art inforced to seek anew  
Some fresher stamp of the time-bettering days.  
And do so, love; yet when they have devised  
What strained touches rhetoric can lend,  
Thou, truly fair, wert truly sympathised  
In true plain words by the true-telling friend;  
And their gross painting might be better used  
Where cheeks need blood; in thee it is abused.



յո, դու պսակված չես Մուսայիս,  
Ուստի կարող ես անկաշկանդ դիտել  
Բառերը, որ գրքերը ձոնելիս,  
Կարող են գրողները շռայլել:  
Դու՝ պերճ, թե արտաքնով, ես թե՛ ինքքով,  
Գտնում ես, ձիրքդ բարձր է իմ գովքից,  
Ես արդ ահա փնտրում ես եռանդով  
Ինչ-որ թաքն ոճ դրոշմով նոր օրերից:  
Փնտրիր իմ սեր. բայց մինչ նրանք կազմել են  
Շինձու ձևեր, որ հնչեցնեն խոսքում,  
Դու, հիասքանչդ, ճիշտ արտահայտվել ես  
Քո ընկերոջ անկեղծ պարզ բառերում.  
Իսկ շպարը պետք է անարյուն այտին,  
Մինչ քեզ վայել չէ դա բոլորովին:

Ես համաձայն եմ, դու ամուսնացած չես իմ Մուսայի հետ,  
Ես ուրեմն կարող ես առանց ամոթի դիտել  
Ձոնված բառերը, որոնք գրողները գործածում են,  
Իրենց հիասքանչ առարկաների՞ մասին, օրհներով յուրաքանչյուր գիրքը:  
Դու նույնքան հիասքանչ ես գիտելիքներով, որքան ես՝ արտաքինով,  
Գտնելով քո արժանիքները գերազանցում են սահմանն իմ գովքի,  
Ես ուրեմն դրված ես որոնել կրկին  
Ինչ-որ էլթարմ կնիք ժամանակով բարելավված օրերի:  
Ես արա այդպես, սեր. բայց մինչ դեռ նրանք հորինել են  
Ինչ անբնական լուծումներ հռետորությունը կարող է տալ,  
Դու, իրոք հիասքանչդ, ճշտիվ արտահայտված էիր  
Ճիշտ, պարզ բառերում ճշտախոս ընկերոջ կողմից.  
Ես իրենց կուպիտ նկարչությունը ավելի լավ կլիներ օգտագործել,  
Որ այտերին անհրաժեշտ է արյուն. քո դեպքում դա վիրավորանք է:

\* Պարզ չէ, թե ինչ առարկաների մասին է խոսքը:

SHAKE-SPEARES,

SONNETS.

83



I never saw that you did painting need,  
And therefore to your fair no painting set;  
I found (or thought I found) you did exceed  
The barren tender of a poet's debt:  
And therefore have I slept in your report,  
That you yourself, being extant, well might show  
How far a modern quill doth come too short,  
Speaking of worth, what worth in you doth grow.  
This silence for my sin you did impute,  
Which shall be most my glory, being dumb,  
For I impair not beauty, being mute,  
When others would give life, and bring a tomb.  
    There lives more life in one of your fair eyes  
    Than both your poets can in praise devise.



Շաղկեցվելու բնավ չունեք կարիք,  
Եւ անձը ձեր երբեք չեմ ծաղկեցրել.  
Երգչի պարտքի դիմաց սին վճարից՝  
Գտել եմ, որ միշտ վեր եք դուք եղել.  
Եւ ես ննջել եմ, երբ գովել են ձեզ,  
Անձամբ ձեզ թողնելով ապացուցել,  
Որ մերօրյա գրիչը իրապես,  
Անգորը է ձեր ձիրքերը փոխանցել:  
Իմ լռությունն այդ մեղք եք համարել,  
Մինչ համրությունն է ձիրքը իմ անշահ,  
Զի ես՝ անձայն՝ պերճանքը չեմ եղծել,  
Երբ այլք կյանք ձոնելով բերում են մահ:  
Ավել կա կյանք ձեր մեկ չքնաղ աչքում,  
Քան զույգ երգիչ գովքում են ձեզ ձոնում:

Ես երբեք չեմ տեսել, որ դուք ծաղկեցվելու կարիք ունենաք,  
Եւ, հետեւաբար, ձեր գեղեցկության ծաղկեցում չեմ կիրառել.  
Ես գտել եմ (կամ կարծել եմ, թե գտել եմ) դուք վեր եք  
Դատարկ առաջարկից՝ բանաստեղծի պարտքի դիմաց.  
Եւ այն պատճառով եմ ես քնած եղել ձեր փառաբանման ընթացքում,  
Որ դուք ինքներդ, լինելով ներկա, լավ կարողանայիք ցույց տալ  
Որքանով է ժամանակակից գրիչը ներկայանում անգոր,  
Խոսելով արժանիքների մասին, որոնք արժանիքներ են ձեր մեջ աճող:  
Այս լռությունը իմ մեղքն էք դուք համարել,  
Որը պիտի լինի մեծագույն իմ հպարտությունը՝ լինել համր,  
Քանզի ես չեմ վնասում գեղեցկությանը, լինելով անձայն,  
Երբ ուրիշները կցանկանային տալ կյանք, իսկ բերում են գերեզման:  
Ապրում է ավելի շատ կյանք մեկում ձեր չքնաղ աչքերի,  
Քան զույգ ձեր բանաստեղծները ի գորու են որպես գովք հորինել:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

84



Who is it that says most which can say more  
Than this rich praise - that you alone are you,  
In whose confine immured is the store  
Which should example where your equal grew?  
Lean penury within that pen doth dwell  
That to his subject lends not some small glory,  
But he that writes of you, if he can tell  
That you are you, so dignifies his story:  
Let him but copy what in you is writ,  
Not making worse what nature made so clear,  
And such a counterpart shall fame his wit,  
Making his style admired every where.

You to your beauteous blessings add a curse,  
Being fond of praise, which makes your praises worse.



Ո՛վ է նա, որ ավելին կերկնի,  
Քան ճոխ այս գովքը, որ լոկ դուք եք դուք,  
Ում անձը պետք է օրինակ լինի,  
Եթե կա մեկը ձեզ պես վեհաշուք:  
Խեղճ թուլություն է այն գրչում ապրում,  
Որն առարկան իր չի փառավորի,  
Բայց նա ով անձն է ձեր նկարագրում,  
Կապի դուք՝ դուք եք, եւ կճանաչվի.  
Թող նա սուկ պատճենի ձեր մեջ գրվածը,  
Անփոխ թողնի ստեղծածը բնության,  
Եւ այդ պատճենը կդառնա իր գանձը,  
Իր ոճը կբերի հավանության:  
Ձեր օրհնանքին անեժք եք հավելում,  
Գուլք սիրելով, որ գովքն է ձեր եղծում:

Ո՛վ է նա, որ ատում է առավելագույնը, երբ կարող է սսել ավելին\*,  
Քան այս ճոխ գովքը, որ դուք միակն եք դուք,  
Որում պարունակվում է որմնափակված պաշար,  
Որը պետք է օրինակ լինի, ուրեւէ ձեզ հավասար աճողին:  
Վտխտ սակավություն է այն գրչի մեջ բնակվում,  
Որն իր առարկային չի փոխանցում գոնե մի փոքր փառք,  
Բայց նա ով գրում է ձեր մասին, եթե նա կարող է սսել,  
Որ դուք՝ դուք եք, կփառավորի իր պատմությունը.  
Թող նա սուկ պատճենի ինչ ձեր մեջ գրված է,  
Զվատացնելով, ինչ բնությունը պատրաստել է այդքան ջինջ,  
Եւ այդպիսի կրկնօրինակը կհռչակի իր միտքը,  
Դարձնելով իր ոճը պաշտելի ամենուրեք:  
Դուք ձեր հիաքանչ օրհնությունների հավելում եք անեժք,  
Սիրելով գովք, որը դարձնում է ձեր գովասանքները Էվաստ:

\* Խրթին սող է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

85



My tongue-tied Muse in manners holds her still,  
While comments of your praise, richly compiled,  
Reserve their character with golden quill  
And precious phrase by all the Muses filed.  
I think good thoughts, whilst other write good words,  
And like unlettered clerk still cry 'Amen'  
To every hymn that every spirit affords  
In polished form of well-refined pen.  
Hearing you praised, I say, "Tis so, 'tis true',  
And to the most of praise add something more;  
But that is in my thought, whose love to you  
(Though words come hindmost) holds his rank before.  
Then others for the breath of words respect,  
Me for my dumb thoughts, speaking in effect.





Լեզուն կապված Մուսաս համեստ լրում է,  
 Մինչ գովքը ձեր ճոխ մեկնություններով,  
 Ոսկե գրչով եւ տառերով գրվում է՝  
 Այլոց Մուսաների թանկ բառերով:  
 Ինձ մոտ մտքերն են լավ, նրանց՝ բառերը,  
 Եւ դպրի պես, գոչում եմ միշտ «Ամեն»  
 Գովքին ամեն, որ ձեր գովաբանները  
 Ստեղծում են վարժ, հղկված գրչով ամեն:  
 Ասում եմ. «Ճիշտ է», երբ որ ձեզ գովում եմ,  
 Եւ այդ գովքին դեռ իմն եմ հավելում.  
 Բայց դա՛ մտքում, զի սերս առջետում է.  
 Բառերը միշտ վերջում են հայտնվում:  
 Հարգիր այլոց՝ խոսքի քանու համար,  
 Ինձ՝ համր իմ մտքերի՝ բարեհոժար:

Լեզուն կապված իմ Մուսան բարեկրթորեն իրեն զսպում է,  
 Մինչ մեկնությունները ձեր գովքի, ճոխ կազմված,  
 Պահում են դրանց\* գրանշանները՝ ոսկե գրչով  
 Եւ թանկագին արտահայտությամբ՝ բոլոր Մուսաների հղկած:  
 Եւ մտածում եմ լավ մտքեր, մինչ մյուսները լավ բառեր են գրում,  
 Եւ ինչպես անգրագետ սպասավոր, միշտ գոչում եմ «Ամեն»  
 Յուրաքանչյուր օրհներգի համար, որը յուրաքանչյուր ոգի ստեղծում է  
 Հղկված ձեռով լավ գտված գրչի:  
 Լսելով, որ ձեզ գովաբանում եմ, ես ասում եմ. «Կա այդպես է, դա ճիշտ է»,  
 Եւ ամենամեծ գովախանքին հավելում եմ ես մի բան.  
 Բայց դա իմ մտքում է, որի սերը ձեզ  
 (Զնայած բառերը վերջում են գալիս) պահում է իր շարքն առջետում:  
 Ուստի ուրիշներին իրենց խոսքերի քանու համար հարգիր,  
 Ինձ՝ իմ համր մտքերի համար՝ ըստ Եսայան խոսող:

\* Բնագրի their-ը որոշ մեկնողներ համարում են վրիպակ, եւ առաջարկում ուղղել  
 thy: Թվում է, թե դա տրամաբանական է: Մակայն դժվար է պատկերացնել, որ երեք  
 տառի փոխարեն գրաչարը մեկ տառ գետեղած լիներ, այն էլ՝ արդյունքում այլ բառ  
 ստանալով: Մյուս կողմից, their-ի հետ character-ը «գրանշան» իմաստը ստանալու  
 համար, թերեւս, պետք է հոգնակի լիներ: Մակայն «ոսկի գրչի» հետ ավելի լավ է  
 կապվում հենց «գրանշան» իմաստը, այնպես որ ավելի հավանական է, որ գրաչարը  
 բաց թողած լինի մեկ տառ՝ character-ի s հոգնակիակերտը:

SHAKE-SPEARES,

SONNETS.

86



Was it the proud full sail of his great verse,  
Bound for the prize of all-too-precious you,  
That did my ripe thoughts in my brain inhearse,  
Making their tomb the womb wherein they grew?  
Was it his spirit, by spirits taught to write  
Above a mortal pitch, that struck me dead?  
No, neither he, nor his compeers by night  
Giving him aid, my verse astonished.  
He, nor that affable familiar ghost  
Which nightly gulls him with intelligence,  
As victors, of my silence cannot boast;  
I was not sick of any fear from thence;  
    But when your countenance filled up his line,  
    Then lacked I matter, that infeebl'd mine.



Այդ առագանսան էր տաղերի իր մեծ,  
Ձեզ՝ պարզեփին ամենաթանկ ուղղված,  
Որ իմ մտքերն իմ ուղեղում թաղեց,  
Արգանդն, ուր աճեցին շիրիմ դարձրած:  
Թե՛ իր ոգին՝ ոգուց գրել ուսված  
Անմահ տողով ինձ մահացու խոցեց:  
Ո՛չ նա եւ ո՛չ գիշերն իրեն օգնած  
Ընկերն իր՝ տաղը իմ չխափանեց:  
Ո՛չ նա, ո՛չ բարեհաճ այն ուրվականը,  
Որ միտք է գիշերով նրան տալիս,  
Թող չպարծեն՝ պատճառն են լռությանս.  
Ես վախ չունեմ նրանց եւ ոչ մեկից.  
Բայց երբ ձեր աջակցմամբ լցվեց իր տողը,  
Չրկված նյութից՝ իմ տաղն արդեն անգոր էր:

Է՛ր դա հպարտ լի առագաստը նրա մեծ տաղերի,  
Ուղղված այդ ավարին համա-ամենա-թանկագին՝ ձեզ,  
Որ իմ հասուն մտքերն իմ ուղեղիս մեջ թաղեց,  
Դարձնելով դրանց գերեզման արգանդը, որտեղ նրանք աճեցին:  
Է՛ր դա նրա ոգին՝ ոգիների կողմից սովորեցված գրել  
Վեր՝ մահկանացուի թոփչքից, որ խոցեց ինձ մահացու:  
Ո՛չ, ո՛չ նա, ո՛չ էլ նրա ընկերները գիշերային,  
Նրան օգնություն ցույց տալով՝ իմ տաղը խանգարեցին:  
Ո՛չ նա, ո՛չ այդ բարեհաճ ծանոթ ուրվականը,  
Որ գիշերով նրան կլանել է տալիս գիտելիք,  
Որպես հաղթողներ, իմ լռությամբ չեն կարող պարծենալ.  
Ես թուլացած չեմ որեւէ վախից նրանցից.

Բայց երբ ձեր համակրանքը լցրեց նրա տողը,  
Հետո գրկվեցի եւ նյութից՝ ինչն ուժասպառ արեց իմը:

SHAKE-SPEARES,

SONNETS.

87



Arewell, thou art too dear for my possessing,  
And like enough thou know'st thy estimate:  
The charter of thy worth gives thee releasing;  
My bonds in thee are all determinate.  
For how do I hold thee but by thy granting,  
And for that riches where is my deserving?  
The cause of this fair gift in me is wanting,  
And so my patent back again is swerving.  
Thy self thou gav'st, thy own worth then not knowing,  
Or me, to whom thou gav'st it, else mistaking;  
So thy great gift, upon misprision growing,  
Comes home again, on better judgement making.  
Thus have I had thee as a dream doth flatter,  
In sleep a king, but waking no such matter.



Մնաս բարով, շատ թանկ ես ինձ համար,  
Ու, երեւի, գնից քո դու տեղյակ ես.  
Ազատ ես՝ ձիրքերով քո անհամար.  
Պարտատոմսերս առ քո՝ սահմանափակ են:  
Ինչպէս պահեմ քեզ, թե ոչ քո կամքով,  
Եւ ո՞րն է քեզ արժան հարստությունը:  
Այդ հրաշք ընծան թողնեմ ինձ ո՞ր հիմքով.  
Ուստի արտոնագիրն իմ դադարում է:  
Դու քեզ տվել ես՝ ձիրքդ չիմացած,  
Կամ իմ հաշվով, թերեւս, սխալվել ես.  
Ուստի քո մեծ ընծան, սխալն ուղղած  
Դառնում է տուն. ճիշտ դատը կայացել է:  
Դու իմն էիր մի երագում չքնաղ.  
Նիրհում՝ արքա, արթուն՝ ոչինչ, ավլաղ:

Մնաս բարով, դու շատ թանկ ես ինձ պատկանելու համար,  
Եւ, հավանաբար, դու գիտես քո գինը.  
Արտոնությունը քո արժանիքների տալիս է քեզ ազատություն.  
Իմ պարտատոմսերը քո նկատմամբ լրիվ սահմանափակված են:  
Քանի որ ինչպէս ես պահեմ քեզ, եթե ոչ քո իսկ թույլտվությամբ,  
Եւ ո՞ր հարստության համար եմ դրան արժանի:  
Պատճառ այդ հրաշալի նվերի համար իմ մեջ որոնել է պետք,  
Եւ այդ պատճառով իմ արտոնագիրը հետ է կրկին շրջվում:  
Դու ինքդ քեզ տվել ես, քո սեփական արժանիքները չիմանալով,  
Կամ իմ հաշվով, ում տվել ես այն, թերեւս սխալված.  
Ուստի ես քո մեծ նվերը, այդ թերագնահատումը վերանայն,  
Գալիս է տուն կրկին, ավելի լավ դատողության արդյունքում:  
Այսպես ես ունեի քեզ, ինչպէս երագում հաճելի.  
Քնի մեջ՝ արքա, բայց արթուն՝ չկա նման բան:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

88



When thou shalt be disposed to set me light,  
And place my merit in the eye of scorn,  
Upon thy side against myself I'll fight,  
And prove thee virtuous, though thou art forsworn:  
With mine own weakness being best acquainted,  
Upon thy part I can set down a story  
Of faults concealed wherein I am attained,  
That thou in losing me shall win much glory;  
And I by this will be a gainer too,  
For, bending all my loving thoughts on thee,  
The injuries that to myself I do,  
Doing thee vantage, double vantage me.  
Such is my love, to thee I so belong,  
That for thy right myself will bear all wrong.



Երբ դու կրորոշես ինձ անարգել,  
Եւ կհանես վաստակն իմ ծաղրանքի,  
Ես քո կողմից՝ իմ դեմ կպայքարեմ,  
Կասեմ, դրժող ես բայց՝ առաքինի.  
Իմ արատները ինքս լավ գիտեմ,  
Եւ քո կողմից բացել կարող եմ ես  
Բձեր, որոնք ինձ կխայտատակեն,  
Որ դու ինձ կորցնելով, փառքի հասնես:  
Եւ այդպիսով ես նույնպես կշահեմ,  
Քանզի քո սերն է նյուզը իմ մտքի,  
Վերքերն էլ, որ ես ինձ կհասցնեմ,  
Թե քեզ օգուտ են, ինձ՝ կրկնակի:  
Դա սերն է. քեզ այնքան եմ պատկանում,  
Որ կկրեմ ի շահ քեզ ստորացում:

Երբ դու կտրամադրվես ինձ վառել,  
Եւ դնես իմ վաստակը աչքին ծաղրանքի,  
Քո կողմից՝ ընդդեմ ինձ ես կպայքարեմ,  
Եւ կապագուցեմ, դու առաքինի ես, թեեւ դու ուխտադրուժ ես.  
Իմ սեփական թուլություններին լավագույնս տեղյակ,  
Քո կողմից ես կարող եմ պատմել  
Արատների մասին, որոնք ինձ խայտատակում են,  
Որ դու կորցնելով ինձ, շահես շատ փառք:  
Եւ ես դրանով կլինեմ շահող նույնպես,  
Քանզի թեքելով բոլոր իմ սիրո մտքերը քեզ վրա,  
Վիրավորանքները, որ ինձ եմ ես անում,  
Եթե անում են քեզ օգուտ՝ կրկնակի օգուտ են ինձ:  
Այդպիսին է իմ սերը, քեզ ես այնքան եմ պատկանում,  
Որ քո իրավացիության համար ինքս կկրեմ ցանկացած անարդարություն:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

88



When thou shalt be disposed to set me light,  
And place my merit in the eye of scorn,  
Upon thy side against myself I'll fight,  
And prove thee virtuous, though thou art forsworn:  
With mine own weakness being best acquainted,  
Upon thy part I can set down a story  
Of faults concealed wherein I am attained,  
That thou in losing me shall win much glory;  
And I by this will be a gainer too,  
For, bending all my loving thoughts on thee,  
The injuries that to myself I do,  
Doing thee vantage, double vantage me.  
Such is my love, to thee I so belong,  
That for thy right myself will bear all wrong.





Երբ դու կրորոշես ինձ անարգել,  
Եւ կհանես վաստակն իմ ծաղրանքի,  
Ես քո կողմից՝ իմ դեմ կպայքարեմ,  
Կասեմ, դրժող ես բայց՝ առաքինի.  
Իմ արատները ինքս լավ գիտեմ,  
Եւ քո կողմից բացել կարող եմ ես  
Բձեր, որոնք ինձ կխայտատակեն,  
Որ դու ինձ կորցնելով, փառքի հասնես:  
Եւ այդպիսով ես նույնպես կշահեմ,  
Քանզի քո սերն է նյուզը իմ մտքի,  
Վերքերն էլ, որ ես ինձ կհասցնեմ,  
Թե քեզ օգուտ են, ինձ՝ կրկնակի:  
Դա սերն է. քեզ այնքան եմ պատկանում,  
Որ կկրեմ ի շահ քեզ ստորացում:

Երբ դու կտրամադրվես ինձ վառել,  
Եւ դնես իմ վաստակը աչքին ծաղրանքի,  
Քո կողմից՝ ընդդեմ ինձ ես կպայքարեմ,  
Եւ կապագուցեմ, դու առաքինի ես, թեեւ դու ուխտադրուժ ես.  
Իմ սեփական թուլություններին լավագույնս տեղյակ,  
Քո կողմից ես կարող եմ պատմել  
Արատների մասին, որոնք ինձ խայտատակում են,  
Որ դու կորցնելով ինձ, շահես շատ փառք:  
Եւ ես դրանով կլինեմ շահող նույնպես,  
Քանզի թեքելով բոլոր իմ սիրո մտքերը քեզ վրա,  
Վիրավորանքները, որ ինձ եմ ես անում,  
Եթե անում են քեզ օգուտ՝ կրկնակի օգուտ են ինձ:  
Այդպիսին է իմ սերը, քեզ ես այնքան եմ պատկանում,  
Որ քո իրավացիության համար ինքս կկրեմ ցանկացած անարդարություն:

SHAKE-SPEARES,

SONNETS.

89



ay that thou didst forsake me for some fault,

And I will comment upon that offence;

Speak of my lameness, and I straight will halt,

Against thy reasons making no defence.

Thou canst not (love) disgrace me half so ill,

To set a form upon desired change,

As I'll myself disgrace, knowing thy will:

I will acquaintance strangle and look strange,

Be absent from thy walks, and in my tongue

Thy sweet beloved name no more shall dwell,

Lest I (too much profane) should do it wrong,

And haply of our old acquaintance tell.

For thee, against myself I'll vow debate,

For I must ne'er love him whom thou dost hate.



Ասա, որ ես զանցանք եմ կատարել,  
Եւ ես իսկոյն այն կդատապարտեմ.  
Ասա, որ կաղ եմ՝ կսկսեմ կաղել,  
Եւ չեմ խոսի փաստարկներիդ ընդդէմ:  
Դու չես կարող այնքան ինձ ստորացնել,  
Եւ ձեւ տալ իմ վարքին այնքան նսեմ,  
Ոնց քո կամքով կարող եմ ես անել.  
Ծանոթությունը մեր կթաքցնեմ,  
Զբոսանքներիդ վայրից կխուսափեմ,  
Լեզվով իմ քաղցր անունդ չի ասվի,  
Որ, պղծագոյնս, ես չվրիպեմ,  
Եւ մեր ծանոթությունը չբացվի:  
Ի շահ քեզ կվիճեմ ես ինքս իմ դեմ,  
Չի ում ատում ես չպիտի սիրեմ:

Ասա, որ դու լքել ես ինձ որեւէ զանցանքի համար,  
Եւ ես կարտահայտվեմ այդ հանցանքի մասին.  
Խոսիր իմ կաղության\* մասին, եւ ես անմիջապէս կկարկամեմ,  
Ընդդէմ քո փաստարկների չպաշտպանվելով:  
Դու չես կարող (սեր) խայտառակել ինձ կիսով չափ այնպիսի չարությամբ,  
Որ հաղորդես ձեւ ցանկալի փոփոխությանը\*\*,  
Ինչպէս ես ինքս ինձ կխայտառակեմ՝ իմանալով քո կամքը.  
Եւ ծանոթությունը կխտորեմ եւ կերեւամ օտար,  
Կբացակայեմ քո զբոսանքների վայրից եւ իմ լեզվին  
Քո քաղցր սիրելի անունը այլեւս չի բնակվի,  
Որ ես (չափազանց պիղծս) չանեմ սխալ,  
Եւ հանկարծ մեր իմն ծանոթության մասին չպատմեմ:  
Քեզ համար, ինքս իմ դեմ, երդվում եմ, ես կվիճեմ,  
Քանզի ես չպետք է սիրեմ նրան, ում դու ատում ես:

\* Մեկնաբաններից շատերը համարում են, որ այստեղ խոսքը ոչ թե մարմնական կաղության մասին է, այլ բարոյական հատկությունների: Մական երբ հաշվի ենք առնում, որ Շեք-Սպիր գրչանվան ամենահավանական կրողներից մեկը՝ կոմս Ռէթլենդը ոտքերի հետ կապված խնդիրներ ուներ, պարզ է դառնում, որ գուցե ավելի հավանական է հենց ուղիղ իմաստը:

\*\* Խրթին արտահայտություն է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

90



When hate me when thou wilt, if ever, now  
Now while the world is bent my deeds to cross,  
Join with the spite of Fortune, make me bow,  
And do not drop in for an after-loss.  
Ah do not, when my heart has scaped this sorrow,  
Come in the rearward of a conquered woe;  
Give not a windy night a rainy morrow,  
To linger out a purposed overthrow.  
If thou wilt leave me, do not leave me last,  
When other petty griefs have done their spite,  
But in the onset come; so shall I taste  
At first the very worst of Fortune's might;  
And other strains of woe, which now seem woe,  
Compared with loss of thee, will not seem so.



Ուրեմն ատիր, եւ թե կուզես՝ հիմնա՝  
Հիմնա, երբ որ աշխարհն ինձ հակառակ է,  
Ճկիր ինձ բախտիս հետ դու անխնա,  
Ու նաեւ մի եղիր վերջին փորձանքը:  
Ա՛հ, մի արա, երբ ես ցավից փրկվել եմ,  
Արի պարտված վշտի վերջապահում.  
Մի հավելիր քամոտ մթին անձրեղ.  
Մի հապաղիր, թե ցավ ես ինձ բերում:  
Եթե կուզես լքել ինձ՝ ոչ վերջում,  
Երբ մյուս ցավերը կավարտեն սկսածը,  
Այլ եկ սկզբնագրոհով. որ հենց սկզբում  
Ես ճաշակեմ Ճակատագրի հարվածը.  
Չի այլ վշտեր, որ արդ եմ վիշտ թվում,  
Քեզ կորցնելու հետ չեն համեմատվում:

Ուրեմն ատիր ինձ, երբ դու ուզես, թե երբեւէ՝ հիմնա  
Հիմնա, երբ աշխարհը հակված է իմ գործերին խաչ քաշել,  
Մրավորվիր Ճակատագրի չարության հետ, դարձրու ինձ աղեղ,  
Նաեւ մի արի, որպես վերջին կորուստ:  
Ա՛հ, մի արա, երբ իմ սիրտը կխուսափի այս ցավից,  
Արի պարտված վշտի վերջապահում.  
Մի հավելիր քամոտ գիշերվան անձրետոտ առավոտ,  
Հետաձգելով մտածված կործանումը:  
Եթե դու ուզում ես լքել ինձ, մի լքիր ինձ վերջում,  
Երբ մյուս մանր ցավերը կավարտեն իրենց վնասը,  
Այլ եկ սկզբնագրոհի հետ. այդպես ես կճաշակեմ  
Հենց սկզբից վատագույնը Ճակատագրի ուժի.  
Եւ այլ տեսակի վշտեր, որոնք այժմ թվում են վշտեր,  
Համեմատած քեզ կորցնելու հետ, չեն թվա այդպիսիք:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

91



Some glory in their birth, some in their skill,  
Some in their wealth, some in their body's force,  
Some in their garments, though new-fangled ill,  
Some in their hawks and hounds, some in their horse;  
And every humour hath his adjunct pleasure,  
Wherein it finds a joy above the rest;  
But these particulars are not my measure:  
All these I better in one general best.  
Thy love is better than high birth to me,  
Richer than wealth, prouder than garments' cost,  
Of more delight than hawks and horses be;  
And having thee, of all men's pride I boast:  
    Wretched in this alone, that thou mayst take  
    All this away, and me most wretched make.



Ոմանք պարծում են՝ ցեղ ունեն ու շնորհ,  
Ոմանք՝ հարստությամբ, ոմանք՝ ուժով,  
Ոմանք՝ զգեստով, թեկուզե վատ, բայց՝ նոր,  
Ոմանք՝ բազեներով, ոմանք՝ ձիով.  
Եւ ամեն մեկն ունի սիրած զբաղմունքը,  
Որ մեծագույն հաճույք է պարգեւում.  
Բայց այդ բաները չեն հոգուս հուզմունքը.  
Մրանց՝ մեկ գանձն է իմ գերազանցում:  
Քո սերն է ավելին, քան վեհ հայրերը,  
Ավել, քան հագուստներ, հարստություն,  
Ավել, քան բազեները եւ ձիերը.  
Ես քեզ ունեմ, քեզնով եմ պարծենում.  
Դժբախտ եմ, որ կարող ես դու վերցնել  
Ամենն այս եւ իսպառ դժբախտ դարձնել:

Ոմանց փառքն իրենց ծնունդն է, ոմանց՝ իրենց հմտությունը,  
Ոմանց՝ իրենց հարստությունը, ոմանց՝ մարմնի ուժը,  
Ոմանց՝ իրենց հանդերձները, թեեւ նորածեւ վատ,  
Ոմանց՝ իրենց բազեներն ու որսաշները, ոմանց՝ իրենց ձին.  
Եւ յուրաքանչյուր խառնվածք ունի իրեն բնորոշ հաճույքը,  
Որում գտնվում է ուրախություն վեր ամենից.  
Բայց այդ մանրամասները իմ չափանիշը չեն.  
Այս ամենը ես գերազանցում եմ մեկ ընդհանուր լավագույնով:  
Քո սերն էլլավ է ինձ համար, քան բարձր ծնունդը,  
Էլիարուստ է, քան հարստությունը՝ էլթանկ, քան հագուստների զինը,  
Ավելի հաճելի, քան բազեներն ու ձիերը.  
Եւ ունենալով քեզ՝ բոլոր մարդկանց հպարտությամբ եմ ես պարծենում.  
Դժբախտ երանով միայն, որ դու կարող ես վերցնել  
Այս ամենը, եւ ինձ ամենից դժբախտը դարձնել:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

92

**B**

ut do thy worst to steal thyself away,  
For term of life thou art assured mine,  
And life no longer than thy love will stay,  
For it depends upon that love of thine.  
Then need I not to fear the worst of wrongs,  
When in the least of them my life hath end;  
I see a better state to me belongs  
Than that which on thy humour doth depend.  
Thou canst not vex me with inconstant mind,  
Since that my life on that revolt doth lie.  
O what a happy title do I find,  
Happy to have thy love, happy to die!  
But what's so blessed-fair that fears no blot?  
Thou mayst be false, and yet I know it not.





Արա քո վատը. քեզ դու գողացիր,  
Կյանքում, գիտեմ, դու իմն ես անկասկած,  
Եւ կյանքն ավել, քան սերդ չի տեփ,  
Քանզի քո այդ սիրուց է այն կախված:  
Ուստի ես չեմ սոսկում վատագույնից,  
Երբ փոքրագույնն էլ կյանքս կավարտի.  
Քան այն կախված լինի քո քմայքից,  
Աջքիս, եղածը, լավ է, շարունակվի:  
Ինձ չես տանջի մտքով քո անկայուն,  
Չի արդ կյանքիս մի մասն է այն դարձել:  
Ոհ, ինչ երջանկություն եմ ես գտնում,  
Երջանկություն՝ սիրել քեզ, կամ մեռնել:  
Բայց կամ չքնաղ մի բան, որ բիծ չունի:  
Դու կկեղծես՝ ինձ չի լինի հայտնի:

Բայց արա քո վատագույնը. գողացիր ինքդ քեզ,  
Կյանքի ժամկետով դու հավաստապես իմն ես,  
Եւ կյանքը կտեփ ոչ ավել, քան քո սերը կմնա,  
Քանզի այն կախված է այդ սիրուց քո:  
Ուստի ես կարիք չունեմ վախենալու վատագույնից չարիքների,  
Երբ նվազագույնում նրանցից իմ կյանքը կունենա ավարտ.  
Ես տեսնում եմ, էլլավ վիճակ է ինձ համար  
Քան թե այն քո տրամադրությունից լիներ կախված:  
Դու չես կարող տանջել ինձ անկայուն մտքով,  
Քանզի իմ կյանքն այդ շրջման վրա է:  
Ոհ, ինչ երջանիկի կոչում եմ ես գտնում,  
Երջանիկ՝ ունենալու քո սերը, երջանիկ՝ մեռնելու:  
Բայց ինչն է այդքան օրհնված-չքնաղ, որը չի վախենում բժից:  
Դու կարող ես կեղծ լինել, բայց ես դա չիմանամ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

93



How shall I live, supposing thou art true,  
Like a deceived husband; so love's face  
May still seem love to me, though altered new;  
Thy looks with me, thy heart in other place:  
For there can live no hatred in thine eye,  
Therefore in that I cannot know thy change.  
In many's looks, the false heart's history  
Is writ in moods and frowns and wrinkles strange,  
But heaven in thy creation did decree  
That in thy face sweet love should ever dwell;  
What e'er thy thoughts or thy heart's workings be,  
Thy looks should nothing thence but sweetness tell.  
How like Eve's apple doth thy beauty grow,  
If thy sweet virtue answer not thy show!



Ապրեմ՝ հավատարիմ քեզ համարած  
Ձերդ ամուսին խաբված. քո վարքն էլ մեղմ  
Դեռ սեր ինձ կթվա, թեև փոխված.  
Ինձ հետ այն կլինի, քո սիրտն՝ այլ տեղ.  
Չի տեղ չունի դեմքիդ ասելությունը,  
Եւ չեմ զգա, թե դու փոխվես հոգում:  
Այլոց դեմքին, սրտի կեղծ պատմությունը  
Գրված է ստվերներում, կնճիռներում:  
Բայց քեզ երկինքը ստեղծելիս վճռել է,  
Որ քո դեմքին միշտ սեր պիտ ընակվի.  
Եւ ինչ էլ քո մտքում, սրտում եղել է,  
Քո տեսքը քաղցրություն կարտահայտի:  
Պերճանքդ՝ Եայի խնձորն է բուն,  
Թե ձիրքդ քո տեսքին չի պատշաճում:

Այդպես ես կապրեմ՝ ենթադրելով, որ դու հավատարիմ ես,  
Ինչպես խաբված ամուսին. ուստի սիրո դեմքը  
Կարող է դեռես թվալ սեր ինձ, թեև փոփոխված նոր.  
Քո արտաքինը ինձ հետ է, քո սիրտը՝ ուրիշ տեղ.  
Քանի որ չի կարող ապրել ասելություն քո այքերում,  
Ուստի դրանցով ես չեմ կարող իմանալ քո փոփոխությունը:  
Ծատերի տեսքում, կեղծ սրտի պատմությունը  
Գրված է տրամադրությունների եւ մտայության մեջ եւ կնճիռներում տարօրինակ:  
Բայց երկինքը քեզ ստեղծելիս որոշել է,  
Որ քո դեմքին քաղցր սերը պետք է միշտ ընակվի.  
Ինչպիսին էլ քո մաքերը կամ քո սրտի գործերը լինեն,  
Քո տեսքը չպետք է ոչինչ, բացի քաղցրությունից արտահայտի:  
Որքան նման է Եայի խնձորին քո գեղեցկությունը աճում,  
Եթե քո քաղցր առաքինությունը չի համապատասխանում քո տեսքին:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

94



They that have pow'r to hurt, and will do none,  
That do not do the thing they most do show,  
Who, moving others, are themselves as stone,  
Unmoved, cold, and to temptation slow -  
They rightly do inherit heaven's graces,  
And husband nature's riches from expense;  
They are the lords and owners of their faces,  
Others but stewards of their excellence.  
The summer's flow'r is to the summer sweet,  
Though to itself it only live and die,  
But if that flow'r with base infection meet,  
The basest weed outbraves his dignity:  
For sweetest things turn sourest by their deeds;  
Lilies that fester smell far worse than weeds.



Ով ուժ ունի քանդիչ, եւ չի քանդում,  
Ով չի անում բաներ, իրեն պատկան,  
Այլոց շարժում է, ինքը՝ քար մնում  
Անշարժ ու անվրդով, սառցանման.  
Արդար նա շնորհն է ժառանգում երկնի,  
Եւ տնտեսում բարիքը բնության.  
Նա տերն ու տնօրենն է իր անձի,  
Իսկ այլը՝ սպասարկուներն իր վեհության:  
Ամռան ծաղիկն է քաղցրությունն ամռան,  
Թեկուզ լոկ իր համար է նա ապրում,  
Բայց երբ ստոր աղտն անցնում է այդ ծաղկան,  
Ստոր գաղձն էլ է նրան գերազանցում.  
Չի քաղցրը դառնանում է իր գործով.  
Շուշանը նեխ՝ գաղձից է գարշ՝ հոտով:

Նրանք, ովքեր ունեն ուժ, որ վնասեն, եւ ոչինչ չեն անում,  
Որ չեն անում բաներ, ինչ նրանք առավելապես ցուցադրում են,  
Ովքեր շարժելով ուրիշներին, իրենք ասես քար են,  
Անշարժ, սառը, եւ հրապուրվելու անընդունակ.  
Նրանք իրավամբ ժառանգում են երկնքի շնորհները,  
Եւ տնտեսում են բնության հարստությունները ծախսելուց.  
Նրանք տերերն են եւ սեփականատերներն իրենց դեմքերի,  
Մյուսները, սուկ կառավարիչներն նրանց գերազանցության:  
Ամռան ծաղիկը նպաստում է ամռան քաղցրությանը,  
Թեկուզ իր համար է այն միայն ապրում եւ մեռնում,  
Բայց երբ այդ ծաղիկը ստոր վարակի է հանդիպում,  
Ստորագույն մոլախտը գերազանցում է նրան իր արժանիքներով.  
Քանզի քաղցրագույն բաները վերածվում են դառնագույնի իրենց գործերով.  
Շուշանները, որ նեխում են գարշահոտում են, շատ ավելի վատ քան որմը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

95



How sweet and lovely dost thou make the shame  
Which, like a canker in the fragrant rose,  
Doth spot the beauty of thy budding name!  
O in what sweets dost thou thy sins inclose!  
That tongue that tells the story of thy days  
(Making lascivious comments on thy sport)  
Cannot dispraise, but in a kind of praise,  
Naming thy name, blesses an ill report.  
O what a mansion have those vices got  
Which for their habitation chose out thee,  
Where beauty's veil doth cover every blot,  
And all things turns to fair that eyes can see!  
Take heed (dear heart) of this large privilege:  
The hardest knife ill used doth lose its edge.



Ինչ քաղցր ու գեղ ես դու անոթ գործում,  
Որն, ուտիճի պես բուրավետ վարդի,  
Քո պատանի անունն է աղտեղում:  
Ոհ, ինչ անուշ է զգեստդ անոթի:  
Լեզուն, որ քո օրերն է շարադրում  
(Քո հասցեին կոպիտ ակնարկներով)  
Միայն գովասանքով է կշտամբում,  
Կեղծիքն է օրհնվում քո անունով:  
Ինչ ապարանք այդ արատներն ունեն,  
Որ զերդ բնակարան ընտրել են քեզ,  
Ուր գեղությանբ ծածկվում է բիծ ամեն,  
Դատնում չքնաղ ամենն՝ աչքին ի տես:  
Դու խնայիր (իմ սիրտ) այս ձիրքը մեծ.  
Չի սայրն էլ կարծրագույն ուտում է զեզ:

Որբան քաղցր ու սիրուն ես դու գործում անոթալիություն,  
Որը, ինչպես որդը բուրավետ վարդում,  
Բծավորում է գեղեցկությունը քո ծաղկող անվան:  
Ոհ, ինչ քաղցրության մեջ ես դու քո մեղքերը ներփակում:  
Այն լեզուն, որն ասում է պատմությունը քո օրերի  
(Անելով անպարկեշտ մեկնաբանություններ քո զբաղմունքի մասին)  
Չի կարող կշտամբել, այլ կերպ քան գովասանքի տեսքով,  
Գործածումը քո անվան, օրհնում է չար կարծիքը:  
Ոհ, ինչ ապարանք այդ արատներն ունեն,  
Որոնք իրենց բնակության համար ընտրեցին քեզ,  
Որտեղ գեղեցկության քողը ծածկում է յուրաքանչյուր բիծ,  
Եւ ամեն ինչ դարձնում է չքնաղություն, որն աչքերը կարող են տեսնել:  
Ուշադրություն դարձրու (սիրելի սիրտ) այս մեծ արտոնություն վրա.  
Կարծրագույն դանակը չար գործածման դեպքում կորցնում է իր սրությունը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

96



Some say thy fault is youth, some wantonness,  
Some say thy grace is youth and gentle sport;  
Both grace and faults are loved of more and less:  
Thou mak'st faults graces that to thee resort.  
As on a finger of a throned queen  
The basest jewel will be well esteemed,  
So are those errors that in thee are seen  
To truths translated, and for true things deemed.  
How many lambs might the stern wolf betray,  
If like a lamb he could his looks translate!  
How many gazers mightst thou lead away,  
If thou wouldst use the strength of all thy state!  
But do not so; I love thee in such sort,  
As thou being mine, mine is thy good report.





Գասեն, թե թարմ ես, զեխ, եւ դա է մեղքդ,  
Ոմանք՝ թե տարիքով ես հմայում.  
Միրում են քո հմայքն ու մեղքն ամենքը.  
Մեղքերը հմայիչ ես դու դարձնում:  
Ինչպես, որ թագուհու մատին դրված  
Էժանագույն պարզ ակն էլ է պաշտվում,  
Այդպես քո մեջ մեղքերը նկատված  
Արժանավոր բաներ են համարվում:  
Քանի՛ գառան բիրտ գայլը կխաբեր,  
Թե տեսք գառան վերցնէր իր արտաքնով:  
Քանի՛ հայացք կարող էիր տանել,  
Թե օգտվեիր դիրքից քո ողջ ուժով:  
Ոչ, պետք չէ դա. այն կերպ եմ քեզ սիրում,  
Որ իմն են քո եւ կյանք եւ համարում:

Ոմանք ասում են, որ քո թերությունը երիտասարդությունն է, ոմանք՝ զեխությունը,  
Ոմանք ասում են, որ քո հմայքը երիտասարդությունն է եւ բարեկիրթ զբաղմունքը.  
Թե հմայքը, թե արատները սիրելի են ավել կամ պակաս դիրքի մարդկանց կողմից.  
Դու դարձնում ես հմայիչ արատները, որոնք քո մեջ են ապաստանում:  
Ինչպես մատին՝ գահակալած թագուհու  
Պարզագույն ակը կլինի պաշտելի,  
Այդպես էլ այն մեղքերը, որ քո մեջ երեսում են  
Առաքինությունների են փոխարկվում եւ արժանավոր բաներ են համարվում:  
Քանի՛ գառան կարող էր դաժան գայլը խաբել,  
Եթե գառան նման ես կարողանար իր տեսքը փոխարկել:  
Քանի՛ հայեցող կարող էիր դու տանել,  
Եթե դու օգտագործեիր ամբողջ ուժով քո դիրքը:  
Բայց մի՛ արա այդպես. ես սիրում եմ քեզ այն տեսակ,  
Անես դու իմն ես, իմն է քո բարի համբավը\*:

\* Այս հնչյակի փականը նույնական է 36 հնչյակի փականի հետ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

97



How like a winter hath my absence been  
From thee, the pleasure of the fleeting year!  
What freezings have I felt, what dark days seen!  
What old December's bareness every where!  
And yet this time removed was summer's time,  
The teeming autumn big with rich increase,  
Bearing the wanton burthen of the prime,  
Like widowed wombs after their lords' decease:  
Yet this abundant issue seem'd to me  
But hope of orphans, and unfathered fruit,  
For summer and his pleasures wait on thee,  
And thou away, the very birds are mute;  
Or if they sing, 'tis with so dull a cheer  
That leaves look pale, dreading the winter's near.



Որքան ձմռան նման էր բաժանումը  
Քեզնից՝ հաճույք իմ վաղանցուկ տարվա:  
Ինչ մույթ օրեր եւ ինչ ցրտի զգացում էր:  
Ինչ մերկություն էր խուլ ուշ ձմեռվա:  
Եւ այն պահին դեռ տակավին ամառ էր,  
Արգասաբեր աշուն, հարուստ բերքով  
Եւ ծաղկունքի ճոխ բեռը կենսավատ էր,  
Ինչպես այրու արգանդ հղի՝ պտղով.  
Սակայն առատ այդ բերքը ինձ թվում էր  
Հույս որբերի, անհայրացած պտուղ,  
Քանզի ամառն ու ջերմն իր քեզ սպասում են,  
Իսկ երբ չկաս, անգամ հավքերն են լուռ.  
Եւ կամ երգում են, բայց տխուր այնքան,  
Որ դակ են տերեւներն, սափց ձմռան:

Որքան նման էր ձմռանը իմ բաժանումը  
Քեզնից՝ հաճույք վաղանցուկ տարվա:  
Ինչ ցուրտ եմ ես զգացել, ինչ մույթ օրեր տեսել:  
Ինչ հին դեկտեմբերյան մերկություն՝ ամենուրեք:  
Եւ դեռ այս ժամանակը հեռացման՝ ամռան ժամանակ էր,  
Արգասաբեր աշուն, հղի հարուստ բերքով  
Կրող առատ բեռը գարնան,  
Ինչպես այրիացած արգանդները, իրենց տերերի վախճանվելուց հետո.  
Այնուամենայնիվ, այդ առատ բերքը ինձ թվում էր  
Ոչ այլ ինչ, քան հույս որբերի եւ անհայր պտուղ,  
Քանզի ամառը եւ նրա հաճույքները սպասարկում են քեզ,  
Իսկ երբ դու հեռու ես, անգամ թռչունները լուռ են.  
Կամ եթե նրանք երգում են, ապա այսքան տխուր դեմքով,  
Որ տերեւները խամրում են, վախենալով, որ ձմեռը մոտ է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

98



From you have I been absent in the spring,  
When proud-pied April (dressed in all his trim)  
Hath put a spirit of youth in every thing,  
That heavy Saturn laughed and leapt with him.  
Yet nor the lays of birds, nor the sweet smell  
Of different flowers in odour and in hue,  
Could make me any summer's story tell,  
Or from their proud lap pluck them where they grew:  
Nor did I wonder at the lily's white,  
Nor praise the deep vermilion in the rose;  
They were but sweet, but figures of delight,  
Drawn after you, you pattern of all those.  
Yet seemed it winter still, and, you away,  
As with your shadow I with these did play.



Չեզնից ես հեռացա գարնան պահին,  
Երբ զարդարուն ապրիլն (իր զգեստներով)  
Ամեն ինչին տվեց մանուկ ոգին,  
Եւ ցատկոտեց Մատուրնն իր հետ երկրով:  
Ոչ երգը հավքերի, ոչ քաղցր բոյրը  
Բազմապիսի երանգներով ծաղիկների,  
Ինձ չէր ստիպի երգել ամռան նուրբ թոյրը,  
Եւ կամ քաղել դրանք ծոցից բերրի.  
Ոչ հիացրեց շուշանն իր սպիտակով,  
Ոչ գովեցի որդանը թունդ՝ վարդի.  
Սոսկ քաղցր էին դրանք, սոսկ լի փայլով,  
Գծված ձեզնից՝ ոգուց այդ բոլորի:  
Թվում էր դեռ ձմեռ է, դուք՝ հեռու.  
Դրանք, ասես, ձեր ստվերն էին կրում:

Ձեզնից ես հեռացա գարնանը,  
Երբ հպարտ-զարդարուն ապրիլը (հագած իր զգեստները)  
Դրեց ոգին երիտասարդության ամեն ինչի մեջ,  
Որ ծանր Մատուրնը ծիծաղեց եւ ցատկոտեց նրա հետ:  
Բայց ոչ երգը թռչունների, ոչ քաղցր բոյրը  
Տարբեր ծաղիկների՝ ըստ հոտի եւ ըստ երանգի,  
Չէին կարող ստիպել ինձ որեւէ ամառվա պատմություն պատմել,  
Կամ իրենց շքեղ ծոցից քաղել դրանց, որտեղ դրանք աճում էին.  
Ոչ էլ ես հիացա շուշանի սպիտակով,  
Ոչ էլ գովեցի խորը որդանը (կարմիր) վարդի.  
Դրանք սոսկ քաղցր էին, սոսկ հրճվանքի նշաններ,  
Նկարված ձեզնից, դուք եք այդ բոլորի նմուշը:  
Դեռ թվում էր տակավին ձմեռ է, եւ դուք հեռու,  
Ինչպես ձեր ստվերի հետ ես խաղում էի դրանցով:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

99



The forward violet thus did I chide:  
‘Sweet thief, whence didst thou steal thy sweet that smells,  
If not from my love’s breath? The purple pride  
Which on thy soft cheek for complexion dwells  
In my love’s veins thou hast too grossly dyed.  
The lily I condemned for thy hand,  
And buds of marjoram had stol’n thy hair;  
The roses fearfully on thorns did stand,  
One blushing shame, another white despair;  
A third, nor red nor white, had stol’n of both,  
And to his robb’ry had annexed thy breath,  
But for his theft in pride of all his growth  
A vengeful canker eat him up to death.  
More flowers I noted, yet I none could see  
But sweet or colour it had stol’n from thee.



Լաղ մանուշին այսպես եմ նախաստել.  
«Քաղցրիկ գող, որտեղից կորզածդ բույրը,  
Թե ոչ սիրուս շնչից: Կարմիրդ էլ,  
Որ թշերիդ նրբին դարձել է թույրը  
Սիրուս երակներում ես դու ներկել:  
Սաստել եմ շուշանին ձեռքիդ համար,  
Կոկոնն է մարեմի տարել քո հյուսը,  
Վարդերն են փշաքաղ, սարսափահար.  
Մեկն ամոթից շիկնած, գունատ է մյուսը.  
Երրորդն էլ կողոպտած այդ երկուսին,  
Թալանածին քո շունչն է հավելել,  
Բայց գողության համար ծաղկման պահին  
Ուտիճն է վրեժխնդիր նրան պատժել:  
Եւ չեմ գտել գետ մեկ ծաղիկ մինչ արդ  
Որ գույն ու բույր քեզնից չգողանար:

Առաջին մանուշակին այսպես էի ես նախատում.  
«Քաղցր գող, որտեղից դու կորզեցիր քո քաղցր բույրը,  
Եթե ոչ իմ սիրու շնչից: Կարմիրիկ շքեղությունը,  
Որ քո նուրբ թշի վրա որպես գույն է բնակվում  
Իմ սիրու երակներում դու չափազանց շատ ես ներկվել:  
Շուշանին եմ ես դատապարտել քո ձեռքի համար,  
Եւ կոկոնները խնկածաղկի տարել են քո վարսերը.  
Վարդերը սարսափած փշերի վրա են.  
Մեկը շիկնելով ամոթից, մյուսը՝ ճերմակ հուսահատ.  
Երրորդն էլ՝ ո՛չ կարմիր, ո՛չ սպիտակ՝ կողոպտել է երկուսին,  
Եւ իր թալանածին բռնագավթել է քո շունչը,  
Բայց իր գողության համար շքեղության մեջ իր ծաղկման  
Վրեժխնդիր որդը ուտում է իրեն մինչև մահ:  
Այլ ծաղիկներ ես դիտեցի, տակավին ես չկարողացա տեսնել,  
Որ քաղցրությունը կամ գույնը այն գողացած ջիններ քեզնից:

SHAKE-SPEARES,

SONNETS.

100



Where art thou, Muse, that thou forget'st so long  
To speak of that which gives thee all thy might?  
Spend'st thou thy fury on some worthless song,  
Dark'ning thy pow'r to lend base subjects light?  
Return, forgetful Muse, and straight redeem  
In gentle numbers time so idly spent;  
Sing to the ear that doth thy lays esteem  
And gives thy pen both skill and argument.  
Rise, resty Muse, my love's sweet face survey,  
If Time have any wrinkle graven there;  
If any, be a satire to decay,  
And make Time's spoils despised every where.  
Give my love fame faster than Time wastes life;  
So thou prevent'st his scythe and crooked knife.





Մուսա, որտեղ ես միշտ, որ մոռանում ես  
Գովել նրան, ով քեզ տալիս է ուժ:  
Թե կիրքդ անարժեք երգին ծախսում ես,  
Տալով առարկային ստոր՝ լույս անուշ:  
Եկ մոռացկոտ Մուսա եւ հատուցիր  
Նուրբ տաղերով՝ պահերը զուր ծախսված.  
Քեզ գնահատողի համար երգիր՝  
Գրչիդ եւ հնտություն, եւ նյութ տված:  
Ե՛կ, ծույլ Մուսա, սիրուս դեմքին նայիր,  
Արդյո՞ք այն ժամանակը չի կնճռել:  
Եթե այո, անկման ծաղրանք եղիր,  
Ստիպիր այն ամենուր արհամարհել:  
Տո՛ւր փառք սիրուս, հաղթիր դու ժամանակը.  
Կանխիր դրա մանգաղն ու կեռ դանակը:

Որտեղ ես դու, Մուսա, որ դու մոռանում ես այդքան երկար  
Խոսել այն մասին, ինչն է տալիս քեզ ամբողջ թո ուժը:  
Ծախանմ ես դու թո կիրքը որեւէ անարժեք երգի վրա,  
Սթացնելով թո ուժը, տալու համար ստոր առարկաներին լույս:  
Վերադարձիր, մոռացկոտ Մուսա եւ անմիջականորեն հատուցիր  
Նրբին համարներով ժամանակը՝ այդքան պարսպ ծախսված.  
Երգիր ականջի համար, որը թո տաղերը գնահատում է  
Եւ տալիս է թո գրիչին եւ հնտություն, եւ նյութ:  
Ելիր, ծույլ Մուսա, իմ սիրո քաղցր դեմքը գննիր,  
Արդյո՞ք ժամանակը որեւէ կնճիտ է փորել այնտեղ:  
Եթե կան, եղիր երգիծանք քայքայման համար,  
Եւ արս, որ ժամանակի ավարները արհամարհվեն ամենուրեք:  
Տո՛ւր իմ սիրուն համբավ ավելի արագ, քան ժամանակը ոչնչացնում է կյանքը.  
Այսպես դու կկանխես նրա գերանդին եւ կեռ դանակը:

SHAKE-SPEARES,

SONNETS.

101



O truant Muse, what shall be thy amends  
For thy neglect of truth in beauty dyed?  
Both truth and beauty on my love depends;  
So dost thou too, and therein dignified.  
Make answer, Muse: wilt thou not haply say,  
‘Truth needs no colour with his colour fixed,  
Beauty no pencil, beauty’s truth to lay;  
But best is best, if never intermixed’?  
Because he needs no praise, wilt thou be dumb?  
Excuse not silence so, for’t lies in thee  
To make him much outlive a gilded tomb,  
And to be praised of ages yet to be.

Then do thy office, Muse; I teach thee how  
To make him seem long hence as he shows now.



Ոհ, հույլ Մուսա, ինչո՞ւ ես անտեսում  
Դու ճշտությունը՝ գեղությամբ ծաղկված:  
Երբ ճիշտն ու գեղը սերն է իմ հսկում.  
Եւ դու ես նրանով՝ փառավորված:  
Լսիր, Մուսա. կարո՞ղ է դու ասես,  
«Ճշտին գույն պետք չէ՝ այն իր գույնն ունի,  
Գեղեցկությունն՝ առանց վրձնի է վես,  
Եւ լավը չեն խառնում լավագույնին»:  
Թե վեր է նա գովքից, պիտի լռես:  
Քո լռությունը չի արդարացվում,  
Քանզի տրված է քեզ անել այնպես,  
Որ նա գովվի այսօր եւ դարերում:  
Առաջ, Մուսա. կասեմ ինչպես անես  
Որ նա երկար չքնաղ մնա այսպես:

Ոհ, հույլ Մուսա, ինչո՞վ ես դու հատուցելու  
Քո անտարբերությունը իսկության հանդեպ՝ գեղեցկությամբ ծաղկված:  
Եւ ճշմարտությունը, եւ գեղեցկությունը իմ սիրուց են կախված.  
Ուրեմն դու նույնպես, եւ դրանով իսկ՝ փառավորված:  
Պատասխանիր, Մուսա. դու պատահաբար չես ասի,  
«Իսկությունը կարիք չունի գույնի՝ իր գույնով հաստատուն,  
Գեղեցկությունը՝ վրձնի՝ գեղեցկության իսկությունը ծածկելու,  
Բայց լավագույնը լավագույնն է, եթե չի խառնվում»:  
Քանզի նա կարիք չունի գովասանքի, կլինես դու համր:  
Սի արդարացնի լռությունդ այդպես, քանզի տրված է քեզ  
Անել այնպես, որ նա մեծապես վերապրի որեւէ ոսկեգօծ շիրիմ,  
Եւ գովերգվի դարերում դեռ գալիք:  
Ուրեմն արա՛ քո ծառայությունը, Մուսա. ես կտվորեցնեմ քեզ, թե ինչպես  
Անել, որ նա ներկայանա երկար այսուհետ, ինչպես նա երեսում է հիմա:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

102



My love is strength'ned, though more weak in seeming;  
I love not less, though less the show appear:  
That love is merchandised whose rich esteeming  
The owner's tongue doth publish every where.  
Our love was new, and then but in the spring,  
When I was wont to greet it with my lays,  
As Philomel in summer's front doth sing,  
And stops his pipe in growth of riper days:  
Not that the summer is less pleasant now  
Than when her mournful hymns did hush the night,  
But that wild music burthens every bough,  
And sweets grown common lose their dear delight.  
Therefore like her, I sometime hold my tongue,  
Because I would not dull you with my song.



Իմ սերն անել է, սակայն ոչ տեսքից.  
Միրում եմ շատ՝ թվում է հակառակը.  
Մեծ սերը տարբերվում է ապրանքից,  
Որն ամենուր գտվում է վաճառակը:  
Մեր սերը նոր էր, մեր սիրո գարունն էր,  
Երբ ես այն իմ երգով էի օրհնում,  
Այդպես գարնանը Ֆիլոմելն երգում է,  
Ամուսնը ճոխ՝ շվին իր լռեցնում.  
Այսօր ամառը ոչ պակաս շքեղ է,  
Քան երբ ներա օրհներգն էր տարածվում,  
Բայց լի են երգերով բոլոր ճյուղերը,  
Եւ լիացած՝ հնայքն է պակասում:  
Եւ ես իր պես փորձում եմ քիչ երգել,  
Չի չեմ ուզում երգով քեզ ձանձրացնել:

Իմ սերը հզորացել է, թեեւ սպելի թույլ է թվում.  
Ես սիրում եմ ոչ պակաս, թեեւ պակաս է դա երեւում արտաքուստ.  
Այդպիսի սերը վերածվում է ապրանքի, որի հարուստ գնահատականը  
Մեփականատիրոջ լեզուն հրապարակում է ամենուրեք:  
Մեր սերը նոր էր, եւ այնժամ սուկ գարնան մեջ էր,  
Երբ ես սովորականի պես ողջունում էի այն իմ երգերով,  
Ինչպես Ֆիլոմելն է ամուսն սկզբում երգում,  
Եւ դարարեցնում է իր շվին հասուն օրերի ծաղկման հետ.  
Ոչ որ ամառը պակաս հաճելի է հիմա,  
Քան երբ ներա\* տխուր օրհներգերը լռեցնում էին գիշերը,  
Բայց քանի որ վայրի երաժշտությունը ծանրաբեռնում է յուրաքանչյուր ճյուղ,  
Եւ հաճույքներն աճող ամենուրեք, կորցնում են իրենց թանկագին հնայքը:  
Ուստի ներա նման, ես երբեմն պահում եմ իմ լեզուն,  
Քանզի ես չեի զանկանա ձանձրացնել քեզ իմ երգով:

\* Բնագրում Ֆիլոմելի նկատմամբ սկզբում կիրառվում է արական դերբայ, հետո՝  
իգական

SHAKE-SPEARES,  
SONNETS.

103



Lack, what poverty my Muse brings forth,  
That, having such a scope to show her pride,  
The argument all bare is of more worth  
Than when it hath my added praise beside.  
O blame me not if I no more can write!  
Look in your glass, and there appears a face  
That overgoes my blunt invention quite,  
Dulling my lines, and doing me disgrace.  
Were it not sinful then, striving to mend,  
To mar the subject that before was well?  
For to no other pass my verses tend  
Than of your graces and your gifts to tell;  
And more, much more than in my verse can sit,  
Your own glass shows you, when you look in it.



Ալան, երկնածը Մուսայիս խղճուկ է,  
Թեպետ ունակ է գործ ստեղծել փայլուն,  
Մինչ նյութը մերկ, ավել վսեմաշուք է,  
Քան երբ դրան իմ գովքն եմ հավելում:  
Ոհ, մի ասեք, թե չեմ կարող գրել:  
Նայեք ձեր հայելուն, եւ կտեսնեք  
Մի դեմք, որն անհնար է գովերգել,  
Չի չեն ստեղծված բառերը համարժեք:  
Արդյո՞ք դա մեղք չէր. փորձելով շտկել,  
Խեղել մի բան, որ լավն էր նախկինում:  
Չի այլ բանի տողերս չեն ձգտել  
Քան ձեր շնորհները գովերգել բազում.

Եւ շատ, շատ ավելին, քան տաղը իմ,  
Կասի ձեզ, թե նայեք, ձեր հայելին:

Ավան, ինչ ողորմելիություն է իմ Մուսան երկնում,  
Դա՛ ունենալով այնպիսի հնարավորություն դրսևորելու իր շքեղությունը,  
Նյութը, ամբողջովին մերկ, ավելի արժեքավորը է,  
Քան երբ դրան հավելվում է իմ գովքը լրացուցիչ:  
Ոհ, մի մեղադրեք ինձ, եթե այլեւս չեմ կարող գրել:  
Նայեք ձեր հայելու մեջ, եւ այնտեղ կերեսա դեմք,  
Որը գերազանցում է իմ բոլոր երեսակայությունը,  
Ձանձրալի դարձնելով իմ տողերը եւ ինձ խայտառակելով:  
Մեղք չէր լինի այդժամ, փորձելով շտկել,  
Վնասել առարկան, որը նախկինում լավն էր:  
Քանզի ոչ մի այլ նպատակի իմ տողերի չեն ձգտում  
Քան ձեր շնորհների եւ ձեր ձիրքերի մասին պատմելը.

Եւ ավելին, շատ ավելին, քան իմ տաղի մեջ կարող է գետեղվել,  
Ձեր սեփական հայելին ցոյց է տալիս ձեզ, երբ նայում եք դրան:

SHAKE-SPEARES,

SONNETS.

104



Uo me, fair friend, you never can be old,  
For as you were when first your eye I eyed,  
Such seems your beauty still. Three winters cold  
Have from the forests shook three summers' pride,  
Three beauteous springs to yellow autumn turned  
In process of the seasons have I seen,  
Three April perfumes in three hot Junes burned,  
Since first I saw you fresh which yet are green.  
Ah! yet doth beauty, like a dial-hand,  
Steal from his figure, and no pace perceived;  
So your sweet hue, which methinks still doth stand,  
Hath motion, and mine eye may be deceived;  
For fear of which, hear this, thou age unbred:  
Ere you were born was beauty's summer dead.





ուր ինձ համար, չեք ծերանա երբեք,  
Եւ նույնն եք, ինչ, երբ մենք իրար տեսանք,  
Նույն գեղույթամբ: Եւ ցուրտ ձմեռ երեք  
Մայրուց գգեց երեք ամռան պերճանք,  
Երեք չքնաղ գարուն աշուն դարձած  
Տեսա եւ եղանակների վազքում,  
Երեք հունիս՝ երեք ապրիլ այրված,  
Անցան, ինչ ես տեսա ձեզ թարմ, ծաղկուն:  
Գեղանքը բայց, ժամի սլաք ինչպես,  
Անցնում է գողեգող, կարծես սառած.  
Եւ քաղցր տեսքն էլ ձեր, կանգնած ասես,  
Ունի շարժում աչքիցս վրիպած.  
Եւ քեզ ի վախ, լսիր սա դար գալիք.  
Մինչ ձեզ մեռավ ամառը գեղեցիկ:

Ինձ համար, չքնաղ ընկեր, դուք երբեք չեք կարող լինել ձեր,  
Քանզի, ինչպես դուք էիք, երբ առաջուց ձեր այքը ես աչեցի,  
Այդպիսին է, երեսում ձեր գեղեցկությունը դեռես: Երեք ձմեռ ցուրտ  
Անտառներից թոթափեց երեք ամառների շքեղությունը,  
Երեք հիասքանչ գարուն դեղին աշուն դարձած  
Ընթացքում եղանակների ես տեսա,  
Երեք ապրիլյան բույր երեք շոգ հունիսներում այրվեցին,  
Այն պահից, երբ առաջուց ես տեսա ձեզ թարմ, որ դեռ կանաչ եք:  
Ա՛խ, այնուհանդերձ գեղեցկությունը, ինչպես ժամի սլաքը,  
Գողեգող հեռանում է իր թվից եւ քայլը չի ընկալվում.  
Այսպիսով, ձեր քաղցր արտաքինը, որ ինձ թվում է կանգնած,  
Ծարժվում է եւ իմ այքը կարող է խաբվել.

Վախենալով սրանից, լսիր սա, դու դար անձին.

Մինչ դուք ծնվել էիք, գեղեցկության ամառը մեռել էր:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

105



Let not my love be call'd idolatry,  
Nor my beloved as an idol show,  
Since all alike my songs and praises be  
To one, of one, still such, and ever so.  
Kind is my love to-day, to-morrow kind,  
Still constant in a wondrous excellence;  
Therefore my verse, to constancy confined,  
One thing expressing, leaves out difference.  
'Fair, kind and true' is all my argument,  
'Fair, kind, and true', varying to other words,  
And in this change is my invention spent,  
Three themes in one, which wondrous scope affords.  
    'Fair, kind, and true' have often lived alone,  
    Which three till now never kept seat in one.



Թող չթվա, թե սերս կռապաշտ է,  
Եւ ոչ էլ սիրելիս՝ մի կուռք դիտվի,  
Չի, իմ բոլոր գովեստ ու երգն սաված է  
Սեկին, մեկի մասին, եւ նույնովի:  
Բարի է սերս այսօր, բարի է վաղը,  
Միշտ հաստատուն, չքնատ իր վեհությամբ.  
Ուստի հաստատ եմ եւ իմ գովքն ու տաղը,  
Մեկ բանն արտահայտում եմ նույնությամբ:  
«Չքնատ, բարի, ազնիվ»՝ ահա ողջ նյութը,  
«Չքնատ, բարի, ազնիվ»՝ այլ բառերով,  
Եւ հենց այս փոփոխումն է ողջ իմ գյուտը,  
Երեք նյութեր՝ մեկում, մի նոր կերպով:  
«Չքնատ, բարի, ազնիվ»՝ հաճախ մենակ,  
Չի այժմ լոկ դարձան միաբնակ:

Թող իմ սերը չանվանվի կռապաշտություն,  
Ոչ էլ իմ սիրելին՝ որպես կուռք երես,  
Քանի որ\* բոլոր, հավասարապես, իմ երգերն ու գովեստները ուղղված են  
Սեկին, մեկի մասին են, միշտ այդպես եւ ընդմիշտ նույնպես:  
Բարի է իմ սերն այսօր, վաղը բարի,  
Միշտ հաստատուն է հիաքանչ գերազանցության մեջ.  
Ուստի իմ տաղերը՝ հաստատունության սահմանված,  
Մեկ բան արտահայտելով՝ հեռանում եմ բազմազանությունից:  
«Չքնատ, բարի եւ հավատարիմ»՝ իմ ամբողջ նյութն է,  
«Չքնատ, բարի եւ հավատարիմ»՝ տարբերակում եմ այլ բառերով,  
Եւ այս փոփոխման համար է իմ երեսակայությունը ծախսվում,  
Երեք նյութ՝ մեկում, ինչը հրաշալի հնարավորություններ է տալիս:  
«Չքնատ, բարի եւ հավատարիմ»՝ հաճախ սպրեղ են միայնակ,  
Որ երեքը մինչ այժմ երբեք չէին պահվում մեկում:

\* Պարզ չէ, նա ժխտում է իր կռապաշտությունը, թե՛ բացատրում դրա պատճառը:

SHAKE-SPEARES,

SONNETS.

106



When in the chronicle of wasted time

I see descriptions of the fairest Wights,

And beauty making beautiful old rhyme

In praise of ladies dead and lovely knights,

Then in the blazon of sweet beauty's best,

Of hand, of foot, of lip, of eye, of brow,

I see their antique pen would have expressed

Even such a beauty as you master now.

So all their praises are but prophecies

Of this our time, all you prefiguring,

And, for they looked but with divining eyes

They had not skill enough your worth to sing:

For we, which now behold these present days,

Had eyes to wonder, but lack tongues to praise.



Երբ թերթելով տարեգրության էջեր  
Տեսնում եմ գովք չքնաղ Էակների,  
Եւ գեղություն կերտող գեղ հին տաղեր  
Ի փառս պերճ տիկնանց, ասպետների,  
Գեղեցկության փայլուն նմուշներում  
Ձեռքի, ոտքի, շուրթի, աչքի, հոնքի,  
Տեսնում եմ, որ գովել էին փորձում  
Հենց այսօրվա գեղանքը ձեր անձի:  
Բայց գովքն իրենց այդ մարգարեություն էր  
Այս, մեր օրվա, ձեզ նախապատկերող,  
Եւ զի դա վաղանցիկ գուշակություն էր,  
Չգանվեց ձեր ձիրքը գովերգող.  
Այսօր էլ, երբ ինքներս եմք տեսնում,  
Ցնցվում է աչքը, իսկ լեզուն՝ կապվում:

Երբ տարեգրության մեջ կորած ժամանակի  
Ես տեսնում եմ նկարագրություններ չքնաղագույն Էակների,  
Եւ գեղեցկություն կերտող գեղեցիկ հին տաղեր  
Ի փառաբանում տիկնանց մահացած եւ սիրուն ասպետների,  
Այդժամ փառաբանման մեջ քաղցր գեղեցկության լավագույն նմուշների  
Ձեռքի, ոտքի, շուրթի, աչքի, հոնքի,  
Ես տեսնում եմ, իրենց հին գրիչը ցանկանում էր արտահայտել  
Հենց այնպիսի գեղեցկություն, ինչպիսին դուք տեր եք հիմա:  
Այնպես որ, բոլոր նրանց գովասանքները այլ բան չեն, քան մարգարեություններ  
Այս մեր ժամանակի, բոլորը ձեզ նախապատկերող,  
Եւ, որովհետեւ նրանք նայում էին, սուկ գուշակող աչքերով  
Նրանք չունեին հմտություն բավականաչափ ձեր ձիրքերը երգելու.  
Մենք էլ, որ հիմա տեսնում ենք այս ներկա օրերը,  
Ունենք աչքեր՝ զարմանալու, բայց չունենք լեզուներ՝ գովերգելու:

SHAKE-SPEARES,

SONNETS.

107



Not mine own fears, nor the prophetic soul  
Of the wide world, dreaming on things to come,  
Can yet the lease of my true love control,  
Supposed as forfeit to a confined doom.  
The mortal moon hath her eclipse endured  
And the sad augurs mock their own presage,  
Incertainties now crown themselves assured,  
And peace proclaims olives of endless age.  
Now with the drops of this most balmy time  
My love looks fresh, and Death to me subscribes,  
Since spite of him I'll live in this poor rhyme,  
While he insults o'er dull and speechless tribes.  
And thou in this shalt find thy monument,  
When tyrants' crests and tombs of brass are spent.



Ո՛չ վախն իմ, ո՛չ հոգին գուշակչական  
Ողջ աշխարհի, գալիք պատկերելով,  
Չեն հսկելու իմ սերը իսկական,  
Որպես սահման՝ զնդան ենթադրելով:  
Մահկանացու լուսինը խավարեց  
Հեզնում են գուշակներն իրենց ասածը,  
Անճշտությունն իր տեղը արդ զիջեց,  
Եւ ձիթենյաց անվերջ դարն սկսված է:  
Կաթիլներով սփռվիչ ժամանակի  
Իմ սերն է թարմ, ինձ Մահն է ենթարկվում.  
Զի այս տաղում կապրեմ ես մշտակի.  
Մինչ նա, անխոսք ցեղերն է անարգում:  
Եւ աստ դու կգտնես քո հուշարձանը,  
Երբ կջնջվի վերջին իսկ դամբարանը:

Ոչ իմ սեփական վախերը, ո՛չ էլ մարգարեական հոգին  
Համայն աշխարհի, երեսակայելով գալիքի մասին,  
Չեն կարող տակավին վարձակալել իմ իսկական սիրո վերահսկումը,  
Ենթադրելով որպես հատուցում ազատագրվման դատավճիռը\*:  
Մահկանացու լուսինն իր խավարումը կրեց  
Եւ տխուր ավգուրները հեզնում են իրենց սեփական գուշակումները,  
Անորոշություններն այժմ պսակել են իրենց վստահությամբ,  
Եւ աշխարհը հոչակում է ձիթենիներ անվերջ դարերի:  
Այժմ կաթիլներով այս ամենասփռվիչ ժամանակի  
Իմ սերը երեսում է թարմ, եւ Մահը ինձ է ենթարկվում,  
Քանզի, չնայած նրան, ես կապրեմ այս աղքատ տողերում,  
Մինչ նա անարգում է բոլոր եւ խոսքագուրկ ցեղերին:  
Եւ դու սրանում կգտնես քո հուշարձանը,  
Երբ բռնակալների զինանշաններն ու պետերի դամբարանները կջնջվեն:

\* Այս հնչյակի նյութը խիստ խնդրահարույց է: Մեկնողները կարծում են, որ այստեղ ակնարկված են ինչ-որ քաղաքական իրողություններ: Ավանդաբար համարվում է, որ խոսքը Եղիսաբեթ թագուհու (մահկանացու լուսնի) վախճանի (կամ որևէ փորձության) մասին է, որի արդյունքում ազատ է արձակվել մի բարձրաստիճան անձնավորություն (գուցե՝ Ռոջեր Մեններսը, Փեմբրուկը, կամ Մաուրիսիոսը):

SHAKE-SPEARES,  
SONNETS.

108



What's in the brain that ink may character  
Which hath not figured to thee my true spirit?  
What's new to speak, what new to register,  
That may express my love, or thy dear merit?  
Nothing, sweet boy; but yet, like prayers divine,  
I must, each day say o'er the very same,  
Counting no old thing old, thou mine, I thine,  
Even as when first I hallowed thy fair name.  
So that eternal love in love's fresh case  
Weighs not the dust and injury of age,  
Nor gives to necessary wrinkles place,  
But makes antiquity for aye his page,  
    Finding the first conceit of love there bred,  
    Where time and outward form would show it dead.





Բնչ կա գլխում, գրով պատկերվելիք,  
Որ չի ասել քեզ իմ անկեղծ հոգին:  
Բնչ ասելիք նոր, Բնչ նոր գրվելիք,  
Որ սերս կկերտի, կամ ձիրքդ անգին:  
Ոչինչ, անուշ տղա. բայց ուխտ որպես,  
Պիտի ես ամեն օր ասեմ հենց նույնը,  
Հին բան չկա, դու իմն ես, քունը՝ ես,  
Ինչ առաջուց օրհնել եմ քո անունը:  
Եւ թարմ հանդերձանքով հավերժ այդ սերը  
Փռչին ու ախտն է տարիքի ժխտում,  
Այն նաեւ անտեսում է կնճիռները,  
Եւ հնությունն էլ իր ծառան դարձնում,  
Գտնում, թե այն որտեղ էր հղացած՝  
Ուր արտաքուստ այն կրթվար մեռած:

Բնչ կա ուղեղի մեջ, որը թանաքը կարող է արտահայտել,  
Որը չի պատկերել քեզ իմ հավատարիմ հոգին:  
Բնչ նոր բան ասելու, Բնչ նոր բան գրանցելու,  
Որը կարող է արտահայտել իմ սերը, կամ քո անգին ձիրքը:  
Ոչինչ, քաղցր տղա. բայց այնուհանդերձ, ինչպես աղոթքներ աստվածային,  
Ես պարտավոր եմ ամեն օր ասել հենց նույնը,  
Չհամարելով հին բանը հին, դու իմն ես, ես՝ քունը,  
Ինչպես, երբ առաջուց ես օրհնեցի քո չքնաղ անունը:  
Ուրեմն այդ հավերժական սերը սիրո թարմ հանդերձանքով  
Հաշվի չի առնում փռչին եւ վնասը տարիքի,  
Ոչ էլ տալիս է անխուսափելի կնճիռներին տեղ,  
Բայց դարձնում է հնությունը մշտական իր ծառան,  
Գտնելով առաջին հղացումը սիրո այնտեղ ծնված\*,  
Որտեղ ժամանակն ու արտաքին ձեւը ցույց կտային այն մեռած:

\* Փաստորեն, «հավերժ սերը գտնում է առաջին սերը». խորթին ձեռակերպում է:

SHAKE-SPEARES,

SONNETS.

109



O, never say that I was false of heart,  
Though absence seem'd my flame to qualify.  
As easy might I from myself depart  
As from my soul, which in thy breast doth lie:  
That is my home of love: if I have ranged,  
Like him that travels I return again,  
Just to the time, not with the time exchanged,  
So that myself bring water for my stain.  
Never believe, though in my nature reign'd  
All frailties that besiege all kinds of blood,  
That it could so preposterously be stain'd,  
To leave for nothing all thy sum of good;  
For nothing this wide universe I call,  
Save thou, my rose; in it thou art my all.



Ո՛հ, մի՛ ասա, թե՛ կեղծ եմ ես սրտով,  
Թե՛ ես իմ հուրը հանդարտվեց հեռվում:  
Կարձղ եմ հեռանալ ես անվրդով,  
Երբ իմ հոգին, պահվում է քո կրծքում՝  
Տանն իմ սիրո. ես թե՛ ես հեռացել եմ  
Նսեա կրկին վերադարձել եմ միշտ,  
Ճիշտ այն ժամին, որ պահը չկորցնեմ ես  
Քավեմ գործած մեղքերն իմ ամբարիշտ:  
Մի՛ հավատա՛ թե՛ ես մերթ ինձ տիրել եմ  
Թուլություններ՝ արյուն թունավորող՝  
Որ անհեթեթորեն ես քեզ թողել եմ.  
Ոչ մի գնով լքել քեզ չեմ կարող.  
Քանզի ոչինչ է մեծ տիեզերքն այս իմ աչքում.  
Լոկ դու, իմ վարդ. լոկ դու ես իմ կյանքում:

Ո՛հ, երբեք մի ասա, որ ես անհավատարիմ եմ եղել սրտով,  
Թե՛ ես բաժանումը, թվում էր, իմ հուրը չափավորել էր,  
Ավելի հեշտ կիներ ես ինքս ինձնից բաժանվելի,  
Քան իմ հոգուց, որ քո կրծքում է գտնվում.  
Որը իմ տունն է սիրո. եթե ես դեզերել եմ,  
Նման նրան, ով ճանապարհորդում է, ես վերադարձել եմ կրկին,  
Ճիշտ ժամին, ժամանակի հետ չփոխված,  
Այնպես որ ինքս բերել եմ ջուր իմ բծի համար:  
Երբեք մի հավատա՛ թե՛ ես իմ բնույթի մեջ իշխել եմ  
Բողբո թուլությունները, որոնք պաշարում են բոլոր տեսակի արյունները՝  
Որ այն կարող էր այդքան անհեթեթորեն բծավորվել,  
Թողնել ոչինչի դիմաց քո ամբողջ գումարը բարիքի .  
Քանզի ոչինչ է այս լայն տիեզերքը ես ասում եմ,  
Բացի քեզնից, իմ վարդ. դրանում դու իմ ամեն ինչն ես:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

110



As 'tis true, I have gone here and there,  
And made myself a motley to the view,  
Gored mine own thoughts, sold cheap what is most dear,  
Made old offences of affections new.  
Most true it is that I have looked on truth  
Askance and strangely; but, by all above,  
These blenches gave my heart another youth,  
And worse essays proved thee my best of love.  
Now all is done, have what shall have no end:  
Mine appetite I never more will grind  
On newer proof, to try an older friend,  
A god in love, to whom I am confined.  
Then give me welcome, next my heaven the best,  
Even to thy pure and most most loving breast



Ավաղ, դա ճիշտ է. շատ եմ խարխափել  
Եւ ինքս ինձ դարձրել եմ խեղկատասկ,  
Խեղել մտքերս, թանկն էժան ծախել,  
Նոր կապերում գործել եմ հին զանցանք:  
Իրոք, նայել եմ ես ճշմարտությանը  
Կասկածանքով. սակայն երկինք վկա,  
Ամենն այդ ինձ բերեց գիտակցությանը,  
Որ լավագույն իմ սերն ես դու, որ կա:  
Ուրեմն, ունես դու այն, ինչ վերջ չունի:  
Իմ ախորժակն այլեւս այիտ զսպեմ.  
Նոր փորձությամբ ընկերս չի փորձվի.  
Սիրո աստված, միշտ քոնը կլինեմ:  
Արդ, երկրային դրախտ իմ լավագույն,  
Ինձ ընդունիր քո կուրծքը մաքրագույն:

Ավաղ, դա ճիշտ է, ես գնացի այստեղ եւ այնտեղ,  
Եւ դարձրեցի ինքս ինձ խեղկատակ՝ ի տես,  
Խեղեցի իմ սեփական մտքերը, վաճառեցի էժան, ինչն ամենաթանկն է,  
Արեցի հին զանցանքներ՝ մտերմություններից նոր:  
Առավել ճշմարիտ է այն, որ ես նայեցի ճշմարտությանը  
Կասկածով եւ օտարի պես. բայց, հանուն ամենի, ինչ վերետում է,  
Այդ մոլորությունները տվեցին իմ սրտին մեկ այլ երիտասարդություն,  
Եւ վատագույն փորձություններն ապացուցեցին. դու իմ լավագույն սերն ես:  
Հիմա ամեն ինչ ավարտված է, ունեցիր այն, ինչը չի ունենա վերջ:  
Իմ ախորժակը ես այլեւս չեմ հղկելու  
Էլնոր փորձություններով՝ փորձելու հին ընկերոջը,  
Աստծուն սիրո մեջ, որին ես կապված եմ:  
Արդ, ընդունիր ինձ, դրախտից հետո իմ լավագույնը,  
Հենց քո մաքուր եւ ամենա-ամենա սիրող կուրծքը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

111



for my sake do you with Fortune chide,  
The guilty goddess of my harmful deeds,  
That did not better for my life provide  
Than public means which public manners breeds.  
Thence comes it that my name receives a brand,  
And almost thence my nature is subdued  
To what it works in, like the dyer's hand:  
Pity me then, and wish I were renewed,  
Whilst like a willing patient I will drink  
Potions of eisel 'gainst my strong infection;  
No bitterness that I will bitter think,  
Nor double penance to correct correction.  
Pity me then, dear friend, and I assure ye  
Even that your pity is enough to cure me.



Իմ տեղ դուք կշտամբեք Ճակատագրին,  
Մեղավորին իմ վատ արարքների,  
Որ միջոցներ տվեց տոսկ հանրային,  
Եւ հանրային բերեց զբաղմունքների:  
Հենց այստեղից են իմ անվան բծերը.  
Եւ բնությունն իմ՝ գործն է կլանել,  
Ինչպես որ ներկը՝ ներկողի ձեռքերը.  
Ինձ խղճացեք, եւ ցանկացեք փոխվել:  
Ես կխմեմ ինչպես հոժար հիվանդը  
Դեղեր թթու՝ ընդդեմ այս վարակի.  
Ես դառնությունը չեմ ասի թե՛ դառն է,  
Շտկածը կշտկեմ կրկնակի:

Միայն թե, թանկ ընկեր, ինձ խղճացեք,  
Ձեր գուրծն ինձ կբուժի, հավատացեք:

Ոհ, ինձ համար դուք Ճակատագրին կշտամբեք,  
Մեղավոր դիցուհուն իմ վատ արարքների,  
Որը ոչ մի էլավ բանով իմ կյանքը չապահովեց,  
Քան հանրային միջոցները, որոնք հանրային վարվելակերպ\* են ծնում:  
Այստեղից գալիս է այն, որ իմ անունը ստանում է դրոշմ,  
Եւ համարյա այստեղից իմ բնությունը կլանված է  
Նրանով, ինչի մեջ այն գործում է, ինչպես ներկարարի ձեռքը.  
Խղճացեք ինձ ուրեմն, եւ ցանկացեք ես նորանամ,  
Մինչդեռ ինչպես հոժարակամ հիվանդ ես կխմեմ  
Դեղեր քացախից՝ ընդդեմ իմ ծանր վարակի.  
Չի լինի դառնություն, որը ես դառնություն կհամարեմ,  
Ոչ էլ՝ կրկնակի պատիժ՝ շտկելու համար շտկվածը:  
Խղճացեք ինձ ուրեմն, թանկագին ընկեր եւ ես հավատո՞ւիացնում եմ ձեզ  
Նույնիսկ այդ ձեր խղճահարությունը բավարար է ինձ բուժելու համար:

\* Որոշ մեկնիչներ այս «հանրային միջոցների» եւ «հանրային վարվելակերպի» տակ տեսնում են դերասանական կամ թատերագրական «ցածր», «հանրային» մասնագիտության ակնարկ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

112



our love and pity doth th'impression fill  
Which vulgar scandal stamped upon my brow,  
For what care I who calls me well or ill,  
So you o'er-green my bad, my good allow?  
You are my All the world, and I must strive  
To know my shames and praises from your tongue;  
None else to me, nor I to none alive,  
That my steel'd sense or changes right or wrong.  
In so profound Abyss I throw all care  
Of others' voices, that my Adder's sense  
To critic and to flatterer stopped are.  
Mark how with my neglect I do dispense:  
    You are so strongly in my purpose bred  
    That all the world besides me thinks th'are dead.





Չեր սերն ու գույթը կլցնեն խարանը,  
Որ ճակատիս դրոշմվեց անկիրթ աղմկով,  
Քանզի ինչ փույթ, կասեն ինձ լավ թե՛ վատը,  
Թե վատն իմ կծաղկեք ձեր լավ խոսքով:  
Դուք իմ ամբողջ աշխարհն եք, եւ ձգտում եմ  
Ամոթն ու գովքը իմ ձեզնից լսել.  
Չկա էլ մեկը, ով կարողանում է,  
Իմ ճիշտն ու թյուրը պողպատված փոխել:  
Այլոք՝ քննող, քննող դատողությունը  
Եւ կարծիքներն Անդունդ եմ խոր նետում,  
Գոցում եմ իմ՝ Իժի լտղությունը:  
Տեսեք, ինչպես եմ դա ես բացատրում.  
Այնքան դուք խոր եք իմ մտքում դաջված,  
Որ ողջ աշխարհն է ինձ թվում մեռած:

Չեր սերն ու խղճահարությունը խարան են լցնում,  
Որը գոեհիկ աղմուկը դրոշմեց իմ ճակատին,  
Քանզի ինչ փույթ, ո՞վ է հիշատակում ինձ լավ կամ վատ,  
Եթե դուք վրածաղկեցնում եք իմ վատը, իմ լավը թույլատրում:  
Դուք իմ ամբողջ աշխարհն եք, եւ ես պետք է ձգտեմ  
Իմանալ իմ ամոթանքներն ու գովեստները ձեր լեզվից.  
Էլ ոչ ոք ինձ համար, ոչ ես՝ ոչ ոքու համար՝ չեմ ապրում,  
Որ իմ պողպատացած զգացողությունը կամ փոխի ճիշտ կամ սխալ\*:  
Այնքան խոր անդունդ եմ ես նետում ողջ հոգածությունը  
Այլոց ձայների մասին, որ իմ՝ իժի զգացողությունը  
Քննադատի եւ շողորորթի նկատմամբ արգելափակված են:  
Նկատեք, թե ինչով եմ իմ արհամարհանքը ես բացատրում.  
Դուք այնքան ուժեղ եք իմ նպատակներում տպավորված,  
Որ ամբողջ աշխարհը մնացած ինձ թվում է մեռած:

\* Խտաղը շարադասություն է:

SHAKE-SPEARES,

SONNETS.

113



Since I left you, mine eye is in my mind,  
And that which governs me to go about  
Doth part his function, and is partly blind,  
Seems seeing, but effectually is out;  
For it no form delivers to the heart  
Of bird, of flow'r, or shape, which it doth latch:  
Of his quick objects hath the mind no part;  
Nor his own vision holds what it doth catch:  
For if it see the rud'st or gentlest sight,  
The most sweet favour or deformed'st creature,  
The mountain, or the sea, the day, or. night,  
The crow, or dove, it shapes them to your feature.  
Incapable of more, replete with you,  
My most true mind thus maketh mine eye untrue.



Ինչ ձեզ թողել եմ, այքն իմ՝ իմ հոգում է.

Իսկ այն, որ շարժվելիս է ինձ օգնում  
Թողել է գործն իր ու մասամբ էլ կույր է.

Կարծես տեսնում է՝ ոչ գործնականում.

Չի ոչ մի ձեւ այն չի տանում սրտին՝  
Թռչնի, ծաղկի, մարմնի՝ որն այն կորզում է.

Դրանց դիտմանը չի օգնում հոգին.

Հայացքն էլ չի պահում այն, ինչ որսում է.

Չի այդ տեսածը նույր է, թե կոպիտ է,

Անուշագույն, թե գարշ մի արարած,

Գիշեր, թե՛ օր, լեռներ են, թե հովիտ է,

Նրանց տալիս է կերպը ձեր գտված:

Սահմանափակ՝ ձեզնով լեցուն ընդմիջտ՝

Իմ ճիշտ հոգին դարձնում է այքս անճիշտ:

Ինչ է ես թողեցի ձեզ, իմ այքն իմ հոգում է.

Իսկ այն, որ ուղղորդում է ինձ շարժվելիս

Թողել է իր գործառույթը եւ մասամբ կույր է.

Թվում է, տեսնում է, բայց գործնականում ոչ.

Քանզի այն ոչ մի ձեւ չի մատուցում սրտին՝

Թռչնի, ծաղկի, կամ մարմնի, որոնք այն կորզում է.

Դրա արագ առարկաներում հոգին չի մասնակցում.

Ոչ էլ իր սեփական տեսողությունն է պահում այն, ինչ որսում է.

Քանզի, տեսնում է այն կոպտագույն, թե նրբագեղագույն տեսարանը,

Ամենա քաղցր բարետես, թե ձեւատված արարածը,

Լեռը, թե՛ ծովը, օրը, թե՛ գիշերը,

Ազտավր, թե աղավնին, այն նրանց ձեւավորում է ձեր բնագծերով:

Անտարդունակ ավելիքին, լեցուն ձեզնով,

Իմ առավել ճիշտ հոգին այդպիսով դարձնում է իմ այքն անճիշտ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

114



Or whether doth my mind being crowned with you

Drink-up the monarch's plague, this flattery?

Or whether shall I say mine eye saith true,

And that your love taught it this Alchemy,

To make of monsters, and things indigest,

Such cherubins as your sweet self resemble,

Creating every bad a perfect best,

As fast as objects to his beams assemble?

O 'tis the first; 'tis flatt'ry in my seeing,

And my great mind most kingly drinks it up;

Mine eye well knows what with his gust is greeing,

And to his palate doth prepare the cup.

If it be poisoned, 'tis the lesser sin

That mine eye loves it and doth first begin.



Արոյո՞րք հոգիս ձեզնով թագադրված

Թոյնն արքայի՝ քծնանք է ճաշակել:

Արոյո՞րք ասեմ, որ այքս չի խաբված,

Եւ սերն է ձեր ալքիմիան այս տվել՝

Հրեշներից տձեւ պատրաստելու

Քերովբեներ, նման ձեր քաղցր անձին,

Վատից էլ կատարյալը կերտելու,

Երբ հայտնվում է ձեր սիրո լույսին:

Ոհ, առաջինն է. դա քծնանքն է իմ,

Հոգիս արքայաբար ընկում է այն.

Ալքիս հայտնի է, որն է հաճելին,

Եւ դա է մատուցում քիմքին միայն:

Եթե դա թույն է՝ մեղք է փոքրագույն,

Չի այքն իմ առաջինն է այն ընկում:

Կամ արոյո՞րք իմ հոգին թագադրված ձեզնով  
Ընկում է միապետի ժանտախտը, այս շողրքորթությունը:

Կամ արոյո՞րք ես ասեմ, որ իմ այքը ասում է ճիշտը,

Եւ այդ ձեր սերը տվորեցրեց իրեն այս ալքիմիան,

Պատրաստելու համար հրեշներից եւ քաներից անձեւ,

Ինչ-որ բերովբեներ, ձեր քաղցր կերպարին նման,

Դարձնելով ամեն վատը կատարյալ լավագույն,

Այնքան արագ, որքան առարկաները նրա ճառագայթներում են հավաքվում:

Ոհ, դա առաջինն է. դա շողրքորթությունն է իմ տեսողության մեջ,

Եւ իմ մեծ հոգին խիստ արքայաբար ընկում է այն.

Իմ այքը լավ գիտի, թե ինչն է նրա ճաշակին հաճելի,

Եւ իր քիմքին պատրաստում է գավաթը:

Եթե այն թունավորված է, ապա սա պակաս մեղք է,

Քանի որ իմ այքը սիրում է այն եւ առաջինն է սկսում:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

115



Whose lines that I before have writ do lie,  
Even those that said I could not love you dearer;  
Yet then my judgment knew no reason why  
My most full flame should afterwards burn clearer.  
But reckoning Time, whose millioned accidents  
Creep in 'twixt vows, and change decrees of kings,  
Tan sacred beauty, blunt the sharp'st intents,  
Divert strong minds to th'course of alt'ring things -  
Alas, why, fearing of Time's tyranny,  
Might I not then say 'Now I love you best',  
When I was certain o'er uncertainty,  
Crowning the present, doubting of the rest?  
Love is a babe: then might I not say so,  
To give full growth to that which still doth grow.



ստում են նախկինում գրված տողերս,  
Թե չեմ սիրի ես ձեզ ավելի վատ,  
Երբ դեռ անհայտ էին ինձ պատճառները,  
Թե սերս ինչո՞ւ պիտի պայծառանար:  
Ժամանակի անթիվ պատահարները  
Իսախտում են երդումներ արքաների,  
Իտղում գեղեցկություն, բթում իղձերը,  
Ծեղում ուղին ուժեղ հոգիների.  
Ավաղ, ինչո՞ւ՝ վախից ժամանակի,  
Ես չասեի. «Իմ սերն ուժեղագույնն է»,  
Երբ որ դա պարզ էր ինձ, որոշակի,  
Ներկան հաստատ, գալիքն՝ երկբայություն էր:  
Բայց սերը մանչ է, ու ստացվեց ոչ ճիշտ՝  
Կոչել հասուն այն, ինչ աճում է միշտ:

Այն տողերը, որոնք ես գրել եմ նախկինում, ստում են,  
Հատկապես նրանք, որոնք ասում են, ես չեմ կարող սիրել ձեզ էլուժեղ.  
Տակավին այնժամ իմ դատողությունը չգիտեր պատճառը, ինչու.  
Իմ առավել լիաուժ բոցը պետք է դրանից հետո վառվեր ավելի պայծառ:  
Բայց հաշվի առնելով ժամանակը, որի միլիոնավոր պատահականությունները  
Սողոսկում են երդումների մեջ ես փոխում հրամաններ թագավորների,  
Դաբաղում են սրբազան գեղեցկությունը, բթացնում սրագույն մտալրությունները,  
Ծեղում ուժեղ հոգիները դեպի ուղին փոփոխական բաների.  
Ավաղ, ինչո՞ւ՝ վախենալով ժամանակի բռնակալությունից,  
Չէի կարող ես այնժամ ասել. «Հիմա ես սիրում եմ քեզ ուժեղագույնս»,  
Երբ ես համոզված վեր էի անորոշությունից,  
Թագադրելով ներկան, կասկածելով մնացածի հաշվով:  
Մերը մանկիկ է. այդ պատճառով ես չէի կարող ասել այդպես,  
Տալ ամբողջական հասակ նրան, ինչը մշտապես աճում է:

SHAKE-SPEARES,

SONNETS.

116



Let me not to the marriage of true minds  
Admit impediments; love is not love  
Which alters when it alteration finds,  
Or bends with the remover to remove.  
O no, it is an ever-fixed mark  
That looks on tempests and is never shaken;  
It is the star to every wand'ring bark,  
Whose worth's unknown, although his heighth be taken.  
Love's not Time's fool, though rosy lips and cheeks  
Within his bending sickle's compass come;  
Love alters not with his brief hours and weeks,  
But bears it out even to the edge of doom.  
If this be error and upon me proved,  
I never writ, nor no man ever loved.





ողերք չասեն, արգելք կա աշխարհում  
Միրո համար. եւ սեր չէ այն զգացումը,  
Որ փոփոխվում է, փոփոխված կյանքում,  
Կամ էլ շեղող ուժից իսկույն շեղվում է:  
Ո՞հ ո՞չ, նշան է սերը մշտավատ,  
Որ փոթորիկների առջեւ հաստատ է.  
Այն աստղ է դեգերող նավի համար,  
Որի հայտնի է տեղն, արժեքն՝ անհայտ է:  
Ժամանակի հտալիտ այն չի դառնում,  
Թեեւ մերթ գերանդուց նրա խամբում է.  
Այն չի փոխվում մի կարճ ժամում, ամսում,  
Բայց օրհասի եզրին իսկ այն տոկում է:  
Թե ճիշտ չէ սա եւ ինձ կապացուցեք՝  
Մարդ չի սիրել եւ չեմ գրել երբեք:

Ինձ մի թողեք միության համար հավատարիմ հոգիների  
Թույլ տալ՝ խոչընդոտներ. սերը սեր չի,  
Որը փոխվում է, երբ այն փոփոխություն է գտնում,  
Կամ ծովում է հեռացիչի հետ հեռացվելով:  
Ո՞հ ո՞չ, դա ընդմիշտ սենեկված նշան է,  
Որը նայում է փոթորիկներին եւ չի սասանվում.  
Դա աստղ է յուրաքանչյուր թափառող նավակի համար,  
Որի արժեքն անհայտ է, թեկուզ դրա բարձրությունը չափվի:  
Սերը ժամանակի ծաղրածու չէ, թեեւ ալ շուրթերն ու թշերը  
Սեջն իր կեռ գերանդու տակ են հայտնվում.  
Սերը չի փոխվում դրա կարճ ժամերի եւ շաբաթների հետ,  
Բայց դիմանում է նույնիսկ եզրին ճակատագրի:  
Եթե սա սխալ է եւ ինձ դա ապացուցեն,  
Ես երբեք չեմ գրել, կամ ոչ մեկը երբեք չի սիրել:

\* Պարզ չէ, «թույլ տալ»-ը նշանակում է «ենթադրել խոչընդոտներ», թե՛ «առաջացնել խոչընդոտներ»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

117



Accuse me thus: that I have scanted all  
Wherein I should your great deserts repay,  
Forgot upon your dearest love to call,  
Whereto all bonds do tie me day by day;  
That I have frequent been with unknown minds  
And given to time your own dear-purchased right;  
That I have hoisted sail to all the winds  
Which should transport me farthest from your sight.  
Book both my wilfulness and errors down,  
And on just proof surmise accumulate;  
Bring me within the level of your frown,  
But shoot riot at me in your wakened hate;  
    Since my appeal says I did strive to prove  
    The constancy and virtue of your love.



Ինձ մեղադրեք. որ մոռացա ամենը  
Ինչով պիտի ձեր ձիրքը հատուցեմ,  
Եւ մոռացա, ձեր թանկագին մեծ սերը,  
Որին լրիվ կապված եմ ես արդէն.  
Որ ես այլոց հաճախ եմ տրամադրել  
Ձեզ պատկանող անգին սուղ ժամանակը.  
Որ այլեայլ քանով է ուղղորդվել  
Եւ ձեր աչքից կորչել է իմ նավակը:  
Նշեք եւ կամքն իմ կոր, եւ սխալները,  
Եւ փաստերին կասկած էլ հավելեք.  
Բերեք նշանոցին խոժոռ աչքերը,  
Սակայն ստեղծությամբ մի՛ կրակեք.  
Քանզի արարքներով իմ անվայել  
Ես զորությունն եմ ձեր սիրո փորձել:

Ինձ այսպես մեղադրեք. որ ես անտեսել եմ ամենը  
Ինչով ես պիտի ձեր մեծ արժանիքները հատուցեի,  
Մոռացել եմ ձեր թանկագին սերը կոչել,  
Որին բոլոր հարաբերությունները ինձ կապում են օրեցօր.  
Որ ես հաճախ եմ եղել անհայտ հոգիների հետ  
Եւ տվել ժամանակին՝ ձեր սեփական թանկ գնված իրավունքը.  
Որ ես բարձրացրել եմ առագաստը բոլոր քամիների համար,  
Որոնք կարող էին փոխադրել ինձ հեռագույնս ձեր տեսադաշտից:  
Գրի առեք եւ իմ կամակորոշությունը, եւ մտորությունները,  
Եւ ճիշտ ապացույցներին կռահումներ հավելեք.  
Բերեք ինձ նշանագծին ձեր խոժոռման,  
Բայց մի՛ կրակեք կատաղի ինձ վրա ձեր արթնացած ստեղծությամբ.  
Քանզի իմ բողոքն ասում է, ես ջանացել եմ ապացուցել  
Հաստատունությունն ու զորությունը ձեր սիրո:

SHAKE-SPEARES,

SONNETS.

118



Like as to make our appetites more keen  
With eager compounds we our palate urge,  
As to prevent our maladies unseen  
We sicken to shun sickness when we purge:  
Even so, being full of your ne'er-cloying sweetness,  
To bitter sauces did I frame my feeding,  
And, sick of welfare, found a kind of meetness  
To be diseased ere that there was true needing.  
Thus policy in love, t'anticipate  
The ills that were not, grew to faults assured,  
And brought to medicine a healthful state  
Which, rank of goodness, would by ill be cured.  
But thence I learn, and find the lesson true,  
Drugs poison him that so fell sick of you.



Ինչպես մեր ախորժակը սրելիս  
Մենք նուրբ կծվով մեր քիմքն ենք գրգռում,  
Ինչպես անտես ախտերը կանխելիս  
Մենք դառն ախտի դեմ դառն ենք ընդունում.  
Այդպես, լի ձեր չհագեցնող քաղցրով,  
Դառնով ես համեցի իմ ուտելիքը,  
Եւ սուկ բարօրությամբ տառապելով  
Հիվանդացա, մինչեւ կգար կարիքը:  
Միրո չեղած ախտի կանխման այս ոճը,  
Հանախ եզրափակվում է նրանով,  
Որ բժշկի բերվում է ողջ առողջը  
Եւ լի բարով՝ բուժվում է չարիքով:  
Սակայն դեղերը՝ դասն այս ընդունում եմ  
Ձեզնով հիվանդներին թունավորում եմ:

Ինչպես որ դարձնելու համար մեր ախորժակը ավելի սուր  
Կծու խառնուրդներով մենք մեր քիմքն ենք գրգռում,  
Ինչպես որ կանխելու համար մեր հիվանդությունները անտեսանելի  
Մենք դառնություն ենք ընդունում դառն ախտի դեմ, երբ մենք մաքրվում ենք.  
Ճիշտ այդպես, լի լինելով ձեր չհագեցնող քաղցրությամբ,  
Դառը խավարտներով եմ ես կազմել իմ սնունդը,  
Եւ, հիվանդ բարօրությամբ, գտել եմ մի տեսակ իմաստ  
Լինելու համար հիվանդ, մինչեւ որ կլիներ դրա իսկական կարիքը:  
Այսպիսի քաղաքականությունը սիրո մեջ՝ կանխելու  
Ախտերը, որոնք չկային, աճել է մինչեւ սխալներ երաշխավորված,  
Եւ բերել է բժշկությանը առողջ վիճակը  
Որը, փարթամացումից՝ բարիքից, կցանկանար չարիքով բուժվել:  
Բայց այդտեղից ես սովորում եմ եւ գտնում եմ դասը ճիշտ.  
Դեղերը թունավորում են նրան, ով այդքան դաժան հիվանդ է ձեզնով:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

119



What potions have I drank of Siren tears,  
Distilled from limbecks foul as hell within,  
Applying fears to hopes, and hopes to fears,  
Still losing when I saw myself to win!  
What wretched errors hath my heart committed,  
Whilst it hath thought itself so blessed never!  
How have mine eyes out of their spheres been fitted  
In the distraction of this madding fever!  
O benefit of ill! now I find true  
That better is by evil still made better,  
And ruined love when it is built anew  
Grows fairer than at first, more strong, far greater.  
So I return rebuked to my content,  
And gain by ill thrice more than I have spent.



Ինչ թուրմ եմ ես խմել Սիրահավքի  
Արտասուքից՝ կեղտոտ սարքում թորած,  
Վախն ածելով հույսին եւ հույս՝ վախին,  
Պարտվել միշտ, երբ ինձ զգում էի հաղթած:  
Այդ ինչ մեղքեր էր խեղճ գործում իմ սիրտս,  
Մինչ երջանիկ էր այն իրեն կարծում:  
Ինչ տենդ էր խելագար ախրում մարմինս,  
Երբ խորշերից աչքերս էին ելնում:  
Ոհ դու, օգուտ ցավի, հիմա տեսնում եմ,  
Որ չարը լավը կդարձնի էլ լավ,  
Եւ սերն ավեր, երբ վերակառուցվում է  
Աճում է ավելի գորեղ, չքնաղ:  
Այսպես սաստված դառնում եմ իմ սիրուն,  
Եւ եռակի՝ ցավի դիմաց շահում:

Ինչ թուրմեր եմ ես խմել Սիրահավքի արտասուքից,  
Թորած թորամաններում կեղտոտ, ինչպես դժոխքը ներսում,  
Կիրառելով վախերը հույսերին եւ հույսերը՝ վախերին,  
Մշտապես պարտվելով, երբ ես տեսնում էի ինքս ինձ հաղթած:  
Ինչ խղճով սխալներ էր իմ սիրտը գործում,  
Մինչ այն կարծում էր ինքն իրեն այնքան երջանիկ ինչպես երբեք:  
Ինչպես էին իմ աչքերը դուրս ցավի իրենց խոռոչներից  
Մոռացության մեջ այս խելագարեցնող տենդի:  
Ոհ, օգուտ ցավի, հիմա ես գտնում եմ ճիշտ,  
Որ ելլավը չարի միջոցով դառնում է էլլավ,  
Եւ ավերված սերը, երբ այն կառուցվում է նորից  
Աճում է էչքնաղ, քան առաջուց, ավելի ուժեղ, շատ ավելի էլմեծ:  
Այդպես ես վերադառնում եմ հանդիմանված իմ բավարարությանը,  
Եւ շահում եմ վնասի միջոցով եռապատիկ ավելին, քան ես ծախսել եմ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

120



What you were once unkind befriends me now,  
And for that sorrow which I then did feel  
Needs must I under my transgression bow,  
Unless my nerves were brass or hammered steel.  
For if you were by my unkindness shaken  
As I by yours, y'have passed a hell of time,  
And I, a tyrant, have no leisure taken  
To weigh how once I suffered in your crime.  
O that our night of woe might have rememb'ed  
My deepest sense, how hard true sorrow hits,  
And soon to you, as you to me then, tend'red  
The humble salve, which wounded bosoms fits!  
But that your trespass now becomes a fee;  
Mine ransoms yours, and yours must ransom me.





Որ դուք եղաք անգույթ, օգնեց ինձ արդ,  
Եւ այն վշտից, որը ես ճաշակեցի,  
Թե իմ ջղերն արույր չեն կամ պողպատ,  
Պիտի ճկվեմ մեղքից իմ զանցանքի:  
Չի թե ցնցեց ձեզ իմ արարքն անգույթ  
Ինչպես ձերն՝ ինձ, դժոխք եք դուք սպրեւ,  
Իսկ ես, չկամեցա՝ բիրտ անձ անվույթ՝  
Կշռել, որքան եմ ձեր մեղքից տուժել:  
Ոհ, թե գիշերը մեր վշտի հիշեր  
Որքան թախիծը խորն է հարվածում,  
Եւ ձեզ ապա՝ ինչպես դուք ինձ՝ բերեր  
Սի սպեղանի՝ որ ցավն է ամոքում:

Բայց ձեր զանցանքն այն արդ դարձավ վճար.  
Հատույց. ձերն իմ եւ իմը՝ ձեր համար:

Որ դուք մի անգամ եղաք անգույթ, օգնեց ինձ հիմա,  
Եւ այն վշտի պատճառով, որը ես այնժամ զգացի  
Պետք է ես տակն իմ զանցանքի ճկվեմ,  
Եթե միայն իմ կարողերը պղնձից կամ կոփածո պողպատից չեն:  
Քանզի, եթե դուք իմ անգթությունից ցնցված եք  
Ինչպես ես ձերից, դուք անցկացրած կլինեք դժոխային ժամանակ,  
Իսկ ես, բռնակալս, չբարեհաճեցի  
Կշռել, թե որքան մի անգամ ես տուժեցի ձեր հանցանքից:  
Ոհ, եթե մեր գիշերը վշտի կարողանար վերհիշել  
Իմ խորին զգացմունքը, թե որքան ծանր է իրական վիշտը հարվածում,  
Եւ արագորեն ձեզ՝ ինչպես դուք ինձ այնժամ՝ առաջարկել  
Համեստ սպեղանի, որը վիրավոր կրծքին հարմար է:  
Բայց այն ձեր հանցանքը հիմա դառնում է վճար.  
Իմը հատուցում է ձերը, եւ ձերը պետք է հատուցի իմը:

SHAKE-SPEARES,

SONNETS.

121



is better to be vile than vile esteemed,  
When not to be receives reproach of being,  
And the just pleasure lost, which is so deemed  
Not by our feeling but by others' seeing.  
For why should others' false adulterate eyes  
Give salutation to my sportive blood?  
Or on my frailties why are frailer spies,  
Which in their wills count bad what I think good?  
No, I am that I am, and they that level  
At my abuses reckon up their own;  
I may be straight though they themselves be bevel;  
By their rank thoughts my deeds must not be shown,  
Unless this general evil they maintain:  
All men are bad and in their badness reign.



Էլ լավ է ստոր լինել, քան համարվել,  
Երբ որ չեղած՝ ստանում ես կշտամբանք,  
Կարող է եւ արդար վայելքն անցնել,  
Երբ այդպիսին է այն այլոց կարծմամբ:  
Ինչո՞ւ պիտի այլոց լկտի աչքերը  
Ողջուն ուղղեն արյանը իմ կայտաս:  
Կամ թույլը լրտեսի թուլություններս՝  
Ում վատ է այն, ինչ ինձ համար՝ արդար:  
Ոչ, ե՛մ ես, այն ինչ ե՛մ, եւ թող հանկարծ  
Զվերագրեն ինձ սեփական մեղքերը.  
Գուցե ուղիղ եմ ես, նրանք՝ շեղված.  
Եւ պիղծ մտքով թող չդատեն գործերս,  
Թե չեն ասում. չարիք է ինչ, որ կա.  
Բոլորն են վատ եւ վատության արքա:

Էլ լավ է լինել ստոր, քան ստոր համարվել,  
Երբ չլինելով, ստանում ես կշտամբանք եղածի,  
Եւ արդար հաճույքը կորչում է, որն այդպես է կարծվում  
Ոչ թե մեր զգացմունքով, այլ ուրիշների հայացքով:  
Ինչո՞ւ պետք է այլոց կեղծ փչացած աչքերը  
Ողջունեն իմ կայտաս արյունը:  
Կամ իմ թուլությունների մասին, ինչո՞ւ են էլթույլերը լրտեսում,  
Ովքեր իրենց ցանկություններում համարում են վատ, ինչը ես կարծում եմ լավ:  
Ոչ, ես եմ, ինչ ես եմ, եւ նրանք, որ նշանի են առնում  
Իմ զանգանքները նկատի ունեն իրենց սեփականները.  
Եւ կարող եմ լինել ուղիղ, իսկ նրանք իրենք՝ լինեն շեղված.  
Ըստ նրանց այանդակ մտքերի իմ արարքները չպետք է ներկայացվեն,  
Եթե միայն այս ընդհանուր չարիքը նրանք չեն հաստատում.  
Բոլոր մարդիկ վատն են եւ իրենց վատությամբ թագավորում են:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

122



Why gift, thy tables, are within my brain  
Full charactered with lasting memory,  
Which shall above that idle rank remain  
Beyond all date, even to eternity;  
Or, at the least, so long as brain and heart  
Have faculty by nature to subsist,  
Till each to razed oblivion yield his part  
Of thee, thy record never can be missed.  
That poor retention could not so much hold,  
Nor need I tallies thy dear love to score;  
Therefore to give them from me was I bold,  
To trust those tables that receive thee more:  
    To keep an adjunct to remember thee  
    Were to import forgetfulness in me.



Ավերդ՝ քո մատյանն, իմ ուղեղում է  
Լրիվ հիշողությամբ տպավորված,  
Ու վեր պարապ նյութից այն մնալու է  
Տառից, թվից այն կողմ՝ հավերժացած.  
Կամ, գեթ, մինչև որ իմ ուղեղն ու սիրտը  
Բնությունից՝ կարող են դեռ ապրել,  
Եւ չեն հանձնի քեզ մոռացքի խոր գիրկը  
Քո գրառումը չի կարող կորչել:  
Իսկ այդ մատյանը չէր պահի շատ բան,  
Քո սերն էլ հիշելու պատճեն ինձ պետք չէ.  
Ուստի հանձնել հանդգնեցի ես այն:  
Վատահեղով գրքին, ուր դու անվերջ ես.  
Հնարք ինձ պետք չէ, որ հիշեմ ես քեզ,  
Կամ կստացվեր որ մոռացկոտ եմ ես:

Քո նվերը՝ քո մատյանը, մեջն է իմ ուղեղի  
Լրիվ տպավորված երկարատև հիշողությամբ,  
Որ վեր է այդ պարապ շարքից մնալու  
Այն կողմ բոլոր ամսաթվերից, նույնիսկ մինչև հավերժություն.  
Կամ, առնվազն, քանի դեռ ուղեղը եւ սիրտը  
Ունեն հնարավորություն՝ բնությունից՝ գոյություն ունենալու,  
Մինչ յուրաքանչյուրը ջնջված մոռացությանը կզիջի իր մասը  
Քո մասին, քո\* գրառումը չի կարող կորչել:  
Այդ աղքատիկ հիշարանը չէր կարող այնքան շատ պահել,  
Ոչ էլ ես կարիք ունեմ պատճենների՝ քո թանկագին սերը հաշվառելու.  
Ուստի տալ դրանք ես հանդգնեցի:  
Վատահեղու համար այն մատյանին, որը պարունակում է քեզ ավելի.  
Պահել նման հավելվածք հիշելու համար քեզ  
Կլիներ ընդունել մոռացկոտությունն իմ մեջ:

\* Մեկնաբաններն այստեղ հասկանում են «քո մասին», սակայն բնագրում պարզորոշ գրաված է «քո», այսինքն գրել է հենց նա, ով նվիրել է, եւ բանաստեղծը ստացել է գրառումներ արդեն իսկ պարունակող օրագիր (առնվազն՝ մասամբ, գուցե՝ ձոն), այլ ոչ թե դատարկ տետր. թեև որոշ մեկնաբաններ գտնում են, թե դա պարզ չէ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

123



No! Time, thou shalt not boast that I do change:  
Thy pyramids built up with newer might  
To me are nothing novel, nothing strange;  
They are but dressings of a former sight.  
Our dates are brief, and therefore we admire  
What thou dost foist upon us that is old,  
And rather make them born to our desire  
Than think that we before have heard them told.  
Thy registers and thee I both defy,  
Not wondering at the present, nor the past,  
For thy records, and what we see, doth lie,  
Made more or less by thy continual haste.  
This I do vow and this shall ever be:  
I will be true, despite thy scythe and thee.



Ո՛չ, ժամանակ, չստես, թե ես փոխվում եմ.  
Բուրգերդ, կառուցված մի նոր թափով  
Ըստ իս, ոչ նոր են, ոչ յուրահատուկ են.  
Նախկին կերպարն են՝ նոր հանդերձանքով:  
Մեր դարը կարճ է, ես, ուստի պաշտում ենք  
Այն հինը, որ դու մեզ ես հրամցնում,  
Եւ կընդունենք, որ այն գուտ նոր ծնունդ է,  
Քան թե, որ այն եղել է նախկինում:  
Թե քեզ, թե մատյաններդ ես մերժում եմ,  
Չի հիացնում անցյալը ու ներկան:  
Չի քո գրածն ու մեր տեսածը, սուտ են,  
Արված վազքում քո անընդհատական:  
Երդվում եմ գերանդուդ ընդդեմ եւ քեզ.  
Լինել արդար: Թող միշտ լինի այսպես:

Ո՛չ, ժամանակ, դու չես պարծենալու, որ ես փոխվում եմ.  
Քո բուրգերդ, կառուցված է՛նոր թափով  
Ըստ իս, ոչնչով նոր չեն, ոչնչով անսովոր չեն.  
Դրանք սուկ հագուստն են նախկին տեսքի:  
Մեր ժամկետները կարճ են, ես, ուստի մենք պաշտում ենք  
Ինչը դու մեզ ես հրամցնում, որը հին է,  
Եւ ավելի շուտ, կհամարենք, դրանք ծնված մեր զանկույթյամբ  
Քան մտածենք, որ մենք նախկինում լսած ենք դրանց պատմածը:  
Քո գրանցարաններին եւ քեզ ես մարտահրավեր եմ նետում,  
Չզարմանալով ոչ ներկայով, ոչ անցյալով:  
Քանզի քո գրառումները եւ այն, ինչ մենք տեսնում ենք, սուտ են,  
Արված ավել կամ պակաս քո շարունակական շտապողականությամբ:  
Այսպիսով եւ երդվում եմ, եւ դա միշտ կլինի.  
Ես արդար կլինեմ՝ չնայած քո գերանդուն ու քեզ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

124



If my dear love were but the child of state,  
It might for fortune's bastard be unfathered,  
As subject to time's love, or to time's hate,  
Weeds among weeds, or flowers with flowers gathered.  
No, it was builded far from accident;  
It suffers not in smiling pomp, nor falls  
Under the blow of thrall'd discontent,  
Whereto th'inviting time our fashion calls;  
It fears not policy, that Heretic,  
Which works on leases of short-numb'ed hours,  
But all alone stands hugely politic,  
That it nor grows with heat, nor drowns with show'rs.  
To this I witness call the fools of time,  
Which die for goodness, who have lived for crime.





Իմ սերը սոսկ գավակ չէ պետության,  
Ճակատագրի դրանկ՝ անհայր, անտուն,  
Թիրախ՝ ժամանակի սիրո, ատման,  
Մի խոտ՝ խոտում, ծաղիկ՝ ծաղիկներում:  
Ոչ, նա կերտվածք չէ մի դիպվածական.  
Կեղծ ժպիտից, բնավ, նա չի հուզվում  
Չի սասանվում հարվածներից ցասման,  
Ինչին որ ժամանակն է մեզ մղում.  
Այն չի սոսկում գործից քաղաքական,  
Այդ չերեսիկ կարճաժամկետ խաղից,  
Բայց ինքն է մի քաղաք հսկայական,  
Որ չի կախված շոգից, անձրեւներից:  
Կոչեմ վկա դարի հոպիտներին,  
Ապրած ի չարս, մեռած, արդ, ի բարին:

Եթե իմ թանկագին սերը լիներ, սոսկ գավակ պետության\*,  
Նա կարող էր, որպես ճակատագրի ապօրինի գավակ, անհայր լինել,  
Լինելով առարկա ժամանակի սիրո, կամ ժամանակի ատելության,  
Մոլախոտ՝ միջև մոլախոտերի, կամ ծաղիկ՝ ծաղիկների հետ հավաքված:  
Ոչ, այն կերտվել էր հեռու՝ պատահականությունից.  
Նա չի տառապում ոչ ժպտացող ցուցադրականությունից, ոչ անկում է  
Հարվածի տակ ստրկացնող ցասման,  
Ինչին հորդորող ժամանակը մեր գործելակերպն է կանչում\*\*.  
Այն չի վախենում քաղաքականությունից, այդ չերեսիկուսից,  
Որը գործում է վարձակալությունների վրա փոքրաթիվ ժամերի,  
Բայց բոլորովին միայնակ կանգնած է, որպես հսկայական քաղաքականություն,  
Որ այն չի աճում ջերմության հետ եւ չի խորտակվում տեղատարափ անձրեւներից:  
Առ այդ ես վկա եմ կանչում հոպիտներին ժամանակի,  
Որոնք մեռնում են հանուն բարության, ովքեր ապրել են հանուն հանցանքի:

\* «Պետության գավակ» (child of state) էին կոչվում հորը մինչև չափահասության հասնելը կորցրած ազնվագարն պատանիները, որոնք անցնում էին պետության հովանավորության տակ: Այս եզրույթի գործածումը գգալիորեն ներառում է հնչյակների հնարավոր հասցեատերերի շրջանակը:

\*\* Դժվար մեկնելի շարադասություն է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

125



ere't aught to me I bore the canopy,  
With my extern the outward honouring,  
Or laid great bases for eternity,  
Which proves more short than waste or ruining?  
Have I not seen dwellers on form and favour  
Lose all, and more, by paying too much rent,  
For compound sweet forgoing simple savour,  
Pitiful thrivers, in their gazing spent?  
No, let me be obsequious in thy heart,  
And take thou my oblation, poor but free,  
Which is not mixed with seconds, knows no art,  
But mutual render, only me for thee.

Hence, thou suborned informer! a true soul  
When most impeached stands least in thy control.



Ինձ ինչ կտար ամպհովանին կրելը,  
Յուցադրական հարգանքը երեսփս,  
Եւ կամ հավերժության հիմքեր դնելը,  
Որ կարճ է, ի վերջո, քայքայումից:  
Թե՛ չեմ տեսել. հանուն շահի ապրող՝  
Կորցրած ամբողջը, վճարած մեծ գին,  
Ճոխ քաղցրության դիմաց, եւ կյանք մսխող՝  
Դիտորդությամբ, մի հաջողակ չնչին:  
Ոչ, թույլ տուր հնազանդ լինել սրտիդ,  
Վերցրու ընծաս. աղքատ, սակայն հոժար,  
Որն անխառնուրդ է, անարվեստ, վճիտ,  
Տուրք փոխադարձ՝ լոկ ինձ՝ լոկ քեզ համար:  
Կորչիր, ծախու լրտես. արդար հոգուն  
Ամբաստանված, դու չես վերահսկում:

Արդո՞ք որեւէ բան ինձ կտար եթէ ես կրեի ամպհովանին,  
Իմ արտաքին ցուցադրական հարգանքի արտահայտությամբ,  
Կամ դնեի մեծ հիմքեր հավերժության համար,  
Որը ստացվում է ավելի կարճ, քան քայքայումը կամ կործանումը:  
Արդո՞ք ես չեմ տեսել. ապրողները հանուն ձեռի եւ օգուտի  
Կորցնում են ամբողջը եւ ավելին՝ վճարելով շատ մեծ վարձ,  
Ճոխ քաղցրության համար, հրաժարվելով պարզ համից՝  
Խղճուկ հաջողակներ, իրենց դիտորդության վրա վատնող:  
Ոչ, թույլ տուր ինձ լինել հնազանդ ըստ սրտին,  
Եւ վերցրու դու իմ ընծան. աղքատիկ, բայց ազատ,  
Որը խառնված չէ երկրորդ որակի հետ, չի ճանաչում արվեստ,  
Բայց՝ փոխադարձ տուրք է՝ միայն ինձ՝ քեզ համար:

Կորչիր, դու կաշառված լրտես. հավատարիմ հոգին  
Երբ առավելապես է մեղադրված, նվազապես է մնում ըստ հսկողության տակ:

SHAKE-SPEARES,

SONNETS.

126



thou my lovely boy, who in thy power  
Dost hold Time's fickle glass, his sickle, hour;  
Who hast by waning grown, and therein show'st  
Thy lovers withering as thy sweet self grow'st;  
If Nature (sovereign mistress over wrack),  
As thou goest onwards still will pluck thee back,  
She keeps thee to this purpose, that her skill  
May time disgrace, and wretched minutes kill.  
Yet fear her, O thou minion of her pleasure,  
She may detain, but not still keep, her treasure!  
Her audit (though delayed) answered must be,  
And her quietus is to render thee.

( )  
( )



Իմ սիրելի տղա, որ քո ձեռքում  
 Ժամանակի մանգաղն ես պինդ պահում.  
 Նվազելով աճում ես, ցույց տալով  
 Միրողներիդ թռչումները՝ քո աճով:  
 Թե Բնությունը (տերը քայքայման),  
 Քաշում է հետ՝ որպես քեզ պահապան,  
 Նա քեզ պահում է, որ իր հմտությամբ  
 Ժամանակին սաստի քո գոյությամբ:  
 Բայց մեկ է, սիրեցյալ իր, վախեցիր.  
 Միշտ չէ, որ նա պահում է գանձը իր:  
 Կգա հաշվեքննումը անկասկած,  
 Եւ նա քեզ կհանձնի՝ պարտքի դիմաց:  
 ( )  
 ( )

Մի, դու, իմ սիրելի տղա, որ ի գորու ես  
 Պահել Ժամանակի փոփոխական հայելին, իր մանգաղը, ժամը.  
 Որ նվազելով ես աճում, եւ դրանով ցույց տալիս  
 Քո սիրողների թռչումները՝ քո քաղցր սեփական աճի հետ:  
 Եթե Բնությունը (ինքնիշխան տիրուհին քայքայման նկատմամբ),  
 Երբ դու առաջ ես գնում, միշտ քաշում է քեզ հետ,  
 Նա քեզ պահում է այն նպատակով, որ իր հմտությունը  
 Կարողանա ժամանակին ամաչացնել եւ նենգ թուլեները սպանել:  
 Բայց մեկ է վախեցիր նրանից, Մի դու սիրեցյալ իր հաճույքի.  
 Նա կարող է կասել, բայց ոչ միշտ պահել իր գանձը:  
 Նրա հաշվեքննության (չնայած հետաձգված) պատասխանը պետք է կայանա,  
 Եւ իր պարտքի փակելը կլինի հանձնելը քեզ:  
 ( )  
 ( )\*

\* Այսպիսի փակագծերով է տպագրվել այս գործը 1609 թվականի հրատարակության  
 մեջ: Քանի որ այն պարունակում է ընդամենը 12 տող՝ զույգ-զույգ հանգավորված,  
 հրատարակիչը, թերեւս, կասկածել է, որ պիտի ես երկու տող լիներ: Մինչդեռ այս  
 վայրում բանաստեղծությունը իմաստային առումով միանգամայն ավարտուն է:  
 Պարզապես սա հնչյակ չէ եւ հնչյակների շարքում դրա հայտնվելը եւս մի ակնարկ է,  
 որ այս հրատարակությունը իրոք հեղինակային չէ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

127



In the old age black was not counted fair,  
Or if it were it bore not beauty's name;  
But now is black beauty's successive heir,  
And beauty slandered with a bastard shame:  
For since each hand hath put on Nature's power,  
Fairing the foul with art's false borrowed face,  
Sweet beauty hath no name, no holy bower,  
But is profaned, if not lives in disgrace.  
Therefore my mistress' brows are raven black,  
Her eyes so suited, and they mourners seem  
At such who not born fair no beauty lack,  
Sland'ring creation with a false esteem:  
Yet so they mourn, becoming of their woe,  
That every tongue says beauty should look so.



Յնում սեւ գույնը չէր կարծվում պերճանք է,  
Կամ, առնվազն՝ չէր կոչվում այդպես,  
Բայց այժմ սեւը գեղանքի ժառանգն է,  
Գեղանքն էլ անարգված՝ իսառնուրդ որպես.  
Ինչ ուժը Բնության ամենք ստացան,  
Պերճացնելով տգեղը արվեստով,  
Չունի էլ գեղն անուն ու կացարան.  
Պղծված է, կամ ապրում է ամոթով:  
Ուստի մուգ սեւ են տիրուհուս ունքերը,  
Եւ սուգ են իր աչքերն, ասես, պահում,  
Նրանց համար, ում հույան են հնարքները,  
Եւ կեղծիքով ստեղծվածն են անարգում.  
Բայց սուգն իրենց ողբին այնքան վայել է,  
Որ արդ ամենքն ասում են, սա է գեղը:

Հին ժամանակ սեւը չէր համարվում ջքնաղ,  
Կամ եթե դա այդպես էր, այն չէր կրում գեղեցկության անունը,  
Բայց այժմ սեւը գեղեցկության հաջորդող ժառանգն է,  
Իսկ գեղեցկությունը անարգված է իսառնածնության խայտառակությամբ.  
Չի այն ժամանակից, երբ յուրաքանչյուր ձեռք յուրացրել է Բնության գործությունը,  
Գեղեցկացնելով տգեղը արվեստի կեղծ փոխառված դեմքով,  
Քաղցր գեղեցկությունը չունի անուն, ոչ էլ սուրբ կացարան,  
Այլ պղծված է, կամ ապրում է անարգության մեջ:  
Հետեւապես իմ տիրուհու ունքերը ագռավի սեւության են,  
Ներա աչքերը դրանց համապատասխան են, եւ դրանք սգավոր են թվում  
Նրանց համար, ովքեր չեն ծնվել գեղեցիկ՝ չունեն գեղեցկության պակաս՝  
Նսենացնելով արարումը կեղծ մեծարանքով.  
Սակայն այնպես են իրենք սգում՝ վայել իրենց ողբին,  
Որ ամեն լեզու ասում է, գեղեցկությունը պետք է այդպիսի տեսք ունենա:

SHAKE-SPEARES,

SONNETS.

128



How oft, when thou, my music, music play'st,  
Upon that blessed wood whose motion sounds  
With thy sweet fingers, when thou gently sway'st  
The wiry concord that mine ear confounds,  
Do I envy those jacks that nimble leap  
To kiss the tender inward of thy hand,  
Whilst my poor lips, which should that harvest reap,  
At the wood's boldness by thee blushing stand!  
To be so tickled, they would change their state  
And situation with those dancing chips,  
O'er whom thy fingers walk with gentle gait,  
Making dead wood more blest than living lips.  
    Since saucy jacks so happy are in this,  
    Give them thy fingers, me thy lips to kiss.





Որքան հաճախ, իմ երգ, երբ նվագում ես,  
Այդ օրհնված փայտի վրա, հնչող՝  
Քո մատներով, երբ նրբորեն վարում ես  
Դաշնույթը լարերի, ականջ շոյող,  
Խանդում եմ ստեղներին, որ ժիր ցատկում են  
Համբուրելու նուրբ ավիր քո ձեռքի,  
Մինչ իմ շուրթերը, ձեռնունայն շիկնում են,  
Քաջությունից ինձ շրջանցած փայտի:  
Եւ շոյվելու համար, նրանք ձգտում են  
Տեղով փոխվել չոփերի հետ շարժուն,  
Որոնց վրա մատներդ մեղմ զբոսնում են,  
Փայտն անկենդան՝ երանելի դարձնում:  
Ձի երջանիկ են այդ խիզախ ստեղները,  
Մատներդ տուր իրենց, իսկ ինձ՝ շուրթերդ:

Որքան հաճախ, երբ դու, իմ երաժշտությունս, երաժշտություն ես նվագում,  
Այդ օրհնված փայտի վրա, որի շարժումը հնչում է  
Քո քաղցր մատների հետ, երբ դու նրբորեն կառավարում ես  
Լարերի դաշնույթին, որն իմ ականջն է ցնցում,  
Ես նախանձում եմ այդ ստեղներին, որ ժիր ցատկում են  
Համբուրելու քնքուշ ավիր քո ձեռքի,  
Մինչ իմ խեղճ շուրթերը, որ պետք է այդ բերքը հնձեն,  
Այդ փայտի համարձակությունից քո ներկայությամբ շիկնած են մնում:  
Լինելու համար այդքան շոյված, նրանք կփոխվեին իրենց դիրքով  
Եւ դերով այդ պարող չոփերի հետ,  
Որոնցով քո մատները զբոսնում են մեղմ քայլվածքով,  
Դարձնելով մեռած փայտը ավելի երանելի, քան կենդանի շուրթերը:  
Քանզի հանդուգն ստեղները այդքան երջանիկ են դրանում,  
Տուր նրանց քո մատները, ինձ՝ քո շուրթերը որ համբուրեն:

SHAKE-SPEARES,

SONNETS.

129



Uph'expense of spirit in a waste of shame  
Is lust in action, and till action, lust  
Is perjured, murd'rous, bloody, full of blame,  
Savage, extreme, rude, cruel, not to trust,  
Enjoyed no sooner but despised straight,  
Past reason hunted, and no sooner had  
Past reason hated as a swallowed bait  
On purpose laid to make the taker mad:  
Mad in pursuit, and in possession so,  
Had, having, and in quest to have, extreme,  
A bliss in proof, and proved, a very woe,  
Before, a joy proposed, behind, a dream.

All this the world well knows, yet none knows well  
To shun the heaven that leads men to this hell.



արփանքն իրագործվող՝ հոգու վատնում է  
Անապատի մեջ անդթի: Մինչ այդ  
Այն ուխտադրուժ, սպանիչ, արնոտ, փծուն է,  
Սաստիկ, մեղսոտ, կոպիտ, դաժան, վայրագ,  
Իսկ վայելած՝ իսկույն արհամարհվում է.  
Անմիտ որսում են, բայց արդեն բռնած՝  
Անմիտ ատում են, եւ խելագարվում են,  
Ասես բռնել են խայծ հատուկ դրված.  
Դառնում են խենթ ձգտող ու տիրացող,  
Տիրելն է, տիրանալն էլ ծայրագույն է.  
Սկզբում՝ հաճույք, հետո բայց՝ ցավ այրող,  
Նախքան այդ՝ խիղ, հետո՝ երազն անցնում է:  
Աշխարհը սա գիտի, բայց չի փորձել  
Դժոխք տանող դրախտն այս շրջանցել:

Ծախսում հոգու՝ անապատի մեջ անդթի  
Է տարփանքը գործողության մեջ, իսկ մինչ գործողությունը տարփանքը  
Ուխտադրուժ է, սպանիչ, արյունոտ, լի մեղքով,  
Վայրենի, ծայրահեղ, կոպիտ, դաժան, ոչ վստահելի.  
Վայելած՝ շատ շուտ վերածվում է արհամարհանքի,  
Անմտորեն որսի են ելնում, իսկ հենց ունենում են  
Անմտորեն ատում են ինչպես կոպ տված խայծը  
Հատուկ դրված, դարձնելու համար վերցնողին խելագար.  
Խելագար՝ ձգտողին, եւ տիրացածին՝ նույնպես,  
Ունենալը, ունենումը եւ փնտրումն ունենալու, ծայրագույն է.  
Երանություն է ճաշակելը, իսկ ճաշակած՝ իսկական ցավ է,  
Նախապես՝ ուրախության խոստում, հետո՝ երազ:  
Այս ամենը աշխարհը լավ գիտի, բայց ոչ մեկը չգիտի լավ  
Խոսափել դրախտից, որը տանում է մարդկանց դեպի այս դժոխքը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

130



My mistress' eyes are nothing like the sun;  
Coral is far more red than her lips' red;  
If snow be white; why then her breasts are dun;  
If hairs be wires, black wires grow on her head.  
I have seen roses damasked, red and white,  
But no such roses see I in her cheeks,  
And in some perfumes is there more delight  
Than in the breath that from my mistress reeks.  
I love to hear her speak, yet well I know  
That music hath a far more pleasing sound;  
I grant I never saw a goddess go -  
My mistress when she walks treads on the ground.  
And yet, by heaven, I think my love as rare  
As any she belied with false compare.



Այքերն իմ տիրուհու արեգակներ չեն.

Մարջանն է ալ, քան իր կարմիր շուրթերը.

Սպիտակ է ձյունն, իսկ իր կրծքերն աշխետ են.

Թե մազը լար է, իր մոտ սեւ լարեր են:

Տեսել եմ ես վարդեր՝ կարմիր, սպիտակ,

Բայց չեմ տեսնում վարդեր իր այտերին,

Եւ օծանելիքներ կան անուշակ,

Բայց ոչ նման նրա շնչի հոտին:

Միրում եմ խոսքը իր, բայց ես գիտեմ,

Որ մեղեդի չէ այն ամենելին.

Ես դիցուհու քայլեր չեմ տեսել՝

Իմ տիրուհին դոփում է հատակին:

Բայց ոչ պակաս է պերճ նե, անկասկած,

Քան այն կանայք, որ կեղծ են բաղդատված:

Իմ տիրուհու աչքերը բոլորովին նման չեն արեւին.

Մարջանը շատ ավելի կարմիր է, քան իր շուրթերի կարմիրը.

Եթե ձյունը սպիտակ է. ինչու ապա ներա կրծքերը գորշ են.

Եթե մազերը լարեր են, սեւ լարեր կան ներա գլխին:

Ես տեսել եմ վարդեր դամասկյան, կարմիր եւ սպիտակ,

Բայց ոչ մի նման վարդ չեմ եւ տեսնում ներա այտերին,

Եւ որոշ օծանելիքներում կա ավելի դուրեկանություն

Քան շնչառության մեջ, որը գալիս է իմ սիրուհու գորրշիացումներից:

Ես սիրում եմ լսել ներա խոսքը, բայց լավ ես գիտեմ,

Որ երաժշտությունը ունի շատ ավելի հաճելի ձայն.

Ես ընդունում եմ եւ չեմ տեսել դիցուհու քայլեր՝

Իմ տիրուհին, երբ նե քայլում է դոփում է գետնին:

Եւ միեւնոյն է, երկինքը վկա, եւ կարծում եմ իմ սերը այնքան բացառիկ է

Որքան որեւէ նե զրպարտված կեղծ համեմատություններով:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

131



Thou art as tyrannous, so as thou art,  
As those whose beauties proudly make them cruel;  
For well thou know'st to my dear dotting heart  
Thou art the fairest and most precious jewel.  
Yet, in good faith, some say that thee behold  
Thy face hath not the power to make love groan:  
To say they err, I dare not be so bold,  
Although I swear it to myself alone.  
And, to be sure that is not false I swear,  
A thousand groans but thinking on thy face  
One on another's neck do witness bear  
Thy black is fairest in my judgement's place.  
In nothing art thou black save in thy deeds,  
And thence this slander as I think proceeds.



ու բռնակալ ես, ինչպիսին որ եմ,  
Ինչպես նրանք, պերճանքը ում դաժան է.  
Քանզի սրտիս համար՝ դու լավ գիտես՝  
Չքնադագույն ես թանկագույն շողակն ես:  
Բայց հավատա, քեզ տեսնողներն ասում են,  
Որ դեմքդ չի ծնում սիրո հառաչ.  
Չեմ հանդգնում ասել, թե սխալվում են,  
Թեեւ կերդվեմ առ դա ինքս իմ առաջ:  
Որ համոզվեմ, թե կեղծ չէ իմ երդումը,  
Հազար հառաչ, հենց դեմքն եմ քո հիշում,  
Հաջորդաբար գալիս ու վկայում են.  
Քո սեն է լույսը իմ դատող մտքում:  
Ո՛չ սեւ չես դու, այլ լոկ քո արարքները,  
Եւ այստեղից են չարախոսանքները:

Դու այնքան բռնակալ ես, այնպիսին, ինչպիսին դու ես\*,  
Ինչպես նրանք, ում բարեմասնությունները հպարտորեն դարձնում են նրանց դաժան.  
Քանզի լավ դու գիտես, իմ թանկագին ոգետրված սրտի համար  
Դու չքնադագույն ես ամենաթանկագին ակն ես:  
Այնուհանդերձ, հավատա, ոմանք ասում են, որ քեզ տեսնում են,  
Քո դեմքը չունի զորություն հարուցելու սիրո հառաչանք.  
Ասել, նրանք սխալվում են, ես չեմ հանդգնում լինել այդքան համարձակ,  
Թեեւ ես երդվում եմ դրանում ինքս ինձ միայն:  
Եւ, համոզվելու համար, որ կեղծ չէ երդումս,  
Հազարավոր հառաչանք, հենց մտածում ես քո դեմքի մասին,  
Սեկը մյուսի ետեւից վկայություն են բերում.  
Քո սեւը լուսավորագույնն է իմ դատողության մեջ:  
Ո՛չնչով չես դու սեւ, բացի քո արարքներից,  
Եւ այստեղից այս չարախոսությունը, ինչպես ես կարծում եմ, բխում է:

\* Թերեւս, հղում նախորդ հնչյակին, ուր ներկայացված նե ամենեւին էլ գեղեցիկ չէ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

132



Thine eyes I love, and they, as pitying me,  
Knowing thy heart torments me with disdain,  
Have put on black, and loving mourners be,  
Looking with pretty ruth upon my pain.  
And truly not the morning sun of heaven  
Better becomes the grey cheeks of the east,  
Nor that full star that ushers in the even  
Doth half that glory to the sober west,  
As those two mourning eyes become thy face.  
O let it then as well beseem thy heart  
To mourn for me, since mourning doth thee grace,  
And suit thy pity like in every part.  
Then will I swear beauty herself is black,  
And all they foul that thy complexion lack.





Այքերդ եմ սիրում. ինձ խղճալով,  
Որ սիրտդ ինձ քամահրանքով տանջում է,  
Հագել են սեւ եւ մեղմ կարեկցանքով,  
Ցավիս, ասես, սգավորներ՝ նայում են:  
Եւ իսկապէս, արեւը վաղորդյան  
Չի լավացնում այտերն արեւեքի,  
Եւ աստղը վառ, ծագող երեկոյան,  
Այնքան փառք չի տալիս արեւմուտքին.  
Որքան դեմքիդ այդ սգացող այքերը:  
Ոհ, թող այդժամ սրտիդ վայել լինի  
Սգալ ինձ, զի քեզ սուգն է զարդաբերը,  
Եւ կարեկցանքդ նույն կերպ հարդարի:  
Այդժամ կերդվեմ. հենց սեն է գեղոյթյունը.  
Նրանք են գեշ, ուլքեր չունեն քո գոյնը:

Քո այքերը ես սիրում եմ, եւ նրանք, ասես խղճալով ինձ,  
Իմանալով, քո սիրտը տանջում է ինձ արհամարհանքով,  
Հագել են սեւ, եւ սիրող սգավորների պես,  
Նայում են հմայիչ կարեկցանքով իմ ցավին:  
Եւ իսկապէս, աստվոտյան արեւը երկնքի  
Էլլավ չի դարձնում մոխրագոյն այտերը արեւեքի,  
Եւ այդ պայծառ աստղը, որն ազդարարում է երեկոն,  
Չի տալիս կենսն այդ փառքի խաղաղ արեւմուտքին.  
Որքան այդ երկու սգացող այքերը դարձնում են քո դեմքը:  
Ոհ, թող որ այդժամ նույն կերպ վայելի քո սրտին  
Սգալ ինձ համար, քանզի սուգը զարդարում է քեզ,  
Եւ հագցրու քո կարեկցանքը ինչպէս քո բոլոր մասերը:  
Այդժամ ես կերդվեմ, գեղեցկոյթյունն ինքը սեւ է,  
Եւ բոլոր նրանք զզվելի են, ուլքեր քո գոյնը չունեն:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

133



Beshrew that heart that makes my heart to groan  
For that deep wound it gives my friend and me!  
It's not enough to torture me alone,  
But slave to slavery my sweet'st friend must be?  
Me from myself thy cruel eye hath taken,  
And my next self thou harder hast engrossed:  
Of him, myself, and thee, I am forsaken,  
A torment thrice threefold thus to be crossed.  
Prison my heart in thy steel bosom's ward,  
But then my friend's heart let my poor heart bail;  
Whoe'er keeps me, let my heart be his guard,  
Thou canst not then use rigor in my jail.  
And yet thou wilt; for I, being pent in thee,  
Perforce am thine, and all that is in me.



Անեծք սրտին, որն իմ սրտին ստիպում է

Տանջվել ինձ հասցրած վերքից դժնի:

Եւ բավ չէր, որ լոկ ինձ նա չարչարում էր,

Ստրուկ ստրկության ընկերս էլ պիտ լինի:

Դաժան քո աչքը ինձ վերցրեց ինձնից,

Էլ խիստ դու մյուս իմ եսն ես կլանել.

Չրկված եմ նրանից, ինձնից, քեզնից:

Ցավն եռակի այսպես է պետք անցնել.

Բանտիր հոգիս կրծքիդ պողպատ խցում,

Թող սիրտն իմ ընկերոջ այն ետ գնի.

Դու չես կարող դաժան վարվել բանտում,

Ձի սիրտն իր պահապանն իմ կլինի:

Բայց կվարվես. քանզի փակված քո մեջ,

Ես քոնն եմ եւ ամենն, ինչ կա իմ մեջ:

Անիծվի այն սիրտը, որը ստիպում է սրտիս հատաչել

Այդ խորը վերքի համար, որ այն հասցնում է իմ ընկերոջն ու ինձ:

Բավական չէ տանջել ինձ միայն,

Բայց ստրուկ ստրկության իմ քաղցր ընկերը պետք է լինի:

Ինձ ինձանից քո դաժան աչքը վերցրեց,

Եւ իմ հաջորդ եսը դու ավելի խիստ ես կլանել.

Նրանից, ինձնից եւ քեզնից ես զրկված եմ,

Տանջանք երիցս եռակի այսպես պետք է անցնել:

Բանտարկիր իմ սիրտը քո կրծքի պողպատե խցում,

Բայց այդժամ իմ ընկերոջ սիրտը թող իմ խեղճ սիրտը ետ գնի.

Ով էլ պահի ինձ, թող իմ սիրտը լինի նրա պահապանը\*,

Դու չես կարողանա այդժամ վարվել դաժան իմ բանտում:

Եւ այնուհանդերձ դու կվարվես. քանզի ես՝ լինելով փակված քո մեջ,

Ակամս քոնն եմ, եւ ամենը ինչ իմ մեջ է:

\* Խրթին արամաբանություն է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

134



So, now I have confess'd that he is thine,  
And I myself am mortgaged to thy will,  
Myself I'll forfeit, so that other mine  
Thou wilt restore, to be my comfort still:  
But thou wilt not, nor he will not be free,  
For thou art covetous and he is kind;  
He learned but surety-like to write for me  
Under that bond that him as fast doth bind.  
The statute of thy beauty thou wilt take,  
Thou usurer, that put'st forth all to use,  
And sue a friend came debtor for my sake;  
So him I lose through my unkind abuse.

Him have I lost; thou hast both him and me:  
He pays the whole, and yet am I not free.



Իմնա ընդունեցի, որ քոնն է նա,  
Եւ ինքս էլ պատանդ եմ քո կամքի.  
Ինձնից հրաժարվեմ, որ ինձ դառնա  
Մյուս եսն իմ, ու ինձ միշտ միփթարի.  
Բայց չես ուզի, ազատ նա չի լինի,  
Քանզի ազահ ես դու, իսկ նա՝ անկեղծ.  
Որպես իմ երաշխորդ կնքեր պիտի  
Հանձնատագիրը, որ նրան կապեց:  
Գեղեցկությունդ գործածում ես արդ,  
Դու, վաշխատու, միայն օգուտ քաղող,  
Դատում ես ընկերոջս՝ ինձ համար.  
Եւ ես նրան կորցնում եմ իմ մեղքով:  
Կորցրել եմ. եւ իրեն, եւ ինձ ունես.  
Նա վճարում է, բայց ազատ չեմ ես:

Այսպիսով, հիմա ես ընդունեցի, որ նա քոնն է,  
Եւ ես ինքս պատանդ եմ քո կամքի,  
Ինձնից ես կհրաժարվեմ, որպեսզի մյուս եսս  
Դու վերադարձնես, լինելու իմ միփթարանքը միշտ.  
Բայց դու չես անի, եւ նա չի լինի ազատ,  
Քանզի դու ազահ ես, իսկ նա բարի է.  
Նա կարողացավ, բայց երաշխավոր որպես, ստորագրվելու իմ փոխարեն  
Պարտավորության տակ, որը նրան նույնքան արագ կապեց:  
Կարգավիճակը քո գեղեցկության դու գործածում ես,  
Դու, վաշխատու, որ ներդնում է ամեն ինչ օգուտի համար,  
Եւ դատի ես հանձնում մի ընկերոջ, որ պարտապան դարձավ ինձ համար.  
Ուստի նրան ես կորցնում եմ ինձ անբարեխիղճ չարաշահման պատճառով:  
Նրան կորցրել եմ. դու ունես եւ իրեն, եւ ինձ.  
Նա վճարում է ամբողջը, եւ սակայն ես ազատ չեմ:

\* Խրթին արամաբանություն է:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

135



Whoever hath her wish, thou hast thy *Will*,  
And *Will* to boot, and *Will* in overplus;  
More than enough am I that vex thee still,  
To thy sweet will making addition thus.  
Wilt thou, whose will is large and spacious,  
Not once vouchsafe to hide my will in thine?  
Shall will in others seem right gracious,  
And in my will no fair acceptance shine?  
The sea, all water, yet receives rain still,  
And in abundance addeth to his store;  
So thou being rich in *Will*, add to thy *Will*  
One will of mine, to make thy large *Will* more.  
Let no unkind, no fair beseechers kill;  
Think all but one, and me in that one *Will*.



Ինչ կամք էլ նե ունի, բայց դու՝ քո *Իհլլը*,  
 Ու ես՝ *Իհլլ*, եւ *Իհլլ*՝ ի հավելում.  
 Ավել քան բավ եմ ես, իմ սեր, որ իղձը՝  
 Քո քաղցր իղձն եմ միշտ ես լրացնում:  
 Եւ միթե դու, ում իղձը մեծ, անծայր է.  
 Չէիր պահի իմ իղձը քո իղձում:  
 Ինչո՞ւ այդ իղձն այլոց, թվում է, քաղցր է,  
 Իսկ իղձը իմ այնքան չես հավանում:  
 Ջրով լի ծովը, կընդունի անձրեւը,  
 Կհավելի նոր ջուր իր պաշարին.  
 Եւ դու՝ *Իհլլով* հարուստ, լրիր քո *Իհլլը*,  
 Դարձրու իղձով իմ, *Իհլլդ* ավելին:  
 Թող չարը չսպանի հայցվոր բարի.  
 Բոլորն են մեկ, եւ ես մեջն այդ *Իհլլի*:

Ով էլ ունենա ներա ցանկությունը, դու ունես քո Իհլլը\*,  
 Եւ Իհլլ՝ դրանից բացի, եւ Իհլլ՝ ի հավելում.  
 Ավելի քան բավական եմ ես, որ սիրահետում եմ քեզ միշտ,  
 Քո քաղցր իղձին անելու հավելում այսպիսով:  
 Միթե դու, ում իղձը մեծ ու ընդարձակ է.  
 Ոչ մի անգամ չես բարեհաճի թաքցնել իմ իղձը բռնի մեջ:  
 Ինչո՞ւ իղձը մյուսների մեջ թվում է ուղիղ հաճելի,  
 Իսկ իմ իղձը բարի հավանությամբ չի լուսավորված:  
 Ծովը, լի ջրով, տակավին ընդունում է անձրեւը միշտ,  
 Եւ լիությամբ հանդերձ հավելում է իր պաշարին.  
 Այդպես էլ դու՝ Իհլլով հարուստ, հավելիր քո Իհլլին  
 Սեկ իղձը իմ, դարձնելու համար քո մեծ Իհլլը ավելին:  
 Թող չարությունը ոչ մի բարի հայցվորի չսպանի.  
 Սոսա՛ծիր. բոլորը սուկ մեկն են, եւ ես մեջն այդ մեկ Իհլլի:

\* Այս, հաջորդ եւ 143 հնչյակները կառուցված են «Իհլլիսան» (William) անվան «Իհլլ» (Will) նվազականի հետ կապված բառախառնի վրա: Այն համահունչ է եւ/կամ նույնարմատ է մի շարք բառերի հետ, այն է. «լինել» բայի ապառնիս, ինչպես նաեւ «կամք», «ազատություն», «իղձ», «տարփանք», «սեռական անդամ»: Ուստի այս հնչյակները գրեթե անթարգմանելի են: Չափածո թարգմանության մեջ փորձ է արվել առավելագույնս մոտենալ բնագրի բազմիմաստությանը, օգտագործելով «իղձ» բառի հնչյունային նմանությունը will-ին (թերեւս՝ նաեւ ծագումնաբանական կապը):

SHAKE-SPEARES,

SONNETS.

136



If thy soul check thee that I come so near,  
Swear to thy blind soul that I was thy *Will*,  
And will thy soul knows is admitted there;  
Thus far for love, my love-suit, sweet, fulfil.  
*Will* will fulfil the treasure of thy love,  
Ay, fill it full with wills, and my will one.  
In things of great receipt with ease we prove  
Among a number one is reckoned none:  
Then in the number let me pass untold,  
Though in thy store's account I one must be;  
For nothing hold me, so it please thee hold  
That nothing me, a something sweet to thee.

Make but my name thy love, and love that still,  
And then thou lovest me for my name is *Will*.





Մթե հոգիդ ասի, թե շատ եմ մոտ,  
Երդվիր քո կույր հոգուն, որ ես քո *Իհլլն* եմ,  
Ես Իդձ եմ, նա գիտի, եւ իղձ կրքոտ.  
Մարմնավորիք, իմ սեր, սիրո տեսիլս:  
Միրո քո գանձը *Իհլլը* կիրի,  
Իդձեր անդ կլցնի, եւ մեկն էլ՝ իմը:  
Մենք լավ գիտենք. շարքում մեծ թվերի  
Մեկ թիվը աննշան է ու չնչին է.  
Ուստի թող ես անցնեմ, եւ մի հաշվիր,  
Թեկուզ քո պահեստում ինձ մեկ գրես.  
Ոչնչի տեղ հաշվիր, միայն՝ հաշվիր,  
Որ ես, ոչինչս, հաճելի եմ քեզ:  
Միրիր անունս, որ սիրես եւ ինձ.  
Քանզի անունս *Իհլլ* է, այն է՝ Իդձ:

Եթե քո հոգին կշտամբի քեզ, որ ես եկել եմ այդքան մոտ,  
Երդվիր քո կույր հոգուն, որ ես քո Իհլլն\* եմ,  
Իսկ իղձը, քո հոգին գիտի, ընդունված է.  
Մինչ այդ, հանուն սիրո, իմ սիրո հայցը, քաղցրս, կատարիր:  
Իլլը կրթացնի գանձարանը քո սիրո,  
Այդ, կլցնի այն լի ցանկություններով, եւ իմը կլինի մեկը:  
Բաներում մեծ ստանալիքի հեշտությամբ մենք ապացուցում ենք.  
Թվերի միջեւ մեկը չի հաշվվում ոչինչ.  
Ուստի այդ թվաբանական թող ինձ անցնել չհաշվարկված,  
Թեեւ քո պահեստի հաշվում ես մեկը պետք է լինեմ.  
Ոչնչի տեղ հաշվիր ինձ, միայն խնդրում եմ, հաշվիր,  
Որ ոչինչս ես, մի քաղցր բան եմ քեզ համար:  
Դարձրու սուկ իմ անունը քո սիրելիին, եւ սիրիր այն միշտ,  
Եւ այդժամ դու կսիրես ինձ, քանզի իմ անունն է Իլլ:

\* Տե՛ս նախորդ հնչյակի ծանոթագրությունը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

137



Thou blind fool, Love, what dost thou to mine eyes,  
That they behold, and see not what they see?  
They know what beauty is, see where it lies,  
Yet what the best is take the worst to be.  
If eyes, corrupt by over-partial looks,  
Be anchored in the bay where all men ride,  
Why of eyes' falsehood hast thou forged hooks,  
Whereto the judgement of my heart is tied?  
Why should my heart think that a several plot,  
Which my heart knows the wide world's common place?  
Or mine eyes seeing this, say this is not,  
To put fair truth upon so foul a face?  
In things right true my heart and eyes have erred,  
And to this false plague are they now transferred.



Պոյր Սեր, ինչ արեցիր իմ աչքերին,  
Որ չեն տեսնում այն, ինչ նրանք տեսնում են.  
Գիտեն, թե որն է գեղը, բայց ընդամին  
Գտնում են լավագույնը՝ վատագույն է:  
Թե աչքերին, փչացած այդ հայացքից,  
Տրված է խարսխավել ծոցում մի բաց,  
Ինչո՞ւ ես կեռ կոփել այդ կեղծիքից,  
Որից սրտիս կարծիքն է ամրացված:  
Ինչո՞ւ պիտ սիրտս փակ գտնի տարածքը,  
Որն ընդհանուր տիրույթ է աշխարհի:  
Կամ իմ աչքերը թաքցնեն տեսածը,  
Ծածկեն ճշտով երես մի ամեհի:  
Թե որն է ճիշտ՝ սխալվել են աչքս ու սիրտը,  
Եւ արդ տիրում է նրանցում կեղծ դիրտը:

Դու կոյր հիմար, Սեր, ինչ ես արել դու իմ աչքերի հետ,  
Որ նրանք նայում են, եւ տեսնում են ոչ այն, ինչ նրանք տեսնում են.  
Նրանք գիտեն, թե ինչ է գեղեցկությունը, տեսնում են որտեղ է այն գտնվում  
Բայց տակավին լավագույնը ընդունում են որպես վատագույնը:  
Եթե աչքերին, փչացված գեր-կողմնակալ հայացքներով,  
Տրված է լինել խարսխված ծոցում, ուր բոլոր մարդիկ են լողում,  
Ինչո՞ւ աչքերի կեղծիքից դու կոփել ես կեռեր,  
Որոնցից դատողությունն է իմ սրտի կապված:  
Ինչո՞ւ պետք է իմ սիրտը ընկալի, որպես առանձին տեղամաս,  
Որն, իմ սիրտը գիտի, ամբողջ աշխարհի ընդհանուր տարածք է:  
Կամ իմ աչքերը տեսնելով դա, ասեն, այդպես չէ,  
Գնելու համար չքնաղ արդարություն՝ վրան այսքան այլանդակ դեմքի:  
Բաներում ուղիղ-ճիշտ իմ սիրտը եւ աչքերը սխալվել են,  
Եւ այս կեղծի աղետին դրանք այժմ փոխանցված են:

SHAKE-SPEARES,

SONNETS.

138



When my love swears that she is made of truth,  
I do believe her, though I know she lies,  
That she might think me some untutored youth,  
Unlearned in the world's false subtleties.  
Thus vainly thinking that she thinks me young,  
Although she knows my days are past the best,  
Simply I credit her false-speaking tongue:  
On both sides thus is simple truth suppressed.  
But wherefore says she not she is unjust?  
And wherefore say not I that I am old?  
O, love's best habit is in seeming trust,  
And age in love loves not t'have years told.  
Therefore I lie with her, and she with me,  
And in our faults by lies we flattered be.



ըրդվում է նե, թե պարզ է, անաղարտ,  
Ես հավատում եմ, բայց գիտեմ. ստում է,  
Որ նե կարծում է ինձ երիտասարդ,  
Չճանաչած կյանքի կեղծիքն ու թույնը:  
Ինձ հաճելի է հույս նման տաճել,  
Մինչ նա գիտի, որ կյանքն իմ անցյալում է,  
Իր կեղծ լեզվին ուզում եմ վստահել.  
Երկու կողմից էլ ճիշտը քողարկվում է:  
Ինչո՞ւ է նե ստում, թե անաղարտ է:  
Ինչո՞ւ եմ ես տարիքս թաքցնում:  
Միրո հանդերձը ձեռական հավատն է,  
Իսկ տարեցին տարիքն է խանգարում:  
Ուստի նե՝ ինձ եւ ես՝ ներան ստում ենք,  
Եւ մեր արատների ստով շոյվում ենք:

Երբ իմ սերը երդվում է, որ նե պատրաստված է հավատարմությունից,  
Ես հավատում եմ ներան, թեեւ ես գիտեմ, նե ստում է,  
Որ նե գուցե համարում է ինձ մի անուս երիտասարդ,  
Չճանաչած աշխարհի կեղծիքի նրբությունները:  
Այսպես, մնափառորեն համարելով, որ նե համարում է ինձ երիտասարդ,  
Չնայած նե գիտի, որ իմ լավագույն օրերը անցել են,  
Պարզապես ես վստահում եմ ներա կեղծախոս լեզվին.  
Երկու կողմերից այդպիսով պարզ ճշմարտությունը քողարկվում է:  
Բայց ինչո՞ւ նե չի ասում, որ նե անհավատարիմ է:  
Եւ ինչո՞ւ չեմ ասում ես, որ ես մեծահասակ եմ:  
Ո՛հ, սիրո լավագույն հանդերձանքը ցուցադրական վստահության մեջ է,  
Իսկ տարեց սիրահարները չեն սիրում տարիքն ասել:  
Ուստի ես ստում\* եմ ներան, եւ ես՝ ինձ,  
Եւ մեր թերություններում ստով ենք մենք շոյված:

\* Բառախաղ է lie բայի «ստել» եւ «պատկել» իմաստներով:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

139



call not me to justify the wrong  
That thy unkindness lays upon my heart;  
Wound me not with thine eye but with thy tongue;  
Use power with power, and slay me not by art.  
Tell me thou lov'st elsewhere; but in my sight,  
Dear heart, forbear to glance thine eye aside;  
What need'st thou wound with cunning when thy might  
Is more than my o'erpressed defense can bide?  
Let me excuse thee: 'Ah, my love well knows  
Her pretty looks have been mine enemies,  
And therefore from my face she turns my foes,  
That they elsewhere might dart their injuries.'  
Yet do not so, but since I am near slain,  
Kill me outright with looks, and rid my pain.



Ո՛հ մի՛ խնդրիր չարիքն արդարացնել

Որ դու անգույթ դնում ես իմ սրտին.

Ոչ աչքերով՝ լեզվով փորձիր խոցել,

Ոչ հնարքով՝ զարկիր ուժով ուժին:

Ասա՛ այլ տեղ է սերդ, բայց դեմքիս.

Աչք մի՛ թեքիր. ինչո՞ւ ծածուկ խփել.

Երբ շատ ավել է ուժը քո, հոգիս,

Քան ի գորու եմ ես դիմակայել:

Արդարացնեմ քեզ. «Սերը իմ գիտի.

Ներա աչքերն են իմ թշնամիները,

Եւ արդ ինձնից շրջում է ոտխիս,

Որ ուրիշին հասնեն վնասվածքները»:

Բայց պետք չէ դա, քանզի սպանված եմ գեթ,

Սպանիր աչքով, որ ցավն անցնի անհետ:

Ո՛հ կոչ մի՛ արա ինձ արդարացնել չարիքը

Որը քո դաժանությունը դնում է իմ սրտի վրա.

Վիրավորիր ինձ ոչ թե քո աչքով, այլ քո լեզվով.

Օգտագործիր ուժը ուժով եւ սպանիր ինձ ոչ հնարքներով:

Ասա ինձ, դու սիրում ես այլոց. բայց իմ աչքի առաջ,

Թանկագին սիրտ, խուսափիր հայացք նետել քո աչքի այլ կողմ.

Ինչի՞դ է պետք վիրավորվել խորամանկությամբ, երբ դու կարող

Ես ավելին, քան իմ ճնշված պաշտպանությունը կարող է դիմադրել:

Թույլ տուր արդարացնել քեզ. «Լ՛հ, իմ սերը լավ գիտի.

Ներա չքնաղ հայացքները եղել են իմ թշնամիները,

Եւ ուստի իմ երեսից նե շրջում է իմ թշնամիներին,

Որպեսզի նրանք այլոց կարողանան հասցնել իրենց վնասները»:

Բայց մի՛ արա այդպես, իսկ քանի որ ես գրեթե սպանված եմ,

Սպանիր ինձ մեկընդմիջտ քո հայացքներով եւ ազատիր ինձ ցավից:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

140



Be wise as thou art cruel, do not press  
My tongue-tied patience with too much disdain,  
Lest sorrow lend me words, and words express  
The manner of my pity-wanting pain.  
If I might teach thee wit, better it were,  
Though not to love, yet, love, to tell me so -  
As testy sick men, when their deaths be near,  
No news but health from their physicians know.  
For if I should despair, I should grow mad,  
And in my madness might speak ill of thee;  
Now this ill-wresting world is grown so bad,  
Mad slanderers by mad ears believed be,  
That I may not be so, nor thou belied,  
Bear thine eyes straight, though thy proud heart go wide.





Լողիր խոհեմ, որքան որ դու դաժան ես,  
Եւ մի՛ ճնշիր հոգիս քամահրանքով,  
Որ վիշտն իմ չբերի բառերն այն դառը՝  
Ձեւված իմ գգնություն հայցող ցավով:  
Թե քեզ տայի այնքան խոհեմություն,  
Թեկուզ անսեր, ինձ հետ այնպես խոսել՝  
Ինչպես մահմերձը հույս առ փրկություն,  
Ուզում է բժշկից միայն լսել:  
Քանզի, եթե հուսահատվեմ, գժվեմ,  
Եւ գժությամբ քեզ անարգեմ անսանձ,  
Այնքան է արդ աշխարհը այս դժխեմ.  
Գիժ ստողին լսում է գիժ ականջ,  
Որ չգժվեմ, եւ դու չգրպարտվես,  
Նայիր ուղիղ, թեկուզ սրտով շեղվես:

Եղիր իմաստուն, որքան դու դաժան ես, մի՛ ճնշիր  
Իմ լեզվակապ համբերությունը չափազանց քամահրանքով,  
Որպեսզի վիշտը չտա ինձ բառեր, եւ բառերը չարտահայտեն  
Կերպն իմ խղճահարություն ցանկացող ցավի:  
Եթե ես կարողանայի սովորեցնել քեզ խոհեմություն, էլլավ կլիներ,  
Թեկուզ չսիրել, բայց, սեր, այնպես ինձ ասել՝  
Ինչպես քմահաճ հիվանդ մարդիկ, երբ իրենց մահը լինում է մոտ,  
Ոչ մի նորություն, բացի ամողջությունից իրենց բժիշկներից չեն ճանաչում:  
Որովհետեւ եթե ես հուսահատվեմ, ես կխեղագարվեմ,  
Եւ իմ խեղագարության մեջ կարող է խոսեմ չար քո մասին,  
Հիմա այս չար այլասերված աշխարհը զարգանում է այնքան վատ.  
Խեղագար գրպարտողներին խեղագար ականջներ են հավատում,  
Որ ես այդ վիճակում չլինեմ, ոչ էլ դու գրպարտվես,  
Պահիր քո աչքերը ուղիղ, թեկուզեւ քո հպարտ սիրտը վրիպի:

SHAKE-SPEARES,

SONNETS.

141



In faith, I do not love thee with mine eyes,  
For they in thee a thousand errors note,  
But 'tis my heart that loves what they despise,  
Who in despite of view is pleased to dote.  
Nor are mine ears with thy tongue's tune delighted,  
Nor tender feeling to base touches prone,  
Nor taste, nor smell, desire to be invited  
To any sensual feast with thee alone;  
But my five wits nor my five senses can  
Dissuade one foolish heart from serving thee,  
Who leaves unswayed the likeness of a man,  
Thy proud heart's slave and vassal wretch to be.  
Only my plague thus far I count my gain,  
That she that makes me sin awards me pain.



Իրավ, ես չեմ սիրում քեզ այքերով,  
Նրանք հազար արատ են նկատում,  
Բայց սիրտս իմ սիրում է այլ ձեռով,  
Եւ հակառակ՝ պաշտել է ցանկանում:  
Ոչ իմ ունկերն են քո ձայնով գերվել,  
Ոչ շոշափումն է՝ խիստ հակված հպման,  
Ոչ՝ համն ու ռունգը կուզեին կանչվել  
Քեզ հետ խրախճանքի մի զգայական.  
Բայց միտքն ու հինգ զգայարաններն անգոր են,  
Երբ մեկ հիմար սիրտ քեզ է ենթարկվում,  
Դառնում է մարդն այդ կամագորդի՝ անձով իր,  
Գոռոզ սրտիդ ստրուկն, ավատատուն:  
Իմ փորձանքում մեկ շահ, սակայն, տեսնում եմ.  
Մեղքի է նե՛ դրդում, ով եւ պատժում է:

Հիրավի ես չեմ սիրում քեզ իմ այքերով,  
Քանզի նրանք քո մեջ հազարավոր թերություններ են նկատում,  
Բայց իմ սիրտը սիրում է այն, ինչը նրանք արհամարհում են,  
Որը հակառակ տեսածի ցանկանում է պաշտել:  
Ոչ իմ ականջները քո լեզվի ձայնով են հիանում,  
Ոչ քնքուշ զգացումը՝ ստոր հայումներին է հակված,  
Ոչ՝ համը, ոչ՝ հոտոտելիքն են ցանկանում լինել հրավիրված  
Որեւէ զգայական խնջույքի քեզ հետ միայնակ.  
Բայց ոչ իմ մտքի հինգ կարողությունները, ոչ իմ հինգ զգայարանները չեն կարող  
Համոզել մեկ հիմար սրտին չճառայել քեզ,  
Որ թողնում է իրեն չտիրապետող նմանությունը մարդու,  
Քո գոռոզ սրտի ստրուկն ու ավատատուն անպետք լինել:  
Միակ՝ իմ փորձանքում առայժմ ես տեսնում եմ իմ շահը,  
Որ նե, ով դրդում է ինձ մեղքի, արժանացնում է ինձ պատժի:

SHAKE-SPEARES,

SONNETS.

142



Love is my sin, and thy dear virtue hate,  
Hate of my sin, grounded on sinful loving.  
O but with mine compare thou thine own state,  
And thou shalt find it merits not reproving,  
Or if it do, not from those lips of thine,  
That have profaned their scarlet ornaments,  
And seal'd false bonds of love as oft as mine,  
Robbed others' beds' revenues of their rents.  
Be it lawful I love thee, as thou lov'st those  
Whom thine eyes woo as mine importune thee:  
Root pity in thy heart, that when it grows  
Thy pity may deserve to pitied be.  
If thou dost seek to have what thou dost hide,  
By self-example mayst thou be denied.



Իմ մեղքը սերն է, իսկ քո ձիրքն ասեղը

Իմ մեղքը՝ մեղսավոր սիրուց ծնված.

Բայց դու հիշիր քո սեփական մեղքերը,

Եւ կտեսնես. իզուր եմ կշտամբված.

Կամ թե իզուր չե՛ ոչ քո շուրթերով,

Որոնք պղծել են ալ կարմիր զարդերը,

Եւ նույն հաճախ կնքած կեղծ կապերով,

Խլել են ուրիշի մահճի վարձերը:

Արդար լինեն իմ սերը քեզ, եւ քոնը՝

Նրանց, ում քո աչքերն են հետեւում.

Թող գուր ծնվի սրտում քո, եւ այդ օրը,

Գուցե գտնի քո գուրը գթություն:

Թե մի բանի ձգտես թաքուն տիրել,

Կարող ես նույն կերպով եւ դու մերժվել:

Սերն իմ մեղքն է, իսկ քո թանկագին առաքինությունը ասեղությունն է,

Ատեղությունն իմ մեղքի նկատմամբ՝ հիմնված մեղսավոր սիրելու վրա.

Մե, բայց իմի հետ համեմատիր դու քո սեփական վիճակը,

Եւ դու կգտնես, այն արժանի չե՛ կշտամբանքի,

Կամ եթե դա այդպես է, ոչ այդ շուրթերից քո,

Որոնք պղծել են իրենց ալ զարդերը,

Եւ կնքել են կեղծ կապեր սիրո նույնքան հաճախ, որքան իմոնք,

Խլել են ուրիշների մահիճների վարձերը նրանց վարձակալության:

Թող լինի օրինական այն, որ ես սիրում եմ քեզ, ինչպես դու սիրում ես նրանց,

Ում քո աչքերը սիրահետում են, ինչպես իմոնք հետամուտ են քեզ.

Արմատավորիր խղճմտանքը քո սրտում, երբ այն աճի,

Թե խղճմտանքը կարող է արժանի լինել խղճահարության:

Եթե դու ձգտում ես ունենալ այն, ինչը դու թաքցնում ես,

Սեփական օրինակով կարող է դու լինես մերժված:

SHAKE-SPEARES,

SONNETS.



143

Lo, as a careful housewife runs to catch  
One of her feathered creatures broke away,  
Sets down her babe and makes all swift dispatch  
In pursuit of the thing she would have stay,  
Whilst her neglected child holds her in chase,  
Cries to catch her whose busy care is bent  
To follow that which flies before her face,  
Not prizing her poor infant's discontent:  
So runn'st thou after that which flies from thee,  
Whilst I, thy babe, chase thee afar behind;  
But if thou catch thy hope, turn back to me,  
And play the mother's part, kiss me, be kind:  
So will I pray that thou mayst have thy *Will*,  
If thou turn back, and my loud crying still.



Ինչպես, տան կինն է ետ բերել փորձում  
Մեկին իր փետրավորներից փախած,  
Դնում է վայր մանկան եւ պանում  
Հետապնդում, որ չկորչի հանկարծ,  
Մինչ երեխան ուզում է խանգարել,  
Ճչում է, ջանալով բռնել իր ոտքը,  
Իսկ նա գործով է իր միայն տարվել  
Եւ անտեսում է խեղճ որդու բողբոջը.  
Այդպես հետապնդում եւ ուրիշի,  
Մինչ եւ, մանկիկդ քեզ կանչում եմ հետ.  
Բայց երբ որսաս քո հույսը, ետ դարձիր,  
Խաղա մոր դերը, ջերմ եղիր ինձ հետ:  
Եւ կաղոթեմ, որ *Իդձը* քո գտնես  
Եթե դառնաս, եւ լազր իմ մեղմես:

Տես, ինչպես հոգատար տանտիկինը վազում է բռնելու  
Մեկին իր փետրավոր եակներից փախած,  
Դնում է վայր իր փորթիկին եւ ամենայն արագությամբ պանում  
Հետապնդման մեջ այն բանի, որը նե կցանկանար պահել,  
Մինչ իր անտեսված երեխան պահում է ներան հետապնդման ընթացքում,  
Ճչում է բռնելու համար ներան, ով զբաղված մտահոգությամբ  
Հետետելու այն, ինչը թռչում է առջետում ներա դեմքի  
Չարժեարերով ներա խեղճ մանկիկի դժգոհությունը.  
Այդպես վազում եւ դու նրա հետեւից, ով փախչում է քեզնից,  
Մինչդեռ եւ, քո փոքրիկը, հետապնդում եմ քեզ հետ մնացած.  
Բայց եթե դու որսաս քո հույսը, դարձիր ետ դեպի ինձ,  
Եւ խաղա մոր դերը, համբուրիր ինձ, եղիր բարի:  
Այսպիսով, եւ կաղոթեմ, որ դու կարողանաս ունենաւ քո Բիլլը\*,  
Եթե դու ետ դառնաս, եւ իմ բարձրաձայն լազր մեղմես:

\* Տես 135 հնչյակի ծանոթագրությունը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

144



Two loves I have, of comfort and despair,  
Which like two spirits do suggest me still:  
The better angel is a man right fair;  
The worser spirit a woman coloured ill.  
To win me soon to hell, my female evil  
Tempteth my better angel from my side,  
And would corrupt my saint to be a devil,  
Wooing his purity with her foul pride.  
And whether that my angel be turned fiend  
Suspect I may, but not directly tell,  
But being both from me, both to each friend,  
I guess one angel in another's hell.  
Yet this shall I ne'er know, but live in doubt,  
Till my bad angel fire my good one out.





Երկու սերեր ունեմ ես՝ վիշտ եւ հույս,  
Որ՝ ինձ երկու հոգով փորձում են հար.  
Լավ հրեշտակը մարդ է՝ ինքը լույս.  
Իսկ վատ ոգին՝ մի կին՝ ներկված է չար:  
Որ ինձ արագ դժոխք հասցնի, չար կինը  
Տանում է հրեշտակիս գայթակղելով,  
Կցանկանար նա դեւ դարձնել սուրբին իմ,  
Փայլով իր մաքրությունը փորձելով:  
Արդյո՞ք լուսե հրեշտակն իմ չարք դարձավ,  
Ինձ այդ մասին մտում է ենթադրեղ,  
Բայց զի այդ ընկերները հեռացան,  
Կարծեմ մեկի դժոխքն է մյուսն ընկել:  
Բայց դա երբեք հաստատ չի իմացվի,  
Մինչեւ չարուց բարին չվտարվի:

Երկու սեր ես ունեմ՝ մխիթարանքի եւ հուսահատության,  
Որոնք ինչպես երկու հոգիներ փորձում են ինձ մշտապես.  
Էլլավ հրեշտակը մի մարդ է հիրավի ջքնաղ.  
Էլվատ ոգին՝ մի կին՝ գունավորված չարիք:  
Հասցներու համար ինձ արագ դժոխք, իմ կին չարիքը  
Գայթակղում է իմ էլլավ հրեշտակին հեռացնելով իմ կողմից,  
Եւ կցանկանար փչացնել իմ սուրբին՝ որ դառնար դեւ,  
Փորձելով նրա մաքրությունը ներա կեղտոտ շքեղությամբ:  
Եւ արդյո՞ք այդ իմ հրեշտակը դարձավ չարք  
Կասկածել ես կարող եմ, բայց ոչ ուղղակիորեն ասել,  
Բայց լինելով երկուսն էլ հեռու ինձնից, մեկը՝ մյուսի ընկեր,  
Կռահում եմ՝ մի հրեշտակը մյուսի դժոխքում է:  
Բայց դա եւ երբեք չեմ իմանա, այլ կապրեմ կասկածի մեջ,  
Մինչեւ իմ վատ հրեշտակը հրով վանի իմ բարի մյուսին դուրս:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

145



Whose lips that Love's own hand did make  
Breathed forth the sound that said 'I hate'  
To me that languish'd for her sake;  
But when she saw my woeful state,  
Straight in her heart did mercy come,  
Chiding that tongue that ever sweet  
Was used in giving gentle doom,  
And taught it thus anew to greet:  
'I hate' she altered with an end,  
That follow'd it as gentle day  
Doth follow night, who like a fiend  
From heaven to hell is flown away;  
    'I hate' from hate away she threw,  
    And saved my life, saying 'not you'.



Սիրո ձեռքով կերտված շուրթից,

«Ատում եմ»՝ ձայն արտաշնչվեց.

Ինձ՝ ով տանջվում էր կարոտից.

Բայց երբ վիճակն իմ նե դիտեց,

Իր սիրտը գույթ ընկավ իսկույն,

Սաստեց շատ քաղցր իր լեզվին,

Որ քնքշորեն էր միշտ դատում,

Եւ նոր կարգեց դիմել մեղմին.

«Ատում եմ». եւ վերջում ասաց,

Ինչպես մեղմ օրն է այցելում,

Եւ չարք որպես գիշերն անցած,

Դժոխք է երկնքից թոչում.

«Ատում եմ» աստերուց զասեց,

Փրկեց իմ կյանքն, ասաց. «ոչ ձեզ»:

Այն շուրթերը, որ Սիրո սեփական ձեռքն է կերտել,

Արտաշնչեցին ձայն, որն ասաց. «Ես ատում եմ»

Ինձ՝ ով կարոտում էր ներան.

Բայց երբ նե տեսավ իմ ցավալի վիճակը,

Անմիջապես ներա սիրտը գթությունն այցելեց,

Նախատեղով այն լեզվին, որ միշտ քաղցր էր,

Սովոր կայացնելու մեղմ դատավճիռներ,

Եւ սովորեցրեց այն այսպես նորովի ողջունել.

«Ես ատում եմ», նե փոխեց վերջավորությամբ,

Որ հետեւեց այն ինչպես մեղմ օրը

Հաջորդում է գիշերին, որն ինչպես չարք

Երկնքից դժոխք է թոչում հեռու.

«Ես ատում եմ» աստերուց դեն նե նետեց,

Եւ փրկեց իմ կյանքն, ասելով «ոչ ձեզ»:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

146



oor soul, the centre of my sinful earth,  
[ ] these rebel powers that thee array  
Why dost thou pine within and suffer dearth,  
Painting thy outward walls so costly gay?  
Why so large cost, having so short a lease,  
Dost thou upon thy fading mansion spend?  
Shall worms, inheritors of this excess,  
Eat up thy charge? Is this thy body's end?  
Then soul, live thou upon thy servant's loss,  
And let that pine to aggravate thy store;  
Buy terms divine in selling hours of dross;  
Within be fed, without be rich no more:  
    So shall thou feed on Death, that feeds on men,  
    And Death once dead, there's no more dying then.



Իսեղն հոգի, մեղստտ երկրիս առանցք,  
 Մերժիր ուժերն ապստամբ, քեզ շրջադրած,  
 Ինչո՞ւ ներսից հյուծվես, կրես զրկանք,  
 Դրսից պատերդ ճոխ լինեն նախշված:  
 Ինչո՞ւ կարճ ժամկետով մեծ գին այդքան  
 Խարխուլ ապարանքիդ ես դու ծախսում:  
 Որդերը, ժառանգորդ այս ճոխության,  
 Ծախսերդ ուտեն: Այդ չէ՞ մարմնի վերջում:  
 Հոգիս, ապրիր քո ծառայիդ ապամամբ,  
 Թող այն հյուծվի, լրի քո պաշարները.  
 Աստծո ժամեր գնիր՝ սնի ծախսմամբ.  
 Ներսից սնվիր, պետք չէ հարուստ լինելը.  
 Այդպես մարդկանց ուտող Մահով սնվիր,  
 Մեռնելն էլ չի լինի, երբ Մահ մեռնի:

Իսեղն հոգի, կենտրոնն իմ մեղաավոր երկրի,  
 [ ]\* այս ապստամբ ուժերը, որ քեզ շրջապատում են,  
 Ինչո՞ւ ես դու հյուծվում ներսում եւ կրում զրկանք,  
 Չարդարերով քո արտաքին պատերը այդքան թանկ, ճոխ:  
 Ինչո՞ւ այդքան մեծ գին՝ ունենալով այդքան կարճ վարձակալություն՝  
 Դու քո քայքայվող ապարանքի վրա ես ծախսում:  
 Որդերը, ժառանգորդներն այս ավերորոշյունների,  
 Ուտեն քո ծախսերը: Դրանում է քո մարմնի վերջը:  
 Ուրեմն, հոգիս, ապրիր դու քո ծառայի նվազմամբ,  
 Եւ թող այն հյուծվի, ավելացնելով քո պաշարները.  
 Գնիր ժամկետներ աստվածային՝ վաճառելով ժամեր ունայնության.  
 Ներսից եղիր սնված, առանց լինելու հարուստ այլեւս.  
 Այդպես դու սնվիր Մահով, որ սնվում է մարդկանցով,  
 Իսկ Մահը երբ մեռնի, չի լինի այլեւս մեռնելն այդժամ:

\* 1609 թվականի հրատարակության մեջ երկրորդ տողն սկսում է նախորդ տողի  
 վերջին երեք՝ my sinful earth բառերով: Դրանց կրկնությունը ակնհայտ վրիպակ է:  
 Թե ինչ էր այստեղ նախատեսել հեղինակը, մնում է անհայտ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

147



My love is as a fever, longing still  
For that which longer nurseth the disease,  
Feeding on that which doth preserve the ill,  
Th'uncertain sickly appetite to please.  
My reason, the Physician to my love,  
Angry that his prescriptions are not kept,  
Hath left me, and I desperate now approve,  
Desire is death, which Physic did except.  
Past cure I am, now Reason is past care,  
And frantic mad with evermore unrest,  
My thoughts and my discourse as madmen's are,  
At random from the truth vainly expressed:  
For I have sworn thee fair, and thought thee bright,  
Who art as black as hell, as dark as night.



Իմ սերն ասես մի տենդ է, որ տենչում է  
Այն, ինչ կառաջացնի հիվանդություն,  
Մնվում է մի նյութով, որ ցավն ուտում է,  
Հիվանդ իր ախորժակը գրգռում:  
Միրուց ինձ Բժշկող գիտակցությունը,  
Դժգոհ, որ ցուցումներն իր չեն պահվում,  
Թողեց ինձ, եւ ես այժմ համոզվում եմ.  
Որ մահ է կիրքը, այն է՝ չի բուժվում:  
Բուժումն անցավ, Գիտակցությունն անճար է,  
Եւ խենթ եմ տոկալի, միշտ տագնապած,  
Մտքերն իմ ու խոսքերը խելագար են,  
Անկապ, անճիշտ, անպետ, իզուր ասված.  
Ձի երդվեցի, չքնաղ ես, լուսաբեր,  
Մինչ սեւ ես, զերդ դժոխք, մույթ՝ զերդ գիշեր:

Իմ սերը ասես մի տենդ է, տենչագող միշտ  
Այն, ինչն էրկար է սնուցանում հիվանդությունը,  
Մնվելով նրանով, ինչը պահպանում է ցավը,  
Փոփոխական հիվանդագին ախորժակը բավարարելու:  
Իմ գիտակցությունը՝ Բժշկողն իմ սիրուց,  
Չայրացած, որ իր ցուցումները չեն պահվում,  
Թողեց ինձ, եւ ես, հուսահատ, այժմ համոզվում եմ.  
Կիրքը մահ է, որը Բժշկությունը ժխտում է:  
Անցյալում է բուժումն, այժմ Գիտակցությունը անցյալի հոգս է,  
Եւ տոկալի խելագար՝ մշտական տագնապով,  
Իմ մտքերը եւ իմ խոսքը ասես խենթի են,  
Անկապ, հեռու են ճշմարտությունից, իզուր արտահայտված.  
Ձի եւ երդվեցի, դու չքնաղ ես, եւ կարծեցի քեզ լուսավոր,  
Ով այնքան սեւ է, որքան դժոխքը, այնքան մույթ է, որքան գիշերը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

148



me! what eyes hath love put in my head,  
Which have no correspondence with true sight?  
Or, if they have, where is my judgement fled,  
That censures falsely what they see aright?  
If that be fair whereon my false eyes dote,  
What means the world to say it is not so?  
If it be not, then love doth well denote  
Love's eye is not so true as all men's: no,  
How can it? O how can love's eye be true,  
That is so vexed with watching and with tears?  
No marvel then, though I mistake my view:  
The sun itself sees not till heaven clears.

O cunning love, with tears thou keep'st me blind,  
Lest eyes, well seeing, thy foul faults should find.





Կայ ինձ, սերն ինչ աչքեր է պարզելե, որ  
Չունեն իսկ կապ տեսքի հետ ճշմարիտ:  
Կամ, թե ունեն, այդ ո՞ր են միտքն ու խելքը,  
Որ ճիշտ դատեն, այն ինչ դիտված է ճիշտ:  
Եթե չքնաղ է, աչքերի պաշտածը,  
Ինչո՞ւ է ողջ աշխարհը դա ժխտում:  
Թե ոչ, ապա սիրո աչքի տեսածն է  
Մխալ. եւ հենց մարդիկ են ճիշտ տեսնում:  
Ինչպե՞ս սիրո աչքերը ճիշտ լինեն,  
Հոգնած՝ հայացքներից, արցունքներից:  
Չեմ զարմանա, եթե ես սխալվեմ.  
Արեւն էլ չի տեսնում թխպոտ երկնից:  
Նենգ սեր, ինձ արցունքով պահում ես կոյր,  
Որ աչքս չգտնի բծերդ բյուր:

Վայ ինձ, ինչ աչքեր է սերը դրել իմ գլխում,  
Որ չունեն համապատասխանություն ճշմարիտ տեսողության հետ:  
Կամ, եթե նրանք ունեն, ո՞ր է իմ դատողությունը կորչել,  
Որ դատում է կեղծ այն, ինչը նրանք տեսնում են ճիշտ:  
Եթե չքնաղ է, ինչն իմ կեղծ աչքերը պաշտում են,  
Ինչ նկատի ունի աշխարհն ասելով, դա այդպես չէ:  
Եթե դա չէ, ապա սերը լավ ցույց է տալիս.  
Միրո աչքն այնքան էլ ճիշտ չէ, որքան բոլոր մարդկանց. ոչ,  
Ինչպե՞ս դա կարող է: Մե, ինչպե՞ս կարող է սիրո աչքը լինել ճիշտ,  
Որ այդքան հոգնած է դիտելուց եւ արցունքներից:  
Չարմանալի չէ ապա, որ ես մոլորված եմ իմ տեսածում.  
Արեգակն ինքն էլ չի տեսնում, քանի դեռ երկինքը չի մաքրում:  
Մի խորամանկ սեր, արցունքներով դու պահում ես ինձ կոյր,  
Որ աչքերս, լավ տեսնելով, չո՞ւ այլանդակ թերությունները չգտնեն:

SHAKE-SPEARES,

SONNETS.

149



Canst thou, O cruel, say I love thee not,  
When I against myself with thee partake?  
Do I not think on thee, when I forgot  
Am of myself, all tyrant for thy sake?  
Who hateth thee that I do call my friend?  
On whom frown'st thou that I do fawn Upon?  
Nay, if thou lour'st on me, do I not spend  
Revenge upon myself with present moan?  
What merit do I in myself respect  
That is so proud thy service to despise,  
When all my best doth worship thy defect,  
Commanded by the motion of thine eyes?  
But, love, hate on, for now I know thy mind:  
Those that can see thou lov'st, and I am blind.



Գասնս, դաժան, թե չեմ սիրում ես քեզ,  
Երբ ինձ ընդդեմ քո կողմն եմ ընդունում,  
Թե քո մասին չէ միաքը իմ, երբ ես,  
Եւ քո հանուն ինքս ինձ եմ բռնանում:  
Կամ մեկ տհաճ քեզ, ում շողորթրթում եմ,  
Ատող՝ ում ես ընկեր եմ համարում:  
Եւ ավելին, եթե դու խոժոռվում ես,  
Արդոյք ցավով ինձ չեմ պատժում իսկույն:  
Այդ ո՞ր ձիրքերն եմ իմ, այնքան հարգում  
Որ ծառայելը քեզ արհամարհեմ,  
Երբ լավն իմ քո վատին է խոնարհվում,  
Հրամայված քո ակնարկով ամեն:

Բայց, սեր, ատիր, արդեն գիտեմ ես քեզ.  
Սիրում ես տեսնողին, մինչ կույր եմ ես:

Կարող ես դու, Ռհ դաժան, ասել, ես քեզ չեմ սիրում,  
Երբ ես ընդդեմ ինքս ինձ քո կողմից եմ:  
Միթե ես չեմ մտածում քո մասին, երբ ես մոռացել  
եմ ինքս ինձ, ամբողջապես բռնակալ եմ հանուն քո:  
Ո՛վ է ատողներից քեզ, որ ես կոչում եմ իմ ընկերը:  
Ո՛ւմ չհավանածներից քո, որ ես շողորթրթում եմ:  
Ավելին, եթե դու խոժոռվում ես ինձ վրա, միթե ես չեմ հյուծում  
Վրեժով ինքս ինձ՝ անհապաղ հառաչանքով:  
Ո՞ր արժանիքներն եմ ես իմ հարգում  
Որ այդքան հպարտանալով քեզ ծառայելը արհամարհեմ,  
Երբ ամբողջ իմ լավագույնը խոնարհվում է քո արատներին,  
Հրամայվելով շարժանով քո այքերի:

Բայց, սեր, ատիր, քանզի այժմ ես գիտեմ քո դատողությունը.  
Նրանց, ովքեր կարող են տեսնել, դու սիրում ես, իսկ ես կույր եմ:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

150



from what pow'r hast thou this pow'rful might  
With insufficiency my heart to sway,  
To make me give the lie to my true sight,  
And swear that brightness doth not grace the day?  
Whence hast thou this becoming of things ill,  
That in the very refuse of thy deeds  
There is such strength and warrantise of skill  
That, in my mind, thy worst all best exceeds?  
Who taught thee how to make me love thee more  
The more I hear and see just cause of hate?  
O, though I love what others do abhor,  
With others thou shouldst not abhor my state.  
If thy unworthiness raised love in me,  
More worthy I to be beloved of thee.



Ոհ, ո՞ր ուժից է քեզ այդ ուժն ուժգին՝  
Արատներով՝ տիրանալու սրտիս,  
Որ ես չվատահեմ իմ հայացքին,  
Երդվեմ, թե որ պայծառ չէ օրը լիս:  
Ինչպե՞ս ես վայելուչ դարձնում դու չարը,  
Որ ամենա քո վատ արարքներում  
Կա ուժը այն եւ այն կամքի պաշարը  
Որ ես լավին քո վատն եմ նախընտրում:  
Ինչո՞ւ, որքան պատճառ կա զզվելու  
Ես հակառակն՝ այդքան սիրում քեզ:  
Ոհ, այլ թե՛ ես պատրաստ եմ ատելու,  
Այլոց պես դու ինձ չպիտի ատես:  
Թե արատներդ սերս եմ հարուցել,  
Էլ արժանի եմ ես քեզնից սիրվել:

Ոհ, ո՞ր ուժից ունես դու այդ ուժեղ կարողությունը՝  
Թերություններով, իմ սրտին տիրանալու,  
Դրդելու ինձ վերագրել սուտ՝ իմ ճիշտ հայացքին,  
Եւ երդվել, որ պայծառությունը չի զարդարում օրը:  
Որտեղից ունես դու այս պատշաճեցնելը չար բաների,  
Որ ամենա վատ քո արարքներում  
Կա այդպիսի ամրություն եւ երաշխավորվում հնտության  
Որ, իմ մտքում, քո ամենավատը ամեն լավագույնը գերազանցում է:  
Մ'վ սովորեցրեց քեզ, ինչպես դրդել ինձ սիրել քեզ այնքան շատ,  
Որքան շատ ես լսում եւ տեսնում եմ արդար պատճառ ատելության:  
Ոհ, թե՛ ես սիրում եմ, ինչ այլք ատում եմ,  
Այլոց հետ դու չպետք է ատես իմ վիճակը:  
Եթե քո անարժանությունը հարուցել է սեր իմ մեջ,  
Առավել արժանի եմ ես լինելու սիրված քեզնից:

SHAKE-SPEARES,

SONNETS.

151



Love is too young to know what conscience is,  
Yet who knows not conscience is born of love?  
Then, gentle cheater, urge not my amiss,  
Lest guilty of my faults thy sweet self prove.  
For, thou betraying me, I do betray  
My nobler part to my gross body's treason:  
My soul doth tell my body that he may  
Triumph in love; flesh stays no farther reason;  
But rising at thy name doth point out thee  
As his triumphant prize. Proud of this pride,  
He is contented thy poor drudge to be,  
To stand in thy affairs, fall by thy side.

No want of conscience hold it that I call  
Her 'love' for whose dear love I rise and fall.



Հանուկ է սեր, որ խիղճը ճանաչի,  
Բայց մենք գիտենք. խղճի ծնողն է սերը:  
Իմ նուրբ ստալիկ, զանցանքն իմ մի շեշտի,  
Որ մեղավոր քեզ չդարձնեն մեղքերս:  
Չի դու մատնում ես ինձ՝ ես ես մատնում եմ  
Ազնիվ իմ մասը բիրտ մարմնիս դավին.  
Երբ իմ հոգին, սահա, մարմնիս ասում է,  
Որ կհաղթի սիրում. ես այդ պահին.  
Անվամբ քո նա ելնում է, քեզ ցուցում,  
Որպես իր պարգևի: Ես առավել,  
Բավարարված է նա, որ քեզ հանուն  
Կարող է միշտ կանգնել, կողքիդ ընկնել:  
Անխիղճ չեմ, որ ներան եմ «սեր» կոչում,  
Հանուն որի ելնում եմ ես ընկնում:

Սերը շատ երիտասարդ է, իմանալու համար, ինչ է խիղճը,  
Բայց ո՞վ չգիտի, խիղճը ծնվում է սիրուց:  
Ուստի, նուրբ խաբեբա, մի շեշտի իմ զանցանքը,  
Որ մեղավոր իմ մեղքերի համար, քո քաղցր անձը չլինի:  
Քանզի դու մատնում ես ինձ՝ ես մատնում եմ  
Իմ ազնիվ մասը իմ կրպիտ մարմնի դավաճանությանը.  
Իմ հոգին ասում է իմ մարմնին, որ նա կարող է  
Հաղթել սիրո մեջ. մարմինը չի սպասում հետագա պատճառաբանության.  
Այ, բարձրանալով քո անվան հետ, ցուցում է քեզ,  
Որպես իր հաղթական մրցանակի: Հպարտ այս վերընթացով,  
Նա բավարարված է քո խեղճ բանվորը լինելով,  
Կանգնելով հանուն քո գործերի, ընկնելով քո կողքին:  
Պակասություն խղճի մի համարիքի այն, որ ես անվանում եմ  
«Սեր» ներան, հանուն որի թանկագին սիրո ես ելնում եմ ես ընկնում:

SHAKE-SPEARES,

SONNETS.

152



In loving thee thou know'st I am forsworn,  
But thou art twice forsworn, to me love swearing:  
In act thy bed-vow broke, and new faith torn  
In vowing new hate after new love bearing.  
But why of two oaths' breach do I accuse thee,  
When I break twenty? I am perjured most,  
For all my vows are oaths but to misuse thee,  
And all my honest faith in thee is lost,  
For I have sworn deep oaths of thy deep kindness,  
Oaths of thy love, thy truth, thy constancy,  
And to enlighten thee gave eyes to blindness,  
Or made them swear against the thing they see:  
For I have sworn thee fair, more perjured eye,  
To swear against the truth so foul a lie.





Եւ սիրելուց, գիտես, ես ուրացել եմ,  
Բայց դու՝ կրկնակի՝ ինձ երդվելիս.  
Բեկվեց մահճիդ երդումն ու նոր ուխտելը\*  
Նոր սեր, բայց եւ նողկանք ծնեց նորից:  
Ինչո՞ւ եմ, բայց, հիշում երկու դրժածդ,  
Երբ իմն են՝ քսանը: Ես եմ սիրադավ,  
Չի ուխտս վերագրում էր քեզ չեղածը,  
Եւ իմ ամբողջ հավատն առ քեզ կորավ,  
Չի երդվեցի՝ սիրող ես ու բարի  
Հավատարիմ, անկեղծ ես ու անքեն,  
Որ լույս տամ քեզ՝ աչքերս կուրացրի,  
Այնպես, որ տեսածին ընդդեմ երդվեն.  
Չի երդվեցի, չքնաղ ես. աչքս սուտ է՝  
Ճշմարտության առջեւ ես ուխտադրուժ եմ:

Սիրելու մեջ քեզ, դու գիտես, ես ուրացող եմ,  
Բայց դու կրկնակի ուրացող ես, ինձ սիրելու մասին երդվելիս.  
Գործով քո մահճի ուխտը բեկվեց, եւ նոր ուխտ խզվեց  
Խոստման մեջ նոր ատելության՝ նոր սիրո ծնունդից հետո:  
Բայց ինչո՞ւ երկու երդման խախտման համար եմ ես մեղադրում քեզ,  
Երբ ես խախտել եմ քսանը: Ես ամենաուխտադրուժն եմ,  
Քանզի բոլոր իմ ուխտերը երդումներ են սոսկ չարաշահելու քեզ,  
Եւ ամբողջ իմ անկեղծ հավատն առ քեզ կորած է,  
Քանզի ես տվել եմ խորին երդումներ քո խորին բարության հաշվով,  
Երդվել քո սիրո, քո հավատարմության, քո հաստատունության հաշվով,  
Եւ լուսավորելու համար քեզ հանձնել եմ աչքերս կուրության,  
Կամ ստիպել նրանց երդվել ընդդեմ այն բանի, ինչ նրանք տեսնում են.  
Չի ես երդվեցի, դու չքնաղ ես. ավելի ուխտադրուժ է աչքս,  
Պնդելով ընդդեմ ճշմարտության՝ այդ այլանդակ ստաղ:

\* Թերես ամենա մշուշոտ հնչյակներից է. արդյո՞ք կարելի է նույնացնել «մահճի խոստումը» (bed-vow) եւ ամուսնական խոստումը (marriage vow), ո՞ւմ է այն վերաբերում, ինչ է «նոր ատելությունը» (new hate), եւ, վերջապես, ինչ է նշանակում «չարաշահել (վատ օգտագործել) քեզ» (misuse thee) արտահայտությունը:

SHAKE-SPEARES,  
SONNETS.

153



Cupid laid by his brand, and fell asleep:  
A maid of Dian's this advantage found,  
And his love-kindling fire did quickly steep  
In a cold valley-fountain of that ground;  
Which borrowed from this holy fire of Love  
A dateless lively heat, still to endure,  
And grew a seething bath, which yet men prove  
Against strange maladies a sovereign cure.  
But at my mistress' eye Love's brand new fired,  
The boy for trial needs would touch my breast;  
I, sick withal, the help of bath desired,  
And thither hied, a sad distempered guest;  
But found no cure: the bath for my help lies  
Where Cupid got new fire - my mistress' eyes.



րեց իր ջահը Տենչը ու քնեց.

Եւ Դիանի մի կոյս ուզեց օգտվի,  
Եւ հուրը սիրավատ արագ սուզեց  
Պատ դաշտային աղբյուրն այդ տեղանքի,  
Որ փոխատեց այդ սուրբ Սիրո հրից  
Իր շոգը կենարար, ու մշտատաք  
Եւ ջերմ բաղնիս դարձավ հայտնի, բուժիչ,  
Ընդդեմ շատ ախտերի տարօրինակ:  
Բայց ջահն աչքից սիրուս վառվեց նորից,  
Կրծքիս դիպավ տղան փորձի համար.  
Եւ պետք եղավ բուժում այդ բաղնիսից,  
Եւ շտապեցի դեպ ջուրն այդ բուժարար.  
Բայց դեղը իմ այլ տեղ է գտնվում՝  
Ուր Տենչն իր հուրն առավ՝ սիրուս աչքում:

Տենչը (Կուպիդո) դրեց մի կողմ իր ջահը եւ անցավ քնով.  
Սի կոյս Դիանի արանից օգտվեց,  
Եւ նրա սիրավատ հուրը արագորեն սուզեց  
Սառը դաշտային աղբյուրն այդ տեղանքի,  
Որը փոխատեց այդ սուրբ հրից Սիրո  
Անժամկետ կենարար շոգը, որն ընդմիշտ մնաց,  
Եւ դարձավ եռացող բաղնիս, որը՝ դեռ մարդիկ են համոզվում են,  
Ընդդեմ տարօրինակ հիվանդությունների՝ հոյակապ բուժում է:  
Բայց իմ տիրուհու հայացքից Սիրո ջահը նորից վառվեց,  
Տղան փորձի համար ցանկացավ դիպչել իմ կրծքին.  
Եւ՝ հիվանդացած արդյունքում, օգնություն բաղնիսից ցանկացա,  
Եւ այնտեղ շտապեցի՝ տխուր թախճած հյուր.  
Բայց չգտա բուժում. լուգանքը, որ ինձ կօգնի գտնվում է  
Ուր Տենչը ստացել է նոր հուր՝ իմ տիրուհու աչքերում:

SHAKE-SPEARES,

SONNETS.

154



The little Love-god lying once asleep,  
Laid by his side his heart-inflaming brand,  
Whilst many nymphs that vowed chaste life to keep  
Came tripping by; but in her maiden hand  
The fairest votary took up that fire  
Which many legions of true hearts had warmed;  
And so the General of hot desire  
Was, sleeping, by a virgin hand disarmed.  
This brand she quenched in a cool well by,  
Which from Love's fire took heat perpetual,  
Growing a bath and healthful remedy,  
For men diseased; but I, my mistress' thrall,  
Came there for cure and this by that I prove,  
Love's fire heats water, water cools not love.



Ա ի օր, Սիրո աստված պատկած քնած,  
Կողքին դրել էր ջահն իր սիրավատ,  
Երբ մի քանի հավերժահարս հանկարծ  
Իր մոտ եկան. եւ նուրբ ձեռքով արդար  
Չքնաղ մի կույս վերցրեց կրակն անգին,  
Այն որ բազում սրտեր էր ջերմացրած.  
Եւ արդ քնած Ասպետը թեժ կրքի  
Կույսի ձեռքով մնաց զինայթափված:  
Այդ ջահը նա մարեց մի սառն աղբբում,  
Որ կլանեց Սիրո անանց ջերմ շուքը,  
Դարձավ բաղնիս եւ բուժարար մի թուրմ  
Հիվանդներին. բայց ես, սիրոս ստրուկը,  
Եկա այդտեղ բուժվեմ եւ պարզեցի.  
Սիրուց ջուր կջերմի, սեր՝ չի սառչի:

Փոքր Սեր-աստվածը պատկած մի անգամ քնած էր,  
Դրած իր կողքին իր սիրտ բոցավառող ջահը,  
Երբ մի քանի հավերժահարս, որ երդվել էին անաղարտ կյանք պահել  
Մոտեցան թոչկոտելով. բայց իր կուսական ձեռքով  
Չքնաղագույն սպաստեհին բարձրացրեց կրակը,  
Որը բազում գորքեր էր հավատարիմ սրտերի ջերմացրել.  
Եւ այդպես Չորավարը թեժ կրքի  
Քնած՝ կուսական ձեռքով զինայթափվեց:  
Այդ ջահը նա մարեց սառն աղբբում մոտակա,  
Որը Սիրո հրից վերցրեց շոգը հավերժական,  
Վերածվելով բաղնիսի եւ առողջարար դեղի,  
Մարդկանց համար հիվանդ. բայց ես, իմ սիրուհու ստրուկս,  
Եկա այդտեղ բուժվելու\* եւ ահա թե ինչ եւ հաստատեցի,  
Սիրո հուրը ջերմացնում է ջուրը, ջուրը չի սառեցնում սերը:



SHAKE-SPEARES

S O N N E T S .

Neuer before Imprinted.

---

---


AT LONDON  
By *G. Eld* for *T. T.* and are  
to be solde by *John Wright*, dwelling  
at *Christ Church gate*.  
1609.

Հնչյակների առաջին՝ 1609 թվականի հրատարակության անվանաթերթը:

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ծեքսպիրի հնչյակների հայերեն թարգմանության ավանդույթը ունի արդեն ավելի քան հարյուր տարվա պատմություն: Մինչ այս թարգմանության թողարկումը եղել է առնվազն 5 ամբողջական թարգմանություն: Դրանք են՝ ըստ հրպարակման հաջորդականության. Դավիթ Դավթյանի եւ Հովհաննես Քելեշյանի, Գեորգ Էմինի, Ծեն-Մահի, Մամվել Մկրտչյանի, Մերուժան Հարությունյանի թարգմանությունները: Բացի այդ որոշ հնչյակներ թարգմանել են Վարդգես Սուրենյանցը, Հովհաննես Մասեհյանը, Վահան Թեքեյանը, Խաչիկ Դաշտենցը եւ այլք: Սակայն դրանք բոլորը արվել են առանց բնագրի չափի, այն է՝ հնգատոք մեծավերջի (յամբ) պահպանման, ինչը հայ թարգմանիչների գիտակցված ընտրությունն է եղել, եւ հիմնավորվել է նրանով, որ հայերենում բառերը երկար են: Իրոք, հայերենը կցաթեկական լեզու է, եւ դրա բառերը անգլերենի՝ անջատական լեզվի բառերից միջին հաշվով երկար են, սակայն, մենք թարգմանում ենք ոչ թե առանձին բառեր, այլ բառակապակցություններ եւ արտահայտության որոշ երկարությունից սկսած հայերեն բառերի երկարությունը փոխհատուցվում է հայերենի ընդհանուր քերականական կարճությամբ: Իսկ մեծ գրվածքների դեպքում հայերեն թարգմանությունը անգլերեն բնագրից արդեն նույնիսկ կարճ է ստացվում: Բացի այդ, նկատենք, կա եւ հոգեբանական բաղադրիչը. երբ բնագրի երկար բառերին թիրախային լեզվում համապատասխանում են կարճ բառեր դա ոչ ոք չի նկատում, իսկ հենց որ հակառակն է լինում, դա միանգամից ուշադրություն է գրավում:

Եւ ես սեփական փորձով համոզվել եմ, որ հայոց լեզուն ի վիճակի է մոտավորապես նույն ծավալի գրվածքում փոխանցել անգլերեն բնագրի բովանդակային եւ տաղաչափական առանձնահատկությունների *մեծագույն մասը*: Պարզապես պետք է երբեմն չվախենալ եւ օգտագործել մեր լեզվի բոլոր հնարավորությունները: Բանն այն է, որ վերջին դարերում հայոց լեզուն զարգացել է ոչ թե արագություն պահանջող կառավարման ոլորտում, այլ առավելապես գաղափարական, այն է՝ չափազանց պահպանողական ոլորտում պարփակված: Արդյունքում հայոց լեզուն ճոխացել, բայց նաեւ՝ ծանրաշարժ



Մեզի միջոցովն  
ԱՅՍ. ՀԱՅՈՐԴԱՆ ՀՆՉՅԱԿՆԵՐԻ.  
Վ.Մ.Է.Հ.ԻՆ. ԱՄԵՆԱՊՅՆ ԵՐՉԱՆՎՈՒԹՅՈՒՆ.  
ԵՒ ԱՅՆ. ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ.  
ԽՈՍՏԱԹՎԱԾ.

ԿՈՂՄԵՑ.

ՄԵՐ. ՀԱՎԵՐԺ-ԱՊՐՈՂ ԲԱՆԱՍԵՂՅԻ.

ՑԱՆԿԱՆՈՒՄԷ.

ԲԱՐԻ-ԿԱՄԵՑՈՂ  
ՀԱՆԴՈՒԳՆԸ.  
ՏԵՂԱՐԵՆՈՎ  
Ի ՑՈՒՑ.

Թ.Թ.

Հրատարակիչ Թոմաս Թորպի ձոնը:

Է դարձել: Մենք այսօր հիանում ենք մեր լեզվի այդ ճոխությամբ, չնկատելով, որ գեղեցկությունը ոչ միայն ճոխության մեջ է, որից վախենում ենք զրկվել, այլև արագության, ինչպես նաև՝ փոփոխվող իրավիճակին լավագույնս հարմարվելու մեջ: Ոմանք դա գիտակցում են, բայց սխալմամբ կարծում, թե դրա համար անհրաժեշտ են փոխառություններ այլ «կարճ» լեզուներից, հաշվի չառնելով, որ լեզվի «կարճությունը» նպաստում են ոչ թե փոխառությունները, այլ արդյունավետ բառակազմությունը, այդ թվում՝ բառակազմական միջոցների զարգացումը, ինչը իր հերթին կախված է լեզվի գործածումից:

Եւ դրանց զարգացմանը նպաստում է հատկապես չափածոյի թարգմանությունը, քանի որ չափածոն հենց կարճ արտահայտությունների տիրոյթ է, եւ որքան կարճ է տողը եւ քիչ է հնարավորությունը մի որեւէ կարճ բառով փոխհատուցել հարեւան բառի երկարությունը, այնքան այդ թարգմանական երկար բառերի հարուցած դժվարությունը ավելի ակնհայտ է դառնում: Մակայն փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերը այնքան էլ



շատ չեն, եւ թեկուզ դժվարությամբ, բայց միանգամայն, հաղթահարելի են: Պարզ է ի հաշիվ որոշակի զիջումների՝ բնագրային այլ բաղադրիչներում. բովանդակային, ոճային, հանգային եւ այլն: Թեւ պետք է գիտակցել, որ բանահյուսքի թարգմանությունը միշտ էլ փոխզիջողություն է չափի, հանգի, բովանդակության, ոճի միջեւ: Այլապես պետք է բավարարվել տողացի թարգմանությամբ, կամ գրել իքնուրույն բանաստեղծություն՝ բնագրի նյութով:

Ինչպէս, շեքսպիրյան հնչյակների 10—11 վանկ եւ իգական-արական հանգերի խաղ պարունակող տողը 14—15 վանկանոց տողով (ամենատարածվածը) ներկայացնելը ոչ միայն հիմնովին փոխում է բնագրի լարվածությունը, եռանդը եւ հոգեբանական ներգործության ուժը, այլեւ հանգեցնում է նաեւ բարոյական երանգով մի խնդրի եւս: Որքան էլ հայոց բառերի «երկար» լինեն, հնչյակների թարգմանություններից պարզորոշ երեւում է, որ երբեմն բնագրի տողերը հնարավոր է լինում ներկայացնել ավելի կարճ լուծումներով, քան 14 վանկը (երբեմն նույնիսկ բնագրի 10-ից էլ պակաս):

Օրինակ. «Him in thy course untainted do allow» տողի («Հնչյակ 19) հայերեն համարժեքը կարող է լինել. «Իրեն քո ընթացքում անարատ թող» — 10 վանկ (կամ եթե untainted-ը թարգմանենք «անպիղծ», ապա՝ 9: «Is from the book of honour rased quite» տողը («Հնչյակ 25) կարող է թարգմանվել. «Պատվո գրքից ջնջում է իսպառ» — 9 վանկ: «And by a part of all thy glory live» («Հնչյակ 37) — «Եւ մասով ողջ քո փառքի ապրում» — 9 վանկ: Իսկ «Is poorly imitated after you» («Հնչյակ 53) տողը, կարող է թարգմանվել նույնիսկ ընդամենը 7 վանկով՝ առանց որեւէ կորստի. «Վատ նմանակումն է ձեր»:

Այդ կարգի դեպքերը բազմաթիվ են: Եւ ապահովելու համար բոլոր տողերի նույնական երկարությունը թարգմանիչները ստիպված են լինում լրացնել դրանք բնագրում բացակայող «միջադիր» ու վերամբարձ բառ-հենակներով՝ «սին», «վես», «վսեն», «վեհ», «ջինջ», «հավետ», «անշեջ», «անգին» եւ այլն, եւ այլն, փոխելով բնագրի ընկալումն ու ոճը: Եթե շեքսպիրյան միտքը չի տեղավորվում թարգմանական տողում եւ թարգմանիչն այն սղում կամ ընդհանրացնում է, ապա այն ինչ արդյունքում մնում է դա միեւնույն է համապատասխանում է Շեքսպիրյան գաղափարին, մինչդեռ հավելված մտքերը ոչ մի կերպ Շեքսպիրինը չեն եւ սոսկ վերագրված են իրեն: Ինչպես ասում էր Գրիգորիյ Գորիսի հերոս բարոն Մյունխհաուզենը. «... երբ ինձ կրճատում են, եւ դիմանում եմ, բայց երբ լրացնում են՝ անտանելի է դառնում»: Կա կարծիք, որ հավելումը թույլատրելի է, եթե ճիշտ է զգացվել բնագրի ոճը, ոգին եւ եթե վստահություն կա, որ բնագրի հեղինակը «այդպես կգրեր»: Մակայն ուզես թե չուզես, թարգմանության ժամանակ հավելումներ միեւնույն է լինում են եւ այլ կերպ, քան հույսով, որ հեղինակը «այդպես կգրեր» չի էլ լինում: Պարզապես, հավելումը պիտի լինի ծայրահեղ դեպքում, երբ այլ միջոցներով խնդիրը չի լուծվում:



SHAKESPEARES,  
SONNETS.

**F**rom fairest creatures we desire increase,  
That thereby beauties *Rose* might neuer die,  
But as the riper should by time decease,  
His tender heire might beare his memory:  
But thou contracted to thine owne bright eyes,  
Feed'st thy lights flame with selfe substantiall fwell,  
Making a famine where aboundance lies,  
Thy selfe thy foe, to thy sweet selfe too cruell:  
Thou that art now the worlds fresh ornament,  
And only herald to the gaudy spring,  
Within thine owne bud burieft thy content,  
And tender chorde makst wast in niggarding:  
Pitty the world, or else this glutton be,  
To eate the worlds due, by the graue and thee.

2

**W**hen fortie Winters shall befeige thy brow,  
And digge deep trenches in thy beauties field,  
Thy youthes proud liuery so gaz'd on now,  
Will be a totter'd weed of smal worth held:  
Then being askt, where all thy beaucie lies,  
Where all the treasure of thy lusty daies;  
To say within thine owne deepe funken eyes,  
Were an all-eating shame, and thristlesse praise.  
How much more praise deseru'd thy beauties vsf,  
If thou couldst aniwere this faire child of mine  
Shall sum my count, and make my old excuse  
Proouing his beaucie by succession thine.

E

This

Եւ այստեղ առաջ է գալիս բնագրի բովանդակության ճիշտ կամ սխալ ընկալման հարցը: Իսկ հատկապես Ծեքսայիրի բնագրերում բազմաթիվ տեղեր այսօր արդեն ոչ ոք, եւ նույնիսկ, անգլացի մեկնաբանները, վստահաբար չեն հասկանում, եւ ոչ մի մեկնողի կարծիքը չի կարող անվերապահորեն ճիշտ կամ սխալ համարվել, եւ յուրաքանչյուր թարգմանիչ պիտի վստահի միայն իր սեփական ընկալմանը: Եւ տարբեր թարգմանություններ կարող են նույնիսկ տարբեր մեկնությունների արդյունքներ լինել: Մյուս կողմից, Ծեքսայիրի հնչյակները առհասարակ մի բացառիկ դեպք է. հազիվ թե կա բանաստեղծությունների այլ շարք, որ նույնքան վերլուծված լինի եւ թարգմանված ամենատարբեր լեզուներով: Եւ այդ պայմաններում, երբ կան բոլոր այդ թարգմանությունները՝ բանաստեղծական եւ տողացի, մեկնաբանություններն ու վերլուծությունները (ու նաեւ՝ ժամանակակից անգլերենով), հնչյակների թարգմանությունը առավելապես վերածվում է մանրակրկիտ գիտական հետազոտության եւ, մի տեսակ, գրականագիտական խճանկարի կազմման:

Եւ նույնպես ստիպված եմ եղել կատարել զգալի հետազոտական աշխատանք. համեմատվել են տարբեր հայերեն թարգմանություններ՝ Սկրտչյանի, Էմինի, Դավթյանի եւ Քելեշյանի, Մուրենյանցի եւ այլոց, ռուսերեն, այդ թվում՝ Մարշակի, Չայկովսկու, Ֆինկելի, Ծարակչանեի, ինչպես նաեւ վերլուծվել են անգլալեզու մեկնությունները եւ թարգմանությունները ժամանակակից անգլերենի (օգտագործված նյութերի մի մասը բերված է <https://տնետներ.շեքսպիր.հայ>): Այլ կերպ չի էլ կարող լինել. տվյալ գործով զբաղվելուց առաջ պետք է իմանալ, թե նախկինում ինչ է արվել այդ ոլորտում:

Արդյո՞ք ներառել եմ այդ թարգմանիչների կիրառած հնարքները իմ թարգմանության մեջ: Անկասկած. անհնար է կարդալ մի գործ, եւ այն քո մեջ որեւէ հետք չթողնի: Իսկ թե հետո դա որ պահին է դրսևտրվում՝ դժվար է պարզել: Այստեղ էլ պետք է զգուշ լինել. նույն գործը թարգմանելիս տարբեր թարգմանիչներ կարող են իրարից անկախ նույն լուծման հանգեք, կամ, պարզապես, գտնել, որ տվյալ դարձվածի համար դա լավագույն մեկնությունն է. արդյո՞ք խելամիտ է ինքնանպատակ հրաժարումը մի լուծումից, որը ճիշտ է: Ցավոք, լինում է, եւ երբ որեւէ անհաջող լուծումն է ազդեցություն թողնում եւ միանգամից չէ, որ դա նկատվում է:

Վերադառնալով չափին, նշեմ, որ թեւ հստակորեն պահել եմ հնգատար մեծավերջի չափը, սակայն 11-րդ իգական վանկի հարցում ես ինձ ազատություն եմ տվել. կիրառել եմ այնտեղ, ուր բնագրում այն չկա, կամ հակառակը, քանի որ Ծեքսայիրն էլ իգական հանգերի կիրառման մեջ իրեն ազատ է զգացել: Երբեմն էլ հնարավոր եմ գտել գործածել թույլ հանգեր, եթե գտել եմ, որ դա արդարացված է բովանդակության առավել ճիշտ փոխանցման տեսակետից. սա հենց վերոհիշյալ փոխադիջման դրսևտրումներից մեկն է:

Առհասարակ, տողերը տարբեր են ըստ բովանդակության թելադրանքի. լինում են ազատ եւ կոշտ տողեր: Առաջինները նրանք են, որոնց բառերը կարող են հեշտությամբ տեղափոխվել, փոխարինվել համանիշներով: Հակառակ դեպքում հնարավոր է լինում միայն մեկ լուծում. հիմնականում՝ համարժեք բառերի կամ պահանջվող շարադասական կարգի միակության պատճառով: Այդ դեպքում ավելի ազատ տողերը ենթարկվում են այդ տողի թելադրանքին:

Իսկ երբեմն կիրառված է լինում մի բառախաղ, որը շատ դժվար է լինում վերարտադրել ուրիշ լեզվով: Եթե նման դեպք լինում է առանձին բանաստեղծության դեպքում ես այն համարվում եմ անթարգմանելի, եւ հրաժարվում եմ թարգմանել: Մակայն եթե դա բանաստեղծությունների շարք է (ինչպես այս դեպքում), կամ ծավալուն գործ, ստիպված ես լինում հաշտվել, որ շարքի տվյալ գործը, կամ տվյալ տողը թարգմանվելու է բառախաղի կորստով:

### ԳՈՐԾԱԾՎԱԾ ԱՅԼ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Նշվածներից բացի գործածվել են հետևյալ լուծումները.

- Թարգմանության մեջ որքան հնարավոր է պահել եմ բնագրի տողերի հաջորդականությունը՝ հատ ու կենտ բացառություններով:
- Տողացի թարգմանությունը կատարել եմ չափազանց «տողացի». ձգտել եմ պահել նույնիսկ բառերի հաջորդականությունը, եթե անգամ դա հակասել է հայերենի բնական շարադասությանը, քանի որ դիտել եմ այն որպես օգնություն՝ լավ հասկանալու համար բնագիրը, ինչպես նաև՝ որպես գործիք՝ հաջորդ թարգմանիչների համր: Բառերի հաջորդականությունը խախտել եմ միայն երբ այն ոչ մի կերպ չէր կարող պահվել, օրինակ՝ նախդիրների դեպքում, որոնց դիմաց հայերենում շատ քիչ համարժեքներ կան:
- Ձգտել եմ որքան հնարավոր է խուսափել միջադիր, մակաբայով՝ վերամբարձ բառ-հենակներից: Թեև, դրանք կիրառվել են այնտեղ, ուր համապատասխանել են բնագրին:
- Չեմ խորշել գործածել «առօրեական» բառեր, «գրականի» փոխարեն, օրինակ՝ «ոնց»՝ «ինչպես»-ի կամ «ել»՝ «այլևս»-ի փոխարեն: Իհարկե՝ առանց չափն անցնելու. օրինակ, «սենց», «տենց» տիպի բառեր չեմ կիրառել, թեև չափի պահապանմանը դրանք շատ դեպքերում կօգնեին: Գուցե մի օր լեզուն կընդունի նաև այդ բառերը, սակայն այսօր դրանք անընդունելի են:
- Կարևոր խնդիր է երկրորդ դեմքի դերանվան թիվը: Հնչյակներում երկու թվերն էլ գործածված են: Մակայն սովորաբար թարգմանիչները երկու դեպքում էլ կիրառում են եզակի թիվը, փաստ, որը այլ կերպ, քան թյուրիմացություն չես անվանի. եթե հեղինակը նույն շարքում (մի դեպքում նույնիսկ նույն հնչյակում՝ 24-ում) երկու ձևերն էլ կիրառել է, մենք իրավունք չունենք դրանք նույն բառով թարգմանել: Ես պահպանել եմ

բնագրի նաև այդ առանձնահատկությունը: Հատկապես որ, վստահ եմ. բնագրում տարբեր թվերի կիրառումը լուրջ իմաստային բեռնվածք ունի:

- Հաճախ ոճի եւ չափի պահանջներից ելնելով կիրառել եմ հին՝ «գրաբարյան» ձեւերը, մասնավորապես՝ հոգնակին, որը անգլերենի պես վանկ չի ավելացնում: Ի վերջո սա մեր լեզուն է. ինչո՞ւ չօգտվենք:
- Գործածել եմ բառակազմություն, որը կանոնավոր լինելով հանդերձ, հազվադեպ է պատահում: Օրինակ. «երկվացնել»՝ «to make ... twain»-ի դիմաց: Բայց նաև բառակազմություն, հիմնված իմաստի ենթադրական հետադարձ վերականգնման վրա: Օրինակ. սոսկ «վախ» < սոսկալի՝ «վախենալ», ինչպես ունենք. ցավ > ցավալի:
- Երբեմն, չափը պահելու համար թվարկության շարքում որոշիչ հոդը հատկացրել եմ բառերից մեկին միայն: Գրեթե չեմ կասկածում, որ սա դժգոհություն կառաջացնի, թեև չափածոյում թվարկության մեջ մի բառի հոդը աշխատում է նաև նախորդների համար:
- Որոշ դեպքերում, սղել եմ բարդ բառերի հոդակապերը:
- Որքան հնարավոր է, աշխատել եմ խուսափել շրջադասություններից (in-versio), թեև որոշ դեպքերում ինձ թույլ եմ տվել գործածել այն: Վերոհիշյալ հնարքների կիրառության բնորոշ օրինակ է 39-րդ հնչյակի «փականը». «Եւ չասեիր, ո՞նց մեկը՝ երկվացնել, / Գովերգելով նրան, ով աստ չէ էլ»
- Բնագրի she-ն թարգմանել եմ «նե». եթե այս ձևը չլիներ հայերենում, հանուն շեքսպիրյան հնչյակների արժեք այն ներմուծել հայոց լեզու:
- Հետեւելով սկզբունքին, որ թարգմանությունը պիտի նպաստի թիրախային լեզվի, տվյալ դեպքում՝ հայերենի զագագմանը, տողացի թարգմանության մեջ ես կիրառել եմ անականների միաբառ համեմատական եղանակի իմ առաջարկած ձևը՝ էլ- նախածանցով (էլ «լրացուցիչ» < էլի < այլ). good > better — լավ > էլլավ, quick > quicker — արագ > էլարագ, fair > fairer — չքնաղ > էլչքնաղ: Չափածոյում, հասկանալի պատճառներով դա ես չեմ կիրառել, այլ միայն «էլ» վերաբերականի տեսքով, բայց տողացի թարգմանության դեպքում, որպես գործիքի՝ որոշեցի փորձարկել:--))
- Երբեմն որոշ հայերեն բառերին տրվել է լրացուցիչ իմաստ, որով դրանք, սովորաբար, չեն կիրառվում, բայց որոնք (ըստ իս:--)) հասկանալի են ըստ համաշարի: Օրինակ՝ clock-ի ու time-ի փոխարեն օգտագործել եմ «ժամ» բառը, կամ beauty-ի փոխարեն՝ «գեղ»:
- Որքան հնարավոր է փորձ է արվել պահպանել բնագրի կառուցվածքային նախը, ինչպես, օրինակ՝ 66-րդ հնչյակում:

Եւ, ինչ խոսք, ցանկացած գործ, եւ չափածոյի թարգմանությունը միշտ էլ կարելի է կատարելագործել: Բայց մի տեղ պետք է գործը ի մի բերել:

Իսկ հետո... կրկին վերադառնալ դրան: Անվերջ: Այս թարգմանությունը նախաձեռնելու իմ հիմնական նպատակն էր ցույց տալը, որ հնչյակները հնարավոր է թարգմանել բնագրի չափի պահպանմամբ: Եւ փաստացիորեն դա հաջողվեց: Լավ թե՛ վատ, այլ հարց է: Հուսով եմ սակայն, որ հաջորդ թարգմանիչները (իսկ հնչյակները թարգմանելու ցանկացողներ միշտ էլ լինելու են) այլևս չեն պնդի, որ շեքսպիրյան չափը պահել հնարավոր չէ, այլ կձգտեն առավել ճշգրիտ կամ գեղարվեստական մակարդակների հասնել:

### ՇԵՔՍՊԻՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Որպես Շեքսպիրի պատկեր գետեղել եմ ոչ թե հայտնի գծապատկերն Առաջին Ֆոլիոյից, եւ ոչ էլ այլ՝ կասկածելի եւ ենթադրյալ դիմանկարներից որեւէ մեկը (օրինակ՝ «Չանդոսյան դիմանկարը» (Chandos portrait)), այլ հորինված այն կերպարը, որը գետեղված է Rutland, the Real Author of the Shakespearean Plays («Ռուտլանդ, Իրական հեղինակը շեքսպիրյան խաղերի») գրքում: Մա մի առանձին հոդվածի խնդիր է: Ես ամենեւին էլ չեմ կարծում, որ Շեքսպիրը Ուրտլանդն էր, բայց զգացվում է, որ վերջինս ինչ-որ կերպ լրջորեն կապված է Շեքսպիրի անձի հետ: Ու, բացի այդ, «պաշտոնական» դիմանկարները, պարզապես, տգեղ են:))) Իսկ որպես հենք տեղադրել եմ Շեքսպիրի կտակի վերջին էջը՝ ստորագրությամբ, որը (միայն ստորագրությունը) հաստատապես իր ձեռքով է արվել:

### ՀԵՂԻՆԱԿԻ ԱԶԳԱՆՎԱՆ «ՇԵՔՍՊԻՐԸ» ՁԵՒԻ ՄԱՍԻՆ

Վերոհիշյալ խնդրին է հարում նաեւ Շեքսպիր ազգանվան ճիշտ ներկայացման հարցը: Թեեւ այստեղ ես այդ ազգանունը գրում եմ ավանդական ձևով, սակայն հայտնի են դրա ներկայացման մի շարք տարբերակներ: Մասնավորապես, հենց հնչյակների առաջին՝ 1609 թվականի հրատարակության վրա հեղինակի ազգանունը գրված է, որպես Shake-speare, որը հայերեն է տառադարձված Շեք-Սպիրը ձևով, եւ ես գտնում եմ, որ մենք իրավունք չունենք հեղինակի անունը գրել այլ կերպ, ընդամենը, քանի որ մենք հավատում ենք, որ դրանք միեւնույն անձի անվան տարբերակներ են: Մտավախություն կա, որ դա կարող է գրադարանավարական խառնաշփոթ ստեղծել, բայց հուսով եմ, որ այն հաղթահարելի կլինի: Բացի այդ հեղինակի անունը 1609 թվականի հրատարակության վրա տրված ստացական հոդով: Երկար մտորումներից հետո որոշեցի պահել նաեւ այդ առանձնահատկությունը, թեեւ, հատկապես, հայերենում դա շատ տարօրինակ է դիտվում:

### «ՀՆԶՅԱԿ» ԵԶՐԻ ՄԱՍԻՆ

Հնչյակ եզրը ծնվել է, հավանաբար, արեւմտահայ միջավայրում, որպես sonnet բառի հայերեն պատճեն: Առաջին անգամ, թերեւս, արձանագրված է

Յարութիւն Թ. Գայայեանի բառարանում (Բառարան Գանձարան Հայերէն  
Լեզուի. Գահիրէ. Գալֆա, 1938): Փաստորեն գործածության մեջ է արդէն  
շուրջ մեկ դար, եթէ ոչ ավելին:

**ՏԱՌԱՏԵՄԱԿՆԵՐԸ**

Հատուկ այս հրատարակության համար ես մշակեցի տառատեսակ՝ որոշ  
չափով 1609 թվականի հրատարակության տառաձեւերը հիշեցնող: Որպես  
սկզբնատառեր օգտագործել եմ Պետեր Բեհրենսի սկզբնատառերի իմ մշակած  
տարբերակը:

**ՍՈՆԵՏՆԵՐ.ՇԵՔՍՊԻՐ.ՀԱՅ ԿԱՅՔԸ**

Հնչյակների թարգմանությունը իր զարգացումն ունեցավ կայքի տեսքով,  
ուր որոշեցի ներկայացնել բոլոր առկա հայերէն թարգմանությունները,  
ինչպես նաեւ տեղադրեցի աշխատանքի ընթացքում գտնված բազմաթիվ  
շեքսպիրագիտական կայքերի հղումները: Այնտեղ ներառված են նախորդ հինգ  
հայերէն լիակատար թարգմանությունները՝ Դավիթ Դավթյանի եւ Հովհաննես  
Քելեշյանի, Գեորգ Էմինի, Շեն-Մահի, Սամվել Սլրտչյանի, Մերուժան  
Հարությունյանի, ինչպես նաեւ այն թարգմանիչների, ովքեր թարգմանել են  
միայն որոշ հնչյակները՝ Վարդգես Սուրենյանցի, Հովհաննես Մասեհյանի,  
Խաչիկ Դաշտենցի, Աշոտ Ոսկանյանի, Հակոբ Անտոնյանի:





ՀՏԴ 821.111-193.3

ԳՄԴ 84(4Մք)-5

Ծ 46օ

Ծ 46օ Ծեյք-Սպիլըրի հնչյակներ՝ Ռուբեն Թարումեանի տողացի եւ  
չափածո թարգմանությամբ եւ ծանոթագրությամբ.— Եր.: Հեղինակային  
հրատարակություն, 2022.— 328 էջ:

ՀՏԴ 821.111-193.3

ԳՄԴ 84(4Մք)-5

